1052 N 227 19062

# ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
## ԴԱՒԹԻ

Տպագրեցեալ նէ՛ք գործարա
նում սրբոյ Էջմիածնի,
և սրբոյն Սարգսի զօ
րավարի:

'Ի հայրապետութեան տեառն Յա
կոբայ. և 'ի թագաւորութեան
Քրիստոսապաշտ և բարեպաշտ
արքային Լուդովիկոսի. վերակա
ցութբ և հոգաբարձութեամբ և
ծախիւք Ոսկանայ վարդապետի և
եպիսկոպոսի Երևա
նեցւոյ:

'Ի Մարսիլիայ:

Թուին Քրի. 1673. և Հոկտեմբերի. 23:

243

1906 - ԽԶ

Որք յաղբերն Հոգւոյն
սրբոյ՝ զծորանս շնորհաց ար
բին, և զնոյն զ՚ի ծահեղ զձեր
մտատուռակեալք արբուցին
ոգւոց ծարաւեաց զզանա
զանս գիտութիս յիւրաքան
չիւր ժամանակս և լեալք մա
տակարարք մինչ ցայս վայր։
Ընդ որս և ես նուաստ ոգի ը
տոչութե այնորիկ պարգևե
ընծեռեցի ձեզ սիրելեացդ
իմոց վաստակաւորաց զմծանկան
զմատեանս զայս առ՚ի վայե
լել ձեզ սիրով և դոհութե
ըստ կրկին դոյից։ Ողձայլ և ս
՚ի սմանէ քաղեցելոցն ՚ի լը
րումն խնդութե երկնայնոց
շնորհաբաշխութեն։ ամէն։

# Սաղմոս. Ա.

ԵՐԱՆԵԱԼ
ԱՅՐ ՈՐ ՈՉ ԳՆԱՑ Ի ԽՈՐ
հուրդս ամպարշտաց, ի Ճանապար

հի մեղաւորաց ոչ եկաց. եւ յա
թոռս ժանտից ոչ նստաւ։
Այլ յօրէնս Տ՟ն են կամք նորա.
եւ յօրէնս նորա խորհեսցի նա՛ ՚ի
տուէ եւ ՚ի գիշերի. եւ եղիցի նա
որպէս ծառ. որ անկեալ է ՚ի
գնացս ջուրց։
Որ զպտուղ իւր ՚ի ժամու տացէ՝
եւ տերեւ նորա մի՛ թափեսցի. եւ զամ՟
զոր ինչ առնիցէ, յաջողեսցի նմա։
Ոչ այսպէս են ամպարիշտք եւ ոչ
այսպէս. այլ որպէս զփոշի, զոր
հոսէ հողմ ի վ՟ր երեսաց երկրի։
Վասն այսորիկ ոչ յարիցեն ամպա
րիշտք ՚ի դատաստան, եւ ոչ մեղաւ
որք ՚ի խորհուրդս արդարոց։
·Քանզի, Ճանաչէ Տ՟ր զՃանա
պարհս արդարոց. Ճանապարհք
ամպարշտաց կորիցեն։

Սաղմ. 6։

Անվերնագիր է հեբրայեցւոց երգոյն սա
զա ընդ մի հաւասար են։ Ա.։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք.
եւ ժողովուրդք խորհեցան ՚ի
սնոտիս։ Յան

Յանդիման եղեն թագաւորք երկ
րի. եւ իշխանք ժողովեցան ի միա
սին. վր̃ Տն̃, եւ վր̃ օծելոյ նորա։
Խզեսցուք զկապանս նոցա. եւ ըն
կեսցուք 'ի մէնջ զլուծ նոցա։
Բնակեալն յերկինս ծիծաղեսցի
զնոքօք. եւ Տր̃ արհամարհեսցէ զնս̃։
Յայնժամ խօսեսցի ընդ նոսա
բարկութբ̃ իւրով. եւ սրտմտութբ̃
իւրով խռովեցուսցէ զնոսա։
Եւ ես կացի թագաւոր 'ի նմանէ ի վե
րայ լերին սիոնի սրբոյ նորա. 'ի
պատմել զհրամանս Տն̃։
Տր̃ ասաց ցիս, որդի իմ ես դու.
եւ ես այսօր ծնայ զքեզ։
Խնդրեա յինէն, եւ տաց քեզ զհե
թանոս 'ի ժառանգութիւն. եւ
իշխանութիւն քեզ ընդ ամենայն
ծագս երկրի։
Հովուեսցես զնոսա գաւազանաւ
երկաթեաւ. եւ որպ̃ զանօթ բրտի
փշրեսցես զնոսա։
Արդ՝ թագաւորք, դայս 'ի միտ
առէք. եւ խրատեցարուք ամենե
քեան, որք դատէք զերկիր։

Ծառ

Ծառայեցէք Տեառն երկիւղիւ.
և ցնծացէք առաջի նորա դողութեամբ։
Ընկալարուք զխրատ նորա, զի մի՛
բարկասցի Տէր. և կորնչիցիք ի ճա
նապարհացն արդարութեան։
Ի ժամանակի, յորժամ բորբոքես
ցի բարկութիւն նորա։
Երանի ամենեցուն ոյք յուսա
ցեալք են ի Տէր։

Տաղ. 14։

Սաղմոս Դաւթի ի ժամանակի զի փա
խուցեալ էր յերեսաց Աբիսողոմայ որ
դւոյ իւրոյ. Գ։

Տէր զի՞ բազումք եղեն նեղիչք
իմ. և բազումք յարեան ի վե
րայ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ.
թէ չիք փրկութիւն սորա առ
Աստուած իւր։
Բայց դու Տէր օգնական իմ ես.
փառք իմ, և բարձրացուցիչ
գլխոյ իմոյ։
Ձայնիւ իմով առ Տէր կարդա
ցի. և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ
իւրմէ։ Ես

Ես ննջեցի և 'ի քուն եղէ. զարթեայ՝ և Տէր ընդունող իմ էր։

Ոչ երկեայց ես 'ի բիւրուց զօրաց նոցա. որք շուրջանակի պատեալ՝ պաշարեալ՝ պահէին զիս։

Արի Տէր՝ և փրկեա զիս Աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան. որք էին ընդ իս թշնամութեամբ 'ի տարապարտուց. և զատամունս մեղաւորաց փշրեցեր։

Տեառն է փրկութիւն, 'ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քո։

Փառք. Գ։

Ի կատարած յերգ օրհնութեան.
Սաղմոս Դաւթի. Դ։

Ի կարդալ իմում լուաւ ինձ Աստուած արդարութեան. 'ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեաց ինձ, և լուր աղօթից իմոց։

Որդիք մարդկան՝ մինչև յերբ խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն՝ և խնդրէք զստութիւն։

Ծանիրուք՝ զի սքանչելիս արար
Տ͞ր սրբոյ իւրում. և Տ͞ր լուիցէ
ինձ, 'ի կարդալ իմում առ նա։
Բարկանայք և մի՛ մեղանչէք. զոր
ինչ ասէք 'ի սիրտս ձեր. յանկո
ղինս ձեր զղջացարուք։
Մատուցէք զպատարագ արդա
րութ͞ե. և յուսացարուք 'ի Տ͞ր։
Բազումք ասեն, թէ ո՛ ցուցցէ
մեզ զբարութ͞ի Տ͞ն. նշանակեցա
առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր
յուրախութիւն սրտից մերոց։
'Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձի
թոյ իւրեանց լցուցեր զնոսա։
Խաղաղութ͞բ յայս և 'ի նոյն նն
ջեսցուք և զարթիցուք. զի դու
Տ͞ր միայն առանձին յուսով քով
բնակեցուցեր զմեզ։

Տուն. գ։

'Ի կատարած վասն ժառանգաւորին։
Սաղմոս Դաւթի։ Ե։

Բանից իմոց ունկն դիր Տ͞ր. և
'ի միտ առ զաղաղակ իմ։
Նայեաց 'ի ձայն աղօթից իմոց.

Թա

Թագաւոր իմ և Աստուած իմ։
Ես զքեզ աղաչեմ Տր՝ ընդ ա-
ռաւօտս լուիցես ձայնի իմում.
ընդ առաւօտս պատրաստ եղէց.
յանդիման լինիլ առ քեզ.
Ո՛չ թէ դու Ած կամիս զանօրէնու-
թիւն. և ո՛չ բնակին առ քեզ չարք.
և անօրէնք մի՛ բնակեսցին առաջի
աչաց քոց։
Ատեցեր զայնոսիկ, որք գործեն
զանօրէնութիւն, կորուսանես զա-
մենեսեան, որք խօսին զսուտ։
Զայր արիւնահեղ և զնենգաւոր,
պիղծ առնես դու Տր. այլ ես՝ ըստ
բազում ողորմութե քում, մտից
'ի տուն քո. և երկիրպագից 'ի տա
ճար սբ քո երկիւղիւ քով։
Տր առաջնորդեա ինձ յարդարու
թե քում. վս թշնամեաց իմոց. և
ուղիղ արա առաջի իմ զճանա
պարհս քո։
Զի ո՛չ գոյ 'ի բերանս նց ճշմար
տութիւն, և սիրտք նոցա նան
րեալք են։
Որպէս գերեզմանս բաց է կոկորդ
նոցա

նոցա. և լեզուօք իւրեանց նեն
գաւորք եղեն:

Դատեա՛ զնոսա Ած՝ զի անկցին
՚ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում
ամպարշտութեան նոցա մերժեա զնո
սա. զի դառնացուցին զքեզ:

Ուրախ լիցին ամենեքեան՝ որք յու
սացեալ են ՚ի քեզ. յաւիտեան ցըն
ծասցեն. և բնակեսցես դու ՚ի նս:

Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք ա
նուան քո. զի օրհնեսցես դու
զարդարն. Տէր որպէս զինու հա
ճութեան քով պսակեցեր զմեզ:

## Սաղմ. 13:

՚Ի կատարած ընդ օրհնութեան վասն
ութերորդաց: Սաղմոս դաւթի. Օ:

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդի
մաներ զիս. և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս:

Ողորմեա ինձ Տէր՝ զի հիւանդ
եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի
խռովեցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ. և
դու Տէր մինչև յերբ:

Դա՛րձ Տէր, և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս Տէր, ըստ ողորմութեան քում։

Զի ո՛չ որ է, որ ՚ի մահու յիշէ զքեզ. կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմում. լուացից զամ գիշեր զմահճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացից։

Խռովեցաւ ՚ի սրտմտութէ աչք իմ. և մաշեցայ ես, ՚ի վերայ ամենից թշնամեաց իմոց։

Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ՝ լուաւ Տէր աղօթից իմոց. և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն, և խռովեսցին յոյժ ամենեքեան թշնամիք իմ. դարձցին յետս, և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի՝ և խռովեսցին։

Տուն. II։

Սաղմոս Դաւթի. զոր ասաց Տն վասն բանիցն Քուսեայ որդւոյ Յեմինեայ։ Է։

ՏՐ ԱԾ իմ'ի քեզ յուսացայ, փրկեա զիս. և յամենից հալածչաց իմոց ապրեցո զիս։

Գուցէ երբեք յափշտակեսցէ որպ̃ առիւծ զանձն իմ. ոչոք իցէ՝ որ փրկեսցէ. և ոչ այն, որ ապրեցուցանիցէ։

ՏՐ ԱԾ իմ, թէ արարի զայս. և թէ իցեն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ։

Թէ հատուցի երբեք այնոցիկ, ոյք հատուցին ինձ զչար. անկեայց և ես 'ի թշնամեաց իմոց ընդունայն։

Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ. հասցէ, և կոխեսցէ յերկիր զկեանս իմ. և զփառս իմ'ի հող բնակեցուսցէ։

Արի ՏՐ բարկութեամբ քով. և բարձր լեր 'ի սպառել թշնամեաց իմոց։

Զարթիր ՏՐ ԱԾ իմ. 'ի հրա
մանս

րամանս քո, զոր պատուիրեցեր. և
ժողովք ժողովրդոց շուրջ եղի
ցին զքև :
Վն̃ այսորիկ ՚ի բարձունս դարձ
Տր̃. և Տր̃ դատէ զժողովուրդս
իւր :
Դատ արա ինձ Տր̃ ըստ արդա
րութեան իմում. և ըստ անմեղու
թեան իմում, որ յիս :
Կատարեսցին չարիք ՚ի մեղաւո
րաց՝ և յաջողեսցես դու արդարոյ :
Որ քննէ զսիրտս և զերիկամունս,
Ած արդար յիրաւի է ինձ օգնու
թի յԱ̃յ. որ ապրեցուցանէ զայ
նոսիկ, ոյք ուղիղք են սրտիւք :
Ած̃, դատաւոր արդար, հզօր և
երկայնամիտ. որ ոչ ածէ զբար
կութի̃ իւր զօրհանապազ :
Ապաթէ, ոչ դառնայք առ նա.
զսուր իւր սրեալ է՝ և զաղեղն իւր
լարեալ. և ՚ի նմա է պատրաստեալ
զանօթս մահու. և զնետս իւր այ
րեցելովք է գործեալ :
Ահաւասիկ երկնեաց զանօրէնու
թի̃. յղացաւ զցաւս և ծնաւ զանի
րաւութիւն : Գուբն

Գուբն՝ զոր փորեաց և աղեղեաց.
'ի նոյն անկցի 'ի խորխորատն, զորև
գործեաց:
Դարձցին ցաւք 'ի գլուխ նորա.
և 'ի վերայ գագաթան նորա անօրէ
նութիւնք իւր իջցեն:
Խոստովան եղէց Տն ըստ արդա
րութեն նորա. և սաղմոս ասացից
անուան Տն բարձրելոյ:

Տաղ. 18:

'Ի կատարած ի վերայ հնձանացն: Սաղ
մոս Դաւթի. Ը:

ՏԷՐ Տր մեր՝ զի սքանչելի է ա
նուն քո, յամ երկրի:
Համբարձաւ մեծ վայելչութիւն
քո 'ի վերոյ քան զերկինս. 'ի բե
րանոց մանկանց տղայոց ստնդեայց
հաստատեցեր զօրհնութիւն:
Վասն թշնամեաց քոց Տր. զի
եղծցի թշնամին և հակառակորդն:
Տեսից զերկինս, և զգործս մա
տանց քոց. զլուսին և զաստեղս՝
զորս դու հաստատեցեր:
Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զնա.

կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա։

Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո. փառօք և պատուով պսակեցեր զնա. և կացուցեր զնա ՚ի վերայ ամենից ձեռակերտաց քոց։

Զամ ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նորա՝ զխաշն՝ և զարջառ՝ և զամենայն ինչ։

Եւս և զերէվայրի՝ զթռչունս երկնից. և զձկունս ծովու. որք շրջին ընդ շաւիղս ծովու։

Տր̅ Տր̅ մեր. զի սքանչելի է անուն քո յամ երկրի։

Տունք. 10։

Ի կատարած. Վասն գաղտնեաց որդւոյ. Սաղմոս Դաւթի։ Թ։

Գոհացայց զքէն Տր̅ բոլորով սրտիւ իմով. պատմեցից զամենայն սքանչելիս քո։

Ուրախ եղէց՝ և ցնծացայց ՚ի քեզ. սաղմոս ասացից անուան քում բարձրեալ։

Ի դառնալ յետս թշնամեաց իմոց տկարասցին. եւ կորիցեն յերեսաց քոց։

Արարեր զդատաստան իմ. եւ զիրաւունս, նստար յաթոռ դատաւոր արդարութեան։

Սաստեցեր ՚ի հեթանոսս՝ եւ կորեաւ ամբարիշտն. զանուն նոցա ջնջեցեր յաւիտեանս յաւիտենից. եւ թշնամւոյն զէն պակասեցաւ մինչեւ իսպառ։

Զքաղաքս աւերեցեր. եւ կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ։

Տ՟ր կայ՝ եւ մնայ յաւիտեան. պատրաստ արար զաթոռ իւր ՚ի դատաստանի։

Նա դատէ զաշխարհս արդարութեամբ. եւ զժողովուրդս իւր ուղղութեամբ։

Եղեւ Տ՟ր ապաւէն տնանկի. օգնական ՚ի նեղութեան, ՚ի դէպ ժամանակի։

Յուսասցին ՚ի քեզ ամենեքեան՝ որք գիտեն զանուն քո. զի ոչ թողցես զայնոսիկ. որք խնդրեն զքեզ Տ՟ր։

Սաղմոս ասացէք Տն. որ բնակեալն է 'ի սիօն. պատմեցէք 'ի
հեթանոսս զգործս նորա։

Զի խնդրել զարիւն նոցա յիշեաց. եւ ոչ մոռացաւ զաղաղակ տնանկաց։

Ողորմեաց ինձ Տր, եւ տես զխոնարհութիւն իմ 'ի թշնամեաց իմոց. ո՞ բարձր արարեր զիս 'ի դրանց
մահու։

Որպէս պատմեցից զամ օրհնութիւնս քո 'ի դրունս դստեր սիօնի. ցնծացայց 'ի փրկութե քում։

Ընկղմն հեթանոսք յապականութեան իւրեանց՝ զոր արարին. եւ որոգայթ՝ զոր թաքուցին առցէ
զոտս նոցա։

Ճանաչի Տր առնել զդատաստանս իւր. եւ 'ի գործս ձեռաց իւրեանց կապեցան մեղաւորք։

Դարձցին մեղաւորք անդրէն 'ի դժոխս. եւ ամենայն հեթանոսք.
որք մոռացան զՏ։

Զի ոչ իսպառ մոռանայ Տր զաղքատն. եւ համբերութիւն տնանկաց ոչ կորիցէ իսպառ։

Արի՛ Տր՝ և մի՛ զօրասցի մարդ. դատեսցին հեթանոսք առաջի քո։
Կացո՛ Տր՝ օրէնսդիր ՚ի վերայ նոցա. ծանիցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են։
Ընդէ՞ր Տր՝ կայցես ՚ի հեռաստանէ. անտես արարեր ՚ի դէպ նեղութեան ժամանակի։
Յամբարտաւանել ամպարշտին այրի աղքատն. արգելցին ՚ի խորհուրդս իւրեանց. զոր խորհեցան։
Զի գովի մեղաւորն ՚ի ցանկութիւն անձին իւրոյ. որ զրկէն, նա գովի։
Բարկացոյց մեղաւորն զԱ.ծ. ըստ բազում բարկութեան իւրում թէ ո՛չ խնդրի։
Ո՛չ է Ա.ծ առաջի աչաց նորա. պիղծք են ճանապարհք նորա յամենայն ժամ։
Բարձեալ են իրաւունք յերեսաց նորա. ՚ի վերայ ամենից թշնամեաց իւրոց տիրեսցէ։
Ասաց ՚ի սրտի իւրում, թէ ո՛չ սասանեցայց յազգէ յազգ առանց չարի։

Անէ

Անիծիւք, և դառնութբ̃, և նեն
գութբ̃ լի է բերան նորա. 'ի ներ
քոյ լեզուի նր̃ ցաւք և վաստակք։
Նստի դարանեալ ը̃ մեծամեծս
'ի գաղտնիս՝ սպանանել զանմեղն։
Աչք նր̃ 'ի տնանկս հային՝ դարա
նի 'ի գաղտնիս. որպէս զառիւծ
'ի մորւոջ իւրում։
Դարանի յափշտակել զաղքատն. յա
փակել զաղքատն՝ և ձգել զնա։
Յորոգայթ իւր խոնարհեցուսցէ
զնա. խոնարհեսցի՝ և անկցի 'ի
տիրել իւրում, 'ի վր̃ տնանկաց։
Ասաց 'ի սրտի իւրում թէ մոռա
ցաւ Ա̃Ծ. դարձոյց զերեսս իւր՝
զի մի տեսցէ իսպառ։
Արի́ Տր̃ Ա̃Ծ իմ. բարձր եղիցի
ձեռն քո. և մի́ մոռանար զտնանկս։
Իսկ ընդէ՞ր բարկացոյց ամպա
րիշտն զԱ̃Ծ. զի ասաց 'ի սրտի իւ
րում թէ ո́չ քննի։
Տեսանես դու զնա 'ի ցաւս. և 'ի
սրտմտութի̃ հայիս. մատնել զնա
'ի ձեռս քո. քեզ թողեալ է աղ
քատն. և որբոյն դու ես օգնական։

Խոր

Խ որտակեցի բազում մեղաւորի՝
և չարի․ խնդրեցին մեղք նորա՝
և նա մի՛ գտցի։

ՏՐ Թագաւոր յաւիտեանս յաւի
տենից․ կորիցեն հեթանոսք յերկ
րէ նորա ։

Զ ցանկութիւն տնանկաց լուաւ
տ՟ր, ՚ի պատրաստութիւն սրտից նո
ցա հայեցաւ ունկն քո ։

Դ ատ առնել որբոյ և տնանկի՝ զի
մի՛ ևս յաւելցի մարդ․ ՚ի մեծա
բանել խրոխտ ՚ի վերայ երեսաց
երկրի ։

Տուն․ 41 ։

Ի կատարած Սաղմոս Դաւթի․ Ժ ։

ՏՐ յուսացայ․ որպէս ասի
ցէք ցանձն իմ․ փոփոխեաց
՚ի լերինս որպէս ճնճղուկ։
Զ ի ահա մեղաւորքն լարե
ցին զաղեղունս իւրեանց․ պատ
րաստ արարին զնետս ՚ի կապարճս
ձգել ընդ խաւար այնոցիկ՝ որք
ուղիղ են սրտիւք։

Զի

Զի զոր դու շինեցեր՝ նոքա աւ-
երեցին. իսկ արդարն զի՞ արար։
Տր̄ ՚ի տաճար սուրբ իւրում. Տր̄
յերկինս յաթոռ իւրում։
Աչք նորա ՚ի տնանկս հային՝ ար-
տեւանունք նորա քննեն զորդիս
մարդկան։
Տր̄ քննէ զարդարն և զամպարիշտն.
որ սիրէ զմեղս, ատեայ զանձն իւր։
Տեղասցէ ՚ի վր̄ մեղաւորաց որո-
գայթ՝ հուր՝ և ծծումբ. այս
մրրիկ բաժին բաժակի նց̄։
Արդար է Տր̄՝ և զարդարութիւն
սիրէ. և զուղղութիւն տեսանեն
երեսք նորա։

Տունք. 8։

՚Ի կատարած ի վերայ ութներորդացն, սաղ-
մոս դաւթի. ԺԱ։

Ապրեցո զիս Տր̄՝ զի նուաղեցաւ
սբ̄. նուաղեցան ճշմարտութիւնք
յորդւոց մարդկան։
՚Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկե-
րի իւրում. շրթամբք նենգաւո-
րօք ՚ի սրտէ ՚ի սիրտ խօսեցաւ։

Սատակէ Տ՟ր զա՟մ շրթունս նենգաւորս. և զլեզուս մեծաբանս:
Որք ասացին զլեզուս մեր մեծս արասցուք. շրթունք մեր առ մեզ են, և արդ՝ մեր ո՞վ է Տ՟ր:
Վ՟ս տառապանաց աղքատին՝ և հեծութե՟ տնանկին. այժմ յարեայց, ասէ Տ՟ր. եդից զփրկութի՟ իմ. և համարձակեցայց 'ի նմա:
Բանք Տ՟ն են բանք սո՟ւրբ՝ որպ՟ս զարծաթ. ընտրեալ և փորձեալ յերկրէ. սրբեալ և պարզեալ եօթնպատիկ 'ի հողոյ:
Դու Տ՟ր պահեսցես զմեզ. և պարեցուսցես զմեզ յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան:
Շուրջանակի ամպարիշտք շրջին. ըստ բարձրութե՟ քում մեծս արասցես դու զորդիս մարդկան:

## Տաղն. Թ:

Ի կատարած սաղմոս դաւթի: ԺԲ:

Մինչև յերբ Տ՟ր մոռանաս զիս իսպառ. մինչև յերբ դարձուցանես զերեսս քո յինէն:

Մին

Մինչև յերբ դնեմ զխորհուրդս յանձն իմ. և ցաւք սրտի իմոյ զաւուրս :

Մինչև ցերբ բարձրանայ թշնամին 'ի վերայ իմ. Նայեաց և լուր ինձ Տր Ած իմ:

Լոյս տուր Տր աչաց իմոց. զի մի՛ երբեք ննջեցից 'ի մահ:

Մի՛ ասասցէ թշնամին. թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց:

Ես յողորմութիւն քո Տր յուսացայ. ցնծացաւ սիրտ իմ 'ի փրկութեան քում. օրհնեցից զՏր զբարերարդ իմ:

Տաղք. 6:

Ի կատարած սաղմոս դաւթի: ԺԳ:

Ասաց անզգամն 'ի սրտի իւրում. թէ ոչ գոյ Ած:

Ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. և ոչ ոք է որ առնէ զբարի:

Տր յերկնից նայեցաւ յամ որդիս մարդկան. տեսանել թէ իցէ ոք

իմաստ

իմաստուն. որ խնդրիցէ զԱծ:
Ամենեքեան խոտորեցան 'ի միասին՝
և անպիտանացան:
Ո՛չոք է՝ որ առնէ զբարի. և ո՛չոք
է՝ մինչև 'ի մի:
* ‖ Գ. երեզման բաց է կոկորդ նց.
լեզուօք իւրեանց նենգաւորք ե-
ղեն. Թոյնք իժից 'ի ներքոյ շրթ
թանց նոցա. որոց բերանք անի-
ծիւք և դառնութբ լի են: Ե-
րագք են ոտք նոցա հեղուլ զա-
րիւն. բեկումն և թշուառութի
'ի ճանապարհս նոցա. և զճանա-
պարհն խաղաղութե ո՛չ ծանեան.
ո՛չ է երկիւղ Աստուծոյ առաջի
աչաց նոցա:
Ո՞չ ո՛չ ծանիցեն ամենեքեան. որք
գործեն զանօրէնութիւն:
Որք ուտեն զժողովուրդ իմ որ-
պէս կերակուր հացի. և զՏր
ո՛չ կարդացին:
Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ո՛չ
իցէ երկիւղ. զի Տր է յազգս ար-
դարոց:
Զխորհուրդ աղքատին յամօթ
արա

արարեն. զի Տէր է յոյս նորա։
Ո տացէ 'ի սիօնէ զփրկութիւն
իէլի. 'ի դարձուցանել Տն զգերու
թիւն ժողովրդեան իւրոյ. ցըն
ծասցէ յակոբ՝ և ուրախ եղիցի
իսրայէլ։

Տուն. 10։

## Սաղմոս Դաւթի. ԺԴ.

Տէր ով կացցէ 'ի խորանի
քում. կամ ով բնակեսցէ
'ի լերան սուրբ քո։

Որ գնայ անբիծ՝ գործէ զարդա
րութիւն. խօսի զճշմարտութիւն
'ի սրտի իւրում։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւ
րով. և չար ընկերի իւրում ոչ
արար։

Նախատինս 'ի մերձաւորաց ոչ առ
նու. արհամարհեալ է առաջի նո
րա չարագործն։

Զերկիւղածս Տն փառաւորս
առնէ. որ երդնու ընկերի իւրում,
և ոչ ստէ։

Զար

Արծաթ իւր 'ի վարձու ոչ տայ. և կաշառս 'ի վերայ իրաւանց ոչ առնու, որ զայս արասցէ. նա մի սասանեսցի յաւիտեան։

Տուն. 9։

Արձանագիր Դաւթի։ ԺԵ։

Պահեա զիս Տ՟ր. զի ես 'ի քեզ յուսացայ. ասացի Տ՟ն Տ՟ր իմ ես դու. և բարեաց իմ չէն քեզ ինչ պիտոյ։

Սրբոց քոց՝ որք են յերկրի քում. սքանչելի արարեր զամենայն կամս իմ 'ի նոսա։

Յաճախեցին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ ապա փաղփաջեսցին։

Ոչ ժողովեցայց 'ի ժողովս նոցա արեանց. և ոչ յիշեցից զանուանս նոցա 'ի շրթունս իմ։

Տ՟ր բաժին ժառանգութեան իմոյ. և բաժակի իմոյ. դու ես, որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս։

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս

և

և ժառանգութիւն իմ հաճոյ ե-
ղև ինձ։

Օրհնեցից զՏր՝ որ իմաստուն
արար զիս. մինչ զի ՚ի գիշերի ևս
խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զՏր ա-
ռաջի իմ յա̄մ ժամ. զի է ընդ
աջմէ իմմէ. մի սասանեցայց։

Վա̄ այսորիկ ուրախ եղև սիրտ իմ.
և ցնծացաւ լեզու իմ. ևս և մար
մին իմ բնակեսցէ յուսով։

Զի ոչ թողցես զանձն իմ ՚ի
դժոխս, և ոչ տացես սրբոյ քում
տեսանել զապականութիւն։

Ցուցցես ինձ զճանապարհս կե-
նաց. լցուսցես զիս ուրախութե̄
երեսաց քոց ՚ի քաղցրութենէ վայ
ելչութե̄ աջոյ քոյ մինչև իսպառ։

Տուն. II։

## Աղօթք Դաւթի. ԺԶ։

Լուր Տ̄ր արդարութեան. և
նայեաց ՚ի խնդրուածս իմ.
ունկն դիր աղօթից իմոց. զի ոչ
շրթամբք նենգաւորօք։

Յերեսաց քոց իրաւունք իմ ելցեն. և աչք իմ տեսցեն զուղղութիւն։

Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր ՚ի գիշերի. փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն։

Մ՚ի խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս։

Հաստատեա՛ զշաւիղս իմ ՚ի ճանապարհի քում. զի մի՛ գայթագղեսցին գնացք իմ։

Ես առ քեզ Տ̄ր կարդացի՝ զի լուա՛ր ինձ Ա̄ծ. խոնարհեցո առ իս զունկն քո, և լուր բանից իմոց։
Սքանչելի արարեր զողորմութիւնս քո. ո՛ փրկես զայնոսիկ, որք յուսացեալք են ՚ի քեզ՝ յայնցանէ, որք հակառակ կան աջոյ քոյ։

Պահեա՛ զիս որպէս բիբ ական. ընդ հովանեաւ թեւոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամպարշտաց. որք տառապեցուցին զիս։

Թշնամիք զանձն իմ պաշարեցին.
և ՚ի

և ՚ի ճարպս իւրեանց արգելին. և
բերանք նոցա խօսեցան զամբար
տաւանութիւն:
Մերժեցին զիս, և այժմ դար
ձեալ պատեցան զինև. ուշեդ.ին
խոնարհեցուցանել զիս յերկիր:
Համարեցան ինձ որպէս առիւծ
զի պատրաստ է յորս. և որպ կորիւն
առիւծու, զի նստի դարանեալ:
Արի Տէր՝ ժամանեա նոցա. և խա
փանեա զնոսա. փրկեա զանձն
իմ յամպարշտաց. ՚ի սրոյ՝ և ՚ի ձե
ռանէ թշնամւոյն:
Տէր կորո զնոսա յերկրէ. բաժա
նեա, և խափանեա զնոսա ՚ի կեանս
իւրեանց:
Գանձուքք քովք լցան որովայնք
նոցա. յագեցան կերակրովք, և
թողին զմնացուածս տղայոց իւ
րեանց:
Ես արդարութեամբ երևեցայց
երեսաց քոց. յագեցայց յերևել
փառաց քոց:

Տուն. 15:

՚Ի կատարած ի վէրայ պատերազմող նահա
տակին. ծառայէն Տն Դաւթի։ որ խօ
սեցաւ ընդ Տն զբանս օրհնութե. յաւ
ուր յորում փրկեաց զնա Տր ի ձեռաց
ամենայն թշնամեաց. և ի ձեռաց Սաւու
ղայ. և ասէ։ ԺԷ։

Սիրեցից զքեզ Տր զօրու
թիւն իմ. Տր հաստատիչ
իմ. ապաւէն իմ՝ և փրկ
կիչ իմ։
Ած օգնական իմ, և ես յուսամ ՚ի
նա. ապաւէն իմ, եղջիւր փրկու
թե իմոյ՝ ընդունող իմ է։
Օրհնելով կարդացից առ Տր. և
՚ի թշնամեաց իմոց ապրեցայց։
Շուրջ եղեն զինև երկունք մա
հու. և ուղխք անօրէնութեան
խռովեցուցին զիս։
Վիշտք դժոխոց պաշարեցին
զիս. և ժամանեցին ինձ որո
գայթք մահու։
՚Ի նեղութե իմում ես առ Տր
կարդացի՝ և առ Ած աղաղակեցի։
Լուաւ ինձ ՚ի տաճարէ սրբոյ իւր

 մե

մէջ ձայնի աղօթից իմոց. և աղա
ղակ իմ առաջի նորա. մտցէ յա
կանջս նորա։

Խռովեցաւ և դողաց երկիր՝ և հի
մունք լերանց սասանեցան, և խռո
վեցան. զի բարկացաւ 'ի վերայ նո
ցա Աստուած։

Ել ծուխ 'ի բարկութենէ նորա. և
հուր յերեսաց նր բորբոքեցաւ. և
փայլատակունք հատան 'ի նմանէ։

Խոնարհեցոյց զերկինս՝ և էջ. և
մէգ 'ի ներքոյ ոտից նորա։

Ել 'ի քրովբէս՝ և թռեաւ. սլա
ցաւ նա 'ի թևս հողմոց։

Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր.
և շուրջ զնովաւ են յարկք իւր. և
խաւարային ջուրք մինչև յամպս
օդոց։

Ի փայլատակել նորա առաջի նո
ցա՝ ամպք անցուցին զկարկուտ՝
և զկայծակունս հուր։

Որոտաց Տր յերկնից. և բարձ
րեալն ետ զձայն իւր 'ի կարկուտ՝
և 'ի կայծակունս հուր։

Առաքեաց զնետս իւր՝ և ցրուեաց

զնս՟. յաճախեաց զփայլատակունս իւր և խռովեցոյց զնոսա ։
Երևեցան աղբիւրք ջուրց. և յայտնեցան հիմունք աշխարհի ։
՚Ի սաստէ քումմէ Տր՟. և ՚ի շնչել հողմոյ բարկութեան քոյ ։
Առաքեաց ՚ի բարձանց՝ և ընկալաւ զիս. ընկալաւ զիս ՚ի ջուրց բազմաց ։
Փրկեաց զիս Տր՟ ՚ի թշնամեաց իմոց հզօրաց և յատելեաց իմոց. զի հզօրք եղեն քան զիս ։
Կանխեցին ինձ յաւուրս չարչարանաց իմոց. եղև Տր՟ հզօրիչ իմ. և եհան զիս յանդորր. փրկեաց զիս Տր՟, զի կամեցաւ զիս ։
Հատուսցէ ինձ Տր՟ ըստ արդարութե՟ իմում. ըստ ամբծութե՟ իմում հատուսցէ ինձ ։
Զի պահեցի զճանապարհս Տն՟. և ոչ ամպարշտեցայ յԱյ իմմէ ։
Ամենայն իրաւունք նորա, առաջի իմ են. և զարդարութիւն իւր ոչ ի բացեայ արար յինէն ։
Եղէ և ես անբիծ ընդ նմա. և
զգու

զգուշացայ յանօրէնութենէ իմմէ:
Հատուսցէ ինձ Տր ըստ արդարութեան իմում. ըստ սրբութեան ձեռաց իմոց առաջի աչաց նորա:
Ընդ սրբոյն սուրբ եղիցիս. ընդ առն ամբծի ամբիծ եղիցիս. ընդ ընտրելոյն ընտրեալ եղիցիս. եւ ընդ թիւրոյն թիւրեսցիս:
Դու զժողովուրդս խոնարհս կեցուցանես. եւ զաչս ամբարտաւանից դու խոնարհեցուցանես:
Դու լուսաւոր առնես զճրագ իմ. Տր ԱԾ իմ լոյս արա ինձ՚ի խաւարի:
Քեւ փրկեցայց ՚ի փորձութենէ. Աստուծով իմով անցից ընդ պարիսպ:
ԱԾ իմ անբիծք են ճանապարհք նորա. եւ բանք Տն ընտրեալք են. եւ ապաւէն ամենեցուն. ոյք յուսան ՚ի նա:
Ո՛ զի ո՞վ է ԱԾ բաց ՚ի Տէ. կամ ով է ԱԾ. բաց յԱյ մերմէ.
ԱԾ՝ որ զգեցուցեր ինձ զզօրութիւն. եւ եդիր յամբծութե զճանապարհս իմ:

Հաս

Հաստատեցեր զոտս իմ որպէս
զեղջերուի. և 'ի վերայ բարձանց
կացուցեր զիս:

Ուսուցեր զձեռս իմ 'ի պատե
րազմ. և արարեր զբազուկ իմ ո՜ղ
զաղեղն հաստ. և ետուր ինձ ըզ
պաշտպանութի̃ն փրկութե̃ն քոյ:

Աջ քո ընկալաւ զիս՝ և խրատ քո
կանգնեաց զիս իսպառ. և խրատ
քո ուսուսցէ զիս:

Ընդ արձակեցեր զգնացս իմ 'ի
ստո̃րև իմմէ. և ոչ տկարացան շա
ւիղք իմ:

Հալածեցից զթշնամիս իմ, և
հասից նոցա.. և ոչ դարձայց 'ի նո
ցանէ մինչև սպառեցից զնոսա:

Նեղեցից զնոսա, և մի կարասցեն
կեալ. և անկցին 'ի ներքոյ ոտից
իմոց:

Զգեցուցեր ինձ զօրութիւն 'ի
պատերազմի. և զյարուցեալսն 'ի
վ̃ր իմ, ներքոյ իմ արարեր:

Զթշնամիս իմ հալածականս
արարեր. և զատելիս իմ սատա
կեցեր:

Աղա

Աղաղակեցին. և ո՛չոք էր՝ որ փր
կէր զնոսա. կարդացին առ Տէր.
և ո՛չ լուա՛ւ նոցա։

Մ՝անրեցից զնոսա որպէս փոշի
առաջի հողմոյ. և որպէս կաւ գռե
հաց կոխեցից զնոսա։

Փրկեացէ զիս Տէր 'ի հակառակու
թենէ ժողովրդոց. և կացուսցէ
զիս գլուխ հեթանոսաց։

Ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի, ծա
ռայեաց ինձ. և 'ի լուր ականջաց
լուա՛ւ ինձ։

Որդիք օտարաց ստեցին ինձ. որ
դիք օտարաց մաշեցան. և կաղա
ցան 'ի շաւղաց իւրեանց։

Կենդանի է Տէր՝ և օրհնեալ է Աս
տուա՛ծ. և բարձր եղիցի Աստու
ած փրկութեան իմոյ։

Ա՜ծ է՝ որ խնդրէ զվրէժ իմ. և
հնազանդ առնէ զժողովուրդս
ընդ ինև։

Փրկիչ իմ 'ի թշնամեաց իմոց բար
կացողաց. յայնցանէ՝ որք յարու
ցեալք են 'ի վ՛ր իմ. բարձր արա
րեր զիս՝ և յառնէ անիրաւէ փրկե
ցեր զիս։ Վա՛ն

Վասն այսորիկ խոստովան եղէց
քեզ 'ի հեթանոսս. և անուան
քում սաղմոս ասացից:
Մեծ արարեր զփրկութիւն թա
գաւորի նորա. առնել զողորմու
թիւն ընդ օծելոյ նորա դաւթի.
և ընդ զաւակի նորա յազգէ մին
չև յազգ:

Տաղք. 51:

Օրհնութիւն Մովսէսի և որդւոցն իս
րայէլի: Ելից: ԺԵ:

Օրհնեսցուք զՏր՛ զի փա
ռօք է փառաւորեալ:
Զհեծեալս և զերիվարս
ընկէց 'ի ծով. օգնական
և ընդունող իմ Տր՛ և եղև ինձ
'ի փրկութիւն:
Սա է իմ Ած՛ և փառաւոր ա
նեմ զսա. Աստուած հօր իմոյ և
բարձր արարից զսա:
Տէր խորտակէ զպատերազմունս և
Տր՛ է անուն նորա:
Զընտիրս արանց՝ և զընտիրս
ասպա

սպառազինաց· զկառս և զերի
վարս՝ և զամենայն զօրութիւնս փա
րաւոնի ընկէց 'ի ծով:

Ծով ծածկեաց զնոսա· ընկլան
յանդունդս խորոց իբրև զվէմս:

Աջ քո Տր՝ փառաւորեալ է զօ
րութբ իւրով· և աջ քո Տր խոր
տակեաց զթշնամիս քո:

Եւ մեծութբ փառաց քոց մանրե
ցեր զհակառակորդս քո· առաքե
ցեր զբարկութիւն սրտմտութե
քո· և եկեր զնոսա ոպ զեղեգն:

Հոգւով զօրութե սրտմտութե
քո· պատառեցան ջուրք· դիզան
կացին ոպ պարիսպ քարեայ ջուրք
ծովուն· և պաղեցան դիզան ալիք
ջուրցն 'ի մէջ ծովուն:

Ասաց թշնամին· աւէ, հալածե
ցից՝ հասից և հարից· բաժանեցից
զաւարն՝ և լցուցից 'ի նոցանէ
զանձն իմ:

'Ի սուր իմ արկից զնոսա· տիրես
ցէ, և բարձրացի 'ի վերայ նոցա
աջ իմ:

Առաքեցեր զհողմն քո· և ծած
կեաց

կեաց զնս̃ ծով. ընկղմեցան, և իջին
որպ̃ս կապար՝ 'ի ջուրս սաստիկս:

Ո՞ նմանէ քեզ յԱ՛ծս Տր̃. կամ
ով նմանեցի քեզ փառաւորեալդ
'ի սուրբս:

Սքանչելի փառաւորեալ՝ որ առ-
նես զնշանս և զարուեստս. ձգե-
ցեր զձեռն քո. և էկուլ զնոսա
երկիր:

Առաջնորդեցեր արդարութբ̃.
ժողովրդեան քոյ՝ այդմ, զոր փրը-
կեցեր:

Մխիթարեցեր զօրութբ̃ քով 'ի բնա-
կարան սրբութեան քոյ. լուա՛ն
ազգք՝ և բարկացան. և երկունք
կալան զբնակիչս փղշտացւոց:

Յայնժամ փութացան դատա-
ւորք եդոմայ. և իշխանք մովաբա-
ցւոց:

Կալաւ զնոսա դողումն. հալեցան.
ա̃մ բնակիչք քանանացւոց:

Անկցի 'ի վերայ նոցա ահ և դո-
ղումն. և 'ի զօրութենէ բազկի քոյ
քարասցին:

Մինչև անցցէ ժողովուրդ քո

տր̃

Տր̄. մինչև անցցէ ժողովուրդ-
քո, այս, զոր ստացար։
Տարեալ տնկեսցես զնոսա ՚ի լերին
ժառանգութեան քոյ. ՚ի պատրաս
տութիւն բնակութեան ժառան
գութեան քոյ։
Զոր ստացար ՚ի սկզբանէ Տր̄՝
ստացար սրբութբ̄, և զոր պատ
րաստեցին ձեռք քո. Տր̄ թագա
ւոր յաւիտեանս յաւիտենից, և ևս։
Զի եմուտ փարաւոն՝ կառօք և
երիվարօք. և ընտիր սպառազի
նուք ՚ի մէջ ծովուն։
Եւ էած ՚ի վերայ նց Տր̄ զջուրս
ծովուն. և որդիքն իէլի գնացին
ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն։

Տաղ. 24.

Սա է իմ Ա̄ծ՝ և փառաւորեա
նեմ զնա. Ա̄ծ հօր իմոյ՝ և
բարձր արարից զնա։ Մարդասէր
Տր̄՝ բարեխօսութբ̄ սրբուհւոյ ա
նարատ մօր քոյ և կուսի. և վասն
խաչի քոյ պատուականին. ընկալ
զաղաչանս մեր՝ և կեցո զմեզ

Սա

Քս աղօթս երանելեացն և էերեւեն:

Վասն ՚ի վերուստ խաղաղութե
և փրկութեան անձանց մե
րոց՝ զՏր աղաչեսցուք:

Վն լսելի լինելոյ Տն Այ ձայնի
աղաչանաց մերոց՝ զՏր աղ:

Վն քաւիչ և ներող լինելոյ Այ
՚ի մեղաց մերոց՝ զՏր:

Վն թողլոյ մեզ զամ յանցանս
մեր, զկամայ և զակամայ՝ զՏր:

Վն զի մի ՚ի լք խոտանս գտանիցիմք՝
յաւուրն պատասխանատուութե
զՏր աղա:

Վասն հոգւոյն հանգուցելոց՝
որք ճշմարիտ և ուղիղ հաւատով
՚ի Քն ննջեցին. զՏր:

Յուսոյ՝ և վասն միաբանութեան
ճշմարտի և սրբոյ հաւատոյս մերոյ՝
զՏր աղաչեսցուք:

Զանձինս մեր՝ և զմիմեանս. Տն
Այ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեաց մեզ Տր Այ մեր՝ ըստ
մեծի ողորմութեան քում. ասաս
ցուք ամենեքեան միաբանութբ:

Տր ողորմեա. Գ:

ՏԷՐ տու՛նջեան՝ և գոյացուցիչ գի-
շերոյ. որ արարեր զտիւ 'ի
զբօսանս բարեգործութեան, 'ի
փրկութիւն անձանց մերոց. և զգի-
շեր 'ի հանգիստ քնոյ՝ տկարացեալ
բնութեան մերոյ։ Իսկ այժմ զար-
թուցեալ բացեր զբերանս մեր
յօրհնաբանութիւն՝ ահաւոր և
փառաւորեալ անո՛ւանդ քում սր-
բոյ։ Ընկալ և այժմ զաղաչանս
մեր և յա՛ջողեա մեզ. ուղիղ հա-
ատով և առաքինասէր գործով վա-
րուք, 'ի նոյն պաշտօն քո կանխել
միշտ. և նովին կանօնիւ՝ անդա-
դար փառաւորել՝ զՀայր և զՈր-
դի և զսուրբ Հոգին։ Այժմ, և
միշտ, և յաւիտեանս յաւիտենից։
Խաղաղութիւն ամենեցուն։
Օ քեզ՝ որ յամենայնի գթած և
մարդասէր Տ̄րդ ես, աղաչեմք
հանապազ. զի զօրացուսցես զմեզ
որ ըստ օրէ, կալ 'ի կարգի կրօնաւ-
որութեան մերում։ Թեթևացո՛
Տ̄ր՝ զքաղցր լուծ քո, զոր եդիր
'ի վերայ մեր՝ զի կարասցուք կալ 'ի

պատուիրանի քում․ և զհաճոյսն
առնել առաջի քո յամենայն ժամ
՚ի տուէ և ՚ի գիշերի։ Հրեշտակայ
ին երգակցութեամբ զքեզ օրհ
նել․ զքեզ գովել՝ գոհութիւնս և
փառս մատուցանել ամենազօր տէ
րութեանդ։ Այժմ, և միշտ, և
յաւիտեանս յաւիտենից։

Սաղմոսիւք և օրհնութ̅ք և եր
գօք հոգևորօք․ անդադար փա
ռաւորեմք՝ զՀայր և զՈրդի և
զսբ̅ Հոգիդ։ այժմ և։

Օրհնեալ Տ̅ր մեր՝ Յ̅ս Ք̅ս․
ամէն։ Հայր մեր՝ որ։

՚Ի կատարած Սաղմոս Դաւ
թի։ Ժ․Ը։

ԵՐԿԻՆՔ ՊԱՏ
մեն զփառս Ա՟յ․ և զա
րարածս ձեռաց նորա
պատմէ հաստատութիւն։
Օր աւուր բղխէ զբան․
և գիշեր գիշերի ցուցա
նէ զգիտութիւն։
Ո՛չ են բանք՝ և ո՛չ են խօսք՝ որոց
ո՛չ լսին ձայնք նոցա։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ
նոցա․ և մինչև ՚ի ծագս աշխար
հի են խօսք նոցա։

Յարեաւ եհար զխորան իւր. և ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառագաստէ իւրմէ. և ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր:

Ի ծագաց երկնից են ելք նորա. և հանգիստ նորա մինչև ՚ի ծագս նորուն, ոչ ոք իցէ որ թաքիցէ ՚ի տապոյ նորա:

Օրէնք Տեառն անբիծք են՝ և դարձուցանեն զհոգիս. վկայութիւն Տեառն հաւատարիմ է. և իմաստուն առնէ զտղայս:

Արդարութիւնք Տն ուղիղք են և ուրախ առնեն զսիրտս. պատուիրանք լոյսք են՝ և լոյս տան աչաց. երկիւղ Տեառն սուրբ է, և մնայ յաւիտեան:

Դատաստան Տեառն ճշմարիտ է. և արդար է ՚ի նոյն:

Ցանկալի է քան զոսկի, և քան զականս պատուականս բազում. քաղցր է նա քան զմեղու խորիսխ:

Քանզի ծառայ քո պահեսցէ զայս. ՚ի պահել նմա հատուցումն բազում:

Զյան

Ո՛ յանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ ՚ի միտ. ՚ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս Տ̃ր. և յօտարէն պահեա՛ զծառայս քո։

Ապա՝ թէ ոչ տիրեսցեն ինձ. յայնժամ անբիծ եղէց՝ և սուրբ եղէց ՚ի մեղաց մեծաց։

Եղիցին քեզ հաճոյք բանք բերանոյ իմոյ. և խորհուրդ սրտի իմոյ առաջի քո յա̃մ ժամ. Տ̃ր օգնական իմ, և փրկիչ իմ։

## Տունք. 15։

Ի կատարած սաղմոս Դաւթի։ Ժ.Թ.։

Լուիցէ քեզ Տ̃ր յաւուր անձկութեան. օգնական եղիցի քեզ անուանն Ա̃յ յակոբայ։

Առաքեսցէ քեզ Տ̃ր զօգնութիւն ՚ի սրբութենէ իւրմէ. և ՚ի սիօնէ ընկալցի զքեզ։

Յիշեսցէ Տ̃ր զամենայն պատարագս քո. և զուխտս քո ընդունելի արասցէ։

Տացէ քեզ Տ̃ր ըստ սրտի քում. և զամենայն խորհուրդս քո նա կատարեսցէ։

Յըն

Ցնծասցուք մեք 'ի փրկութեան քում. յանուն Աստուծոյ մերոյ մեք մեծք եղիցուք։

Լցուսցէ Տէր զամենայն խնդրուածս քո. այժմ ծանեայք, զի կեցոյց Տէր զօծեալ իւր։

Լուաւ նմա յերկնից 'ի սրբութէ իւրմէ. 'ի զօրութիւն փրկութե աջոյ իւրոյ։

Սոքա կառօք՝ և սոքա երիվարօք. այլ մեք զանուն Տեառն Ա.յ մերոյ կարդասցուք։

Սոքա խափանեցան՝ և անկան. մեք յարեաք և ուղիղք եղեաք։

Տէր կեցո՛ զթագաւորն՝ և լուր մեզ. յաւուր յորում կարդասցուք առ քեզ։

## Տաղն. II։

### Դ. Չափաւորած Սաղմոս Դաւթի. Ի։

ՏԷՐ 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա. և զկամս շրթանց նո

րա ոչ արգելեր 'ի նմանէ ։
Յ. ամեն արարեր զնա յօրհնութի
քաղցրութեան քո. և եդիր 'ի
գլուխ նորա պսակ 'ի քարէ պա
տուականէ ։
Կեանս խնդրեաց 'ի քէն. և ե֊
տուր նմա ընդ երկայն աւուրս՝
յաւիտեանս յաւիտենից ։
Մ՞եծք են փառք նորա 'ի փրկու
թեան քում. զփառս և զմեծ վա
յելչութիւն դիցես 'ի վերայ նորա ։
Տացես զնա յօրհնութիւն յաւի
տեանս յաւիտենից. և ուրախ ա֊
րասցես զնա յուրախութեան երե
սաց քոց ։
Թ. ագաւոր յուսացաւ 'ի Տր. յո
ղորմութենէ բարձրելոյն նա մի
սասանեսցի ։
Գ. տցի ձեռն քո 'ի վերայ թշնա
մեաց քոց. և աջ քո գտցէ զամե
նայն ատելիս քո ։
Դ. իցես զնոսա որպէս հնոց հրոյ.
'ի ժամանակի երեւաց քոց ։
Տր բարկութեամբ իւրով խռովե
ցուսցէ զնոսա. և հուր կերիցէ
զնոսա ։

Պտուղ նոցա յերկրէ կորիցէ. և
զաւակ նոցա յորդւոց մարդկան։
Խոտորեցան 'ի քէն չարութբ.
և խորհեցան զխորհուրդ. զոր ոչ
կարասցեն հաստատել։
Արասցես զնոսա հալածեալս 'ի
մնացուածս քո. պատրաստեսցես
զերեսս նոցա։
Բարձր լեր Տր 'ի զօրութեան
քում. օրհնեսցուք, և սաղմոս ա-
սասցուք զօրութեց քոց։

Տօնի. 15։

'Ի կատարած. վասն առաւօտուն օգնա
կանութե։ Սաղմոս Դաւթի. ԻԱ։

Ած իմ, նայեաց
առ իս. ընդէր
թողեր զիս. հե
ռի եղէ 'ի փրկութենէ իմմէ վս
բանից յանցանաց իմոց։
Ած իմ, 'ի տուէ կարդացի առ
քեզ՝ և ինձ ոչ լուար. 'ի գիշե
րի, և ինձ ոչ անսացեր։

Դու

Դու 'ի սուրբս բնակեալ ես. և
գովեալդ Իսրայէլի:
'Ի քեզ յուսացան հարքն մեր. յու
սացան 'ի քեզ. և փրկեցեր զնոսա:
Առ քեզ աղաղակեցին, և կեցին.
'ի քեզ յուսացան, և ոչ ամաչեցին:
Այլ ես որդն եմ, և ոչ եմ մարդ.
նախատինք մարդկան՝ և արհամար
հանք ժողովրդոց:
Ամենեքեան՝ որք տեսանէին զիս՝
արհամարհէին զինև՝ խօսէին շր
թամբք՝ և շարժէին զգլուխս
իւրեանց:
Յուսացաւ 'ի Տէր՝ և փրկեսցէ
զնա. կեցուսցէ զնա՝ զի կամի զնա:
Դու ես՝ որ հաներ զիս յարգանա
տէ. յոյս իմ 'ի ստեանց մօր իմոյ:
'Ի քեզ անկայ ես յարգանատէ. յո
րովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ:
Մի 'ի բացեայ առնիր յինէն՝ զի
նեղութիւնք մերձեալք են. և ոչոք
է՝ որ օգնէ ինձ:
Շուրջ եղեն զինև զուարակք բա
զումք. և ցուլք գէրք պաշարե
ցին զիս:

Բա

Բացին 'ի վերայ իմ զբերանս իւ-
րեանց որպէս առիւծ. զի մռնչէ
և յափշտակէ:

Ես որպէս զջուր հեղայ՝ և ցրուե-
ցան ամենայն ոսկերք իմ. և եղև
սիրտ իմ որպէս մոմ հալեալ իմէջ
որովայնի իմոյ:

Ցորացաւ որպէս խեցի զօրութիւն
իմ. լեզու իմ 'ի քիմս իմ կցեցաւ՝
և 'ի հող մահու իջուցին զիս:

Շուրջ եղեն զինև շունք բա-
զումք. և ժողովք չարաց պաշարե-
ցին զիս:

Ծակեցին զձեռս իմ՝ և զոտս
իմ. և թուեցին զա̅մ ոսկերս իմ.
Նոքա հայեցան, և տեսին զիս:

Բաժանեցին զհանդերձս իմ ի-
մէջ իւրեանց. և 'ի վր̅ պատմուճա-
նի իմոյ վիճակս արկանէին:

Դու Տ̅ր՝ մի հեռի առներ զգը-
թութիւն քո յինէն. և Տ̅ր յօգ-
նել ինձ նայեաց:

Փրկեա 'ի սրոյ զանձն իմ. և 'ի ձե-
ռաց շանց՝ զմիամօրութիւն իմ:

Փրկեա զիս 'ի բերանոյ առիւ-

ծու

Ծու. յեղջերէ միեղջերուի զխո
նարհութիւն իմ:

Պատմեցից զանուն քո եղբարց
իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից
զքեզ:

Երկիւղածք Տեառն օրհնեսցեն
զնա. ամ զաւակք յակոբեան փա
ռաւոր արասցեն զնա:

Երկիցէ 'ի Տէ ամ զաւակն Իսլի՝
զի ոչ արհամարհեաց, և ոչ անար
գեաց զաղօթս աղքատի. և ոչ
դարձոյց զերեսս իւր յինէն, այլ 'ի
կարդալ իմում առ նա լուաւ ինձ:

'Ի քէն է գովութի իմ. յեկեղե
ցիս մեծս օրհնեցից զքեզ:

Ուխտս իմ կատարեցից առաջի
ամենից երկիւղածաց նր:

Կերիցեն տնանկք՝ և յագեսցին.
օրհնեսցեն զՏր՝ ոյք խնդրեն
զնա:

Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս
յաւիտենից. յիշեսցեն և դարձցին
առ Տր՝ ամ ծագք երկրի:

Երկիրպագցեն նմա ամ տոհմք
ազանց. զի Տն է արքայութի. և

նա տիրէ 'ի վր՟ ամ՟ հեթանոսաց։
Կերին, և երկիրպագին նմա ամե
նայն պարարտք երկրի. առաջի նո
րա անկցին ամենեքեան՝ որք իջա
նեն 'ի հող։
Անձն իմ նովաւ կեցայ. և զաւակ
իմ ծառայեսցէ նմա։
Պատմեսցի Տ՟ն ազգ՝ որ գալոց
է. պատմեսցեն զարդարութիւն
նորա ժողովրդեան. որ ծնանե
լոցն է. զոր արար Տ՟ր։

Տուն. 33։

Սաղմոս Դաւթի. ԻԲ։

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ
ոչ պակասեսցի։
'Ի վայրի դալարոջ անդ բնակե
ցոյց զիս. և առ ջուրս հանգս
տեան սնոյց զիս։
Դարձոյց զանձն իմ առ իս. և
առաջնորդեաց ինձ 'ի ճանապր՟հս
արդարութ՟ե վս՟ անուան իւրոյ։
Թէպէտ և գնայցեմ ես 'ի մէջ ստո
ւերաց մահու. ոչ երկեայց 'ի չա
րէ. զի դու Տ՟ր ընդ իս ես։

Ցուպ քո և գաւազան. նոքա մխի
թարեսցեն զիս:
Պատրաստ արարեր առաջի իմ
զսեղան. ակն յանդիման նեղչաց
իմոց:
Օծեր իւղով զգլուխ իմ. բա
ժակ քո որպէս անապակ արբե
ցոյց զիս:
Ողորմութիւն քո Տր զհետ իմ
եկեսցէ զամ աւուրս կենաց իմոց.
բնակել ինձ ՚ի տան Տն ընդ եր
կայն աւուրս:

Տոն. 8:

Սաղմոս միաշաբաթոյ Դաւթի:
ԻԳ:

Տեառն է երկիր լրիւ իւրով աշ
խարհ. և ամ բնակիչք նորա:
Նա ինքն ՚ի վերայ ծովու հիմունս
եարկ նմա. ՚ի վերայ գետոց պատ
րաստեաց զնա:
Ո՞վ ելցէ ՚ի լեառն Տն. կամ ով
կացցէ ՚ի տեղւոջ սրբութե նր:
Որ սուրբ է ձեռօք՝ և ամբիծ
սրտիւ. որ ոչ էառ զնանրութիւն

յանձն

յանձն իւր՝ և ոչ երդուեալ նեն
գութբ ընկերի իւրում։
Սա առցէ զօրհնութի ՚ի Տէ. զո
ղորմութի յԱծ փրկչէ իւրմէ։
Այս ազգ է՝ որ խնդրէ զՏր.
խնդրէ տեսանել զերեսս Աստու
ծոյ յակոբայ։
Համբարձէք իշխանք զդրունս
ձեր ՚ի վեր. համբարձցին դրունք
յաւիտենից՝ և մտցէ թագաւոր
փառաց։
Ո՞վ է սա թագաւոր փառաց.
Տր հզօր զօրութբ իւրով. Տր
հզօր ՚ի պատերազմի։
Համբարձէք իշխանք զդրունս
ձեր ՚ի վեր. համբարձցին դրունք
յաւիտենից՝ և մտցէ թագաւոր
փառաց։
Ո՛վ է սա թագաւոր փառաց. Տր
զօրութեանց. սա ինքն է թագա
ւոր փառաց։

Տուն. 10։

Սաղմոս Դաւթի. ԻԴ.

Առ քեզ Տր համբարձի զանձն իմ. Ած իմ ՚ի քեզ յուսացայ. մի ամաչեցից, եւ մի ծիծաղեսցեն զինեւ թշնամիք իմ։

Ամենեքեան՝ որք համբերեն քեզ՝ մի՛ ամաչեսցեն. այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց։

Զճանապարհս քո Տր ցոյց ինձ. եւ զշաւիղս քո ուսո՛ ինձ։

Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի քում, եւ ուսո՛ ինձ. զի դու ես Աստուած փրկիչ իմ. եւ ես քեզ համբերի զօրհանապազ։

Յիշեա՛ Տր զգթութիւս քո. եւ զողորմութիւս քո՝ որք են յաւիտենից։

Զմեղս մանկութեան իմոյ՝ եւ զանգիտութեն իմոյ՝ մի՛ յիշեր. այլ յիշեա՛ զիս Տր ըստ ողորմութեան քում. վասն քաղցրութեն քոյ Տր. զի քաղցր եւ ուղիղ ես։

Վա՟ այնորիկ օրէնս դնէ առնելոց զմեղաւորս ՚ի ճանապարհի. առաջնոր

դես

դես հեզոց ՚ի դատաստանի. ուսու-
ցանես հեզոց զճանապարհս քո։
Ամ՟ ճանապարհք Տն՟ ողորմութի՟
և ճշմարտութի՟ են այնոցիկ՝ որք
խնդրեն զուխտ և զվկայութի՟ն նր՟։
Վասն անուան քո Տր՟ քաւեա՛
զմեղս իմ. զի բազում եղեն. ո՞վ
է մարդ՝ որ երկնչի ՚ի Տէ՟. օրէնս
դէտ առնէ զնա ՚ի ճանապարհի՝
յոր հաճեցաւ։
Անձն նր՟ ՚ի բարութե՟ հանգիցէ.
և զաւակ նր՟ ժառանգեսցէ զերկիր։
Զօրութիւն է Տր՟ երկիւղածաց
իւրոց. և զկտակարանս իւր ուսու-
ցանէ նոցա։
Աչք իմ յամ՟ ժամ առ Տր՟. և
նա հանէ յորոգայթէ զոտս իմ.
Նայեաց առ իս՝ և ողորմեաց ինձ.
զի միամօր և աղքատ եմ ես։
Նեղութիւնք սրտի իմոյ բազումք
եղեն յոյժ. և ՚ի վշտաց իմոց
հան զիս։
Տես զխոնարհութիւն իմ՝ և
զվաստակ իմ. և թող ինձ զամե-
նայն զմեղս իմ։

Տես

Տես զթշնամիս իմ, զի բազումք
եղեն ատելութեամբք՝ զոր 'ի նա
նիր ատեցին զիս:
Պահեա զանձն իմ, և փրկեա զիս.
և մի՛ յամօթ եղէց՝ զի յուսացայ
'ի քեզ:
Ամբիծք՝ և ուղիղք կցորդք եղեն
ինձ. և ես քեզ համբերի. փրկեա
Ա՛ծ զիէլ յամենից նեղութեց նր:

Տունք. 19:

## Սաղմոս Դաւթի: ԻԵ:

Դատ արա ինձ Տր՝ զի ես յամբ
ծութե իմում գնացի. 'ի Տր
յուսացայ. զի մի՛ եղէց հիւանդ:
Փորձեա զիս Տր՝ և քննեա զիս.
փորձեա զերիկամունս իմ և
զսիրտ իմ:
Ողորմութիւնք քո առաջի աչաց իմոց.
և հաճոյ եղէց ճշմարտութե քում:
Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց.
և ընդ անօրէնս ես ո՛չ մտից.
Ատեցի ես զժողովս չարաց. և
ընդ ամպարիշտս ես ո՛չ նստայց:
Լուացից սրբութբ զձեռս իմ. և
շուրջ

շուրջ եղէց զսեղանով քով Տէր։
Լսել ինձ զձայն օրհնութե̄ քո.
և պատմել զամ̄ զսքանչելիս քո։
Տէր սիրեցի զվայելչութիւն տան
քո. և զտեղի յարկի փառաց քո։
Մի՛ կորուսաներ ընդ ամպարիշտս
զանձն իմ. և մի՛ ընդ արս արիւնա
հեղս զկեանս իմ։
Որոց ձեռք յանօրէնութեան են.
և աջ նոցա լի է կաշառօք։
Եւ ես յամբծութե̄ իմում գնացի.
փրկեա զիս Տէր՝ և ողորմեա ինձ։
Ոտն իմ կայցէ յուղղութե̄ յեկե
ղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

Տաղ. 12։

Սաղմոս Դաւթի մինչ չև օծեալ էր։
ԻԶ։

Տէր լոյս իմ. և կեանք իմ. ես
յումմէ երկեայց. Տէր ապաւ
էն կենաց իմոց՝ ես յումմէ դողա
ցայց։
Ի մերձենալ առ իս չարաց ուտել
զմարմինս իմ. նեղիչք իմ, և թշնա
միք իմ. նքա տկարացան և անկան։

Թէ պատրաստեսցի 'ի վր̄ իմ պատե
րազմ, ո՛չ երկիցէ սիրտ իմ. թէ յա
րիցէ 'ի վր̄ իմ ճակատամարտ՝ սա
կայն և յայսմիկ 'ի քեզ տ̄ր յուսացայ։
Զմի խնդրեցի 'ի Տ̄է՝ և զայն
աղաչեմ. բնակել ինձ 'ի տան Տ̄ն
զա̄մ աւուրս կենաց իմոց։
Տեսանել ինձ զվայելչութ̄ի Տ̄ն՝
և հրամանս տալ 'ի տաճարի ն̄ր։
Ծածկեաց զիս 'ի խորանի իւ
րում յաւուր չարի. ընդ յարկաւ
արար զիս 'ի ծածկոյթ խորանի
իւրոյ։
Ի վիմի բարձր արարեր զիս. և
այժմ բարձր արա՛ զգլուխ իմ 'ի
վերայ թշնամեաց իմոց։
Շուրջ եղէց և մատուցից 'ի խո
րանի նորա զպատարագս օրհնու
թեան. օրհնեցից՝ և սաղմոս ասա
ցից Տեառն։
Լուր Տ̄ր ձայնի իմում. զի կար
դացի առ քեզ. ողորմեաց ինձ՝ և
լուր ինձ. զի քեզ ասաց սիրտ իմ.
և խնդրեցին երեսք իմ, զերեսս քո
Տ̄ր խնդրեցից։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յի
նէն. և մի՛ խոտորեր բարկութե՟
՚ի ծառայէ քումմէ։

Օգնական իմ լեր Տ՟ր՝ մի՛ անար
գեր զիս. և մի թողուր զիս Ա՟ծ
փրկիչ իմ։

Հայր իմ և մայր իմ թողին զիս.
և Տ՟ր ընկալաւ զիս։

Օրէնսդրեա արա՛ զիս Տ՟ր ՚ի ճա
նապարհի քում. և առաջնորդեա՛
ինձ ՚ի շաւիղս քո ուղիղս։

Վ՟ն թշնամեաց իմոց. մի՛ մատներ
զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց։

Յարեան ՚ի վերայ իմ վկայք մե
ղաց. և ստեցին ինձ յանօրէնու
թեան իւրեանց։

Հաւատացի տեսանել զբարութի՟
Տ՟ն յերկրին կենդանեաց. համ
բեր Տ՟ն՝ և քաջալերեաց. զօրաս
ցի սիրտ քո՝ և համբեր Տ՟ն։

Տուն. 15։

# Սաղմոս Դաւթի. ԻԷ:

Առ քեզ Տր̃ կարդացի Ա̃ծ
իմ, մի լռեր յինէն. մի եր
բեք լռիցես յինէն. նմա
նեցիմ այնոցիկ՝ ոյք իջանեն ՚ի
գուբ:
Լուր Տր̃ ձայնի խնդրուածոց
իմոց յաղաչել ինձ առ քեզ. ՚ի
համբառնալ ձեռաց իմոց ՚ի տա
ճար սուրբ քո:
Մի՛ համարիր ընդ ամպարիշտս
զանձն իմ. և մի ընդ այնոսիկ՝ ոյք
գործեն զանօրէնութիւն կորու
սաներ զիս:
Ոյք խօսին զխաղաղութիւն ընդ
ընկերս իւրեանց. և չարութիւն է
՚ի սիրտս նոցա:
Տուր նոցա ըստ գործոց նոցա.
ըստ անօրէնութեան գնացից նո
ցա հատո՛ նոցա:
Ըստ գործոց ձեռաց նոցա հատո՛
նոցա, զհատուցումն նց̃ նոցին:
Ո՛չ իմացան նոքա զգործս Տ̃ն.
և ո՛չ ՚ի գործս ձեռաց նորա հայ

եցան. կործանեսցես զնոսա՝ և այլ մի՛ շինեսցես։

Օրհնեալ է Տ՟ր՝ զի լուա՛ւ ձայնի աղօթից իմոց. Տ՟ր օգնական իմ, և պաշտպան իմ։

Ի նա յուսացաւ սիրտ իմ. օգնեցաւ՝ և զուա՛րճացաւ մարմին իմ. և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա։

Տ՟ր զօրութ՟ի ժողովրդեան իւրոյ. ապաւէն փրկութ՟ե օծելոյ իւրոյ։

Փրկեա՛ զժողովուրդ քո՝ և օրհնեա՛ զժառանգութիւն քո. հովուեա՛՝ և բարձրացո՛ զնոսա մինչև յաւիտեան։

Տունք. ԺԱ։

## Սաղմոս Դաւթի. ԻԸ։

Մատուցէք Տ՟ն որդիք Ա՟ստուծոյ. մատուցէք Տեառն զորդիս խոյոց։

Մատուցէք Տեառն զփառս և զպատիւ. մատուցէք ա՟ն զփառս անուա՛ն նորա. և երկիրպագէք Տ՟ն ՚ի սրահ սրբութ՟ե նորա։

Ձայն Տ՟ն ՚ի վերայ ջուրց՝ եւ Ա՟յ
փառաց որոտաց. եւ Տ՟ր ի նմին ՚ի վե
րայ ջուրց բազմաց.
Ձայն Տեառն զօրութ՟բ. եւ ձայն
Տեառն մեծվայելչութ՟բ։
Ձայն Տ՟ն փշրէ զմայրս. եւ ման
րէ Տ՟ր զմայրս Լիբանանու։
Մանրեսցէ զնոսա ո՟ճ մատաղա
տունկն Լիբանանու. որ սիրելին է
որպէս զորդի միեղջերուին։
Ձայն Տեառն հատանէ զբոց հր
րոյ. ձայն Տեառն շարժէ զանա
պատն. եւ խռովեցուցանէ Տ՟ր զա
նապատն Կադէս։
Ձայն Տ՟ն հաստատէ զեղջերուս.
եւ յայտնի առնէ զանտառս։
Ի տաճարի նորա ամենեքեան
ասասցեն զփառս նմա։
Տ՟ր զջրհեղեղս նստուցանէ. եւ
ցածուցանէ թագաւորեսցէ Տ՟ր
յաւիտեան։
Տ՟ր զզօրութ՟ն ժողովրդեան իւ
րոյ տացէ. Տ՟ր օրհնեսցէ զժողո
վուրդ իւր ՚ի խաղաղութ՟ե։

Տուն. 11։

Սաղմոս օրհնութեան նաւակատեաց տանե րէն Դաւթի: ԻԹ:

Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:

Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ՝ և բժշկեցեր զիս. Տէր հաներ ՚ի դժոխոց զանձն իմ, փրկեցեր զիս յայնցանէ՝ որք իջանեն ՚ի գուբ:

Սաղմոս ասասջիք Տեառն սուրբք նորա. խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա:

Սրտմտութիւն է ՚ի բարկութեան նորա. և կեանք են ՚ի կամաց նորա:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտուց եղիցի ուրախութիւն:

Ես ասացի ՚ի բարեկենդանութեան իմում. թէ ոչ սասանեցայց յաւիտեան:

Տէր ՚ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զզօրութիւն. դարձուցեր զերեսս քո յինէն՝ և ես եղէ խռովեալ:

Առ քեզ Տէր կարդացի՝ և առ Աստուած իմ աղաղակեցի. զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ՝ թէ իջանեմ

նեմ ես յապականութիւն ։
Մի՛թէ հող խոստովան առնիցի
առ քեզ· կամ պատմեսցէ զճշմար
տութիւնս քո ։
Լուաւ ինձ Տր՝ և ողորմեցաւ.
և Տր եղև իմ օգնական ։
Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն.
եհերձ յինէն զքուրձ. և ինձ զգե
ցոյց զուրախութիւն ։
Որպէս սաղմոս ասասցեն քեզ
փառք իմ. և մի՛ զղջասցայց. Տր
Ած իմ՝ յաւիտեան խոստովան ե
ղէց քեզ ։

Տուն. 13 ։

Ի կատարած Սաղմոս Դաւթի ։ օրհ
նութեան նահատակութեան ։ Լ ։

Ի քեզ Տր յուսացայ՝ մի՛ ամա
չեցից յաւիտեան. յարդա
րութեամբ քում փրկեա՛ զիս՝ և
ապրեցո՛ զիս ։
Խոնարհեցո՛ առ իս զունկն քո.
վաղվաղեա՛ ի կեցուցանել զիս ։
Լեր իմ Ած պաշտպան. և տուն
ապաւ

ապաւինի ապրեցուցանել զիս. զի
հզօրիչ իմ. եւ ապաւէն իմ դու ես։
Վասն անուան քոյ առաջնորդես
ցես ինձ՝ եւ սնուսցես զիս. եւ հան
ցես զիս յորոգայթէ յայսմանէ՝
զոր թաքուցին ինձ։
Դու ես պաշտպան իմ Տր. եւ 'ի
ձեռն քո յանձնառնեմ զհոգի իմ։
Փրկեցեր զիս Տր Այ ճշմարտու
թեան. ատեցեր զայնոսիկ՝ որք
պահեն զերկիւղ սնոտի։
Ես 'ի Տր յուսացայ. ցնծացայց՝
եւ ուրախ եղէց 'ի փրկութն քում։
Զի հայեցար 'ի խոնարհութիւն
իմ. եւ փրկեցեր 'ի վշտաց զանձն
իմ. եւ ոչ մատնեցեր զիս. 'ի ձեռս
նեղչաց իմոց. եւ կացուցեր յան
դորրու զոտս իմ։
Ողորմեաց ինձ Տր. զի նեղեալ եմ
ես. խռովեցաւ 'ի սրտմտութենէ
ակն իմ՝ անձն իմ՝ եւ փոր իմ։
Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ.
եւ ամք իմ յոգւոց ելանելոյ։
Աղքատացաւ 'ի տկարութէ զօ
րութի իմ. եւ ոսկերք իմ խռովե
ցան։

Բ. ան

Վ․ան զա̃մ թշնամիսն իմ եղէ ես
նախատ դրացեաց իմոց․ յոյժ ահ՝
և երկիւղ ծանօթից իմոց։
Ա․մենեքեան՝ որք տեսանէին զիս․
արտաքս փախչէին յինէն։
Մ՝ոռացեալ եղէ ես որպէս մե-
ռեալ 'ի սրտէ․ և եղէ ես որպէս
զանօթ կորուսեալ։
Զ ի լուա́յ ես զբամբասանս բազ-
մաց՝ որք շուրջ էին զինև․ 'ի ժո-
ղովել նց̃ միասին՝ առնուլ զանձն
իմ խորհեցան․ այլ ես 'ի քեզ Տ̃ր
յուսացայ։
Ա․սացի՝ դու ես Ա․ծ իմ․ և 'ի
ձեռս քո է ժառանգութի̃ իմ։
Փրկեա́ զիս 'ի ձեռաց թշնամեաց
իմոց․ և 'ի հալածչաց իմոց։
Ե․րևեցո́ զերես քո 'ի ծառայս
քո․ ապրեցո́ զիս Տ̃ր ըստ ողորմու-
թե̃ քում․ Տ̃ր մի́ յամօթ եղէց․
զի կարդացի առ քեզ։
Ա․մաչեսցեն ամպարշտք՝ և իջցեն
'ի դժոխս․ համր եղիցին շրթունք
նենգաւորք՝ որք խօսին զարդա-
րոյ զանիրաւութիւն․ յամբարտաւ-
անու․

անութե̃ և յանգոսնել իւրեանց։
Որպէս զի բազում արարեր զողոր
մութի̃ քաղցրութե̃ քո Տ̃ր. զոր
պահեցեր երկիւղածաց քոց։
Արարեր դու այնոցիկ՝ ոյք յու
սացեալք են 'ի քեզ. առաջի որ
դւոց մարդկան։
Ամրացուսցես զնոսա 'ի ծածկոյթ
երեսաց քոց. 'ի խռովութենէ
մարդկան։
Ծածկեսցես զնոսա 'ի խորանի
քում. 'ի հակառակութենէ լեզ
ուաց։
Օրհնեալ է Տ̃ր՝ զի սքանչելա
արար զողորմութիւն իւր 'ի քա
ղաք ամուր։
Ես ասացի 'ի զարմանալ իմում.
թէ ընկեցայ ուրեմն յերեսաց ա
չաց քոց։
Վ̃ն այսորիկ լուար ձայնի աղօթ
ից՝ իմոց. յաղաչել ինձ առ քեզ։
Սիրեցէք զՏ̃ր ա̃մ ս̃ք նորա. զի
զստուգութի̃ խնդրէ Տ̃ր. և հա
տուցանէ այնոցիկ՝ ոյք առաւել
առնեն զամբարտաւանութիւն։

Քա

Քաջալերեցարուք՝ և զօրասցին սիրտք ձեր. ամենեքեան՝ որք յուսացեալ էք 'ի տ՟ր։

Տուն. 29։

Իմաստութեան սաղմոս Դաւթի. Լ՟Ա՟։

Երանի որում թողութիւն եղև մեղաց. և ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն՝ որում ոչ համարի տ՟ր զմեղս նորա. և ոչ գոյ նենգութիւն 'ի բերանոյ նորա։

Լռեցի ես՝ և մաշեցան ա՟մ ոսկերք իմ. առ աղաղակել իմ առ Տ՟ր զօրհանապազ. 'ի տուէ և 'ի գիշերի։

Ծանրացաւ ձեռն քո 'ի վերայ իմ. դարձայ 'ի թշուառութիւն իմ. զի հարան յիս փուշք։

Զմեղս իմ ցուցի քեզ. և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի 'ի քէն։

Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. և դու թողցես զա՟մ ամպարշտութիւնս մեղաց իմոց։

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ՝ քեզ ա՟մ սուրբք 'ի ժամ ընդունելի։

Բայց

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց. որք առ նոսա ի՛նչ ոչ մերձենան։

Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ յայսմանէ. որ շուրջ եղեալ զինեւ։

Ցնծութի իմ, փրկեա՛ զիս յայնցանէ. ոյք պաշարեցին զիս։

Իմաստուն արարից զքեզ՝ եւ խելամուտ 'ի ճանապարհի՝ յոր գնասցես. եւ հաստատեցից 'ի վերայ քո զաչս իմ։

Մի՛ լինիք որպէս զձի՛ եւ զջորի. զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութի. 'ի սանձ՝ եւ 'ի դանդանաւանդս ձմլեսցես զկզակս նոցա, որք քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բազում տանջանք են մեղաւորաց. բայց ոյք յուսան 'ի Տր՝ ողորմութիւն տեառն շուրջ եղիցի զնոքօք։

Ուրախ լերուք՝ եւ ցնծասջիք առ դարք. 'ի Տր պարծեցարուք ամենեքեան՝ ոյք ուղիղք էք սրտիւք։

Տունք. 14։

Անվերնագիր է ՚ի Հեբրայեցւոց:

# ԼԲ.

Ցնծացէք արդարք ՚ի Տր. ուղղոց վայել է օրհնութի. խոստովան եղերուք տն օրհնութբ. տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա:

Օրհնեցէք զնր յօրհնութի նոր՝ բարւոք սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ:

Ուղիղ են պատգամք տն և ամ գործք նր հաւատովք են. և սիրէ զողորմութի և զիրաւունս տր:

Ողորմութբ տն լի եղև երկիր. և բանիւ տն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա:

Ժողովեաց որպ ՚ի տիկ զջուրս ծովու. և դնէ ՚ի խորս զգանձս իւր:

Երկիցէ ՚ի տէ ամենայն երկիր. և ՚ի նմանէ դողասցին ամենայն բնակիչք աշխարհի:

Զի նա ասաց, և եղեն. ինքն հրամայեաց, և հաստատեցան:

Տ՟ր ցրուէ՛ զխորհուրդս հեթանոսաց. անարգէ տ՟ր զխորհուրդս ժողովրդոց. և արհամարհէ զխորհուրդս իշխանաց:

Խորհուրդք ան յաւիտեան մնան. և խորհուրդք սրտի նորա յազգէ մինչև յազգ:

Երանի ազգի՝ որում տ՟ր Ա՟ծ օգնական է նմա. Ժողովուրդ՝ զոր ընտրեաց ՚ի ժառանգութի՟ իւր:

Յերկնից նայեցաւ Տ՟ր յա՟մ որդիս մարդկան. ՚ի պատրաստ բնակութենէ իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի:

Որ ստեղծ առանձին զսիրտս նոցա. որ ՚ի միտ առնու զամենայն գործս նոցա:

Ո՛չ թէ ՚ի բազում զօրս իւր ապրեսցի թագաւոր. և ո՛չ հսկայ ՚ի բազում զօրութեան իւրում:

Սուտ է ձի ՚ի փրկութե՟ իւրում. ՚ի բազում զօրութե՟ իւրում ո՛չ ապրեցուցանէ զհեծեալն:

Աչք Տ՟ն ՚ի վ՟ր երկիւղածաց իւրոց. և յոյք յուսան յողորմութիւն նորա.

Փրկել

փրկել ՚ի մահուանէ զանձինս նց̃. և կերակրել զնոսա ՚ի սովու։
Անձինք մեր համբերեսցեն Տն̃. զի օգնական և պաշտպան մեր է։
՚Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր. և յանուն սուրբ նորա յուսասցուք։
Եղիցի ողորմութիւն քո Տր̃ ՚ի վր̃ մեր. որպ̃ յուսացաք ՚ի քեզ։

## Տաղ. 19։

Սաղմոս Դաւթի. ի ժամանակին որ այլափոխեաց զերեսս իւր առաջի Աբիմելէքայ. եւ արձակեաց զնա եւ գնաց։

## ԼԳ։

Օրհնեցից զՏր̃ յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ՚ի բերան իմ։
՚Ի Տր̃ պարծեսցի անձն իմ. լուիցեն հեզք՝ և ուրախ եղիցին։
Մեծ արարէք զտր̃ ինև. և բարձր արասցուք զանուն նր̃ իմիասին։
Խնդրեցի ՚ի Տն̃՝ և լուաւ ինձ. յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։
Մատիք առ նա, և առէք զլոյս.

և

և երեսք ձեր․ մի՛ ամաչեսցեն։

Այս աղքատ կարդաց առ Տր̅․ և Տր̅ լուաւ սմա․ յա̅մ նեղութենէ սորա փրկեաց զսա։

Բանակ հրեշտակաց Տն̅ շուրջ է զերկիւղածովք իւրովք․ և պահէ զնոսա։

Ճաշակեցէք՝ և տեսէք զի քաղցր է Տր̅․ երանեալ է այր՝ որ յուսայ ՚ի նա։

Երկերուք ՚ի Տն̅է ա̅մ սուրբք նորա․ զի ոչ ինչ է պակասութիւն երկիւղածաց նորա։

Մեծամեծք աղքատացան՝ և քաղցեան․ բայց որք խնդրեն զՏր̅․ մի՛ պակասեսցի ՚ի նոցանէ ամենայն բարութիւն։

Եկայք որդիք իմ՝ և լուարուք ինձ․ և զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ։

Ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս․ և սիրէ զաւուրս իւր տեսանել ՚ի բարութեան։

Զգուշացո՛ զլեզու քո ՚ի չարութենէ․ և շրթունս քո մի՛ խօսեսցին զնենգութի̅։

Խո

Խոստորեաց 'ի չարէ՝ և արա՛ զբա
րի. խնդրեա՛ զխաղաղութիւն՝ և
երթ զհետ նորա։
Աչք Տն̃ 'ի վերայ արդարոց. և
ականջք նր̃ 'ի վր̃ աղօթից նց̃։
Երես Տեառն 'ի վերայ չարա
գործաց. սատակել յերկրէ զյի
շատակս նոցա։
Կարդացին արդարք առ տր̃. և
տր̃ լուաւ նոցա. յամենայն նեղու
թենէ նց̃ փրկեաց զնոսա։
Մերձ է տր̃ առ այնոսիկ՝ որք մա
ջեալ են սրտիւք. և զխոնարհս
հոգւով կեցուցանէ։
Բազումք նեղութիւնք են արդա
րոց՝ յամենայնէ փրկէ զնոսա տր̃.
և պահէ զամենայն ոսկերս նոցա՝
և մի 'ի նոցանէ մի փշրեսցի։
Մահ մեղաւորի չար է. բայց
որք ատեն զարդարն զջասցին։
Փրկէ տր̃ զանձինս ծառայից իւ
րոց. մի՛ զղջասցին ամենեքեան,
որք յուսացեալ են 'ի նա։

Տուն. 22.

# Սաղմոս Դաւթի. ԼԴ։

Դատեա՛ Տր̄ զայնոսիկ՝ որք
դատեն զիս. մարտիր ընդ
այնոսիկ. որք մարտնչին
ընդ իս։
Առ զզէն եւ զասպար քո. եւ արի
յօգնել ինձ. հան զսուր քո ընդ-
դէմ հալածչաց իմոց՝ եւ արգել
զնոսա. ասա դու ցանձն իմ, թէ
փրկութիւն քո ես եմ։
Ամաչեսցեն՝ եւ յամօթ լիցին. որք
խնդրեն զանձն իմ. դարձցին
յետս՝ եւ ամաչեսցեն՝ որք խորհին
ինձ չար։
Եղիցին նոքա որպէս փոշի առա
ջի հողմոյ. եւ հրեշտակ Տեառն
նեղեսցէ զնոսա։
Եղիցին ճանապարհք նոցա 'ի խա
ւար՝ եւ 'ի գայթակղութ̄ի. եւ հրեշ
տակ Տ̄ն հալածեսցէ զն̄ա։
Ընդունայն թաքուցին ինձ զորո
գայթ ապականութ̄ե իւրեանց. եւ
ի նանիր նախատեցին զանձն իմ։
Հասցէ 'ի վերայ նոցա որոգայթ՝
զոր

զոր ո՛չ գիտացեն. և որս՛ զոր թա
քուցին՝ առցէ զնոսա նոյա. և յո
րոգայթ ՚ի նոյն անկցին:
Այլ անձն իմ ցնծասցէ ՚ի Տ՛ր.
ուրախ եղիցի ՚ի փրկութե՛ն նորա.
և ամենայն ոսկերք իմ ասասցեն
Տ՛ր ով նմանի քեզ:
Փրկել զաղքատն ՚ի ձեռաց հզօ
րին. զաղքատն և զտնանկն յայնցա
նէ՝ որք յափշտակեն զնա:
Յարեան ՚ի վերայ իմ վկայք չա
րեաց. զոր ինչ ո՛չ գիտէի՝ հարցա
նէին ցիս:
Հատուցին ինձ չար փոխանակ
բարւոյ. անժառանգել զանձն
իմ խորհեցան յորդւոց մարդ
կանէ:
Ես ՚ի նեղել նոցա բուրձ զգենուի.
խոնարհ առնէի պահօք զանձն իմ.
և աղօթք իմ ՚ի ծոց իմ դարձցին:
Որպէս զեղբայր՝ և զընկեր այսպէս
հաճոյ լինէի. որպէս զսգաւոր՝ և
զտրտում այնպէս խոնարհ առնէի:
՚Ի վերայ իմ ուրախ եղեն՝ և ժողո
վեցան. ժողովեցան յիս տանջանք՝
և

և ես ո՛չ ծանեայ․ ցրուեցան և ո՛չ
զղջացան։

Փորձեցին զիս՝ և արհամարհեցին․
արհամարհանօք կրճտեցին 'ի վե
րայ իմ զատամունս իւրեանց․ Տէր
երբ տեսցես։

Ի՛բաց արա՛ զանձն իմ 'ի խորա
մանկութենէ նոցա․ յառիւծուց
զմիամօրութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ Տէր յեկե
ղեցիս մեծս․ և 'ի ժողովս բազմաց
օրհնեցից զքեզ։

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք
իմ․ ոյք ատէին զիս 'ի տարապար
տուց․ ակնարկէի առնէին յիս աչօք
իւրեանց։

Ընդ իս զխաղաղութի խօսէին․
և՝ ինքեանք բարկութեամբ զնեն
գութիւն խորհէին։

Բացին 'ի վերայ իմ զբերանս իւ
րեանց՝ և ասացին․ այո՛՝ այո՛՝ տե
սին աչք մեր։

Տեսեր Տէր՝ և մի՛ լռեր․ Տէր մի՛
հեռացեալ առնիր յինէն։

Զարթիր՝ և հայեաց Տէր յիրա

ունս իմ, Ա՟ծ իմ, և Տ՟ր իմ. ՚ի դա
տաստանս իմ. և իրաւ արա ինձ
ը՟ս արդարութ՟ն քում Տ՟ր Ա՟ծ իմ։
Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք
իմ. և մի՛ ասասցեն ՚ի սիրտս իւր՟ց.
թէ վա՛շ վա՛շ անձանց մերոց՝ զի
ընկլուզաք զնա։

Ամաչեսցեն՝ և յամօթ լիցին. որք
խնդան ընդ չար իմ. զգեցցին զա
մօթ՝ և զանարգանս՝ որք մեծա
բանեն ՚ի վերայ իմ։

Ցնծասցեն՝ և ուրախ լիցին ՚ի քեզ
ամենեքեան. որք կամին ընդ ար
դարութիւն իմ։

Ասասցեն յամենայն ժամ՝ մեծ է
Ա՟ծ. որք կամին զխաղաղութիւն
ծառայի քոյ։

Լեզու իմ խօսեսցի զարդարու
թիւնս քո. զօրհանապազ զգո
վութիւնս քո։

Տունք. 27։

Ի կատարած. ծառային Տ՟ն Դաւ
թի։ ԼԵ։

Ասէ անօրէնն մեղանչել ընդ

միտս իւր. չիք երկիւղ Ա՟Յ առա
ջի աչաց նոցա։

Նենգեաց առաջի նր՟ 'ի գտանել
զանօրէնու՟ի իւր. և յատել զնա։

Բանք բերանոյ նորա անօրէնու
թիւն և նենգութիւն են։

Ո՛չ կամեցաւ նա իմանալ զբարի.
զանօրէնութիւն խորհեցաւ յան
կողնի իւրում։

Եկաց նա յամենայն ճանապարհ.
որ ոչ է բարի. և 'ի չարէ նա ոչ
ձանձրացաւ։

Տէ՛ր յերկինս է ողորմութիւն քո.
ճշմարտութի՟ քո մինչև յամպս։

Արդարութի՟ քո որպէս լերինք
ա՟ծ. իրաւունք քո որպէս խորք
բազումք. զմարդիկ և զանասունս
կեցուցանես դու Տ՟ր։

Որպէս զի բազում արարեր զողոր
մութի՟ քո Ա՟Յ. այլ որդիք մարդ
կան 'ի հովանի թևոց քոց յուսաս
ցին։

Արբեսցին նոքա 'ի պարարտու
թենէ տան քոյ. և զուղխս փափ
կութե՟ քոյ տացես ըմպել նոցա։

Զի

Ի քէն է Տէր աղբեւր կենաց. և
լուսով երեսաց քոց տեսանեմք
զլոյս:

Ձգեա զողորմութիւն քո՝ որք
ճանաչեն զքեզ. զարդարութիւն
քո՝ որք ուղիղք են սրտիւք:

Մի՛ եկեսցէ ի վերայ մեր ոտն ամ
բարտաւանից. և ձեռք մեղաւո
րաց մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ամենեքեան՝ որք
գործեն զանօրէնութիւն. մերժեցան՝
և այլ մի՛ կարասցեն հաստատել:

Տուն. 14.

Օրհնութիւն ձայնին Մովսէսի Դ. ձ
այնս մարգարէին: Ի վերայ Օրհնաց:

Լ. Ր.

Նայեցարուք երկինք և խօ
սեցայց. լուիցէ երկիր
զպատգամս բերանոյ իմոյ:

Ընդունելի լիցի որպէս զանձրև
բարբառ իմ. և իջցէ որպէս ցօղ
պատգամ իմ:

Որպէս անձրև ի վերայ սիզոյ. և
որպէս տարափ ի վերայ խոտոյ. զի

զա

զանուն ՏՆ կարդասջուք. և տուք
զօրհնութիւն ՏՆ Ա.Յ մերում։

Ա.Ծ, որոյ ճշմարտութեամբ են
գործք նորա. և ամ ճանապարհք
նորա իրաւամբք են։

Ա.Ծ հաւատարիմ է և ո՛չ գոյ 'ի
նմա անիրաւութիւն. արդար և
ճշմարիտ է ՏՐ։

Մ՝եղան և ո՛չ նմա որդիքն արա
տոյ. ծնունդք խոտորեալք և
թիւրեալք։

Ո՛չ այդ այն է՝ զոր ՏՆ հատուցա
նէիք դուք. ժողովուրդք յիմարք
և ո՛չ իմաստունք։

Ո՛չ սա ինքն է հայր քո. որ ստա
ցաւ զքեզ՝ արար զքեզ՝ և ս
տեղծ զքեզ։

Յուշ լիցին քեզ աւուրքն յաւի
տենից. իմացարուք զամս յազգաց
մինչև յազգս։

Հարցջիր դու զհարս քո՝ և պատ
մեսցեն քեզ. զծերս քո՝ և ասաս
ցեն քեզ։

Ի՝ ժամանակի, յորժամ բաժա
նէաց բարձրեալն զազգս ամ. և որ

պէս

պէս սփռեցնես զորդիսն ադամայ։
Կացոյց զսահմանս հեթանոսաց. ըստ թուոյ հրեշտակաց Ա.Յ։
Եղև բաժին Տն, ժողովուրդ իւր յակոբ. և վիճակ ժառանգու թեան իւրոյ իսրայէլ։
Բաւական եղև նմա յանապատի. ՚ի ծարաւ տօթոյ յանջրդուջ պաշտ պանեաց զնա։
Խրատեաց զնա՝ և պահեաց որպէս զբիբ ական. ոպ զարծուի ՚ի թևս իւր ընկալաւ զնա. և որպէս ՚ի վերայ ձագուց իւրոց գթացաւ։
Տարածեաց զթևս իւր և ընկա լաւ զնա. և բարձեալ բերէր զնա ՚ի վերայ միջնողաց իւրոց։
Տր միայն ածէր զնոսա. և ոչ գոյր ընդ նոսա Ա.Ծ օտար։
Ած եհան զնոսա ՚ի զօրութիւն երկրի. և կերակրեաց զնոսա արդ եամբք յանդաստանաց։
Դիեցոյց նոցա զմեղր ՚ի վիմէ. և զիւղ յապառաժ վիմէ։
Իւղ կովուց՝ և կաթն մաքեաց. ճարպով հանդերձ խոյոց. որթուց՝ ցլուց, և նոխազաց։

Ընդ

Զպարարտութիւն երիկամանց ցո
րենոյ. և զարիւն խաղողոյ էարբ
գինի:

Եկեր յակոբ և յագեցաւ. և ան
գուշեաց զսիրելին:

Պխրացաւ՝ ստուարացաւ լայնա
ցաւ՝ եթող զՏր Ած զարարիչ
իւր. և յետս եկաց յԱյ փրկչէ
իւրմէ:

Բարկացուցին զնա օտարոտիւք իւ
րեանց. և կռովք իւրեանց դառ
նացուցին զնա:

Զոհեցին դիւաց՝ և ոչ Աստու
ծոյ դիցն, զորս ոչ գիտէին. նորք
և առժամայնք՝ զորս բնաւ ոչ ճա
նաչէին հարք նոցա:

Թողին զՏր՝ որ ծնաւ զնա. մո
ռացան զԱստուած՝ որ կերա
կրեաց զնոսա:

Ետես Տր և նախանձեցաւ. և
սրտմտեցաւ 'ի վերայ ուստերաց և
դստերաց նոցա՝ և ասէ:

Դարձուցից զերեսս իմ 'ի նոցա
նէ. և ցուցից նոցա, զինչ լինելոց
իցէ յապաժամանակի:

Զի ազգմի թիւրք են նոքա՝ և որդիք անհաւանք. նոքա նախանձեցուցին զիս 'ի չաստուածս իւրեանց՝ և դառնացուցին զիս 'ի կուռս իւրեանց։
Արդ՝ և ես նախանձեցուցից զնոսա՝ յազգ անպիտան. և անմտիւ ազգաւ զկծեցուցից զնոսա։

## Տանք. 30։

Տուք փառս Ա.Ծ՝ տուք զօրհնութիւն մարգարէին՝ թագաւորին յաւիտենից. որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ։
Մարգարէր Տէր վ սրբուհւոյ։

### Բ. աղօթ [illegible] և [illegible] [illegible]։

Վասն 'ի գիշերի և 'ի տուընջեան՝ և յամենայն ժամու խօսիլ մեզ զբան Տեառն. զՏէր աղաչեսցուք։
Մ չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն որում ոչ կարեմք համբերել՝ զՏէր աղաչ։ Վասն

Վասն անբիծ և անդատապարտ կալոյ մեզ. առաջի ահեղ ատենին Քրի. զտր աղ։

Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց՝ անվախճանից. զտր աղա։

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն՝ և երկնից արքայութեանն. զտր աղա։

Սա հոգւոյն։ Ձա. ես և վա։
Օ անձինս։ Ողորմեաց։

Ի գիշերի և 'ի տուընջեան՝ և յամենայն ժամու զքեզ աղաչեմք և 'ի քէն խնդրեմք մարդասէր տր։ Տուր մեզ Ած փրկիչ մեր. խոնարհեցո ունկն քո 'ի խնդրուածս մեր. զի մի ունայն լիցին վաստակք ծառայից քոց։ Այլ համարեաց զաշխատութիւնս մեր 'ի գործ արդարութե՝ և 'ի պտուղ Ածպաշտութեան։ Ընկալ զաղօթս և զերկրպագութիւնս մեր. և հաստա մեզ զողորմութիւն քո առատապէս։ Ծածկեա զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քոյ։ Զօրա

ցո

ցո՛ զմեզ Տէ՛ր՝ զօրութեամբ սրբոյ
Հոգւոյդ. պահեա՛ զմեզ որպէս
բիբ ական: Եւ արա՛ առ մեզ
զնշան բարի. 'ի գովեստ և 'ի փա
ռաբանութիւն անուա՛նդ քում
սրբոյ: Զի 'ի քո փառս կատարի,
ամ՛ արարածոց մշտնջենաւո՛ր փա
ռաբանութիւն 'ի բարձունս Հօր
և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ.
այժմ, և միշտ, և յաւիտեանս յա
ւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Հովիւ քաջ՝ հովիւ բարի՝ և յա
ւիտենական: Աղեաց և այց արա՛
բանաւոր հօտի քոյ. զոր ժողովե
ցեր առ քեզ գթութեամբ քով:
Զի քո առաջի կամք Տէր. և առ
'ի քէն ողորմութեանցն և գթու
թեանցն ակն ունիմք: Զամենե
սեան օրհնեա՛՝ զամենեսեան ի
մաստնացո՛. զամենեսեան լուսաւո
րեա՛. և ամենեցուն պարգևեա՛
զերկնից արքայութիւնդ: Զի
դու ես Տէր կենաց, և Հծ ողորմու
թեան. և քեզ վայել է փառք ի

խա

խանութիւն՝ և պատիւ. այժմ, և
միշտ, և յաւիտեանս յաւիտենից։

Ամէն։

Ի գիշերի և ՚ի տուընջեան. և յա
մենայն ժամու անդադար փառա
ւորեմք զՀայր, և զՈրդի՝ և
զՍուրբ Հոգին. այժմ,
և միշտ, և յաւի
տեանս յաւ
իտենից։

Ամէն։



## Սաղմոս Դաւթի. ԼԶ։

ՄԻ ՆԱԽԱՆ
ձիր ընդ չարս. և մի
ընդ այնոսիկ՝ որք գոր
ծեն զանօրէնութի։

Զի որպէս զխոտ վաղվաղակի ցա
մաքեսցին. ոպ զդալարի խոտոյ
վաղվաղակի անցցեն։

Յուսա՛ 'ի Տր՝ և արա՛ զքաղց
րութի. բնակեաց յերկրի՝ և հո
վուեսցես 'ի մեծութե նր։

Խնդա՛ 'ի Տէ՝ և նա տացէ քեզ
զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛
առաջի Տն զճանապարհ քո. և
յուսա՛ 'ի նա։

Զինա արասցէ. և հանցէ որպէս
զլոյս զարդարութի̄ւնս քո. և զիրա
ւունս քո ոպ̄ զօրհասարակ:
Հնազանդ լեր Տեառն. և ծա
ղաչեա՛ նմա. և մի նախանձիր ընդ
այնոսիկ՝ որոց առաջեալք լիցեն
ճանապարհք իւրեանց. ընդ մար
դոյ՝ որ գործէ զանօրէնութի̄ւ.
Լռեա՛ 'ի բարկութե̄է և հանգիր
'ի սրտմտութենէ. և մի նախանձիր
ընդ չարս:
Զի չարք վաղվաղակի սատակես
ցին. բայց ոյք համբերեն Տն̄՝
նոքա ժառանգեսցեն զերկիր:
Փոքր մի ևս՝ և այլ ո՛չ իցէ ամպա
րիշտն. խնդրեսցես զտեղի նորա.
և ո՛չ գտցես:
Բ.յց որք հեզքն են՝ նոքա ժառան
գեսցեն զերկիր. և փափկասցին 'ի
բազում խաղաղութե̄ իւրեանց:
Սպասէ մեղաւորն արդարոյ. և կրճ
տէ 'ի վերայ նր̄ զատամունս իւր.
այլ Տր̄ ծիծաղեսցի զնովաւ:
Քանզի յառաջագոյն տեսանէ.
զի հասեալ է օր նորա:

Սուր

Ուր հանին մեղաւորք՝ և լարեցին զաղեղունս իւրեանց․ հարկանել զաղքատն՝ և զտնանկն․ սպանանել զայն՝ որ խոնարհն է սրտիւ։

Սուրք նց մտցեն ՚ի սիրտս նոցա․ և աղեղունք նոցա փշրեսցին։

Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ․ քան զբազում մեծութիւն մեղաւորաց․ և բազուկք ամպարշտաց խորտակեսցին։

Հաստատէ Տր զարդարս․ և ճանաչէ զաւուրս ամբծից ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի։

Ո՛չ ամաչեսցեն նոքա ՚ի ժամանակս չարութեան․ այլ յաւուրս սովու յագեսցին։

Ի՛հա մեղաւորք կորիցեն․ այլ թշնամիք Տն ՚ի փառաւորել և ՚ի բարձրանալ իւրեանց պակասեսցին որպէս ծուխ զի պակասի։

Փոխ առնու մեղաւորն, և ո՛չ հատուցանէ․ այլ որ արդարն է՝ ողորմի, և տայ։

Ոյք օրհնեն զնա, ժառանգեսցեն զերկիր․ և ոյք անիծանեն սատակեսցին ՚ի նմանէ։

Ի

Ի Տէ ուղղին գնացք առն · զճա
նապարհս նորա նա կամի յոյժ ։
Թէպէտ և գայթակղեսցի՝ նա մի
կործանեսցի · զի Տ՟ր ձեռն կալու
է նորա ։
Մանուկ էի ես՝ և ծերացայ · և ո՛չ
տեսի զարդարն արհամարհեալ՝ և
ո՛չ զաւակ ն՟ր թէ մուրանայ հաց ։
Զօրհանապազ ողորմի՝ և տայ
փոխ · զաւակ ն՟ր օրհնեալ եղիցի ։
Խոտորեաց ՚ի չարէ՝ և արա՛ զբա
րի · բնակեսցես յաւիտեանս յաւի
տենից ՚ի նմա ։
Տ՟ր սիրէ զիրաւունս՝ և ո՛չ ընդ
վայր հարկանէ զսուրբս իւր · այլ
յաւիտեան պահէ զնոսա ։
Անօրէնք հալածեսցին իսպառ ·
և զաւակ ամպարշտաց սատա
կեսցի ։
Այլ արդարք ժառանգեսցեն զեր
կիր · և բնակեսցեն յաւիտեանս յա
ւիտենից ՚ի նմա ։
Բերան արդարոյ խորհի զիմաս
տութ՟ի · և լեզու նորա խօսեսցի
զիրաւունս ։

Օրէնք

Օրէնք Աստուծոյ իւրոյ են ՚ի
սրտի իւրում. և ոչ գայթակղես
ցին գնացք նորա։

Հայի մեղաւոր ընդ արդարն՝ և
խնդրէ սպանանել զնա. այլ Տէր
ոչ թողու զնա ՚ի ձեռս նորա՝ և
ոչ դատապարտէ զնա՝ յորժամ
դատէ զնա։

Համբեր Տն. և պահեա զճանա
պարհս նորա. և բարձր արասցէ
զքեզ ՚ի ժառանգել զերկիր. և
զսատակումն մեղաւորաց տեսցես։

Տեսի զամպարիշտն վերացեալ.
և բարձրացեալ որպէս զմայրս լի
բանանու։

Անցի և ահա ոչ էր. խնդրեցի և
ոչ գտաւ տեղի նորա։

Պահեա զամբծութիւն՝ և տես
զուղղութիւն. զի գոն մնացուածք
առն խաղաղարարի։

Անօրէնք հալածեսցին իմիասին.
և զաւակ ամպարշտաց կորիցէ։

Փրկութիւն արդարոց ՚ի Տէ է.
վերակացուէ նոցա ՚ի ժամանակս
նեղութեան։

Օգ

Օգնեսցէ նոցա Տէր, և փրկեսցէ
զնոսա. ապրեցուսցէ զնոսա 'ի մե
ղաւորաց. և կեցուսցէ զնոսա՝ զի
յուսացան 'ի նա։

Տունք. 19։

Սաղմոս Դաւթի. առ յիշատակն շաբա
թու։ ԼԷ։

Մի՛ սրտմտութեամբ քով
յանդիմաներ զիս. և
մի՛ բարկութեամբ քով
խրատեր զիս։
Զի նետք քո հարան յիս. և յիս
հաստատեցաւ ձեռն քո։
Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ.
յերեսաց բարկութեան քոյ։
Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց՝
յերեսաց մեղաց իմոց։
Անօրէնութիւնք իմ բարձրացան
քան զգլուխ իմ. որպէս զբեռն
ծանր ծանրացան 'ի վերայ իմ։
Նեխեցան, և փտեցան վէրք իմ.
յերեսաց անզգամութեան իմոյ.
Տառապեցայ՝ և խոնարհ եղէ մին

չև յոյժ. զօրհանապազ տրտում
գնայի. զի անձն իմ լի եղև չարչա
րանօք. և ոչ գոյ բժշկութիւն
մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ՝ և խոնարհ եղէ մին
չև յոյժ. մռնչէի առ հեծութե
սրտի իմոյ։

Տէր առաջի քո է ամ̃ ցանկութի̃
իմ. և հեծութիւն իմ'ի քէն ոչ
ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող
զիս զօրութիւն իմ. լոյս աչաց
իմոց՝ և այս ոչ եղև ընդ իս։

Բարեկամք իմ, և մերձաւորք իմ,
առաջի իմ մերձեցան՝ և կացին. և
մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս՝ և խնդրէին
զանձն իմ. որք խորհէին չար'ի վր̃
իմ. խորհեցան զանօրէնութիւն՝
և զնենգութիւն զօրհանապազ խոր
հեցան։

Բայց ես որպէս զխուլ՝ զի ոչ լսէ.
որպէս համր՝ որ ոչ բանայ զբե
րան իւր։

Եղէ ես որպէս զմարդ՝ որ ոչ լսէ

և ո՛չ գոն խօսք 'ի բերան նորա ։

Զի 'ի քեզ Տ՟ր յուսացայ. և դու լուիցես ինձ Տ՟ր Ա՟ծ իմ։

Ասացի՝ թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. 'ի սասանել ոտից իմոց՝ 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան ։

Զի 'ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յա՟մ ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից. և հոգացայց վասն մեղաց իմոց ։

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանիք են՝ և զօրացեալք եղեն քան զիս. և բազումք են, որք ատեն զիս տարապարտուց ։

Որք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. չարախօսէին զինէն. զի ես երթայի զհետ արդարութեան ։

Մի՛ թողուր զիս Տ՟ր Ա՟ծ իմ, և մի՛ ի բացեայ առնիր յինէն հայեաց յօգնել ինձ՝ Տ՟ր փրկութեան իմոյ ։

Տաղ. 22 ։

Ի կատարած ի դէթութմայ. Սաղմոս Դաւթի: ԼԸ:

Ասացի՝ թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի՛ մեղայց լեզուաւ իմով:

Եդի պահապան բերանոյ իմոյ 'ի հակառակել մեղաւորին առաջի իմ:

Լուռ եղէ՝ և խոնարհեցայ. լռեցի 'ի բարութենէ. և ցաւք իմ նորոգեցան յիս:

Ջեռաւ սիրտ իմ 'ի փորի իմում. և՛ 'ի խորհուրդս իմ վառեցաւ հուր:

Խօսեցայ լեզուաւ իմով. և ասացի, ցոյց ինձ Տէր զկատարած իմ. և զթիւ աւուրց իմոց՝ քանի՞ոն է, զի գիտացից թէ որչափ ինչ պակասեալ է յինէն:

Ահա չափով եդիր զաւուրս իմ. և կար զօրութեան իմոյ ո՛չ ոչինչ է առաջի իմ. սակայն ամենևին ընդունայն է ամ՟ մարդ մնեղի:

Ապաքէն ո՛չ 'ի պատկերի շրջի մարդ՝ սակայն 'ի զուր խռովի. գանձէ՝ և ո՛չ գիտէ ում ժողովէ.

Իսկ

Իսկ արդ՝ ով է համբերութն իմ.
թէ ոչ դու Տ̅ր. կամ կար զօրու
թ̅ե իմոյ՝ թէ ո՛չ 'ի քէն ։
Յա̅մ անօրէնութենէ իմմէ փրկե
ցեր զիս. և նախատինս անզգամաց
արարեր զիս։
Լուռ եղէ՝ և ո՛չ բացի զբերան
իմ. զի դու արարեր։
Ի բաց արա՛ յինէն զտանջանս իմ.
զի 'ի զօրութենէ ձեռին քոյ ես
պակասեցայ ։
Աշտամբութ̅ե վասն մեղաց խրա
տեցեր զմարդ. մաշեցեր ո̅պ սար
դի ոստայն զանձն նորա. սակայն
ընդունայն է ա̅մ մարդ ։
Լուր Տ̅ր աղօթից իմոց՝ ունկն
դիր խնդրուածաց իմոց. արտա
սուաց իմոց մի՛ լռեր։
Պանդուխտ եմ ես առաջի քո.
նշդեհ և անցաւոր՝ որպէս ամե
նայն հարք իմ։
Թող արա՛ ինձ՝ զի հանգեայց՝
մինչչև երթեալ իցեմ. և այլ ո՛չ ևս
գտանիցիմ։
Տունք. 16։

'Ի կա

## Ի կատարած Սաղմոս Դաւթի.

### ԼԹ.

Համբերելով` համբերի Տեառն` և նայեցաւ առ իս. և լուաւ աղօթից իմոց։

Եհան զիս 'ի գբոյ տառապանաց. 'ի կաւոյ և 'ի տղմոյ։

Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց զգնացս իմ։

Եարկ 'ի բերան իմ զօրհնութի նոր. զօրհնութի Տն Այ մերոյ։

Տեսցեն բազումք` և երկիցեն` և յուսասցին 'ի Տր. երանեալ է այր` որոյ անուն Տն յոյս է նորա։

Ո՛չ հայեցաւ նա 'ի նանրութի. և ո՛չ 'ի մոլորութիւնս սուտս։

Բազում արարեր դու Տր Ած իմ զսքանչելիս քո. և խորհրդոց քոց ո՛չոք է` որ նմանեսցի քեզ։

Պատմեցի` և խօսեցայ` և բազումք եղեն քան զթիւս. ընդ զոհս և ըն պատարագս ո՛չ հաճեցար. լսելիս հաստատեցեր ինձ. զողջակէզս` և զվն մեղացն ո՛չ խնդրեցեր։

Յայնժամ ասացի` թէ ահաւասիկ գամ.

գամ. 'ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ։

Առնել զկամս քո Ած իմ կամեցայ. և զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ.

Աւետարանեցի զարդարութիւն քո յեկեղեցիս մեծս. ահա զշրթունս իմ ոչ արգելից 'ի քէն.

Տէր դու գիտացեր՝ զի զարդարութիւն քո ոչ ծածկեցի 'ի սրտի իմում. զճշմարտութիւն քո՝ և զփրկութիւն քո։

Ասացի՝ և ոչ թաքուցի զողորմութիւն քո. և զճշմարտութիւն քո 'ի ժողովրդենէ մեծէ։

Դու Տէր մի հեռի առներ զգթութիւն քո. զի ողորմութի քո՝ և ճշմարտութիւն քո յամենայն ժամ ընկալցին զիս։

Շուրջ եղեն զինև չարք՝ որոց ոչ գոյր թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ. և ես ոչ կարացի տեսանել։

Բազումք եղեն քան զհեր գլխոյ իմոյ՝ և սիրտ իմ եթող զիս։

Կամեցայ Տր փրկել զիս. և Տր
յօգնել ինձ նայեաց:
Ամաչեսցեն՝ և յամօթ լիցին. որք
խնդրեն զանձն իմ, բառնալ զա-
դարձցին յետս, և ամաչեսցեն՝ որք
խորհին ինձ չար:
Կրեսցեն զամօթ առժամայն վաղ
վաղակի. որք ասեն ինձ վա՜շ վա՜շ:
Ցնծասցեն՝ և ուրախ լիցին ՚ի քեզ
ամենեքեան. որք խնդրեն զքեզ տր:
Ասասցեն յամ ժամ մեծ է Ած.
և որք սիրեն զփրկութիւն քո:
Ես աղքատ և տնանկ եմ Ած.
խորհեա՛ զիս. օգնական և պաշտ-
պան իմ ես դու՝ Ած մի՛ յամենար:

## Տուն. 23:

### Ի կատարած Սաղմոս Դաւթի. Խ:

Երանի որ խորհի զաղքատն
և զտնանկն. յաւուր չարի
փրկէ զնա Տր:
Տր փրկէ զնա՝ և կեցուցանէ. երա-
նելի առնէ զնա ՚ի վերայ երկրի.
և

և ոչ մատնէ զնա 'ի ձեռս թշնա
մեաց իւրոց:
Տէր օգնական է նմա 'ի մահիճս
ցաւոց իւրոց. և զամենայն անկո
ղինս նորա դարձուցանէ 'ի հիւանդ
դութենէ նորա:
Ես ասացի Տէր ողորմեա ինձ. և
բժշկեա զանձն իմ. զի ես մեղայ
քեզ:
Թշնամիք իմ ասացին ինձ չար.
երբ իցէ՝ զի մեռցի, զի և կորիցէ
անուն նորա:
Մտանէր տեսանել զնանրութի.
խօսէր 'ի սրտի իւրում. և ժողո
վէր զանօրէնութի յանձն իւր:
Արտաքս ելանէր՝ և զնոյն խօսէր.
զինէն շշնջէին ա՟մ թշնամիք իմ:
Խորհեցան չար 'ի վերայ իմ. զբան
անօրէնութե եդին 'ի վ՟ր իմ:
Մի՞ թէ որ ննջիցէ և այլ ոչ ևս յա
ւելցի յառնել. քանզի՝ և այրն խա
ղաղութե իմոյ՝ յոր եսն յուսացայ:
Որ ուտէր զհաց իմ. յաճախեաց
առնել ինձ զխաբէութի.
Այլ դու Տէր ողորմեա ինձ, և
կանգ.

կանգնեա՛ զիս եւ ես հատուցից նոցա։

Յայսմ ծանեայ՝ զի հաճեցար ընդ իս, զի ո՛չ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ։

Վասն զիս յանմեղութեան իմում ընկալար. եւ հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։

Օրհնեալ Տր̄ Ա̄ծ իսրայէլի յաւիտեանս յաւիտենից. եղիցի՝ եղիցի։

## Տաղք. 15։

Ի կատարած. վասն իմաստութեան որդւոցն կորխայ։ ԽԱ։

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց. այնպէս փափագի անձն իմ առ քեզ Ա̄ծ։

Ծարաւի է անձն իմ առ քեզ Ա̄ծ, հզօր եւ կենդանի. երբ եկից՝ երեւեցայց երեսացդ Ա̄յ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ եւ ՚ի գիշերի. եւ այն՝ զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ուր է Ա̄ծ քո։

Զայս որպէս յիշէի տառապէր յիս՝ անձն իմ. քանզի երթայի, զի

մտից

մտից ընդ յարկաւ սքանչելեաց
տանն Աստուծոյ։

Ի ձայն ցնծութեան խոստովա
նութեան. և ’ի ձայն բարեկենդա
նութեան։

Ընդէր տրտում ես անձն իմ.
կամ ընդէր խռովես զիս. յուսա
առ Ած, խոստովանեա՛ նմա. փըր
կիչ երեսաց իմոց Ած է։

Անձն իմ յոյժ խռովեցաւ. վասն
այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն յոր
դանանու. ’ի հերմոնէ լեռնէ փո
քունէ։

Խորք խորոց կարդասցեն առ քեզ.
’ի ձայն սահանաց քոց։

Ամենայն զբօսանք քո՝ և ալիք
քո՝ անցին ’ի վերայ իմ։

Ի տուէ պատուիրեաց Տր զողոր
մութի իւր. ’ի գիշերի զօրհնու
թիւն նոր. և աղօթք իմ առ Ած
վասն կենաց իմոց։

Ասացի Այ՝ ընդունող իմ ես. ըն
դէր մերժեցեր զիս. ընդէր տըր
տում գնամ ես ’ի նեղել թշնա
մւոյ իմոյ։

Ի փշրել ոսկերաց իմոց նախատէ-
ցին զիս թշնամիք իմ. յասել ցիս
զօրհանապազ՝ թէ ուր է ա͞ծ քո։
Արդ ընդէր տրտում ես անձն
իմ, կամ ընդէր խռովես զիս. յու-
սա՛ առ ա͞ծ. խոստովանեա՛ նմա՝
փրկիչ երեսաց իմոց ա͞ծ է։

Տուն. 14։

Սաղմոս Դաւթի։ ԽԲ։

Դատ արա՛ ինձ ա͞ծ. և իրաւ ա-
րա՛ ինձ 'ի դատաստանի իմում։
Յազգէ որ ոչ է ս͞բ՝ 'ի մարդոյ մե-
ղաւորէ՝ նենգաւորէ փրկեա՛ զիս։
Դու ա͞ծ, հզօրիչ իմ ես. ընդէր
մոռացար զիս. ընդէր տրտում գը-
նամ ես, 'ի նեղել թշնամւոյ իմոյ։
Առաքեա՛ Տ͞ր զլոյս քո՝ և զճշմար-
տութիւն քո. զի առաջնորդես-
ցեն ինձ. հանցեն զիս 'ի լեառն
սուրբ՝ և 'ի յարկս քո։
Մտից առաջի սեղանոյ ա͞յ, առ
ա͞ծ, որ ուրախ առնէ զմանկու-
թիւն իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութ͞բ.
ա͞ծ, ա͞ծ իմ։ Արդ

Բ.որդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա͞ծ. խոստովանեսցուք նմա՝ փրկիչ երեսաց իմոց ա͞ծ է։

Տուն. Է։

Ի կատարած. որդւոցն կորխայ. սաղմոս իմաստութեան։ ԽԳ.

Ա͞ծ ականջօք մերովք լուա՛ք. և հարքն մեր պատմեցին մեզ։

Զգործս զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս։

Ձեռն քո խլեաց զհեթանոսս. և զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս քո՝ և հաներ զնոսա։

Զի ոչ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր. և ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա։

Այլ աջ քո՝ և բազուկ քո՝ և լոյս երեսաց քոց. զի հաճեցար ընդ նոսա։

Դու ես ինքն ես՝ թագաւոր իմ, և ա͞ծ

ա͠ծ իմ. որ հրամայես զփրկու
թիւնս յակոբայ։

Քև զթշնամիս մեր հարցուք. և
անուամբ քով արհամարհեսցուք,
զյարուցեալսն ՚ի վերայ մեր։

Ո՛չ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ.
և ո՛չ սուր իմ կեցուցանէ զիս։

Այլ դու փրկեցեր զմեզ ՚ի թշնա
մեաց մերոց. և զատելիս մեր յա
մօթ արարեր։

Աստուծով պարծեսցուք զօրհա
նապազ. և անուան նորա խոստո
վան եղիցուք յաւիտեան։

Բայց արդ՝ մերժեցեր, և անար
գեցեր զմեզ. և ո՛չ ելեր ա͠ծ ընդ
զօրս մեր։

Դարձուցեր զմեզ յետս քան
զթնշնամիս մեր. և ատելիք մեր
յափշտակեցին զմեզ։

Ետուր զմեզ որպէս զոչխար ՚ի
սպանումն. և ընդ հեթանոսս ցրո
ւեցեր զմեզ։

Վաճառեցեր զժողովուրդս քո
առանց գնոյ. և ո՛չ գոյ թիւ աղա
ղակի մերոյ։

Արա

Արարեր զմեզ նախատինս դրա
ցեաց մերոց. ծաղր՝ և այպն կա
տականաց այնոցիկ. որք շուրջ է_
ին զմեօք:

Արարեր զմեզ յառակս հեթանո
սաց. 'ի շարժել զգլուխս ժողո
վրդոց:

Զօր ամենայն նախատինք իմ ա_
ռաջի իմ են. և ամօթ երեսաց
իմոց ծածկեաց զիս:

Ի ձայնէ նախատողին, և չարա
խօսի. յերեսաց թշնամւոյն՝ և հա
լածչի:

Այս ամ̃ եկն 'ի վերայ մեր՝ և մեք
զքեզ ոչ մոռացաք. և ոչ ստեցաք
ուխտի քում. և ոչ դարձաք յետս
սրտիւք մերովք:

Դարձուցեր զշաւիղս մեր 'ի ճա
նապարհաց քոց. խոնարհ արարեր
զմեզ 'ի տեղի չարչարանաց. և ծած
կեցին զմեզ ստուերք մահու:

Թէ մոռացեալ իցէ մեր զանուն
այ̃ մերոյ. կամ ձգեալ իցէ զձեռս
մեր յաստուածս օտարս:

Ապա այն ած̃ խնդրէ զայս. զի նա
քննէ

քննէ զգաղտնիս սրտից մերոց ։

Վասն քո մեռանիմք զօրհանապազ՝ համարեցաք որպէս զոչխար 'ի սպանումն ։

Զարթիր՝ ընդէ՞ր ննջես Տէր, արի՛ և մի՛ մերժեր զմեզ իսպառ ։

Զմէ՞ դարձուցանես զերեսս քո 'ի մէնջ՝ մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս մեր ։

Խոնարհք եղեն մինչև 'ի հող անձինք մեր . և յերկիր կցեցան մէջք մեր ։

Արի, Տէր՝ օգնեա՛ մեզ . և փրկեա՛ զմեզ վասն անուան քո ։

Տուն ։ 28 ։

'Ի կատարած . վասն այլայլելոց ժամանակաց . որդւոցն կորխայ . իմաստութիւն վասն սիրելւոյն ։ ԽԴ ։

Բղխեաց սիրտ իմ զբան բարի . և ասեմ զգործս իմ թագաւորի ։

Լեզու իմ որպէս գրիչ արագագիր դպրի . գեղեցիկ տեսլեամբ քան զորդիս մարդկան ։

Սփռ

Սփռեցան շնորհք 'ի շրթանց քոց՝ վասն այսորիկ օրհնեաց զքեզ ա̃ծ յաւիտեան:

Ա̃ծ զսուր ընդ մէջ քո հզօր. վայելչութեան և գեղոյ:

Լարեա՛՝ ուղղեա՛՝ և թագաւորեա՛. վս̃ ճշմարտութե̃՝ և հեզութե̃՝ և արդարութե̃՝ և առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո:

Նետք քո սրեալք են հզօր. ժողովուրդք 'ի ներքոյ քոյ անկցին. 'ի սիրտս թշնամեաց թագաւորին:

Աթոռ քո ա̃ծ յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան քոյ:

Սիրեցեր զարդարութիւն, և ատեցեր զանօրէնութիւն:

Վս̃ այսորիկ էօծ զքեզ ա̃ծ, ա̃ծ քո՛, իւղով ուրախութեան. առաւել քան զընկերս քո:

Զմուռս՝ և զստաշխն՝ և զկասիայ՝ 'ի զգեստէ քումմէ. 'ի տաճարաց փղոսկրէից ուստի ուրախ արարին զքեզ. դստերք թագաւորաց 'ի պատիւ:

Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ.
'ի հանդերձս ոսկէհուռս, զարդա
րեալ և պաճուճեալ:

Լո՛ւր դուստր՝ և տես. խոնարհե
ցո՛ զունկն քո. մոռա՛ ժողո
վուրդ քո և զտուն հօր քոյ. զի
ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ:

Զի նա է Տէ՛ր քո՝ երկիրպագցես
նմա. և դուստր Ծուրայ երկիր
պագցէ նմա պատարագօք. զերեսս
նորա պաղատեսցեն մեծամեծք 'ի
ժողովրդոց:

Ամ փառք դստեր թագաւորի 'ի
ներքոյ. 'ի վերջաւորս ոսկէհուռս,
զարդարեալ և պաճուճեալ:

Տարցին թագաւորի կուսանք ըզ
հետ նորա. և զընկերս նորա տար
ցին նմա:

Ածցին ցնծութբ՝ և ուրախու
թեամբ. և տարցին 'ի տաճար
թագաւորի. և փոխանակ հարց
քոց եղիցին որդիք քո:

Կացուսցես զնոսա իշխանս ընդ
ամենայն երկիր. յիշեսցի անուն
քո ընդ ամ ազգս ազգաց.

Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Տուն. 19։

Ի կատարած. որդւոցն կորխայ. 'ի վերայ գաղտնեաց։ Սաղմոս Դաւթի։

ԽԵ։

Աստուած մեր ապաւէն և զօրութիւն. օգնական 'ի նեղութեանց՝ որք գտին զմեզ յոյժ։

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռովել երկրի. 'ի փոփոխել լերանց 'ի սիրտ ծովու.

Պոռչեցին՝ և խռովեցան ջուրք նոցա. խռովեցան լերինք 'ի զօրութենէ նորա։

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ. և սուրբ արար զյարկս իւր բարձրեալն։

Աստուած 'ի մէջ նորա՝ և նա մի՛ սասանեսցի. օգնեսցէ նմա Աստուած՝ 'ի վաղորդենէ մինչև 'ի վաղորդեան։

Խռովեցան հեթանոսք՝ և խոնարհեցան թագաւորութիւնք՝ ետ

զձայն

զձայն իւր բարձրեալն. և խռովե
ցաւ երկիր:

Տր զօրութեանց ընդ մեզ ընդու
նելի է մեր Ած յակոբայ:

Եկայք և տեսէք զգործս Այ. որ
արար նշանս և զարմանս 'ի վե
րայ երկրի:

Եհար զպատերազմ 'ի ծագաց
մինչև 'ի ծագս երկրի. զաղեղունս
փշրեաց՝ զզէնս խորտակեաց. և
զասպարս այրեաց հրով:

Կանխեցէք՝ և ծաներուք, զի ես
եմ Ած. բարձր եղէց 'ի հեթա
նոսս: և բարձրացայց 'ի վր երկրի:

Տր զօրութեանց ընդ մեզ ընդու
նող է մեր Ած յակոբայ:

Տուն. 12:

Ի կատարած վասն որդւոցն կորխայ:
Սաղմոս Դաւթի: ԽԶ:

Ծափս հարէք ամ հեթա
նոսք. աղաղակեցէք առ
Ած 'ի ձայն ցնծութե:

Զի Տր բարձրեալ և ահաւոր՝

Թագաւոր մեծ 'ի վ՟ր ա՟մ երկրի։
Հնազանդ արար զժողովուրդս
մեզ. և զհեթանոսս 'ի ներքոյ ո-
տից մերոց։
Ընտրեաց զմեզ իւր 'ի ժառան
գութիւն. զգեղեցկութիւն յակո
բայ, զոր սիրեաց։
Համբարձաւ ա՟ծ օրհնութ՟բ. և
Տ՟ր մեր ձայնիւ փողոյ։
Սաղմոս ասացէք ա՟յ մերում. սաղ
մոս ասացէք Թագաւորին մերում,
սաղմոս ասացէք։
Թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն
երկրի ա՟ծ է. սաղմոս ասացէք
նմա իմաստութեամբ։
Թագաւորեաց ա՟ծ 'ի վերայ հե
թանոսաց. ա՟ծ նստաւ յաթոռ
սրբութեան իւրոյ։
Իշխանք ժողովրդոց ժողովեցան
առ ա՟ծ աբրահամու. զի ա՟յ զօրու
թիւնք յերկրէ յոյժ համբար
ձան։

Տուն. 14։

Սաղմոս օրհնութեան որդւոցն Կորխայ. երգ բարձր շաբաթու: ԽԷ:

Մեծ է Տ̃ր՝ և օրհնեալ է յոյժ
'ի քաղաքն ա̃յ մերոյ 'ի լերան,
սուրբ նորա:

Հաստատմամբ ցնծացէ ցնծու-
թ̃բ ա̃մ՝ երկիր, լերինք սիոնի.
կողմանք հիւսիսոյ՝ քաղաք թագա-
ւորի մեծի:

Ա̃ծ 'ի տաճարի իւրում յայտնի,
'ի ժամանակի նեղթե օգնական լի-
նէր նոցա:

Զի ահաւասիկ թագաւորութիւնք երկ-
րի ժողովեցան. և անցին միաբանին:

Ինքեանք տեսին այնպէս՝ և զար-
մացան. խռովեցան՝ սասանեցան.
և դողումն կալաւ զնոսա:

Անդ երկունք որպէս 'ի ծննդ-
կան. 'ի հողմն սաստիկ. փշրես-
ցէ զնաւս 'ի թարսիս:

Որ̃պ լուաք. սոյնպէս և տեսաք 'ի
քաղաքի Տ̃ն զօրութ̃եց, 'ի քաղա-
քի ա̃յ մերոյ:

Ա̃ծ զհիմունս եդաւ նմա յաւիտ̃ն.
ընկալաք ա̃ծ ողորմութ̃ի քո 'ի մէջ
ժողովրդեան քո: Ըստ

Ըստ անուան քում ա՟ծ. սոյնպէս
և օրհնութի՟ն քո ընդ ա՟մ տիեզերս,
և արդարութե՟ք լի է աջ քո։
Ուրախ եղիցի լեառն սիօն. և
ցնծասցեն դստերք յուդայ. վ՟ս
իրաւանց քոց Տ՟ր։
Շուրջեցարուք զսիոնիւ՝ և պա
շարեցէք զնա. և պատմեցէք յաշ
տարակս նորա։
Դի՛ք զսիրտս ձեր 'ի վերայ զօրու
թեանց նորա. բաժանեցէք զա
մուրս նորա. զի պատմել կարաս
ջիք յազգ յայլ։
Սա է ա՟ծ՝ ա՟ծ մեր յաւիտեանս յա
ւիտենից. և նա հովուեսցէ զմեզ
մինչև յաւիտեան։

Տուն. 14։

Ի կատարած որդւոցն կորխայ։ Սաղմոս
Դաւթի. Ը։

Լուարուք զայս ա՟մ ազգք.
ունկն դիր լերուք ամենեքեան,
որք բնակեալք էք յաշխարհի։
Ծնունդք երկրի և որդիք մարդ
կան, իմիասին մեծամեծք և
տնանկք։

Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն·
եւ խորհուրդ սրտի իմոյ զհանճար։
Խոնարհեցուցից յառակուածս զունկն
իմ· բացից զառակս օրհնութեան
'ի սկզբանէ։
Ընդէր բնաւ երկնչիմ ես յաւ
ուր չարի· զի անօրէնութիւնք զնա
ցից իմոց շուրջ եղեն զինեւ։
Յուսացեալք 'ի զօրութիւն իւ
րեանց· 'ի բազմութիւն մեծու
թեան իւրեանց պարծեցին։
Եղբայր ոչ փրկէ՝ եւ ոչ փրկէ
մարդ՝ եւ ոչ տայ այ զփրկանս իւր·
եւ ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ։
Սատակեա՛ յաւիտեան՝ եւ կեցցես
իսպառ· եւ ոչ տեսցես զապական
նութիւն։
Յորժամ տեսցես թէ իմաստունք
մեռանիցին, իմիասին անզգամք
եւ անմիտք կորիցեն· եւ թողցեն
օտարաց զմեծութիւն իւրեանց։
Գերեզմանք նոցա՝ տունք նց եղի
ցին յաւիտեան· եւ յարկք նց յազ
գէ մինչեւ յազգ՝ եւ կարդացին զա
նուանս նոցա 'ի հողս իւրեանց։
Մարդ

Մարդ 'ի պատուի էր՝ և ոչ իմա
ցաւ. հաւասարեցաւ անասնոց ան
մտից՝ և նմանեցաւ նոցա։

Այս ճանապարհ է նց՝ գայթակ
ղութեան նոցին. յետ այսորիկ բե
րանօք իւրեանց հաճեսցին։

Որպէս խաշն 'ի դժոխս մատնեա
ցին. և մահ հովուեսցէ զնոսա. և
տիրեսցեն նոցա ուղիղք ընդ ա
ռաւօտս։

Օգնութիւնք նոցա մաշեսցին 'ի
դժոխս. և 'ի փառաց իւրեանց
անկցին։

Բայց սակայն ած փրկեսցէ զանձն
իմ 'ի ձեռաց դժոխոց. յորժամ
ընդունիցին զիս։

Մի երկնչիր՝ յորժամ մեծանայ
մարդ. և յորժամ բազում լինին
փառք տան նորա։

Զի ոչ թէ 'ի մեռանելն իւրում
առցէ ընդ իւր զամ. և ոչ թէ իջ
ցեն փառք տան նորա ընդ նմա։

Բայց անձն նր 'ի կեանս իւրում
օրհնեսցի. խոստովան եղիցի քեզ՝
յորժամ բարի արասցես դու նմա։

Մտցէ

Մտցէ նա մինչեւ յազգ հարց իւ-
րոց. մինչեւ յաւիտեան զլոյս մի՛
տեսցէ։

Մարդ 'ի պատուի էր, եւ ոչ իմա-
ցաւ. հաւասարեցաւ անասնոց ան-
բանից՝ եւ նմանեցաւ նոցա։

Տուն. 21։

## Սաղմոս Դաւթայ։ ԽԹ։

Ած աստուծոց Տէր խօսե-
ցաւ. կոչեաց զերկիր՝
յարեւելից մինչեւ 'ի մուտս
արեւու։

'Ի սիօնէ մեծվայելչութ̅ն փրկու
թ̅ն գեղոյ նորա։

Ած մեր յայտնապէս եկեսցէ. եւ
ած մեր մի՛ դադարեսցէ։

Հուր առաջի նորա բորբոքեսցի.
եւ շուրջ զնովաւ մրրիկ յոյժ։

Կոչեսցէ զերկինս 'ի վերուստ, եւ
զերկիր՝ դատել զժողովուրդ իւր.
ժողովել առ ինքն զսուրբս իւր.
եւ ոյք դնեն զպատարագս ուխ
տից 'ի վերայ սեղանոյ։

Պատմեսցեն երկինք զարդարու
թին նր. զի ած դատաւոր է։
Լուր ժողովուրդ իմ. և խօսե
ցայց ընդ քեզ. և իսրայէլ քեզ
վկայեցից. զի ած ած քո ես եմ։
Ոչ թէ վասն պատարագաց քոց
կշտամբեմ զքեզ. զի ողջակէզք
քո առաջի իմ են յամ ժամ։
Ոչ ընդունիմ ՚ի տանէ քումմէ
զուարակս. և ոչ ՚ի հօտից քոց նո
խազս։
Իմ է ամ գազան անտառի. էրէ
լերանց՝ և ամ անասուն։
Գիտեմ ես զամենայն թռչունս
երկնից. գեղեցկութիւն վայրի
ընդ իս է։
Թէ քաղցեայց, ընդ քեզ ինչ ոչ
ասացից. զի իմ է աշխարհ լրիւ
իւրով։
Ոչ ուտեմ ես զմիս զուարակաց
քոց. և ոչ զարիւն նոխազաց քոց
ըմպեմ։
Մատո՛ այ պատարագ օրհնութե.
կատարեա՛ բարձրելոյն զուխտ քո։
Կարդասցես առ իս յաւուր նեղու

թե

Թէ քոյ՝ ես փրկեցից զքեզ՝ և դու
փառաւոր արասցես զիս։
Սակայն մեղաւորին ասէ ած. իսկ
դու ընդէր բնաւ պատմես զար-
դարութիւն իմ. կամ առնուս
զուխտ իմ 'ի բերան քո։
Զի դու ատեցեր զխրատ իմ. մեր-
ժեցեր՝ և յետս ընկեցեր զամենայն
բանս բերանոյ իմոյ։
Թէ տեսանէիր զգող՝ ընթանայ-
իր ընդ նմա. և ընդ շունս դնէ-
իր զբաժին քո։
Բերան քո յաճախէր զչարութիւն.
և լեզու քո նիւթէր զնենգութիւն։
Նստեալ զեղբօրէ քումմէ չարա-
խօսէիր. և 'ի վերայ որդւոյ մօր քոյ
դնէիր զգայթակղութիւն։
Զայս ամ արարեր՝ և լռեցի քեզ.
կարծեցեր անօրէնդ 'ի միտս քում.
թէ և ես քեզ նմանիցիմ։
Արդ յանդիմանեցից՝ և կացուցից
զայս ամ առաջի քո. իմացարուք
ամքն՝ որոց մոռացեալ իցէ զած։
Գուցէ երբեք յափշտակիցէք. և
ոչոք իցէ՝ որ փրկիցէ։

Պատարագ օրհնութեան փառաւոր
արասցէ զիս. և անդ է ճանա
պարհ՝ ուր ցուցից նմա զփրկու
թիւն Այ։

Տօնի. 25։

Ի չորեքշաբաթու. Սաղմոս Դաւթի.
* Ի ժամանակին երբեմն եկն առ նա Նա
թան մարգարէն. յորժամ մտեալ էր նա առ
Բերսաբէէ. Ծ։

Ողորմեաց ինձ ԱԾ ըստ մեծի
ողորմութեան քում. ըստ բա
զում գթութեան քում քաւեա՛
զանօրէնութիւնս իմ։
Առաւել լուա՛ զիս յանօրէնութե
նէ իմմէ. և ՚ի մեղաց իմոց սուրբ
արա՛ զիս։
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են
յամենայն ժամ։
Քեզ միայն մեղայ Տէր. և զչար
առաջի քո արարի։
Որպէս արդար երեւեսցիս ՚ի բանս քո.
և յաղթեսցես ՚ի դատելն քո։
Անօրէնութեամբ յղացաւ. և
՚ի

՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։
Դու Տր՟՝ զճշմարտութիւն սիրե
ցեր. զանյայտս՝ եւ զծածկեալս իմաս
տութե՟ քոյ յայտնեցեր ինձ։
Ցօղեա՛ յիս մշտկաւ. եւ սր՟ եղէց.
լուա՛՝ եւ քան զձիւն սպիտակ եղէց։
Լսելի արա ինձ զցնծութիւն՝ եւ
զուրախութիւն. եւ ցնծասցեն ոս
կերք իմ տառապեալք։
Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց.
եւ զամ՟ անօրէնութիւս իմ ջնջեա՛։
Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Ա՟Ծ.
եւ զհոգի ուղիղ նորոգեա ՚ի փորի
իմում։
Մի՛ ընկենուր զիս Տր՟ յերեսաց
քոց. եւ զհոգի սուրբ քո մի՛ հա
ներ յինէն։
Ա՟Ծ տուր ինձ զցնծութի՟ փրկու
թեան քոյ. հոգւով պետութե՟
քոյ հաստատեա՛ զիս։
Ուսուցից անօրինաց զճանապարհս
քոյս. եւ ամպարիշտք առ քեզ
դարձցին։
Փրկեա՛ զիս յարենէ Ա՟Ծ, Ա՟Ծ
փրկութեան իմոյ. ցնծասցէ լե
զու

զոր իմ յարդարութեան քում։
Տր եթէ զշրթունս իմ բանաս.
բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։
Թէ կամեցեալ էիր զպատարագս
մատուցանէի այլ. բայց դու ընդ
ողջակէզս իսկ ոչ հաճեցար։
Պատարագ Այ հոգի խոնարհ.
զսիրտ սուրբ՝ և զհոգի խոնարհ
Ած ոչ արհամարհէ։
Բարի արա Տր կամօք քովք սիո
նի. և շինեսցին պարիսպքն եէմի։
Յայնժամ հաճեսցիս ընդ պատա
րագս արդարութեան. ՚ի նուէրս
և յողջակէզս, յայնժամ հանցեն
՚ի սեղան քո զուարակս։

## Տուն. 22։

Ի չորրորդ չմտաւորութեան Պաւղոսի։
* ՚Ի ժամանակին շէ էջն զուժեն եղօմացէ
և պատմեաց սատանայ. ահաւասիկ զա
ւէն եկեալէ ի գոմաւ ասպարեզ։ Ծ Ա։

Զի՞մ պարծիս ՚ի չարութէ. հզօրն
յանօրէնութեան. զօրհա
նապազ զանօրէնութի խորհեցաւ
՚ի լեզուին իւրում։

Որ

Որպէս ածելի սուր՝ սրեաց զնեն
գութիւն. սիրեաց զչարութիւն.
քան զբարութիւն. զանօրէնու
թն քան զխօսս արդարութն։
Սիրեաց նա զա՟մ խօսս կործան
ման. և զլեզուս նենգաւորս։
Վասն այսորիկ Ա՟ծ կործանեսցէ
զնա՝ իսպառ. խլեսցէ՝ և հանցէ
զնա յարկաց իւրոց. և զարմատս
նորա յերկրէն կենդանեաց։
Տեսցեն արդարք՝ և երկիցեն. զնո
վաւ ծիծաղեսցին, և ասասցեն։
Այս այր է. որ ո՛չ արար զԱ՟ծ
իւր օգնական. այլ յուսացաւ սա
՚ի բազում մեծութիւն իւր. և զօ
րացաւ ՚ի նանրութն իւրում։
Այլ ես որպէս ձիթենի պտղա
լից ՚ի տան ա՟յ. յուսացայ յողոր
մութիւն ա՟յ յաւիտեան՝ և յաւի
տեանս յաւիտենից։
Խոստովան եղէց քեզ Տ՟ր յաւի
տեան՝ զի արարեր. և համբերեցից
անուա՛ն քում. զի քաղցր ես առա
ջի սրբոց քոց։
Տունք. 10։

’Ի կատարած. վասն մաղէլեթայ իմաստութ-
եան Դաւթի. ԾԲ։

Ասաց անզգամն ’ի սրտի իւրում. թէ չիք Ա͞ծ. ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. և ո՛չ ոք է՝ որ առնէ զքաղցրութիւն։

Ա͞ծ յերկնից նայեցաւ յամ որդիս մարդկան տեսանել՝ թէ իցէ ոք իմաստուն. որ խնդրիցէ զԱ͞ծ։

Ամենեքեան խոտորեցան իմիասին. և անպիտանացան։

Ո՛չ ոք է՝ որ առնէ զբարի. և չէ ոք մինչև ’ի մի։

Ո՞չ ո՛չ ծանիցեն ամենեքեան. որք գործեն զանօրէնութիւն։

Որք ուտեն զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի. և առ Ա͞ծ ո՛չ կարդացին։

Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ո՛չ իցէ երկիւղ. զի Ա͞ծ ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից։

Ամաչեսցեն՝ և յամօթ լիցին. զի

Աստուած անարգեաց զնոսա։
Ո՛ տացէ 'ի սիոնէ զփրկութիւն իղի. 'ի դարձուցանել Տ՟ն զգերութիւն ժողովրդեան իւրոյ. ցն՟ծասցէ յակոբ՝ և ուրախ եղիցի իսրայէլ։

Տաղ. 22։

Ի կատարած. քնք օրհնութիւնս չմաստութեան Դաւթի։ * Ի ժամանակի մինչ եկին զիփացիքն. և ասէին ցսաւուղ ահաւասիկ Դաւիթ թաքուցեալ նստի առ մեզ։ Օ. Պ.։

Ա՟Ծ յանուան քում կեցո զիս. և 'ի զօրութեան քում իրաւարար լեր ինձ։
Ա՟Ծ, լուր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան 'ի վերայ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Ա՟ծ առաջի իւրեանց։
Ա.հա Ա՟ծ օգնական իմ. և Տ՟ր ընդունող հոգւոյ իմոյ։
Դարձուցանել զչարն 'ի թշնամ

մեան իմ. Ճշմարտութբ քով սա
տակեա՛ զնոսա։
Ես կամօք իմովք պատարագս մա
տուցից քեզ. և խոստովան եղէց
անուան քում Տր՟՝ զի բարի է։
Յամենայն նեղութենէ իմմէ փրկ
եցեր զիս. ՚ի թշնամիս իմ ետես
ակն իմ։

## Տուն։ 9։

Ի կատարած. ընդ օրհնութբ իմաստու
թեան Դաւթի։ ԾԴ։

Ունկն դիր Տր՟ աղօթից իմոց.
և մի՛ անտես առներ զխնդրո
ւածս իմ։
Նայեաց առ իս և լուր ինձ. զի
տրտմեցայ ես ՚ի ձանձրանալ ի
մում. և խռովեցայ։
՚Ի ձայնէ թշնամւոյն՝ և ՚ի նեղել
մեղաւորին, խոտորեցան յիս անօ
րէնութեամբ. և բարկութբ ոխս
պահէին ինձ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս. և եր
կիւղ մահու անկաւ ՚ի վերայ իմ։
Ահ և դողումն եկն ՚ի վերայ իմ. և
ծածկեաց զիս խաւար։ Եւ ա

Ասացի՝ ո՞ տայր ինձ զթեւս որ-
պէս զաղաւնւոյ. զի թռչէի՝ վե-
րանայի. հեռացեալ դադարէի
յանապատի։

Ակն ունէի յա̃յ. որ փրկէր զիս 'ի
կարճմտութենէ. զայրանալոյ՝ 'ի
մրրկեալ նեղսրտութենէ։

Ընկղմ՛ Տ̃ր՝ եւ բաժանեա զլեզուս
նոցա. զի տեսի զանօրէնութիւն,
եւ զհակառակութի̃ 'ի քաղաքի։

Տուէ̃ եւ 'ի գիշերի շուրջ եղեն
զպարսպօք նորա անօրէնութիւն.
չարիք, եւ մեղք են 'ի մէջ նոցա. եւ
ո՛չ պակասեցաւ 'ի հրապարակաց
նոցա վաշխ եւ նենգութիւն։

Զի թէ թշնամւոյն նախատեալ
էր, համբերէի արդեւք. կամ ա-
տելւոյն մեծաբանեալ էր 'ի վերայ
իմ. թաքչէի արդեւք 'ի նմանէ։

Իսկ դու մարդ հաւասար իմ.
առաջնորդ իմ, եւ ծանօթ իմ։

Ապաքէն 'ի նոյն քաղցրացուցեր
ինձ. եւ քեզ կերակուր. զի գնայ-
աք միաբանութե̃ 'ի տան ա̃յ։

Եկեսցէ մահ 'ի վերայ նոցա. եւ

կենդա

կենդանւոյն իջցեն 'ի դժոխս. զի
չարութիւն է 'ի բնակութեան նո
ցա և 'ի մէջ նոցա:
Ես առ Ա͞ծ կարդացի՝ և Տ͞ր լը
ւաւ ինձ յերեկոյ՝ 'ի վաղորդեան
և 'ի հասարակ աւուր:
Պատմեցի՝ և ասացի՝ և լուիցէ ձայ
նի իմում. փրկեսցէ խաղաղութ͞բ
զանձն իմ 'ի մերձաւորաց իմոց. զի
կարեօք հասին 'ի վերայ իմ:
Լուիցէ Ա͞ծ՝ և խոնարհ արասցէ
զնոսա. որ յառաջ է քան զյաւի
տեանս:
Զի ոչ գոյր նոցա փոխանակ. և
ոչ երկեան յԱ͞յ:
Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցա
նել նոցա. և նոքա պղծեցին զօ
րէնս նորա:
Բաժանեցան 'ի սրտմտութենէ
երեսաց ն͞ր. և եհաս 'ի սիրտս ն͞ց:
Կակղեցան բանք նոցա քան
զձէթ. և նոքեանք ո͞մ սլաք:
Ընկեա 'ի Տ͞ր զհոգս քո՝ և նա կե
րակրեսցէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան
զսասանումն արդարոյ:
Դու

Դու Ա.Ծ իջուսցես զնս ՚ի գուբս ապականութեան. արք արեան հեղք՝ և նենգաւորք՝ մի հասցեն զաւուրս իւրեանց. այլ ես ՚ի քեզ Տր յուսացայ։

Տուն։ 23։

Օրհնութիւն Երգին Մովսէսի Ա.Ծ ասացեալ մարգարէին։ Երկրորդ Օրհնաց։

Լ.Բ։

Ի հուր բորբոքեցաւ ՚ի բարկութենէ իմմէ. այրեսցէ և իջցէ մինչ ՚ի դժոխս ներքինս։

Կերիցէ զերկիր՝ և զամ բոյս երկրի նոցա. վառեսցին հրով՝ և բորբոքեսցին հիմունք լերանց նոցա։

Կուտեցից զչարիս ամենայն ՚ի վերայ նոցա. և նետիւք իմովք սպառեցից զնոսա։

Մաշեալք և հիւծեալք ՚ի սովու՝ գազանաբեկ գէշ անկեալ ամենայն թռչնոց երկնից։

Զարս առանց բժշկութեան արձակեցից ՚ի վր նց և զգազանս անա

պա

պատի. որք այսր՝ և անդր՝ քարշեսցեն զնմ ընդ երկիր։

Արտաքուստ մանկակոտորս արասցէ զնոսա սուր. և 'ի ներքուստ շտեմարանաց նոցա, անտի արհաւիրք ահից։

Զերիտասարդս կուսանօք հանդերձ. և զտղայս՝ հաստատելօք ծերօք հանդերձ։

Ասացի թէ ցրեցից զնոսա. և դադարեցուցից զյիշատակս նոցա յազգաց։

Թէ ոչ վն բարկութե սրտմտութե թշնամւոյն. զի մի երկայնակեացք եղիցին, և մի բարձրասցին հպարտացեալ թշնամիքն և ասասցեն։

Թէ ձեռն մեր բարձր է՝ և բազուկ մեր հզօր. և ոչ Տր ած արար զայս ամ։

Զի ազգ մի խորհրդակորոյսք են նոքա. և ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն՝ և ոչ խորհեցան 'ի միտ առնուլ զայս ամենայն. և արդ՝ ընկալցին զամօթ յանձինս իւրեանց։

Զարմանք մի մեծ այս են. զի արդ-

մին։

մինն ըհադարս հալածեցէ. կամ եր
կուք զբեւրս շարժեցեն։

Թ. է ո՛չ Տ՟ն Ր.Ծ մատնեալ էր զնո
սա. և տուճեալ եցէ զնոսա 'ի ձեռս
Թշնամեաց նոցա։

Զի ո՛չ են դ.իք նոցա որպէս զա՟ծ
մեր. այլ Թշնամիք մեր վատա
խորհուրդք

Յայգւոյն սոդոմայ էր որթ նո
ցա՝ և տունկ նց 'ի գոմորայ։

Խաղող նոցա խաղող դառնու
Թեան. և ողկոյզ նոցա 'ի դառ
նութեան լեղւոյ։

Սրտմտութի բարկութեան վիշա
պաց. գինի նց սրտմտութի իժից
անհնարին առանց բժշկութե։

Ո՛չ այս ա՟մ ժողովեալ է առ իս. և
կնքեալ պահի 'ի գանձի իմում։

Յաւուր վրիժուց հատուցման,
հատուցից նոցա. 'ի ժամանակի՝ յո
րում հարցի գ.քարի ոտն նոցա։

Մերձ է օր՝ կորստեան նոցա. զի
հասեալ է պատրաստութիւ Տ՟ր 'ի
րայ նոցա։

Դ. ատէ տ՟ր զժողովուրդ իւր. և 'ի
ծառայս իւր մխիթարի։ Զի

Զի ետես զն՟ս՝ լքեալս՝ բուծեալս
և մատնեալս 'ի գերութիւն։
Եւ ասիցէ Տ՟ր՝ ուր են դիքն
ձեր՝ յորս յուսացեալք էիք դուք
'ի նա. զորոց զճարպս պատարագիցն ու-
տէիք, և ըմպէիք զգինի զոհիցն։
Արդ՝ յարուցեալք օգնեսցեն. և
եղիցին ձեզ թիկունք։

Նորին Մովսէսի։

Ծաներուք և տեսէք՝ զի ես եմ.
և ոչ գոյ այլ Ա՟ծ բաց յինէն։
Ես սպանանեմ, և ես կեցուցա-
նեմ. հարկանեմ, և ես բժշկեմ. և
ոչոք իցէ՝ որ հանիցէ զձեզ 'ի ձե-
ռաց իմոց։
Համբարձի յերկինս զձեռս իմ.
երդուեայ աջով իմով, և ասացի՝
թէ կենդանի եմ ես յաւիտեան։
Սրեցից որպէս զփայլակն զսուսեր
իմ. և 'ի խնդիր վրիժուց արձա-
կեցից զաջ իմ։
Հատուցից զհատուցումն թշնա-
մեաց իմոց. և ատելեաց իմոց հա-
տուցից՝ զհատուցումն ն՟ց նոցին։
Արբեցուցից զնետս իմ յարենէ

նա

նոցա՝ և սուր իմ կերիցէ միս. յա
րենէ վիրաւորելոց՝ գերելոց գըլ
խոց՝ իշխանաց թշնամեաց նոցա։
Ուրախ եղիցին երկինք նովաւ. և
երկիրպագցեն նմա ամենայն որ
դիք Ա՟Յ։
Ուրախ եղերուք հեթանոսք ընդ
ժողովրդեան նորա. և զօրասցու
ցեն զնա ա՟մ հրեշտակք ա՟յ։
Խնդրելով խնդրեցաւ վրէժ ա
րեան որդւոց ն՟ր. և հատուցումն
թշնամեաց նոցա հատուցաւ ն՟ր։
Հատուցումն ատելեաց նոցա հա
տուցաւ նոցա. և սրբեսցէ Տ՟ր
զերկիր ժողովրդեան իւրոյ։

Տուն. 64։

Դու ես Տ՟ր մեր՝ դու ես Ք՟ս
փրկիչ մեր. զքեզ օրհնեն ան
ձինք մեր։ Մարդասէր Տ՟ր վ՟ն
սրբուհւոյ անարատի։

Բ. արար մինախանջիրին և խոստովանին։

Վասն ուղղելոյ զգնացս մեր ի
ճանապարհս խաղաղութե՟ զՔ՟ս
աղաչեսցուք։ Ա

Վասն ցրելոյ 'ի մէնջ՝ զամ՟ խոր
հուրդս չարին, զՏր աղաչէ։
Վասն պարգևելոյ մեզ առողջ խոր
հուրդս՝ և առաքինի վարս, զՏր։
Վասն պահելոյ զմեզ՝ ընդ հովա
նեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զՏր։
Վասն խորտակելոյ զհակառակորդն
վաղվաղակի՝ ընդ ոտիւք մերովք
զՏր աղաչեսցուք։
Վասն հոգւոցն։ Յուես և վասն։
Զանձինս։ Ողորմեա։

Տէր երկնի և երկրի՝ արարիչ ամե
նեցուն արարածոց, երևելեաց և
աներևութից։ Առ քեզ կարդամք
յամենայն ժամ՝ զի ընդ ամ՟ տե
ղիս է տէրութիւն քո․ և արքայ
ութիւն քո ամենեցուն տիրէ։
Շնորհեա մեզ երկիւղիւ 'ի պաշ
տօն քո կանխել հանապազ։
Սիրել զքեզ 'ի բոլորէ սրտէ՝ և 'ի
բովանդակ մտաց՝ և յամենայն զօ
րութենէ մերմէ պահել զպատուի
րանս քո՝ և ամբառնալ առ քեզ
զձեռս մեր սրբութ՟՝ առանց բար

կութեան և երկմտութեան։ Նաև
գտանել 'ի քէն զշնորհս և զողոր
մութիւն. և զառաքինասիրաց գոր
ծոցն աջողութիւն։ Վասնզի դու
ես Տ՟ր կենաց՝ և ա՟ծ ողորմութ՟ե.
և քեզ վայելէն փառք իշխանու
թիւն և պատիւ. Այժմ, և միշտ։
Խաղաղութիւն ամենեցուն։
Քում ամենազօր և յաղթօղ տէ
րութեդ կրկնի ա՟մ ծունր յերկր
պագութիւն՝ և փառաւորի յամե
նեցունց թագաւորութիւն քո։
Նայեաց յերկրպագութ՟իս մեր,
և ուսո՛ մեզ առնել զարդարութ՟ի
ճշմարտութեան։ Վն՟զի դու ես
ա՟ծ խաղաղութ՟ե. որ բարձեր
զթշնամութիւն 'ի միջոյ. և արա
րեր զխաղաղութ՟ի յերկինս և յեր
կրի։ Նաև հեռաւորաց՝ և մերձա
ւորաց, աւետարանեցեր զնոր պար
գևս քոյին բարեացդ։ Որում և
զմեզ մեծի շնորհացդ արժանի ա
րասցես, դասելով ընդ ճշմարիտ
երկրպագուս քո. Ա՟ծ մեր՝ և Տ՟ր
և փրկիչ Յ՟ս Ք՟ս։ Որ ես օրհ
նեալ

նեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հո
գւոյն. Այժմ, և միշտ, և յաւի
տեանս յաւիտենից. Ամէն:

Յերգս օրհնութեան և'ի ձայն
սաղմոսաց, անդադար փառաւո
րեմք զՀայր և զՈրդի և զսբ
Հոգին. Այժմ, և
միշտ, և յաւիտեանս
յաւիտենից.
Ա
մէն:

'Ի կատարած վասն ժողովրդեանն․ որք
'ի սրբութենէն հեռացեալ էին Դա-
ւթի արձանագիր․ ի ժամանակի մինչ կալան
զնա այլազգիքն ի Գէթ․ ԾԵ։

# ՈՂՈՐՄԵԱՅ

ինձ Ա՟Ծ․ զի կոխեաց
զիս մարդ՝ զօրհանա
պազ պատերազմունք
նեղեցին զիս։
Կոխեցին զիս թշնամիք իմ զօրհա
նապազ․ բազումք էին, որք մարտն
չէին ընդ իս 'ի բարձանց։
'Ի տուէ ոչ երկեայց․ զի 'ի

Տ͞ր յուսացայ. ա͞ծ գովեցից ըզ
բանս իմ. յԱ͞Ծ յուսացայ՝ և ոչ եր
կեայց, զի արասցէ ինձ մարդ։

Զօրհանապազ զբանս իմ անար
գեցին. զինէն էին խորհուրդք
նոցա 'ի չարութեան։

Պանդուխտք եղիցին՝ և թաքթա
քուրք հրջեսցին. նոքա գարշապա
րի իմում սպասեսցեն՝ որպէս սպա
սէին անձին իմում։

Որպէս առ յոչինչ մերժեսցես
զնոսա բարկութ͞բ զժողովուրդս
հնազանդեցուսցես։

Ա͞Ծ զկեանս իմ պատմեցից քեզ.
եդեց զարտասուս իմ առաջի քո
որպէս խոստացար դու ինձ։

Դարձցին թշնամիք իմ յետս խ
րեանց. յաւուր յորում կարդա
ցուք առ քեզ։

Այս ծանեայ՝ զի Ա͞Ծ իմ ես
դու. զա͞ծ օրհնեցից 'ի բանս իմ.
և զՏ͞ր գովեցից 'ի խօսս իմ. յա͞ծ
յուսացայ՝ և ոչ երկեայց. զի արա
ցէ ինձ մարդ։

Յինէն են ուխտք իմ. զորս տաց
քեզ

քեզ օրհնութեամբ ա՜ծ՝ ա՜ծ իմ.
Փրկեցեր զանձն իմ 'ի մահուա
նէ. զաչս իմ յարտասուաց. եւ
զոտս իմ 'ի դայթակղութենէ.
Հաճոյ եղէց առաջի Տեառն յերկ
րին կենդանեաց:

Տուն. 12.

Ի կատարած մի ապականեր. Դաւթի
արձանագիր: 'ի ժամանակի մինչ փախուցեալ
էր նա յերեսաց Սաւուղայ յայ
րն անդր: Օ. Օ.

Ողորմեա ինձ Ա՜ծ՝ ողորմեա
ինձ. զի 'ի քեզ յուսացաւ
անձն իմ:
Ի հովանի թեւոց քոց յուսացայց.
մինչեւ անցցէ անօրէնութիւն:
Աղաղակեցի առ Ա՜ծ բարձրեալն,
առ ա՜ծ բարերար իմ:
Առաքեաց յերկնից. եւ կեցոյց զիս,
ետ 'ի նախատինս՝ որք կոխեն զիս:
Առաքեաց ա՜ծ զողորմութիւն եւ
զճշմարտութիւն իւր. եւ փրկեաց
զանձն իմ 'ի միջոյ գաղանաց. զի
ննջէի ես խռովեալ:

Որդւոց մարդկան ատամունք իւ-
րեանց զէն և նետք են. և լեզուք
նոցա որպէս զսուր սուսերի:
Բարձրեալ ես դու յերկինս ա̃ծ.
և յա̃մ երկրի են փառք քո:
Որոգայթ պատրաստեցին
ոտից իմոց. խոնարհ արարին
զանձն իմ. փորեցին առաջի իմ
զխորխորատ՝ և անկան ինքեանք
՚ի նոյն:
Պատրաստ է սիրտ իմ Ա̃Ծ. պատ
րաստ է սիրտ իմ. օրհնեցից՝ և
սաղմոս ասացից քեզ:
Զարթիր փառք իմ. զարթիր
սաղմոսիւք և օրհնութբ̃. և ես
զարթեայց առաւօտուց:
Խոստովան եղէց քեզ ՚ի ժողո
վուրդս Տ̃ր. և սաղմոս ասացից
քեզ յազինս:
Մեծ եղև մինչև յերկինս ողոր
մութիւն քո. մինչև յամպս ճշմար
տութիւն քո:
Բարձրեալ ես դու յերկինս ա̃ծ.
յա̃մ երկրի են փառք քո:
Տուն. 14:

Ի կատարած մի ապականեր Դաւթի արձանագիր։ ԾԷ։

Եթէ արդարեւ զարդարութիւն խօսէիք. եւ ուղիղս դատէիք որդիք մարդկան։

Քանզի՝ եւ արդ խակ 'ի սրտի ձերում զանօրէնութիւն գործէք յերկրի. զանիրաւութիւն ձեռք ձեր նիւթեն։

Օտարք եղեն մեղաւորք 'ի մօրէ. խաբեցան յարգանդէ, եւ խօսեցան զսուտ։

Սրտմտութիւն նց ըս նմանութե օձի. որպէս իժի, եւ քարբի, զի խցեալ է զականջս իւր։

Զի մի լուիցէ նա զձայն թովչի ճարտարի. եւ մի առցէ՝ զդեղ 'ի դեղատուէ իմաստնոյ։

Ած փշրեսցէ զատամունս նոցա 'ի բերանս իւրեանց. եւ զժանիս առիւծուց խորտակեսցէ Տր։

Անարգք եղիցին նոքա ոպ ջուր՝ զի հեղանի. 'ի լարել աղեղան նորա տկարասցին՝ որպէս մոմ զի հալի՝ եւ սպառեսցին։

Ընկալաւ հուր՝ և ոչ տեսին զարև·
մինչչև ՚ի միտ առեալ էր զփուշս
իւրեանց· որպէս զժնիկ բարկու
թե̅ կենդանւոյն կլլեսցէ զնոսա։
Ուրախ եղիցի արդարն՝ յորժամ
տեսցէ զհատուցումն· և զձեռս
իւր լուասցէ յարեան մեղաւորի։
Եւ ասասցէ մարդ՝ թէ արդարև
գուցէ պտուղ արդարոյ· և է ա̅ծ՝
որ դատէ զնոսա յերկրի։

Տուն. II։

՚Ի կատարած մի ապականեր· Դաւթի
արձանագիր· ի ժամանակի յորժամ առաքեաց
սաւուղ· և պաշարեաց զտունն նորա· զի
սպանցէ զնա։ ԾԸ։

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց
Ա̅Ծ, յայնցանէ· որք յարու
ցեալք են ՚ի վերայ իմ ապրե
ցո՛ զիս։
Փրկեա՛ զիս յայնցանէ· որք գոր
ծեն զանօրէնութի̅· յարանց արիւ
նահեղաց ապրեցո՛ զիս։
Որսալ զանձն իմ կամեցան· և
հա

Հասին 'ի վերայ իմ հզօրք։
Ո՛չ մեղք իմ՝ և ոչ յանցանք ա-ռանց մեղաց ընթացայ՝ և ուղիղ եղէ։
Զարթիր ընդ առաջ իմ. և տես դու Տ՟ր զօրութեանց՝ Ա՟ծ ի՟էլի։
Նայեաց՝ և այց արա ամենայն հե-թանոսաց. մի՛ ողորմիր ամենեցուն՝ ոյք գործեն զանօրէնութիւն։
Դարձցին ընդ երեկոյս՝ սովեսցին ո՟պ շուն. և շրջեսցին զքաղաքաւ։
Նոքա զօղանջեսցեն բերանօք իւ-րեանց. և սուր է 'ի շրթունս ն՟ց։
Իսկ արդ՝ ո՞վ լուաւ զայս. զի դու Տ՟ր ծիծաղեսցիս զնոքօք. և արհամարհեսցես զա՟մ հեթանոսս։
Զօրութիւն իմ առ քեզ պահե-ցից. զի Ա՟ծ օգնական իմ ես։
Ա՟ծ իմ՝ ողորմութիւն նորա կան-խեսցէ առ իս. և Ա՟ծ իմ ցուցցէ ինձ 'ի թշնամիս իմ։
Մի՛ սպանաներ զնոսա՝ զի մի՛ մո-ռասցին զժողովուրդ քո։
Ցրուեա՛ զնոսա զօրութ՟բ քով. և ընկեա՛ զն՟ս. զի դու ես պաշտ-պան իմ Տ՟ր։

Մեղք

Մեղք բերանոյ նոցա՝ և բանք
շրթանց նոցա. ընկլցին նք յամ
բարտաւանութե իւրեանց։
Յանէծս՝ և ՚ի ստութիւնս մատ
նեսցին. ՚ի կատարածի բարկութե
սպառեսցին՝ և մի՛ գոցին։
Գիտասցեն, զի ած տիրէ յակօ
բայ՝ և ամ ծագաց երկրի։
Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին
որպ շունք. և շրջեսցին զքաղաքաւ։
Նոքա ցրուեսցին յուտել. ապա
թէ ոչ յագեսցին՝ տրտնջեսցեն։
Ես օրհնեցից զօրհնութիւնս
Տն. և ցնծացայց առաւօտուց յո
ղորմութեան քում։
Զի եղեր իմ պաշտպան՝ և տուն
ապաւինի, յաւուր նեղութե իմոյ։
Օգնական իմ, քեզ սաղմոս ասա
ցից՝ ած ապաւէն իմ. ած ողոր
մութեան իմոյ։

## Տաղն. 22։

Սաղմոս Դաւթի արձանագիր ՚ի կատա
րածի պաշտամնեցելոց ժամանակաց առաւօտու
նն։ * Ս՚ի ժամանակի [illegible] Հ[illegible] [illegible]

զՄիջագետս Ասորւոց և զԱսորեստանս Ծո
բայ. և ՚ի դարձին Հարկանէր Յովաբ զԵդով
մացիս ՚ի ձորն աղտից երկոտասան հա
զար։

Սաղմոս ԾԹ.։

Ած մերժեցեր՝ և աւերեցեր
զմեզ. բարկացար՝ և գթա
ցիս ՚ի մեզ։

Շարժեցեր զերկիր՝ և խռովե
ցուցեր զնա. բժշկեա զհարո
ւածս նորա՝ զի սասանեցաւ։

Ցուցեր ժողովրդեան քում զխս
տութիւն. և ետուր մեզ ըմ
պել զգինի յիմարութեան։

Ետուր երկիւղածաց քոց նշան.
զի ապրեսցին յերեսաց աղեղան։

Որպէս փրկեսցին սիրելիք քո. կե
ցո աջով քով՝ և լուր մեզ։

Ած խօսեցաւ ՚ի սրբութէ իւրմէ.
ցնծացայց՝ բարձր եղէց՝ բաժա
նեցից զսիւքէմ. և զհովիտս յար
կաց չափեցից։

Իմ է գաղաադ. և իմ է մանասէ.
եփրեմ հզօրէ գլխոյ իմոյ։

Յուդա թագաւոր իմ. մովաբ
աւազան յուսոյ իմոյ։

Յեդովմ ուղղեցից զգնացս իմ.
և ինձ այլազգիք հնազանդեսցին եղեն:
Ո՞ տարցէ զիս 'ի քաղաք ամուր.
կամ ով առաջնորդեսցէ ինձ մին
չև ցյեդոմ:
Ա՛, թէ ոչ դու Ա՛ծ՝ որ մերժեցեր
զմեզ. և ոչ ելեր Ա՛ծ ը̄ զօրս մեր:
Տուր մեզ զօգնութիւն 'ի նեղու
թեան. զի ընդունայն է փրկու
թիւն մարդոյ:
Աստուծով արասցուք զզօրութի̃.
և նա արհամարհեսցէ զայնոսիկ՝
որք նեղեն զմեզ:

## Սաղմ. 19:

Ի կատարած ընդ օրհնութիւնս իմաստու
թեան. Սաղմոս Դաւթի: Կ:

Լուր Ա՛ծ աղօթից իմոց. և նայ
եաց յաղօթս իմ:
Ի ծագաց երկրի կարդացի առ
քեզ մինչ 'ի վաստակիլ սրտի իմոյ:
Ի վիմի բարձր արարեր զիս. ա
ռաջնորդեցեր ինձ. և իմ եղեր
յոյս. և աշտարակ հզօր յերե
սաց թշնամւոյն:

Բնա

Բնակեցայց 'ի յարկս քո յաւիտեան. և ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց քոց:

Դու Ա̃Ծ լուար աղօթից իմոց. ետուր ժառանգութիւն. որք երկնչէին յանուանէ քումմէ:

Աւուրս յաւուրս յաւելեր թագաւորի. ամաց նորա աւուրս ազգաց մինչև յազգս:

Կայ՝ և մնայ յաւիտեան առաջի նա̃յ՝ ողորմութի̃ն և ճշմարտութի̃ն. որք խնդրեսցեն 'ի նմանէ:

Այսպէս սաղմոս ասացից անուան քում յաւիտեանս յաւիտենից. և տաց քեզ զաղօթս իմ օրըստօրէ:

Տուն. Ը:

'Ի կատարած 'Իդիթումայ. Սաղմոս Դաւթի: ԿԱ:

Բայց միայն Ա̃Ծ հնազանդ լեր անձն իմ. զի 'ի նմանէ է ինձ համբերութի̃ն:

Նա է Ա̃Ծ իմ, և փրկիչ իմ. ապաւէն իմ. զի մի՛ սասանեցայց առաւել:

Մին

Մ՚ինչև յերբ յառնէք ՚ի վերայ
մարդոյ սպանանել ամենեքեան.
որպէս յորմոյ թիւրելոյ՝ և ՚ի ցան
կոյ մերժելոյ ։

Բ՚այց միայն զպատիւ իմ խորհե
ցան մերժել յինէն. և ընթացան
՚ի ծարաւս իւրեանց ։

Բ՚երանովք իւրեանց օրհնէին. և
սրտիւք իւրեանց անիծանէին ։

Բ՚այց սակայն Այ հնազանդ լեր
անձն իմ. զի ՚ի նմանէ է ինձ համ
բերութիւն ։

Զ՚ի նա է Ած իմ. և փրկիչ իմ,
ապաւէն իմ. զի մի սասանեցայց ։

Յայ է զօրութի իմ, և փառք իմ.
Ած օգնութեան իմոյ՝ յոյս իմ
առ Ած է ։

Յուսացարուք ՚ի նա ամ ժողովք
ժողովրդոց. սփռեցէք առաջի նր
զսիրտս ձեր. զի Ած օգնական է
մեր յաւիտենից ժամանակաց ։

Սակայն ընդունայն են որդիք
մարդկան սուտ են որդիք մարդ
կան. և ՚ի կշիռս իւրեանց մեղան
չեն. և ինքեանք յունայնութեան
են միաբանին ։

Մի՛ յուսայք յանիրաւութի՛ յա
փշտակութեան մի՛ ցանկայք. մե
ծութիւն թէ առուո՛ճիւ գայցէ.
մի՛ յօժարեսցին սիրտք ձեր:
Մի՛ անգամ խօսեցաւ ԱԾ. և եր
կուս զայս լուա՛յ:
Զա̃յ է զօրութի. և քո Տ̃ր ողոր
մութի և դու հատուցանես իւրա
քանչիւր ըստ գործոց նոցա:

Տաղ. 15:

Սաղմոս Դաւթի. յորժամ էր նա յա
նապատի 'ի Հրէաստանի. ԿԲ:

ԱԾ ԱԾ իմ, ես առ քեզ առա
ւօտ առնեմ. ծարաւեցաւ
առ քեզ հոգի իմ. քանիպատիկ եւս
և մարմին իմ:
Ը̃դ երկիր անապատ և անջուր.
ուր ոչ գոյ 'ի նմա Ճանապարհ:
Այսպէս 'ի սրբու երեւեցայց քեզ.
տեսանել ինձ զզօրութիւնս քո̀
և զփառս քո:
Զի լաւ է ինձ ողորմութի քո:
քան զկեանս իմ. և շրթունք իմ.
գովեսցեն զքեզ:

Այնպէս օրհնեցից զքեզ ՚ի
կեանս իմ. և յանուն քո համբար
ձից զձեռս իմ։

Որպէս ՚ի ճարպոյ պարարտութենէ
լցցի անձն իմ. շրթամբք ցնծու
թեան օրհնեսցէ զքեզ բերան իմ։

Զի թէ յիշէի զքեզ յանկողնի
իմում. ընդ առաւօտս կանխեալ
խօսէի ընդ քեզ։

Զի եղեր իմ օգնական. ՚ի հովա
նի թևոց քոց ցնծացայց։

Երկն զկնի քո յանձն իմ. և զիս ըն
կալաւ աջ քո. իսկ նոքա ՚ի նանիր
խնդրեցին զանձն իմ։

Մտցեն ՚ի ներքոյ անդնդոց երկ
րի. մատնեսցին ՚ի ձեռս սրոյ. և
բաժինք աղուեսուց եղիցին։

Թագաւոր յուսասցի ՚ի Տր. գո
վեսցին ամենեքեան, որք երդնուն
նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝
որք խօսին զանիրաւութիւն։

Տօնի. 12։

՚Ի չափաւորած Սաղմոս Գ. աւուրբ. ԿԳ.։

Լուր Ա.Ծ աղօթից իմոց յաղա
չել

ձել ինձ առ քեզ. յերկիւղէ
թշնամւոյն փրկեա՛ զանձն իմ։

Ծածկեցես զիս ՚ի ժողովոց չա
րաց. ՚ի բազմութենէ, որք գործեն
զանօրէնութիւն։

Որք սրեցին ոպ̃ սուսեր զլեզուս
իւրեանց լարեցին. զաղեղունս իւ
րեանց յիրս դառնութեան։

Զգել ՚ի գաղտնիս այնոցիկ՝ որք
ուղիղք են սրտիւք. յանկարծակի
ձգեսցեն ՚ի նա՝ և մի՛ երկիցեն։

Զօրացուցին յանձինս իւրեանց
զբանս չարութե̃. խորհեցան թա
քուցանել ինձ զորոգայթ. և ասա
ցին՝ ո՛չ տեսանէ զայս Ա̃Ծ։

Քննեցին զանօրէնութիւն. պատ
րաստեցան ՚ի քննել զքննութի̃։

Մատիցէ այր ՚ի խորութի̃ սրտի
իւրոյ. և բարձր եղիցի Ա̃Ծ։

Նետք տղայոց եղեն վէրք նոցա.
տկարացան ՚ի նոսա լեզուք նոցա.
և խռովեցան ամենեքեան՝ որք
հայէին ընդ նոսա։

Երկեաւ ամ̃ մարդ ՚ի պատմել
զգործս Ա̃Յ. և զարարածս նր̃ ՚ի
միտ առին։

Ուրախ եղիցի արդար ՚ի Տր. և յուսասցի ՚ի նա. Նովաւ գովեսցին ամենեքեան՝ որք ուղիղք են սրտիւք։

Տաղս. II։

Ի կատարած. Սաղմոս Դաւթի. երգ երեմիայի. և եզեկիելի. և ժողովրդեանն յորժամ ՚ի պանդխտութենէ անտի կամէին ելանել։ ԿԴ։

Քեզ վայելէ օրհնութիւն Այ ՚ի սիոն. և քեզ տացի աղօթք յեՀմ։

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամ մարմին եկեսցէ։

Բանք անօրինաց զօրացան ՚ի վերայ մեր. զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես։

Երանի՝ զոր ընտրեցեր՝ և ընկալար. և բնակեսցին ՚ի գաւիթս քո։

Լցցուք մեք ՚ի բարութէ տան քոյ. սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ։

Լուր մեզ Այ փրկիչ մեր. յոյս

ամե

ամենայն ծագաց երկրի. և որ ՚ի
ծով հեռի:

Որ պատրաստէ զլերինս զօրութեամբ
իւրով. և զգեցեալ է զզօրութիւն:

Ո խռովեցուցանէ զմեծութիւն ծո
վու. և զձայն ալեաց նորա ցա
ծուցանէ:

Խռովեսցին հեթանոսք և երկիցեն
բնակիչք երկրի ՚ի նշանաց քոց:

Յելս առաւօտու ընդ երեկոյս
զուարճացին. հայեցար յերկիր՝
արբեցուցեր զնա. և բազում արա
րեր զմեծութիւն նորա:

Գետն Ա՟յ լի եղև ջուրբ՝ պատ
րաստ արարեր զկերակուր նորա.
զի այսպէս է պատրաստութիւն:

Զակօս նորա արբեցուցեր՝ և բա
զում արարեր զարմտիս նորա:

Ի ցօղել նորա զուարթ եղիցի
բոյս նորա. օրհնեսցի պսակ տա
րւոյ քաղցրութեան քո:

Դաշտք քո լցցին պարարտու
թեամբ. պարարտասցին գեղեց
կութիւնք անապատի:

Բլուրք զցնծութիւն զգեցցին. և
զգեցցին խոյք մաքեաց:

Հովիտք բզ͞ւմ արասցեն զցորենան․ աղաղակեսցեն և օրհնեսցեն։

## Տուն. 17։

Ի կատարած Օրհն. Սաղմոս յարութեան։ ԿԵ։

Աղաղակեցէք առ Ա͞ծ ա͞մ երկիր. սաղմոս ասացէք անուան նորա. և տուք զփառս օրհնութեան նորա։

Ասացէք Ա͞յ՝ որպէս ահեղ են գործք քո. ՚ի բազում զօրութենէ քում ստեցին քեզ թշնամիք քո։

Ա͞մ երկիր՝ երկիրպագցեն քեզ. և սաղմոս ասասցեն քեզ. սաղմոս ասասցեն անուան քում։

Եկայք՝ և տեսէք զգործս Ա͞յ. որպէս ահեղ են խորհրդովք քան զա մենայն որդւոց մարդկան։

Որ դարձոյց զծովս ՚ի ցամաք. և ընդ գետս անցցեն ոտանաւորք։

Անդ ուրախ եղիցուք մեք ՚ի նա. որ տիրէ զօրութեամբ իւրով յաւիտենից։

Աչք նորա ՚ի հեթանոսս հային.

ոյք դաւանացուցին զնա՝ մի՛ բարձ
րասցին յանձինս իւրեանց:
Օրհնեցէք հեթանոսք զԱ՟Ծ
մեր. լսելի արարէք զձայն օրհ
նութեան նորա:
Այն՝ որ ետ զանձն իմ 'ի կեանս.
և ոչ ետ զդողութի՟ն ոտից իմոց:
Փորձեցեր զմեզ Ա՟Ծ՝ և քննե
ցեր. ո՟պ և քննի արծաթ:
Ածուցեր զմեզ յորոգայթ՝ և եդիր
զնեղութիւն 'ի թիկունս մեր. և
անցուցեր զմարդիկ 'ի վերայ գըլ
խոց մերոց:
Անցաք մեք ընդ հուր՝ և ը՟ն ջուր.
և հաներ զմեզ 'ի հանգիստ:
Մտից 'ի տուն քո պատարագօք.
տաց քեզ զուխտս իմ. զոր խոս
տացան քեզ շրթունք իմ. զոր բե
րան իմ խօսեցաւ 'ի նեղութեան:
Ողջակէզս զուղղալիցս մատուցից
քե՟զ խոյովք՝ և խնկովք. և քեզ
մատուցից զուարակս՝ և նոխազս:
Եկայք լուարուք ինձ. և պատմե
ցից ձեզ՝ ամենեքեան՝ ոյք երկն
չիք յԱ՟յ. զոր ինչ արար անձին իմոյ:

Առ

Առ նա բերանով իմով կարդա-
ցի. և բարձր արարի զնա լե-
զուաւ իմով։

Զմեղս թէ տեսանէի ՚ի սրտի
իմում. մի՛ լուիցէ ինձ Տ͞ր։

Վասն այսորիկ լուաւ Ա͞Ծ. և նայ-
եցաւ ՚ի ձայն խնդրուածոց իմոց։

Օրհնեալ է Ա͞Ծ՝ որ ոչ իբացեաց
աղօթս իմ. և ոչ զողորմու-
թիւն իւր յինէն։

## Տունք. 20։

Ի կատարած. ընդ օրհնութիւնս սաղմոս
երգոց. Կ.Զ.։

Ա͞Ծ ողորմեաց մեզ. և օրհնեա՛
զմեզ. երևեցո զերեսս քո ՚ի
մեզ՝ և ողորմեաց մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս
քո. յազգս ա͞մ զփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժող-
ովուրդք Ա͞Ծ. խոստովան եղիցին
առ քեզ ժողովուրդք ա͞մ։

Ուրախ եղիցին՝ և ցնծասցեն
ազգք. զի դու դատես զժո-
ղովուրդս յուղղութեան. և ազ-

գաց երկրի դու առաջնորդես:
Խոստովան եղիցին առ.քեզ ժողո
վուրդք Ա.Ծ. խոստովան եղիցին
առ.քեզ ժողովուրդք ամ:
Երկիր ետ զպտուղ իւր. և օրհ
նեսցէ զմեզ Ա.Ծ՝ Ա.Ծ մեր:
Ա.Ծ մեր օրհնեսցէ զմեզ. և'ի նմա
նէ երկիցեն ամ ծագք երկրի:

Տուն. 8:

Ի կատարած Դաւթի Սաղմոս երգոյ ԿԷ:

Յարիցէ Ա.Ծ՝ և ցրուեսցին
ամենայն թշնամիք նորա.
փախիցեն ատելիք նորա յե
րեսաց նորա:
Որպէս պակասի ծուխ՝ պակասես
ցին. որպէս հալի մոմ առաջի
հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք
յերեսաց Ա.Յ:
Արդարք ուրախ եղիցին. և ցնծաս
ցեն առաջի նր. և զուարճասցին
յուրախութեան՝ իւրեանց:
Օրհնեցէք զած մեր՝ և սաղմոս ասա
ցէք անուան նր. ճանապարհ արա

րէք այնմիկ՝ որ նստի ՚ի արեւմուտս․ Տր է անուն նորա։

Ցնծասցեն առաջի նր․ եւ խռովեսցին յերեսաց նորա։

Որ հայրն է որբոց՝ եւ դատաւոր այրեաց․ Ած ՚ի տեղւոջ սրբութեան իւրոյ։

Ած բնակեցուցանէ զմիաբանս ՚ի տան․ եւ հանէ զկապեալս քաջութեամբ իւրով․ նոյնպէս եւ զդառնացողս՝ որք բնակեալք են ՚ի գերեզմանս։

Ած ընդ ելանելն քո առաջի ժողովրդեան քո․ ՚ի անցանել քո յանապատի երկիր շարժեցաւ։

Զի անձրեւ երկինք ցօղեցին յերեսաց Ած Սինայի առաջի Ած Իսրայելի։

Անձրեւ կամաց պատրաստեցեր Ած ժառանգութե քում․ թէպէտ եւ հիւանդացաւ՝ սակայն դու հաստատեցեր զնա․ եւ գազանք քո բնակեսցին ՚ի նմա։

Պատրաստ արարեր քաղցրութե քով աղքատի Ած․ Տր տացէ բա

բան

քան՝ ոյք աւետարանեն զօրութ՟բ
բազմաւ ։
Թագաւոր զօրութե՟ց սիրելւոյ․
գեղեցկութիւն տան քոյ բաժա
նեալ յաւարի․ Թէպէտ և ննջես
ջիք 'ի մէջ վիճակաց ։
Թևք աղաւնւոյ արծաթապատ․
և թիկնամէջ նորա 'ի գոյն ոսկւոյ ։
'Ի գումարել երկնաւորին զթա
գաւորս․ 'ի վերայ նորա ձիւնա
ցին 'ի սաղմոն ։
Լեառն Ա՟Յ՝ լեառն պարարտ․
լեառն մածեալ՝ լեառն պարարտ․
և զինչ կարծէք լերինք հպարտա
ցեալք ։
Լեառն՝ ընդ որ հաճեցաւ Ա՟Ծ
բնակել 'ի նմա․ քանզի և Տ՟Ր իսկ
բնակեսցի 'ի նմա իսպառ ։
Կառք Ա՟Յ բիւրապատիկք հա
զարք ուղղիչք․ և Տ՟Ր 'ի նոսա 'ի
սինէ սրբութեան իւրոյ ։
Ել 'ի բարձունս՝ և գերեաց զգե
րութ՟ի․ էառ զաւար՝ բաշխեաց
պարգևս՝ և ետ որդւոց մարդկան․
քանզի Թերահաւատից ևս բնա
կեալք եղիցին 'ի նմա ։ Տ՟Ր

Տ՟ր Ա՟ծ օրհնեալ՝ օրհնեալ Տ՟ր
զօրհանապազ . առաջնորդեսցէ
մեզ Ա՟ծ փրկիչ մեր։

Ա՟ծ մեր՝ Ա՟ծ կենարար. և ՚ի Տ՟է
են ելք մահու։

Բայց սակայն Ա՟ծ փշրեսցէ ըզ
գլուխս թշնամեաց մերոց. և
զհերն կարծնովին՝ ոյք գնան յա
նօրէնութեան իւրեանց։

Ասաց Տ՟ր՝ ՚ի խորոց անդնդոց
դարձուցից. և ՚ի միջոյ ժանեաց
զայն ՚ի դուրս կորզեցից։

Որպէս թացցի ոտն քո յարեան.
և լեզուք շանց քոց յարենէ թշնա
մեաց քոց։

Երևեցան գնացք քո Ա՟ծ. գը
նացք Ա՟յ՝ թագաւորին մերոյ
սրբոյ։

Կանխեցին իշխանք հանել զօրհ
նութիւն. ՚ի մէջ կուսանաց՝ և
գովչաց։

Յեկեղեցիս օրհնեցէք զԱ՟ծ՝ և
զՏ՟ր յաղբերացն Ի՟ղի։

Անդ բենիամին ՚ի տղայութեն զար
մանալի. իշխանք յուդայ առաջ
նորդք

նորդք նոցա· իշխանք զաբուղոնի·
եւ իշխանք նեփթաղիմի:

Հրամայեա՛ տէր զօրութեան քում·
զօրացո՛ զայս՝ զոր հաստատեցեր
՚ի մեզ:

Ի տաճարէ քումմէ յերուսաղէմէ
քեզ մատուսցեն թագաւորք զպա
տարագս:

Սաստեա՛ ՚ի գազանս եղեգան· ՚ի
ժողովս զուարակաց եւ ՚ի գառս
երնջոց:

Խոտեսցին այնոքիկ՝ ոյք ընտ
րեալք են արծաթով· ցրուեա՛
զհեթանոսս՝ ոյք կամին զպա
տերազմ:

Եկեսցեն հրեշտակք յեգիպտոսէ·
հնդիկք յառաջագոյն ձեռնտու
լիցին առ աստուած:

Թագաւորութիւնք երկրի օրհ
նեցէք զաստուած· եւ սաղմոս ասացէք
Տեառն:

Ճ՚անապարհ արարէք այնմիկ՝ որ
նստի յերկինս երկնից՝ ընդ արեւելս:
Ահա տացէ զձայն իւր՝ ՚ի ձայն
զօրութեան· եւ տուք զփառս աստուծոյ:

Ի վե

՚Ի վերայ իսրայէլի մեծ վայելչու-
թիւն նորա. և զօրութիւն նորա
մինչև յամպս երկնից։

Սքանչելի է Ած ՚ի վերայ սրբոց
իւրոց՝ Ած իսրայէլի։

Նա տացէ զզօրութիւն հաստա-
տութեան ժողովրդեան իւրոյ.
օրհնեալ է Ած։

Տունք։ 39։

Ի կատարած. Սաղմոս Դաւթի վասն
փոփոխելոցն։ ԿԸ։

Կեցո՛ զիս Ած՝ զի հասին
ջուրք յանձն իմ. ընկղմայ
ես ՚ի խորս անդնդոց. ուր
ո՛չ գոյ ինձ հանգիստ։

Եկի ես ՚ի խորս ծովու՝ և շրր
ջանք ընկլուզին զիս։

Վաստակեցայ ես առ յաղաղակելն
և՝ կերկերեցաւ կոկորդ իմ։

Նուա՛ղեցան աչք իմ, առ յու-
սալ ինձ առ Տր Ած իմ։

Բազումք եղեն քան զհեր գլխոյ
իմոյ. ոյք ատէին զիս տարապար-
տուց։

Զօ

Զօրացան յիս թշնամիք իմ, և
ատելիք իմ ինանիր. ինչ՝ զոր ոչ
յափշտակեալ էի տուժէի նոցա։
Ա̄ծ՝ դու ծանեար զանզգամու
թիւն իմ. և յանցանք իմ ՚ի քէն
ոչ ծածկեցան։
Մի՛ ամաչեսցեն վասն իմ. որք
համբերեն քեզ Տ̄ր՝ Տ̄ր զօրու
թեց՝ մի՛ պատկառեսցեն վ̄ս իմ.
որք խնդրեն զքեզ ա̄ծ Ի̄ղի։
Վ̄ս քոյ համբերէի նախատանաց. և
ծածկեաց ամօթ զերեսս իմ։
Օտար եղէ ես յեղբարց իմոց. և
հիւր որդւոց մօր իմոյ։
Նախանձ տան քոյ եկեր զիս. և
նախատինք նախատչաց քոց ան
կան ՚ի վերայ իմ։
Խոնարհեցուցի պահօք զանձն
իմ. և եղեն ինձ այս նախատինք.
արարի զհանդերձս իմ քուրձ. և
եղէ յառակ նոցա։
Զինէն խորհէին՝ որք նստէին
առ դրունս. և զիս այպանէին,
որք ըմպէին զգինի։
Ես յաղօթս կայի առ քեզ Տ̄ր. ՚ի
ժամանակ ընդունելի։ Ա̄ծ

Ա՟Ծ 'ի բազում ողորմութե՛ քում
լուր ինձ. 'ի ճշմարտութիւն փրկ
կութեան քոյ։
Ապրեցո՛ զիս 'ի կաւոյ՝ զի մի ընկ
լայց. ապրեցայց ես յատելեաց
իմոց. և 'ի խորոց ջուրց բազմաց։
Մի՛ ընկլուզին զիս պտոյտք ջուրց.
և մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք
խորոց. և ջրհոր մի՛ կափուսցէ
զբերան իւր 'ի վերայ իմ։
Լուր ինձ Տէ՛ր՝ զի քաղցր է ողոր
մութիւն քո. ըստ բազում գթու
թեան քում հայեաց յիս. և մի՛
դարձուցաներ զերեսս քո 'ի ծա
ռայէս քումմէ. զի նեղեալ եմ ես՝
փութապէս լուր ինձ։
Հայեաց յանձն իմ, և փրկեա՛
զիս. և վասն թշնամեաց իմոց ապ
րեցո՛ զիս։
Զի դու գիտես զնախատինս իմ,
զամօթ իմ, և զպատկառանս իմ։
Առաջի քո են ամենայն նեղիչք
անձին իմոյ. նախատանաց համբերեր
սիրտ իմ, և թշուառութեան։
Ակն ունէի՝ թէ ոք տրտմեսցի
ընդ

ընդ իս՝ և ոչ ոք էր. և մխիթարիչ
ինձ ոք ոչ գտաւ։
Ետուն ՚ի կերակուր ինձ զլեղի.
և ՚ի ծարաւ իմ արբուցին ինձ
քացախ։
Եղիցին սեղանք նց առաջի նոցա
յորոգայթ. ՚ի հատուցումն և ՚ի
գայթակղութիւն։
Խաւարեսցին աչք նոցա՝ զի մի
տեսցեն. և զթիկունս նոցա հա
նապազ կորացո։
Արկցես ՚ի վերայ նոցա զբարկու
թիւն քո. և սրտմտութի բարկու
թեան քո հասցէ ՚ի վերայ նոցա։
Եղիցին բնակութիք նոցա աւե
րակ. և ՚ի յարկս նոցա մի ոք իցէ՝
որ բնակիցէ։
Զի զոր դու հարեր՝ հալածեցին.
և ՚ի վէրս ցաւոց իմոց յաւելին։
Դիր զմեղս ՚ի վերայ մեղաց նոցա.
զի մի մտցեն յարդարութիւն քո։
Ջնջեսցին նոքա ՚ի դպրութենէ
քումմէ կենաց. և ընդ արդարս
քո մի գրեսցին։
Աղքատ և ցաւած եմ ես. փրկու

Թիւն քո Ա՟Ծ ընկալցի զիս։

Օրհնեցից զանուն Ա՟Յ իմոյ օրհնութբ՟. եւ բարձր արարից զնա գոհութեամբ։

Հաճոյ եղիցի Աստուծոյ քան զորթ մատաղ. որ բերէ զեղջիւրս եւ զկճղակս։

Տեսցեն աղքատք՝ եւ ուրախ եղիցին. խնդրեցէք զԱ՟Ծ, եւ կեցցեն անձինք ձեր.

Զի լուաւ Տ՟ր տնանկաց. եւ զկապեալս իւր ոչ արհամարհեաց։

Օրհնեսցեն զնա երկինք եւ երկիր. ծով՝ եւ ամ՟ որ զեռայ ՚ի նմ՟։ Ա՟Ծ փրկէ զսիոն՝ եւ շինեսցին քաղաքք հրէաստանի. շինեսցեն՝ բնակեսցին՝ եւ ժառանգեսցեն ՚ի նմա։

Զաւակ ծառայից քոց հաստատեսցի անդ. որք սիրեն զանուն քո՝ բնակեսցին ՚ի նմա։

Տուն. 39։

Ի կատարած Սաղմոս Դաւթի. առ ի յիշատակ փրկելոյն զնա Տ՟ն։ ԿԹ։

Ա՟Ծ յօգնել ինձ նայեաց. եւ

Տէր

Տէր յընկերել ինձ փութա՛ :
Ամաչեսցեն՝ և յամօթ լիցին. որք
խնդրեն զանձն իմ. դարձցին
յետս, և ամաչեսցեն . որք խորհին
ինձ չար :
Դարձցին առժամայն ամաչե
ցեալք. որք ասեն ինձ վա՛շ վա՛շ:
Ցնծասցեն՝ և ուրախ լիցին 'ի քեզ
ամենեքեան. որք խնդրեն զքեզ Տր :
Ասասցեն յամ ժամ մեծ է Տր.
և որք սիրեն զփրկութի քո :
Ես աղքատ և տնանկ եմ, Տր
օգնեա՛ ինձ. օգնական և փրկիչ
իմ ես դու. Տր մի՛ յամենար :

Տուն. 7 :

Սաղմոս Դաւթի որդւոցն Յովնադաբու.
յառաջնոց գերութե : Հ :



քեզ Տր յուսացայ՝ մի՛ ամա
չեցից յաւիտեան . յարդա
րութե քում փրկեա՛ զիս՝ և
ապրեցո՛ զիս :
Խոնարհեցո՛ առ իս զունկն քո.
և կեցո՛ զիս .

Լեր իմ Ա՟ծ ապաւէն՝ և տեղի ա-
մուր կեցուցանել զիս. զի հաստա-
տութ՟ի իմ, և ապաւէն իմ դու ես։
Ա՟ծ իմ՝ փրկեա զիս ՚ի ձեռաց մե-
ղաւորի. ՚ի ձեռաց անօրինի և
անիրաւի։

Դու ես համբերութիւն իմ Տ՟ր՝
Տ՟ր՝ յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ։
՚Ի քեզ հաստատեցայ ես յարգան-
դէ. յորովայնէ մօր իմոյ դու ես
ապաւէն իմ. և առ ՚ի քէն է օգ-
նութիւն իմ յամենայն ժամ։
Ո՟պ զի նշաւակ եղէ ես բազմաց. և
դու օգնական իմ, և հզօրիչ իմ։
Լցցի բերան իմ գովութ՟բ. ո՟պ
օրհնեցից զփառս քո. զօրհանա-
պազ զմեծ վայելչութիւնս քո։
Մի ընկենուր զիս Տ՟ր ՚ի ժամա-
նակի ծերութեան. ՚ի պակասել
զօրութ՟ե իմոյ, մի՛ թողուր զիս։
Ասացին թշնամիք իմ ինձ. և որք
պաշարեցին զանձն իմ. խորհեցան
իմիասին, և ասացին։
Ա՟ծ եթող զնա՝ հալածեսցուք և
հասցուք նմա. զի ոչ՟ք է՝ որ
փրկէ զնա։ Ա՟ծ

Ա՛Ծ իմ մի՛ հեռանար յինէն. և
Ա՛Ծ յօգնել ինձ նայեաց:
Ամաչեսցեն՝ և պակասեսցեն. որք
չարախօս կային զանձնէ իմմէ.
զգեցցին զամօթ և զպատկառանս.
որք խնդրէին ինձ զչար:
Ես յամենայն ժամ յուսացայց.
և յաւելից յօրհնութիւնս քո:
Բերան իմ պատմեսցէ զարդա
րութիւնս քո. զօրհանապազ զփր
կութիւնս քո:
Որպէս ո՛չ թէ խարդախութե.
ինչ գիտէի զդպրութի. այլ մտից
՚ի զօրութիւնս Տն. Տր յիշեցի
զարդարութիւնս քո միայն:
Ա՛Ծ իմ, ուսուցեր զիս ՚ի մանկու
թենէ իմմէ. և ցարդ ևս պատմե
ցից զարդարութիւնս քո:
Մինչև յալևորիլ՝ և ՚ի ծերանալն
իմ. Ա՛Ծ մի՛ թողուր զիս:
Մինչև պատմեսցի բազուկ քո
ազգի ամենայնի՝ որ գալոցն է:
Օ զօրութիս քո և զարդարութիս
քո, մինչև ՚ի բարձունս. զոր արա
րեր մեծամեծս. ա՛Ծ ո՞ նմանի քեզ.

Ար

Որչափ ցուցեր ինձ զնեղութիւն բա-
զում, և չարչարանս. դարձեալ
մխիթարեցեր զիս. և՛ի խորոց ան-
դնդոց երկրի հաներ զիս։

Յաճեցեր զզօրութիւն քո. և
դարձեալ մխիթարեցեր զիս. և՛ի
խորոց երկրի միւսանգամ հա-
ներ զիս։

Արդ՝ և ես խոստովան եղէց քեզ
՛ի պատրաստութիւն սաղմոսաց.
Ճշմարիտ ա՟ծ, սաղմոս ասացից
քեզ օրհնութ՟բ՝ սուրբդ ի՟ղի.
Ցնծասցեն շրթունք իմ՝ յոր
ժամ սաղմոս ասիցեմ քեզ. և անձն
իմ՝ զոր փրկեցեր։

Այլ և լեզու իմ զօրհանապազ
խօսեսցի զարդարութիւնս քո։
՛Ի ժամանակի իբրև յամօթ լիցին։
և ամաչեսցեն՝ որք խնդրեն ինձ
զչար։

Տուն. 27։

Դ. Սաղմոսն. Սաղմոս Դաւթի. ՀԱ։

Ա՟Ծ զիրաւունս քո արքայի
տուր. և զարդարութի քո
որդւոյ թ՟գւ՟րի։ Դա

Դատել զժողովուրդս քո արդա
րութբ̄. և զաղքատս քո իրաւամբք:
Առցեն լերինք զխաղաղութիւն
ժողովրդեան. և բլուրք զարդա
րութիւն:
Իրաւ արասցէ աղքատաց ժողովր
դեան. և կեցուսցէ զորդիս տնան
կաց. և խոնարհեցուսցէ զամբաս
տանս:
Կացցէ՝ և մնասցէ ընդ արեւու.
յառաջ քան զլուսին. յազգս
մինչև յազգս:
Իջցէ ոպ̄ զանձրև ՚ի վ̄ր գեղման.
որպէս զցօղ զի ցօղի յերկիր:
Ծագեսցի յաւուրս նորա արդա
րութիւն՝ բազում խաղաղութիւն.
մինչև կատարեսցի լուսին:
Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի
ծով. ՚ի գետոց մինչև ՚ի ծագս
աշխարհի:
Առաջի նորա նախ հնդիկք անկ
ցին. և թշնամիք նորա զհող կե
րիցեն:
Թագաւորք Թարսիսի՝ և կղզեաց
պատարագս մատուսցեն նմա. Թա

գաւ

գաւորք արաբայ և սաբայ պատա
րագս բերցեն նմա։
Եւ երկիր պագցեն նմա ամենայն
Թագաւորք երկրի. և ամենայն
ազգք ծառայեսցեն նմա։
Զի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց
հզօրի. զաղքատն և զտնանկն՝ որոյ
ո՛չ է օգնական։
Խնայեսցէ նա յաղքատն և ՚ի
տնանկն. և զանձինս տնանկաց կե
ցուսցէ. ՚ի վաշխից և ՚ի չարեաց
փրկեսցէ զանձինս նոցա։
Պատուական է անուն նորա ա
ռաջի նոցա. կեցցէ՝ և տացի նմա
յոսկւոյն արաբացւոց։
Յաղօթս կացցեն առ նա յամենայն
ժամ. և զօրհանապազ օրհնես
ցեն զնա։
Եղիցի հաստատութի ընդ ա͞մ
երկիր. և ՚ի վերայ գլխոց լերանց։
Բարձրասցի քան զլիբանան պը
տուղ նորա. ծաղկեսցի ՚ի քաղա
քի ՏՆ որպէս խոտ երկրի։
Եղիցի անուն ՏՆ օրհնեալ յաւի
տեան. զի յառաջ քան զարեւ է ա
նուն նր։

'Ի նա օրհնեսցին ամ ազգք երկրի. և ամ ազինք երանիցեն նմա:

Օրհնեալ Տր ած իլի՝ որ առնէ զսքանչելիս միայն. և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նր ամ երկիր. եղիցի եղիցի:

Պակասեցան օրհնութիւնք 'ի Դաւթէ որդւոյ Յեսսեայ:

Տունք. 20:

## Աղօթք Աննայի Մօրն Սամուէլի: Յառաջնորդէ Թագաւորաց. Բ:

Հաստատեցաւ սիրտ իմ 'ի Տր. և բարձրացաւ եղջիւր իմ, յԱծ փրկիչ իմ:

Ընդարձակեցաւ բերան իմ 'ի վերայ թշնամեաց իմոց. ուրախ եղէց 'ի փրկութեան քում:

Զի ոչ գոյ սուրբ որպ զՏր. և ոչ արդար որպ զԱծ մեր. և չիք սբ, բաց յԱյ մերմէ:

Մի պարծիք և մի խօսիք զմե բարտաւանս. և մի ելցէ ընդ բե

բանս ձեր բան հպարտ մեծաբանութեան։

Մեծ գիտութեց Տր՝ ԱԾ պատրաստէ իւրով իմաստութբ զգիտութիւն յարարածս իւր։

Հզօրաց հաստատ աղեղունք թուլացան. եւ տկարք վառեցան զօրութեամբ։

Յագք եւ լիք հացիւ նուաղեցան. եւ քաղցեալք լցին զերկիր։ Ամուլն ծնաւ եօթն. եւ բազմածինն նուաղեցաւ 'ի ծննդոց։

Տր մեռուցանէ, եւ Տր կեցուցանէ. իջուցանէ 'ի դժոխս եւ հանէ։

Տր աղքատացուցանէ, եւ Տր մեծացուցանէ. խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր. եւ բարձր առնէ զտառապեալս յաղբեաց։

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան. եւ զաթոռ փառաց ժառանգեցուցանէ նց։

Կատարէ զուխտս ուխտաւորաց. եւ օրհնեաց զամս արդարոց։

Զի ո՛չ թէ իւրով զօրութեամբ

զօրանայ հզօր. այլ Տր տկար առ
նէ զհակառակորդս իւր, Տէր
սուրբ է։

Մի՛ պարծեսցի խորհրդականն 'ի
խորհուրդս իւր. մի՛ պարծեսցի
հզօրն 'ի զօրութիւն իւր. և մի՛
պարծեսցի մեծն՝ 'ի մեծութեան
իւրում։

Այլ որ պարծին՝ 'ի Տր պարծես
ցի. 'ի խորհուրդս գիտութեան
զՏր ճանաչել։

Առնել զիրաւունս՝ և գործել
զարդարութիւն, 'իվերայ երե
սաց երկրի։

Տր ել յերկինս և որոտաց. և ինքն
դատի առանց բարբառելոյ։

Տայ զզօրութիւն թագաւորաց
մերոց. և բարձր առնէ զեղջիւր
օծելոյ իւրոյ։

Տուն. 18։

Բարձրացաւ եղջիւր իմ յԱծ
փրկիչ իմ. հաստատեցաւ սիրտ
իմ 'ի Տր՝ Տծ և հաւատով.

Մարդասէր Տր՝ վս սրբոհ։

Բա

Ի տարող ողորմութեան եւ ի նեղութեան.

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար Տէ մերմէ. զՏր աղաչեսցուք:

Վն փրկելոյ զմեզ 'ի զրպարտութէ մարդկան՝ և յորոգայթից սատանայի. զՏր աղա:

Վն ամ անձանց քրիստոնէից. և տանց հաւատացելոց. զՏր:

Վն որք 'ի լերինս՝ յայրս՝ և 'ի փապարս բնակեալք են սուրբ հարքն մեր. զՏր աղ:

Վն որք սաղմոսիւք՝ և օրհնութբ կատարեն զամ ժամանակս կենաց իւրեանց. զՏր աղ:

Վն հոգւոյն: Եւս և վն: Զ անձինս: Ողորմեաց:

Գոհանամք զքեն Տր Ած մեր. որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քոյ: Զարթո՛ զմիտս մեր արդարութեամբ առ քեզ Տր ած մեր. զի տեսցեն աչք մեր զփրկութի քո: Եկեսցէ և բնակեսցի առ մեզ Ածութի քո. և ողորմու

թի

թիւ քո հովանի և պաշտպան լիցի
՚ի մէր պաշտօնէից քոց։ Եւ զմեզ
զծառայս քո արժանի արա ՚ի
տօնէ և ՚ի գիշերի՝ և յամ ժամու,
միշտ խորհել ՚ի սէր պատուիրա
նաց քոց։ Եւ գոհանալով փառա
ւորել զհայր և զՈրդի և զՍ̃բ Հո
գին. Այժմ և միշտ, և յաւիտեան։

Խաղաղութիւն ամենեցուն։

Կենդանարար զօրութիւն, և ան
քնին անմահութիւն դու ես Ք̃ս
Ա̃ծ փրկիչ մեր. որ շնորհեցեր
մեզ ՚ի մէջ գիշերի յառնել՝ և խոս
տովան լինել առ քեզ՝ վասն իրա
ւանց և արդարութեան քոյ։ Եւ այժմ
աղաչեմք զքեզ Տէր Ա̃ծ մեր. արա
զմեզ արթունս, և պատրաստս ՚ի
ժամ առաւօտու ընդ ս̃բս քո։
Եւ ընդ նմին գոհանալով փա
ռաւորել զքեզ ընդ Հօր և ընդ
Հոգւոյդ սրբոյ. Այժմ և։

Գոհութի̃ և Ճշմարիտ խոստո
վանութի̃ անդադար փառաւո
րեմք զՀայր և զՈրդի և զսուրբ
Հոգիդ, Այժմ և միշտ։

Առ

## Սաղմոս Դաւթայ։ ՃԻ։

# ՈՐՉԱՓ

բարի է իսրայելի Ած. որք
ուղիղք են սրտիւք։
Բայց զի իմ փոքր մի' սասա
նեալ էին ոտք. սակաւուկ մի
գայթակղեալք էին գնացք իմ։
Նախանձեցայ ես ընդ անօրէնս,
զխաղաղութիւն մեղաւորաց՝ ոչ
տեսանէի. զի ոչ գոյր վրէպ մա
հու նոցա։
Հաստատունք են տանջանք նց.
'ի վաստակս մարդկան չէն. և
ընդ մարդկան ոչ տանջեսցին։
Վասն այսորիկ կալաւ զնոսա ամ
բարտաւանութիւն, արկին զիւ
րեամբք

ըեամբք զամբարշտութի̃ և զանի
րաւութիւն իւրեանց։

Եղիցէ որպէս 'ի ճարպոյ անիրա
ւութիւն նոցա. զի գնացին նոքա
ըստ խորհրդոց սրտից իւրեանց։

Խորհեցան, և խօսեցան չարու
թեամբ. և զապիրատութիւն 'ի
բարձունս խորհեցան։

Եդին յերկինս զբերանս իւրե̃.
և զլեզուս իւրե̃ անցին զերկրաւ։

Վասն այսորիկ ժողովուրդ իմ
դա՛րձցի այսրէն. և աւուրք իմ լի՛
կատարեալ գտցին 'ի նոսա։

Ասացին՝ զի արդ գիտաց Ա̃Ծ.
կամ գուցէ գիտութիւն առ 'ի
բարձրելոյն։

Ահա մեղաւորք են՝ և աջողեալք
նոցա. կան՝ և ունէին զմեծութիւն
աշխարհի։

Ասացի՝ զուր ուրեմն արդարացու
ցի զսիրտ իմ. լուա՛ցից սրբութե̃
զձեռս իմ. և եղէ ես խոշտան
գեալ զօրհանապազ. և կշտամ
բանք իմ ընդ առաւօտս։

Թէպէտ և ասէի՝ թէ, այսպէս

պատմ

պատմեցից. ահաւասիկ ազգ որ
դւոց քոց՝ որոց ուխտեցի:

Ի միտ եղի, թէ սակայն և այս
ջան է առաջի իմ. մինչև մտից 'ի
սրբութիւնն Տ.Ն. և 'ի միտ առից
զկատարած նոցա:

Սակայն վասն նենգութե նոցա
տարադիր արարեր զնոսա. և կոր
ծանեցեր զնոսա յամբարտաւա
նութեան իւրեանց:

Իսկ զի՞արդ եղեն յաւեր՝ յանկար
ծակի սատակեցան, պակասեցան,
կորեան վասն անօրէնութե իւ
րեանց. և եղեն որպէս երազք
զարթուցելոյ:

Տէր 'ի քաղաքի քում զպատկերս
նոցա անարգեսցես. զի հուր բոր
բոքեցաւ 'ի սրտի իմում, և երիկա
մունք իմ այլագունեցան:

Ես արհամարհեալ եղէ՝ և ոչ գի
տացի. որպէս զանասուն համարե
ցայ առաջի քո. և ես յամենայն
ժամ ընդ քեզ եմ:

Կալար զաջոյ ձեռանէ իմմէ. 'ի
խորհուրդս քո առաջնորդեցեր
ինձ

ինձ. և փառօք ընկալար զիս։
Զինչ կայ իմ բնաւ յերկինս. կամ ՚ի քէն զինչ ես խնդրեցից յերկրի։ Նուաղեցաւ սիրտ իմ, և մարմին իմ. Ած սրտի իմոյ. բաժին իմ Ած յաւիտեան։
Ահաւասիկ ոյք հեռի արարին զանձինս իւրեանց ՚ի քէն, կորիցեն. սատակեցեր զամենեսեան՝ ոյք ապստամբք եղեն ՚ի քէն։
Ինձ մերձենալ առ Ած բարի է. և դնել առ Տր զյոյս իմ։
Պատմել զամ օրհնութիւնս քո ՚ի դրունս դստեր սիոնի։

Տուն. 25։

Ի մատուցանելն Ասափայ։ ՀԳ.։

Ընդէ՞ր մերժեցեր Ած ՚ի սպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ՚ի վերայ խաշին արօտի քոյ։
Յիշեա՛ զժողովուրդ քո՝ զոր ստացար ՚ի սկզբանէ. փրկեցեր զվիճակ ժառանգութե քոյ։
Լեառն սիոն այս՝ ուր բնակեցար դու ՚ի սմա. համբարձ զձեռս քո

՚ի վե

'ի վերայ ամբարտաւանութ̃ե նո
ցա խապառ :

Որինչ անխրաւեցաւ թշնամին 'ի սրբութեան քում. պարծեցան ատելիք քո 'ի մէջ բարեկենդանութեան իւրեանց :

Եդին զնշանս իւրեանց 'ի նշանս. և ինքեանք ոչ ծանեան զելս իվերուստ :

Որպէս յանտառի փայտատօք կոտորեցին զդրունս նորա. իմիասին փայտատօք և մրճօք կործանեցին զնա.

Այրեցին 'ի հուր զսրբութիւն քո յերկրի. պղծեցին զխորան անուան քոյ :

Ասացին 'ի սիրտս իւրեանց ազգք նոցա իմիասին. եկայք լուցուցուք զա̃մ տօնս ա̃յ յերկրէ :

Զնշանս մեք ինչ ոչ տեսաք. և ոչ ևս գուցէ մարգարէ. և զմեզ ինչ ոք ոչ ճանաչիցէ :

Մինչև յերբ Ա̃ծ նախատէ թշնամին. բարկացուցանէ հակառակորդն զանուն սուրբ քո :

Ընդէր դարձուցանես զձեռն քո.
և զաջ քո ՚ի միջոյ ծոցոյ քումմէ
իսպառ։

ԱԾ Թագաւոր մեր՝ յառաջ քան
զյաւիտեանս. որ արարեր զփրկու
թիւն ՚ի մէջ երկրի։

Դու հաստատեցեր զօրութե՟ քով
զծով. դու խորտակեցեր զգլուխս
վիշապին ՚ի վերայ ջուրց։

Դու փշրեցեր զգլուխս վիշապին.
և ետուր զնա ՚ի կերակուր զօրացն
հնդկաց։

Դու բղխեցուցեր զաղբիւրս և
զվտակս. դու ցամաքեցուցեր ըզ
գետս սաստիկս։

Քո է տիւ. և քո է գիշեր. զլոյս
և զարև դու հաստատեցեր. և դու
հաստատեցեր զա՟մ սահմանս երկ
րի. զգարուն և զամառն դու
ստեղծեր։

Յայս յուշ լիցի քեզ՝ զի թշնամին
նախատեաց զՏ՟րդ. ժողովուրդ
անզգամ բարկացոյց զանուն
սուրբ քո։

Մի՛ մատներ գազանաց զանձն՝ որ
խոս

խոստովան առնի առ քեզ. և զան
ձինս տնանկաց քոց մի մոռանար
իսպառ:

Հայեաց յուխտ քո. զի լցան
տունք ավիշելոց յերկրի անիրաւ
ութեամբ:

Մի՛ դարձցի տնանկն ամաչեցեալ.
այլ աղքատք՝ և տնանկք օրհնես
ցեն զանուն սբ քո:

Արի՛ ած՝ և դատեա՛ զդատաս
տանս քո. յիշեա՛ զնախատինս՝ որ
յանզգամէն զօրհանապազ:

Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից
քոց. ամբարտաւանութիւն ատե
լեաց քոց վերասցի հանապազ:

Տուն. II:

Ի կատարածն մի ապականեր. Սաղմոս օրհնութե Ասափայ: ՀԴ:

Խոստովան եղիցուք առ քեզ
Ած. խոստովան եղիցուք՝
և կարդասցուք զանուն քո:
Պատմեցից զամենայն սքանչելիս
քո. յորժամ ժամ առից՝ ես ու
ղիղ դատեցից: Ա՛ա

Մաշեցաւ երկիր՝ և ամենայն բնակիչք նորա. ես հաստատեցի զսիւնս նորա։

Ասացի անօրինաց՝ թէ մի՛ անօրինիք. և մեղաւորաց՝ թէ մի՛ բարձրացուցանէք զեղջիւրս ձեր։

Մի՛ համբառնայք ՚ի բարձունս զեղջիւրս ձեր. և մի՛ խօսիք զԱ՟Ծ անիրաւութիւն։

Զի ոչ յարևելից՝ և ոչ յարևմտից՝ և ոչ յանապատէ լերանց. այլ Ա՟Ծ դատաւոր է։

Զայս խոնարհ առնէ՝ և զայն բարձրացուցանէ. բաժակ ՚ի ձեռին Տ՟ն գինի լի անապակ արկեալ. և խոնարհեցոյց յայսմանէ յայս։

Բայց մրուր նորա ոչ սպառեսցի. և արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի։

Ես ցնծացայց յաւիտեան. սաղմոս ասացից Ա՟Ծ յակոբայ։

Զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես. և բարձր եղիցի եղջիւր արդարոյ։

Տուն. 11։

’Ի կատարած. ընդ օրհնութիւնս սաղմոս
Յասափայ. եւ երգ առ ասորեստան
նւոյն: ՀԵ.

Յայտնի է ’ի Հրէաստանի Այ. եւ
յիսրայէլ մեծ է անուն նորա:
Եղեւ ’ի խաղաղութեան տեղի նորա.
եւ բնակութիւն նորա ’ի սիոն:
Անդ խորտակեաց Տր զզօրութիւն
աղեղան. զվահան՝ զսուր՝ եւ զճակա
տամարտ:
Լուսաւոր ես դու սքանչելապէս
լերանցն յաւիտենից. խռովեսցին
ամենեքեան՝ որք անմիտք են սըր
տիւք. ննջեցին զքունս իւրեանց.
եւ ինչ ոչ գտին:
Ամենայն արք՝ ’ի մեծութեան ձե
ռաց իւրեանց. ’ի սաստէ քումմէ
Այ յակոբայ ննջեցին. որք հե
ծեալք էին ’ի ձիս:
Դու ահաւոր ես՝ եւ ով կարէ
կալ առաջի քո. որպէս երեւեցար
դու յերկնից. յայտնի եղեւ բար
կութիւն քո:
Երկիր երկեաւ՝ եւ սարսեցաւ՝
ընդ յառնել Այ ’ի դատաստան.
ընդ

ընդ ապրեցուցանել զա̃մ հեզս
երկրի։
Խորհուրդք մարդկան խոստովան
առնեն առ քեզ. և ծածկեալք
իմաստութե̄ օրհնեսցեն զքեզ։
Ուխտս դիք՝ և կատարեցէք Տ̃ն
Ա̃յ մերոյ ամենեքեան. որք շուրջ
էք զն̃ովաւ։
Մատուցէք զպատարագս ահաւ
որին. որ քաղէ զոգիս իշխանաց.
ահաւոր է նա՝ քան զամենայն թա
գաւորս երկրի։

Տունք. 8։

Ի կատարած վասն Իդիթումայ. Սաղմոս
Ասափայ։ Հ.Զ.։

Ձայնիւ իմով ես առ Տր̄ կար
դացի. ձայնիւ իմով առ Ա̃ծ՝
և նայեցաւ առ իս։
Յաւուր նեղութեան իմոյ զԱ̃ծ
խնդրեցի ձեռօք իմովք. և ՚ի գի
շերի առաջի նորա ոչ խաբեցայ։
Ոչ կամէր մխիթարել անձն իմ.
յիշեցի զԱ̃ծ՝ և ուրախ եղէ հա
գայի, և նուաղիւր յիս հոգի իմ.

Վտանգեցին պահուց աչք իմ.
խռովեցայ՝ և ոչ խօսեցայ. խոր
հեցայ զաւուրսն զառաջինս։ և
զամսն յաւիտենից յիշեցի։
Խօսեցայ 'ի գիշերի ընդ սրտի
իմում. հոգայի՝ և տառապիւր
յիս հոգի իմ։
Միթէ 'ի յաւիտեան մերժեսցէ
զիս Տ՟ր. և ոչ ևս յաւելցի 'ի
հաճիլ ևևս։
Կամ իսպառ արգելցէ զողորմու
թիւն իւր յինէն. կամ կատարեաց
զբանն իւր յազգէ մինչև յազգ։
Կամ մոռացի զգթալ ա՟ծ իմ և
ես. կամ արգելցէ զգթութիւն
իւր բարկութեամբ իւրով։
Ասացի՝ այժմ սկսայ. այս է նո
րոգումն աջոյն բարձրելոյ։
Յիշեցի զգործս Տ՟ն 'ի սկզբա
նէ. յիշեցի զսքանչելիս նորա.
Խոհեցայ յա՟մ գործս քո. և 'ի
ձեռագործս քո խորհեցայ։
Ա՟ծ՝ 'ի սրբութ՟ե են ճանապարհք
քո. ո՞վ է ա՟ծ մե՟ծ ո՟պ զա՟ծ մեր.
դուես ա՟ծ՝ որ առնես զսքանչելիս։

Յուցեր ժողովրդեան քում զզօրութիւն քո. փրկեցեր բազկաւ քով զժողովուրդ քո. զորդիսն յակոբայ և յովսեփու:

Տեսին զքեզ ջուրք Աստուած. տեսին զքեզ ջուրք՝ և երկեան. խորք խռովեցան 'ի ձայնէ ջուրց բազմաց:

Ձայն ետուն ամպք. քանզի և նետք քո գնան. ձայն որոտալոյ քոյ անուին:

Երևեցան փայլատակմունք քո տիեզերաց. խռովեցաւ, և դողաց երկիր:

'Ի ծովու են ճանապարհք քո. և շաւիղք քո 'ի ջուրս բազումս. և հետք քո ոչ երևին:

Առաջնորդեցեր որպէս խաշինս ժողովրդեան քոյ՝ 'ի ձեռն մովսէսի և ահարօնի:

Տուն. 19:

Իմաստութեան Ասափայ.

ՀԷ:

Նայեցարուք ժողովուրդք իմ յօրէնս իմ. խոնարհե

ցուցէք զունկն ձեր ՚ի բանս բե
րանոյ իմոյ։
Բացից առակաւ զբերան իմ.
խօսեցայց զառակս ՚ի սկզբանէ։
Որպէս լուա՛ք՝ և ծանեաք զայս.
և հարքն մեր պատմեցին մեզ։
Ո՛չ ինչ ծածկեցաւ յորդւոց նոցա՝
յազգ այլ. պատմել զօրհնութիւ
Տն՝ զզօրութիւն՝ և զսքանչելիս
իւր. զոր արար։
Հաստատեաց զվկայութիւն իւր
առ յակոբ. և օրէնս եդ ՚վերայ
իսրայէլի։
Որ ինչ միանգամ պատուիրեաց
հարցն մերոց. ցուցանել զայս որ
դւոց իւրց. զի ծանիցէ ազգ այլ։
Որդիք որք ծնանիցին. յարիցեն, և
պատմեսցեն զայս որդւոց իւրց. զի
դիցեն առ ած զյոյս իւրեանց. և
մի՛ մոռասցին զգործս ԱՅ։
Զպատուիրանս նորա խնդրելով
խնդրեսցեն. և մի եղիցին որպէս
և հարքն իւրեանց։
Ազգ չար, և դառնացող. ազգ՝
որ ո՛չ ուղղեաց զսիրտ իւր. և ո՛չ
հաւ

հաստատեաց առ Ա՟ծ զհոգի իւր։
Որդիք եփրեմի լիաձիգք՝ և պրն
տաձիգք. յաւուր պատերազմի
կապարճս դարձուցին։
Ո՛չ կացին նոքա յուխտի Տ՟ն. և
ըստ օրինաց նորա ո՛չ կամե
ցան գնալ։
Մոռացան զերախտիս նորա. և
զսքանչելիս նորա՝ զոր եցոյց նց։
Առաջի հարց նոցա արար զսքան
չելիս իւր. յերկրին եգիպտացւոց՝
և 'ի դաշտին տայանու։
Եհերձ զծովն՝ և անցոյց զնոսա.
և կացոյց զջուրս որպէս 'ի տիկս.
Առաջնորդեաց նոցա ամպով. 'ի
տուէ. և զամ գիշեր 'ի լոյս հրոյ.
Եհերձ զվէմն յանապատին. և
ետ ըմպել նց ոպ 'ի խորոց մեծ է։
Եհան զջուրս 'ի վիմէ. և հո
սեաց որպէս զգետս զջուրս։
Սակայն յաւելին 'ի մեղանչել՝ և
ևս բարկացուցին զբարձրեալն
յանջրդի։
Փորձեցին զԱ՟ծ 'ի սիրտս իւրեց.
'ի խնդրել զկերակուր անձանց իւ
րեանց։

Տաւ

Տրտնջեցին զԱ.Ծ՝ եւ ասացին. մի
թէ կարող իցէ Ա.Ծ պատրաստել
զսեղան յանապատի:

Քանզի հարկանէր զվէմն՝ եւ հո
սէին ջուրք. եւ վտակք խաղային
'ի նմանէ:

Մ՛ղէ հաց եւս կարասցէ տալ նա
մեզ. կամ պատրաստեսցէ զսեղան
ժողովրդեան իւրոյ:

Վասն այսորիկ լու՛աւ զայս Տ՟Ր
եւ յապաղեաց. հուր բորբոքեցաւ
'ի յակոբ. եւ բարկութիւն ել 'ի վե
րայ իսրայելի:

Զի ո՛չ հաւատացին յԱ.Ծ. եւ ո՛չ
յուսացան 'ի փրկութիւն նր՟:

Հրաման ետ ամպոց ի վերուստ՝ եւ
զդրունս երկնից եբաց. եւ տեղեց
'ի նոսա զմանանայ 'ի կերակուր:

Զհաց երկնից ետ նց. զհաց հրեշ
տակաց կերին մարդիկ. եւ իջոյց
'ի նոսա զկերակուր 'ի լիութիւն:

Եհան զհողմն հարաւոյ. եւ էած
զօրութ՟բ իւրով զհիւսիսի:

Տեղեաց 'ի նոսա միս որպ՟ զհող.
որպ՟ զաւազ ծովու զթռչունս թե
ւաւորս:

Եւ անկ

Լարկ ՚ի մէջ բանակի նոցա. և
զվրանօք նոցա։
Կերին՝ և յագեցան յոյժ. և
զցանկութիւն նոցա ետ նոցա.
և ոչինչ կարօտք եղեն ՚ի ցանկու
թենէ իւրեանց։
Մինչ դեռ կերակուրք ՚ի բե
րանս իւրեանց էին. բարկութի
Ա̅Յ ել ՚ի վերայ նոցա։
Սպան զբազումս ՚ի նոցանէ. և
զընտիր ընտիրս Ի̅ղ̅ի սատակեաց։
Յայսմ ամ̅ի մեղան՝ և ևս. և ո՛չ
հաւատացին սքանչելեաց նորա։
Պակասեցան յունայնութ̅ե աւ
ուրք նոցա. և ամք նոցա փու
թապէս անցին։
Յորժամ սպանանէր զնոսա՝ խնդ
րէին զնա. դառնային՝ և առա
ւօտ առնէին առ Ա̅Ծ։
Յիշեցին՝ զի Ա̅Ծ օգնական էր
նոցա. Ա̅Ծ բարձրեալ փրկիչ
էր նոցա։
Սիրեցին զնա բերանովք իւրեանց.
և լեզուօք իւրեանց ստեցին նմա.
և սիրտք ն̅ց ո՛չ էին ուղիղք ընդ
նմա՝

նմա՝ և ոչ հաւատացին ուխտի նորա։

Նա ինքն գթած էր՝ քաւէր
զմեղս նոցա. և ոչ ապականէր։

Յաճախէր դարձուցանել զբար
կութիւն իւր. և ոչ բորբոքէր
զամենայն սրտմտութիւն իւր։

Յիշեաց թէ մարմին են նք. հո
գի՛ որ երթայ՝ և այլ ոչ դառնայ։

Քանիցս անգամ դառնացուցին
զնա յանապատի. բարկացուցին
զբարձրեալն յանջրդի։

Դարձան՝ և փորձեցին զԱծ. և
զսուրբն իւր զայրացուցին։

Ոչ յիշեցին զձեռն նորա. յաւ
ուր յորում փրկեաց զնոսա ՚ի ձե
ռաց նեղչաց նոցա։

Որպէս արար զնշանս՝ և զարու
եստս իւր յերկրին եգիպտացւոց՝
և ՚ի դաշտին տանեոս։

Դարձոյց յարիւն զգետս նոցա.
և զանձրևս նոցա զի մի՛ արբցեն։

Առաքեաց ՚ի նոսա զշանաճանճ՝
և եկեր զնոսա. և գորտն ապա
կանեաց զնոսա։

Ետ ժանկոյ զպտուղ նոցա. և
զվաս

ըզվաստակս նոցա մարախոյ։
Եհար կարկտիւ զայգիս նոցա. և
զթզենիս նոցա եղեմամբ։
Մատնեաց ՚ի կարկուտ զանա
սունս նոցա. և զստացուածս նո
ցա հրով դատեաց։
Առաքեաց ՚ի նս՟ զսրտմտութիւն
բարկութե՟ իւրոյ. զսրտմտութի՟
զբարկութիւն՝ և զնեղութիւն։
Առաքեաց ՚ի նոսա տանջանս ՚ի
ձեռն հրեշտակի չարի. դիմեցոյց
՚ի նոսա զսրտմտութիւն բարկու
թեան իւրոյ։
Ո՛չ անխնայեաց ՚ի մահուանէ զան
ձինս նոցա. և զանասունս նոցա
՚ի մահ մատնեաց։
Եհար զամենայն անդրանիկս ե
գիպտացւոց. զսկիզբն ամենայն
վաստակոց նոցա ՚ի յարկս քամայ։
Հորդան ետ որպէս խաշինս ժողո
վրդեան իւրոյ. և էհան զնոսա
որպէս զհօտ յանապատ։
Առաջնորդեաց նոցա յուսով՝ և
ո՛չ երկեան. և զթշնամիս նոցա
ծով ծածկեաց։

Եհան

Եհան զնոսա 'ի լեառն սրբութեան իւրոյ․ 'ի լեառն այն, զոր ստա
ցաւ աջ նորա։

Մերժեաց յերեսաց նոցա զհե
թանոսս․ եւ վիճակեցոյց 'ի նոսա
զվիճակ ժառանգութեան իւրոյ․
եւ բնակեցոյց 'ի յարկս նց զազգն
իսրայէլի։

Փորձեցին՝ դառնացուցին զԱծ
բարձրեալն․ եւ զվկայութիւն նո
րա ոչ պահեցին։

Դարձեալ խոտորեցան որպէս եւ
հարքն իւրեանց․ դարձան՝ եւ եղեն
որպէս զաղեղն թիւր։

Դարձեալ բարկացուցին զնա 'ի
բագինս իւրեանց․ եւ դրօշելովք
իւրեանց նախանձարկին նմա։

Լուաւ Ածն՝ եւ արհամարհեաց
զնոսա․ եւ անարգեաց յոյժ զիէլ։
Մերժեաց յիւրմէ զխորանն 'ի սե
լովմ․ խորանն՝ զոր բնակեցոյց 'ի
մէջ մարդկան։

Մատնեաց 'ի գերութիւն զզօրու
թիւն նոցա․ եւ զգեղ նոցա 'ի
ձեռս թշնամեաց նոցա։

Ե․ ա

Արգել 'ի սուր զժողովուրդ իւր․
և զժառանգութիւն իւր անտես
արար։
Զերիտասարդս նոցա եկեր հուր․
և վասն կուսանաց նոցա ո՛չ ողբ
սգացաւ։
Քահանայք նց անկան 'ի սուր․
և զայրիս նց ո՛չ ողբ էր՝ որ լայր․
Զարթեաւ որպէս 'ի քնոյ Տր․
որպէս հզօր զի թափէ զգինի։
Եհար յետս զթշնամիս իւր․ նա
խատինս յաւիտենից արար զնս․
Մերժեաց նա զխորանն յովսէ
փու․ և զազգն եփրեմի նա ո՛չ
ընտրեաց։
Այլ ընտրեաց նա զազգն յու
դայ․ զլեառն սիօն, զոր սիրեաց․
Շինեաց որպէս զմիեղջերու ըզ
սրբութիւն նորա․ յերկրի հաս
տատեաց զնա յաւիտեան։
Ընտրեաց զդաւիթ ծառայ
իւր․ և ընկալաւ զնա 'ի հօտէ
խաշանց․ 'ի վերջին ծնելոցն ըն
կալաւ զնա։
Հովուել զյակոբ ծառայ իւր․
և

և զԻէլ ժառանգութիւն իւր. Արածէր զնոսա իմաստութեամբ սրտի իւրոյ. յանմեղութեան ձեռաց իւրոց առաջնորդէր նոցա։

Տունք. 74.

Սաղմոս օրհնութեան Ասափայ. ՀԸ.

ԱԾ մտին հեթանոսք ՚ի ժառանգութիւն քո. պղծեցին ըզ տաճար սուրբ քո։

Արարին զԵՂմ ոպ՜ զհիւղս մրգապահաց. արկին զդիակունս ծառայից քոց գէշ թռչնոց երկնից. և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։

Հեղին զարիւն նոցա ոպ՜ զջուր շուրջ զԵՂմաւ. և ոչ ոք էր՝ որ թաղէր։

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր՝ և այպն՜ կատականաց այնոցիկ՝ որք շուրջ էին զմեօք.

Մին

Մ՚ինչև յերբ Տր̃ բարկանաս դու խապառ. բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո:

Հեղ զբարկութ̃ն քո 'ի վերայ ազգաց՝ որք զքեզ ո՛չ ճանաչեցին. 'ի վերայ թագաւորաց՝ որք զանուն քո ո՛չ կարդացին. զի կերին զյակոբ՝ և զտեղի նորա աւերեցին:

Մ՚ի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութ̃ն քո Տր̃. զի աղքատացաք յոյժ:

Օգնեա մեզ Ա̃ծ փրկիչ մեր. և վ̃ն փառաց անուան քոյ:

Տր̃ փրկեա զմեզ՝ և քաւեա զմեղս մեր. վասն անուան քոյ:

Մ՚ի երբէք ասասցեն 'ի հեթանոսս. թէ ուր է Ա̃ծ նոցա:

Ա̃յլ յայտնի լիցի 'ի մ̃ջ հեթանոսաց առաջի աչաց մերոց. առ 'ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց՝ որ հեղաւ:

Մ՚տցէ առաջի քոյ հեծութ̃ն կապելոց. ըստ մեծութ̃ե բազկի քոյ շահեաց դու զորդիս սպանելոց:

Հատո՛ դրացեաց մերոց եօթնպա

տիկ

տեկ 'ի ծոց նոցա՝ նախատինս նո-
րեանց. զոր նախատեցին զքեզ Տէր։
Մեք ժողովուրդք՝ և խաշն արօ
տի քո. խոստովան եղիցուք առ
քեզ յաւիտեան. յազգէ յազգ
պատմեսցուք զօրհնութիւնս քո։

Տուն. 14։

Ի կատարած. ի վերայ շուշանացելոցն վկայ
ութեան Ասափայ։ Սաղմոս ի վերայ ասո-
րեստանեայց։ ՀԹ։

Որ հովուեսդ Իսրայէլի՛ նայեաց.
որ առաջնորդես որպէս խաշին
յովսէփու։

Որ նստիս 'ի քրովբէս յայտնեաց՝
առաջի Եփրեմի՝ Բենիամինի՝ և
Մանասէի։

Զարթո՛ զզօրութիւնս քո՝ և եկ
'ի կեցուցանել զմեզ։

Ա̃ծ զօրուեց դարձո՛ զմեզ. երևե
ցո՛ զերեսս քո 'ի մեզ և կեցցուք։

Տէ՛ր Ա̃ծ զօրութեց. մինչև յերբ
բարկանաս յաղօթս ծառայից քոց։

Ջամբեցեր մեզ զհաց արտասու
աց. և արբուցեր մեզ արտա
սուս չափով։ Ար

Արարեր զմեզ նախատինս դըրա
ցեաց մերոց. այպն կատականաց
թշնամեաց մերոց։
Ա՟ծ զօրութեանց դարձո՛ զմեզ. երևե
ցո՛ զերեսս քո ՚ի մեզ և կեցցուք։
Զայգի յեգիպտոսէ փոխեցեր.
հաներ զհեթանոսս՝ և զնա տըն
կեցեր. և առաջնորդեցեր նմա։
Պատրաստեցեր զարմատս նորա՝
և ելից զերկիր. ծածկեաց զլե
րինս հովանի նորա. և բարունակ
նորա զմայրս Ա՟յ։
Ձգեաց զորթ իւր մինչև ՚ի ծով.
մինչև ՚ի գետս են շառաւիղք նր՟։
Ընդէր քակեցեր զցանգ նորա.
և՛ կթեն զնա անցաւորք ճանա
պարհի։
Ապականեաց զնա խոզ անտառի՝
և երէ վայրի արածեցաւ ՚ի նմա։
Ա՟ծ զօրութեանց դարձ՝ հայեաց
յերկնից, և տես. այց արա՛ այ
գւոյս այսմիկ. դարմանն տար որ
մա. զոր տնկեաց աջ քո։
Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօ
րացուցեր զնա ՚ի քեզ. այրեցեալ
՚ի հուր

'ի հուր՝ և աւերեալ. և 'ի սաստէ
քումմէ կորիցէ:
Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն.
աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ՝
զոր զօրացուցեր զնա 'ի քեզ:
Ոչ ևս խռացեայ եղիցուք մեք 'ի
քէն. կեցուսցես դու զմեզ. և զա
նուն քո Տր կարդասցուք:
Ած զօրութեանց դարձո՛ զմեզ.
երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ՝ և
կեցցուք:

Տուն. 19:

'Ի կատարած վասն հնձանացն Սաղմոս
Ասափայ. Ձ:

Ցնծացէք առ Ած՝ օգնական
է մեր. աղաղակեցէք առ Ած
յակոբայ:
Առէք զսաղմոս՝ և տուք զօրհ
նութիւն. սաղմոս ասացէք նմա
'ի ձայն քաղցրութեան:
Փողհարէք 'ի գլուխ ամսոյ. յա
ւուր նշանաւորի տարեկանաց
ձերոց:
Հրաման է այս Իղի. և իրաւունք
են այ յակոբայ:

Վկայութիւն յօսէփու՝ զոր եդ-
ընդ՝ նմա․ ոմ̃ ելանէր նա յերկ-
րէն եգիպտացւոց լեզու՝ զոր ոչ
գիտէր՝ լուաւ։

Ի բաց արար ՚ի բեռանց զթի-
կունս նորա․ և զձեռս նորա յորթ
և՚ի թի ծառայելոյ։

՚Ի նեղութեան կարդացեր առ իս՝
և փրկեցի զքեզ․ լուայ քեզ ՚ի
գաղտնութենէ մրրկի․ և փորձե-
ցի զքեզ ՚ի վերայ ջուրցն հակա-
ռակութեան։

Լուր ժողովուրդ իմ․ և վկայեմ
քեզ․ և իսրայէլ թէ լուիցես ինձ։

Մի՛ ևս եղիցին քեզ աստուածք
առժամեայք․ և մի՛ երկիրպագա-
նիցես դու աստուծոյ օտարի։

Ես եմ Տ̃ր Ա̃ծ քո․ որ հանի
զքեզ յերկրէն եգիպտացւոց․ բաց
զբերան քո՝ և լցից զդա։

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի
իմում․ և իսրայէլ յիս ինչ ոչ նայ
եցաւ։

Արձի թողի զնոսա երթալ ըզ
հետ կամաց իւրեանց․ զի գնացեն

ն̃ք

նք̄ ըստ կամս անձանց իւրեանց ։
Եթէ ժողովրդեան իմոյ լուեալ
էր ինձ. կամ իլ̄ զճանապարհս
իմ գնացեալ էր ։
Ոպ̄ զոչ ինչ խոնարհ արարեալ էր
իմ զթշնամիս նոցա. և ՚ի վերայ
նեղչաց նց̄ արկեալ էր զձեռն իմ ։
Թշնամիք Տեառն ստեցին նմա.
և եղիցին ժամանակք նոցա յաշ
խարհի ։
Կերակրեաց զնոսա ՚ի պարարտու
թենէ ցորենոյ. և ՚ի վիմէ մեղր
յագեցոյց զնոսա ։

Տաղ. 17 ։

Սաղմոս Ասափայ ։ ՁԱ ։

Ած̄ եկաց ՚ի ժողովս աստուածոց.
և ՚ի միջի նոցա դատէր զնս̄ ։
Մինչև յերբ դատէք անիրաւու
թք̄. և ակնառնուք մեղաւորաց ։
Դատ արարէք որբոյն՝ և այրւոյ.
իրաւունս արարէք տնանկին՝ և խո
նարհի ։
Ապրեցուցէք զաղքատն՝ և զտը
նանկն. ՚ի ձեռաց մեղաւորի փրկե
ցէք զնս̄ ։

Ոչ իմացան՝ և ոչ 'ի միտ առին. 'ի
խաւարի գնացին՝ և շարժեցան
ամ՟ հիմունք երկրի:
Ես ասացի՝ թէ աստուածք իցէք.
կամ որդիք բարձրելոյն ամենե
քեան:
Դուք ահաւասիկ որպէս զմար
դիկ մեռանիք. և ո՟պ զմի յիշխա
նաց անկանիք:
Արի Ա՟ծ՝ և դատեա՛ զերկիր. զի
դու ժառանգեսցես զամենայն
հեթանոսս:

## Տունք. 8:

## Սաղմոս օրհնութեան Ասափայ: ՁԲ:

Ած, ո՛ քեզ նմանիցէ. մի՛
լռեր՝ և մի՛ դադարեր
Աստուած:
Զի ահա թշնամիք քո
գոչեցին. և ատելիք քո համբար
ձին զգլուխս իւրեանց.
Ի վերայ ժողովրդեան քո խորա
մանկեցին զգիտութի՟. խորհեցան
'ի վերայ սրբոց քոց. և ասացին:

Եկայք սատակեսցուք զնոսա յազգաց. եւ մի՛ յիշեսցի անունն Իս-րայէլի եւս։

Խորհեցան միաբանութե՛ ի միա-սին. ի վ՛ քո ուխտ արարին։

Բանակք Եդովմայեցւոց՝ եւ Իսմայե-լացիք. Մովաբ, եւ Հագարացիք։

Գեբաղ՝ Ամոն եւ Ամաղէկ. այլ-ազգիքն. ամենայն բնակչօքն հան-դերձ Ծուրաւ։

Եւ Ասուր եկեալ էր ընդ նո-սա. ամենեքեան նոքա զօրավիգք էին որդւոցն Ղովտայ։

Արա՛ զնոսա որպէս զՄադիամ, որ-պէս զՍիսարայ. որպէս զՅաբին ՚ի ծործորն Կիսոնի։

Սատակեցան նոքա յԱենդովրայ. եւ եղեն ոպ՛ աղբ երկրի։

Արա՛ զիշխանս նոցա ոպ՛ զՈրէբն. եւ զԶէբն՝ եւ զԶեբեէ՝ եւ զՍաղմա-նայ. եւ զամ՛ իշխանս նոցա։

Որք ասացին, ժառանգեսցուք ՚ի մեզ զսրբութիւնն Այ՛։

Ած՛ իմ, արա՛ զնոսա ոպ՛ զանիւ. եւ ոպ՛ զեղեգն առաջի հողմոյ։

Որ

Որպէս հուր՝ զի այրէ զանտառս.
որպ բոց զի կիզու զլերինս։
Այնպէս հալածեսցես զնոսա
մրրկաւ քով. և բարկութբ՛ քով
խռովեցուսցես զնոսա։
Լից զերեսս նոցա անարգանօք.
և խնդրեսցեն զանուն քո Տր՛։
Ամաչեսցեն՝ և խռովեսցին յաւի
տեանս յաւիտենից. և ամօթա
լիցին կորիցեն։
Ծանիցեն զի անուն քո Տր՛ է.
և դու միայն բարձրեալ ես ՚ի վե
րայ ամենայն երկրի։

Տաղ. 20։

Ի կատարած վասն հնձանացն. Սաղմոս
որդւոցն կորխայ։ ՁԳ։

Որպ սիրելիք են յարկք քո Տր՛
զօրութեանց. ցանկայ՝ և փափա
քի անձն իմ ՚ի գաւիթս քո։
Սիրտ իմ, և մարմին իմ ցնծասցեն
առ Ած՛ կենդանին
Քանզի ճնճղուկ եգիտ իւր
տուն. և տատրակ զբոյն. ուր
դիցէ զձագս իւր։

Սեղան քո Տր̅ զօրութեանց. Թա
գաւոր իմ, և Ած̅ իմ։

Երանի ամենեցուն. որք բնակեալք
են 'ի տան Տն̅. յաւիտեանս յա
ւիտենից օրհնեսցեն զքեզ։

Երանեալ է այր՝ որոյ օգնութի̅
'ի քէն է. ելս եդ 'ի միտս իւրում
'ի հովտէս տրտմութեան 'ի տե
ղւոջ յորում ուխտեաց։

Զօրհնութի̅ս տացէ՝ որ զօրէնս
դնէ. գնասցէ նա 'ի զօրութենէ
'ի զօրութիւն. և երևեսցի Ած̅
հրեշտակաց 'ի սիոն։

Տր̅ Ած̅ զօրութեանց՝ լուր աղօ
թից իմոց. ունկնդիր ած̅ յակոբայ։

Ընդունող ես դու մեր. տես Ած̅
և նայեաց յերեսս օծելոյ քոյ։

Վասն զի լաւ է ինձ մի օր 'ի գա
ւիթս քո քան զհազարս։

Ընտրեցի ընդ աղբ կալ 'ի տանն
Այ̅. առաւել քան զբնականալն 'ի
յարկս մեղաւորաց։

Զողորմութի̅՝ և զճշմարտութի̅
սիրէ Տր̅ Ած̅ մեր. զշնորհս և
զփառս տացէ։

Տ՛Ր ոչ պակաս առնէ զողորմու-
թիւն իւր յայնցանէ՝ որք գնան
յամբծութեան.

Տ՛Ր Ա.Ծ զօրութէց երանեալ է
այր՝ որ յուսայ ՚ի քեզ։

Տունք. 15։

Դ՚ի կատարած որդւոցն Կորխայ։ Սաղմոս
ՁԴ։

Հաճեցար Տ՛Ր ընդ երկիր քո.
և դարձուցեր զգերութիւնն
յակոբայ։

Թողեր զանիրաւութիւն ժողո
վրդեան քո. ծածկեցեր զամե
նայն մեղս նոցա։

Լուեցուցեր զամենայն սրտմտու
թիւնս քո. դարձար ՚ի բարկու
թէ սրտմտութեան քո։

Դարձ առ մեզ Ա.Ծ փրկիչ մեր.
և դարձո զսրտմտութիւնս քո
՚ի մէնջ։

Մի յաւիտեան բարկանար մեզ.
և մի ձգեր զբարկութի քո յազգէ
մինչև յազգ։

Ա՛Ծ դու դարձեալ կեցուսցես
զմեզ

զմեզ. և ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ։

Ցոյց մեզ Տր զողորմութիւն քո. և զփրկութիւն քո տուր մեզ։

Լուաք զինչ խօսի Տր Ած մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ. առ սուրբս իւր, և առ այնոսիկ՝ ոյք դարձեալք են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութն նորա. բնակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին. արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երևեցաւ։

Տր տացէ զքաղցրութն, և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ դիցէ 'ի ճանապարհի զգնացս իւր։

Տաղ. 13։

Աղօթք

Աղօթք Դաւթի ի հաստատուած սրբոցն հօրինաց։ ՁԵ։

Խոնարհեցո՛ Տէր զունկն քո՝ և լուր ինձ. զի աղքատ, և տնանկ եմ ես։
Պահեա՛ զանձն իմ, սուրբ Տէր. փրկեա՛ զծառայս քո Ած իմ. որ ՚ի քեզ յուսացայ։
Ողորմեաց ինձ Տէր՝ զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա՛ զանձն ծառայի քոյ՝ զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։
Զի դու Տէր քաղցր՝ և ուղիղ ես. բազում ողորմ առ ամենեսեան՝ որք կարդան առ քեզ։
Ունկն դիր Տէր աղօթից իմոց. և նայեաց ՚ի ձայն խնդրուածաց իմոց։
Յաւուր նեղութե իմոյ կարդացի առ քեզ՝ և լուար ինձ։
Ոչ ոք է նման քեզ յԱծս Տէր. և ոչ ոք է որպէս գործս քո։
Ամենայն ազգս՝ զորս արարեր. եկեսցեն՝ և երկիրպագցեն առաջի քոյ

քոյ Տր̃. և փառաւոր արասցեն
զանուն քո յաւիտեան։
Մեծ ես դու Տր̃. և առնես զս
քանչելիս. և դու միայն ես Ած։
Առաջնորդեա ինձ 'ի ճանապար
հի քում. և գնացից 'ի ճշմարտու
թե̃ քում. և ուրախ եղիցի սիրտ
իմ երկնչել յանուանէ քումմէ։
Խոստովան եղէց առ քեզ Տր̃ Ած
իմ. բոլորով սրտիւ իմով փառա
ւոր արարից զանուն քո յաւիտեան.
Մեծ եղև 'ի վերայ իմ ողորմու
թիւն քո՝ և փրկեցեր զանձն իմ,
'ի դժոխոց ներքնոց։
Ած, անօրէնք յարեան 'ի վր̃ իմ.
և ժողովք հզօրաց խնդրեցին
զանձն իմ. և ոչ համարեցան ըզ
քեզ Ած առաջի իւրեանց։
Այլ դու Տր̃ Ած իմ, գթած
ես՝ և ողորմած. երկայնամիտ՝ բա
զումողորմ՝ և ճշմարիտ. նայեաց
առ իս՝ և ողորմեաց ինձ.
Տուր զզօրութիւն ծառայի քոյ.
կեցո զորդի աղախնոյ քոյ. և արա
ընդ իս նշան բարութեան։
Տես

Տեսցեն ատելիք իմ, և ամաչես-
ցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ՝
և մխիթարեցեր զիս:

Տուն. 16:

Որդւոցն Կորխայ Սաղմոս օրհնութեան:

ՁԶ:

Հիմունք նորա 'ի լեառն սուրբս
նորա. սիրէ Տէր զդրունս սի-
ոնի՝ առաւել քան զամ յարկսն
յակոբայ:
Փառաւորեալ խօսեցաւ վն քո.
ահաւադիկ քաղաքդ ԱՅ:
Յիշեցի զռահաբ և զբաբիլոն՝
որք ճանաչեն զիս. ահա այլ ազ-
գիք՝ և ծուր՝ և ժողովուրդ հնդ-
կաց՝ սոքա եղեն անդ:
Մայր սիոնի ասէ մարդ՝ և մարդ-
ծնաւ 'ի նմա. և ինքն հիմունս
էարկ նմա բարձրեալն:
Տէր պատմեսցէ գրովք ժողովր-
դեան. իշխանացս այսոցիկ՝ որք
եղեն անդ:
Որպէս զի ուրախ լիցին 'ի քեզ ամե-
նեքեան. որոց բնակութի 'ի քեն է:

Տուն. 7:

Օրհնութիւն սաղմոսի որդւոցն Կորխայ 'ի կատարած վասն Մահելեթայ. որ է երգ պատասխանի. իմաստութիւն Եմմանայ Եզրայեցւոյ: ՁԷ:

ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ փրկութեան իմոյ. 'ի տուէ կարդացի՝ և գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. խոնարհեցո ունկն քո 'ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ 'ի դժոխս մերձեցան. և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որք իջանեն 'ի գուբ:

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի. և 'ի մեռեալս ազատ:

Որպէս զվիրաւորս. որք ննջեն 'ի գերեզմանի:

Զորս դու ոչ յիշեցեր. նոքա 'ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Եդին զիս 'ի գուբ ներքնում 'ի խաւարի և 'ի ստուերս մահու:

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո. զամենայն զբօսանս քո ածեր 'ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս
իմ. և եդին զիս նշաւակ իւրց̃,
Մատնեցայ՝ և ո՛չ ելանէի. աչք իմ
տկարացան յաղքատութենէ։
Աղաղակեցի առ Տր̃ զօրհանա
պազ. և համբարձի առ քեզ ըզ
ձեռս իմ։
Միթէ մեռելոց առնիցես զսքան
չելիս. կամ բժիշկք յարուցանիցեն,
և խոստովան առնիցեն առ քեզ։
Մի՛ թէ պատմեսցէ ոք երբէք 'ի
գերեզմանի զողորմութիւնս քո.
կամ զճշմարտութիւնս քո 'ի կորս
տեան։
Մի՛ թէ ծանիցեն 'ի խաւարի
սքանչելիք քո. կամ արդարութի̃
քո յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ Տր̃ աղաղակեցի. ա
ռաւօտու աղօթք իմ ժամանես
ցեն առ քեզ։
Ընդէր Տր̃ մերժես զանձն իմ.
կա՛մ դարձուցանես զերեսս քո
յինէն։
Տնանկ՝ և վաստակաւոր եմ ես 'ի
մանկութենէ իմմէ. 'ի բարձրու
թենէ

թենէ խոնարհեցայ՝ և ամչեցայ։
Յիս հաստատեցաւ բարկութիւն քո․
արհաւիրք քո խռովեցուցին զիս։
Շրջեցան զինև որպէս ջուր․ զօր ամ̃
պաշարեցին զիս 'ի միասին։
Հեռի արարեր յինէն զբարեկամս
իմ․ և զծանօթս իմ վասն թշուառ
ութեան իմոյ։

Տուն․ 22։

Ի մաստութիւն եթանայ եզրայեցւոյ։

ՁԸ։

Ողորմութիւնս քո Տէր յա
ւիտեան օրհնեցից․ յազ
գս յազգս պատմեցից զճ
շմարտութիւնս քո բերանով իմով։
Ասացեր թէ աշխարհս ողորմու
թեամբ շինեսցի․ յերկինս պատ
րաստ եղիցի ճշմարտութիւն քո։
Ուխտ դրի ընտրելոց իմոց․ եր
դուայ դաւթի ծառայի իմոյ։
Յաւիտեան հաստատեցից զզա
ւակ քո․ և շինեցից յազգս յազգս
զաթոռ քո։

Խոս

Խոստովան եղիցին երկինք զսքան
չելեաց քոց Տր. և ճշմարտութի
քո յեկեղեցիս սրբոց։
Ո՞վ է յամպս՝ որ հաւասարեսցի քեզ.
կամ ով նմանիցի Տն յորդիս այ։
Ած փառաւորեալ է ’ի խորհուրդս
սրբոց իւրոց. մեծ և ահարկու ’ի
վերայ այնոցիկ՝ որք շուրջ են զնո
վաւ։
Տր Ած զօրութեանց՝ ո՛ նմանի քեզ.
հզօր ես դու Տր. և ճշմարտու
թիւն քո շուրջ է զքև։
Դու տիրես զօրութեանց ծովու.
զխռովութիւն ալեաց նորա դու
ցածուցանես։
Դու խոնարհեցուցանես որպէս
զվիրաւորս զամբարտաւանս. ’ի
զօրութիւն բազկի քոյ ցրուեցեր
զթշնամիս քո։
Քո են երկինք՝ և քո է երկիր. զաշ
խարհս լրիւ իւրով դու հաստա
տեցեր. զհիւսիս՝ և զհարաւ դու
արարեր. Թաբօր և Հերմոն յա
նուն քո ցնծասցեն։
Քո է բազուկ՝ և քո է զօրու
թիւն

թեւն. զօրասցի աջ քո՝ եւ բարձր եղիցի ձեռն քո։

Արդարութիւն՝ եւ յիրաւունս հաստատեալ է աթոռ քո ողորմութիւն՝ եւ ճշմարտութիւն գնասցեն առաջի երեսաց քոց։

Երանի ժողովրդեան՝ որ գիտէ զօրհնութիւն քո Տր. 'ի լոյս երեսաց քոց գնասցեն. եւ յանուն քո ցնծասցեն զօրհանապազ. եւ յարդարութեն քում բարձր եղիցին։

Պարծանք զօրութեց նոցա դու ես. եւ 'ի կամս քո բարձր եղիցի եղջիւր նոցա։

Ի Տէ է օգնութիւն սրբոյն իլ̃ի թագաւորին մերոյ։

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ը̃ որդիս քո՝ եւ ասացեր. եդի զօգնութիւն իմ 'ի վր̃ հզօրին՝ եւ բարձր արարի զընտրեալն 'ի ժողովրդենէ իմմէ։

Գտի զդաւիթ ծառայ իմ. իւղով սրբով իմով օծի զնա։

Ձեռն իմ ընկալցի զնա. եւ բազուկ իմ զօրացուսցէ զնա։

Մի՛ մեղիցէ նմա թշնամի. և որ
դի անօրէնութեան մի՛ չարչարես
ցէ զնա։

Հարից առաջի նորա զթշնամիս
նորա. և զատելիս նորա 'ի պար
տութիւն մատնեցից։

Ճշմարտութիւն իմ, և ողորմու
թիւն իմ ընդ նմա. և յանուն իմ,
բարձր եղիցի եղջիւր նորա։

Եդից 'ի ծովու զձեռն նորա. և
'ի վերայ գետոց զաջ նորա։

Նա կարդասցէ առ իս, Հայր իմ
ես դու. Ա՟ծ ընդունող փրկու
թեան իմոյ։

Ես անդրանիկ արարից զնա. և
բարձր քան զամենայն թագաւորս
երկրի։

Յաւիտեան պահեցից նմա զողոր
մութիւն իմ. և ուխտ իմ հաւա
տարիմ ընդ նմա։

Հաստատեցից յաւիտեանս յաւի
տենից զզաւակ նորա. և զաթոռ
որպէս զաւուրս երկնից։

Թէ թողցեն որդիք ն՟ր զօրէնս
իմ. և յիրաւունս իմ ոչ կամեսցին
գնալ։

Թէ

Թէ զարդարութիւնս իմ անար
գեսցեն. և զպատուիրանս իմ ոչ
պահեսցեն:

Հարից գաւազանաւ զանօրէնու
թիւնս նոցա. և տանջանօք զանի
րաւութիւնս նոցա:

Բայց զողորմութիւն իմ ոչ արգե
լից ՚ի նոցանէ. և ոչ նենգեցից
ճշմարտութեան իմում. և ոչ անար
գեցից զուխտ իմ. և ինչ որ ելա
նէ ընդ շրթունս իմ. զայն ոչ ար
համարհեցից:

Մի անգամ երդուայ ՚ի սրբութիւն
իմ. թէ Դաւթի ես ոչ ստեցից.
Զաւակ նորա յաւիտեան կաց
ցէ. և աթոռ նորա որպէս զարե
գակն առաջի իմ. և որպէս զլուսին
զի հաստատեալ է յաւիտեան վը
կայ հաւատարիմ յերկինս.

Իսկ արդ դու մերժեցեր՝ և ա
նարգեցեր. և ընդ վայր հարեր
զօծեալ քո:

Դարձուցեր զուխտ ՚ի ծառայէ
քումմէ. պղծեցեր յերկրի զսր
բութիւն նորա.

Ք․ակեցեր զա͞մ պարիսպս նորա․
և եդեր զամուրս նորա ՚ի դողումն ։
Յափշտակեցին զնա անցաւորք
ճանապարհի․ եղև նա նախատ
դրացեաց իւրոց ։
Բ․արձր արարեր զաջ նեղչաց նո
րա․ ուրախ արարեր զամենայն
թշնամիս նորա ։
Դ․արձուցեր զօգնութի՛ն ՚ի սրոյ
նորա․ և ո՛չ ընկալար զնա ՚ի պա
տերազմի ։
Ա․նարգեցեր զսրբութի՛ն նր․ և զա
թոռ նորա յերկիր կործանեցեր ։
Սուղ արարեր զաւուրս ժամա
նակաց նորա․ և հեղեր զնովաւ
զամօթ ։
Մ․ինչև յերբ դարձուցանես զե
րես քո իսպառ․ բորբոքեսցի ո͞պ
հուր բարկութիւն քո ։
Յ․ակ արդ յիշեա՛, և տես՝ թէ ով է
իմ հանգիստ․ մի թէ ՚ի զուր ինչ
ստեղծեր զա͞մ որդիս մարդկան ։
Ո՛վ է մարդ՝ որ կեցցէ, և ոչ տես
ցէ զմահ․ կամ փրկեսցէ զանձն
իւր ՚ի ձեռաց դժոխոց ։

Ուր են ողորմութիւնք քո առա-
ջինք Տէր. զոր երդուար դաւթի
ճշմարտութեամբ քով:
Յիշեա զնախատինս ծառայի քո.
զոր ընկալայ 'ի ծոց իմ յազգաց
բազմաց:
Զոր նախատեցին թշնամիք քո
Տէր. նախատեցին փոխանակ օծե-
լոյ քո:
Օրհնեալ Տէր Ած յաւիտեանս
յաւիտենից. եղիցի եղիցի:

Տունք: 49:

Օրհնութիւն Եսայեայ որդւոյն
Ամօսայ. Ի. Օ:

Ի գիշերաց կանխէ հոգի իմ.
առաւօտ առնել առ քեզ
Ած:
Զի լոյս են հրամանք
քո 'ի վերայ երկրի. ուսարուք զար-
դարութիւն բնակիչք երկրի:
Վարկեսցի ամպարիշտն՝ և այլ ոչ ևս
ուսցի առնել յերկրի զարդարու-
թիւն ճշմարտութեան:

Բարձ

Բ. արձցի ամպարիշտն յերկրէ. և
մի՛ տեսցէ զփառս Բ.Յ̅։
Տ̅ր բարձր ես՝ և բազուկ քո հը
զօր. և նոքա ո՛չ գիտացին։
Օ. անկցեն ամաչեսցեն՝ և նախանձ
արկցի անխրատ ժողովրդեան. և
արդ՝ հուր զթշնամիս քո կերիցէ։
Տ̅ր Բ.Ծ մեր՝ տուր մեզ զխաղա
ղութիւն քո. զի ըստ ա̅մ գործոց
մերոց հատուցաւ մեզ։
Տ̅ր Բ.Ծ մեր՝ ստացիր զմեզ. զի
բաց ՚ի քէն զայլոք ո՛չ գիտեմք.
և զանուն քո անուանեմք զօրհա
նապազ։
Իսկ որդ՝ մեռեալք զկենդանու
թիւն այլ ո՛չ տեսանիցեն. և ո՛չ
բժիշկք յարուցանիցեն։
Վասն այսորիկ ածեր՝ հարեր՝
սատակեցեր՝ և ջնջեցեր զամե
նայն արու մանուկ նոցա։
Յաւել Տ̅ր զչար ՚ի վերայ չարի
նոցա. և ած զչար ՚ի վերայ անօ
րինաց երկրի։
Տ̅ր ՚ի նեղութեան յիշեցաք զքեզ.
զի փոքր մի նեղութի̅ է խրատ քո
՚ի վե̅ր մեր։

Որ

Որպէս երկունք յղւոյ՝ զի հասանելք
իցեն 'ի ժամանակս ծննդեան. և
առ ցաւս իւր ճչիցէ։

Այսպէս եղաք սիրելւոյ քում
Տէր. յահ և յերկիւղ քո յղացեալք
երկնեցաք. և ծնաք զհոգի փրկու
թեան քոյ։

Ո՛չ ևս կործանիցուք մեք, այլ կոր
ծանեսցին բնակիչք երկրի։

Յարիցեն մեռեալք՝ և կենդանաս
ցին ամենեքեան. որք եղեալք են
'ի գերեզմանս։

Զարթիցեն, ցնծասցեն, և ու
րախ եղիցին դադարեալք երկրի։

Քանզի ցօղդ՝ որ ցօղի 'ի քէն՝
այդ բժշկութի է նոցա. բայց եր
կիրն ամպարշտեալ տատանեսցի։

Խոյս տուր ժողովուրդ իմ. գնա՛,
մուտ 'ի շտեմարանս քո. և փակեա՛
զդրունս քո առաջի երեսաց քոց։

Փախիր, և թաքիր առ ժամանակ
մի. մինչև անցցէ բարկութի Տն։

Տուն. 20։

Խաղաղութեանց տուօղ Քրիս
տոս զխաղաղութիւն և զողոր
մութիւն քո պարգևեա՛ մեզ։
Մարգասէր Տէր՝ վասն սրբուհւոյ
անարատ Մօր քոյ և կուսի.
և վասն խաչի քոյ պատո
ւականի, ընկալ զաղա
չանս մեր. և կե
ցո՛ զմեզ։



## Աղօթք Մովսէսի առն Աստուծոյ: ՁԹ.

ՏԷՐ ԱՊԱՒԷՆ եղեր մեր յազգէ մինչեւ յազգ. մինչչեւ լեռինք հաստատեալ էին. եւ մինչ չեւ ստեղծեր զերկիր եւ զամենայն տիեզերս:

Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու ես. մի դարձուցաներ զմարդ 'ի տառապանս. եւ ասացեր՝ դարձարուք առ իս որդիք մարդկան:

Հազար ամ յաչս Տն որպէս օր երեկն՝ զի էանց. որպէս զպահ մի գիշերոյ. եւ ամք նոցա անարգութեամբ եղիցին:

Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին. ընդ առաւօտս որպէս

դալարի զուարճասցին՝ և ծաղ
կեսցին. ընդ երեկոյս թարշամե
ցին՝ չորասցին՝ և անկցին։
Նուաղեցաք մեք 'ի բարկութենէ
քումմէ. և 'ի սրտմտութենէ քում
մէ խռովեցաք։
Եդիր զմեղս մեր առաջի քո. և
զկեանս մեր 'ի լոյս երեսաց քոց։
Ամենայն աւուրք մեր նուաղե
ցան. և 'ի բարկութենէ քումմէ
խռովեցաք։
Ժամանակ ամաց մերոց անդա
դար որպէս սարդի. և թիւ աւ
ուրց ամաց մերոց 'ի նոսա եօթա
նասուն ամ։
Ապաթէ՝ առաւել ևս ութսուն
ամ. և որ ինչ աւելի է քան զայն,
ցաւօք և հեծութեամբ։
Եկն 'ի վերայ մեր հեծութիւն և
խրատեցաք. իսկ արդ՝ ո՞ գիտասցէ
զզօրութիւն բարկութեան քո.
և կամ յահէ քումմէ, զսրտմտու
թիւն քո համարեսցի։
Այսպէս ցոյց ինձ զաջ քո. և որք
խոնարհ.ք են սրտիւք՝ զիմաստու
թիւն քո։ Դարձ

Դարձ Տէր՝ մինչև յերբ. մխիթա
րեա՛ ՚ի ծառայս:

Լցաք առաւօտու ողորմութե՛ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամ աւուրս կենաց մերոց:

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհարարեր զմեզ և ամացն, յորս տեսաք զչարչարանս:

Հայեաց Տէր ՚ի ծառայս քո՝ և ՚ի գործս ձեռաց քոց. և առաջնորդ դեա որդւոց նոցա. եղիցի լոյս Տն Այ ՚ի վերայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ՚ի մեզ Տր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ:

Տաղ. 16.

Անվերնագիր ՚ի Կերպարանեացն օրհնու
թեան գովութեան: Ա :

Որ բնակեալ է յօգնութե՛ Բարձ րելոյն, ընդ հովանեաւ Այ յերկինս հանգիցէ:

Ասասցէ Տն ընդունող իմ ես դու. ապաւէն իմ Այ՝ և ես յուսամ ՚ի նա:

Նա

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին. և 'ի բանից խռովութ͞ե :
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի թևոց ն͞ր յուսասցիս :
Որպէս զզէն շուրջ եղիցի զքև
ճշմարտութիւն նորա.
Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի. և ո՛չ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ :
Յիրէ որ շրջի 'ի խաւարի. 'ի գայթակղութենէ դիւին հասա
րակի աւուր :
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք. և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին :
Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու. և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տ͞ր յոյս իմ ես :
Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ո՛չ հասցին առ քեզ չարք և տանջանք ո՛չ մերձեսցին 'ի
յարկս քո :
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո. 'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո :
Ի բազուկս իւրեանց ընկալցին
զքեզ.

զքեզ. զի մի՛ երբեք հարցես զքա
րի զոտն քո։
Ի վերայ իժից՝ և քարբից գնա
ցես դու. և առ ոտն կոխեսցես
զառիւծն՝ և զվիշապն։
Քանզի յիս յուսացաւ՝ և փրկե
ցից զնա. հովանի եղէց նմա՝ զի
ծանեաւ զանուն իմ։
Կարդասցէ առ իս՝ և ես լո՛ւայց
նմա. և առ նմա եղէց ՚ի նեղութե։
Փրկեցից՝ և փառաւոր արարից
զնա. երկայնաւուրբք լցուցից՝ և
ցուցից նմա զփրկութիւն իմ։

## Տաղ. 16։

Սաղմոս օրհնութե յաւուրն շաբաթու.
Ր. նշանակէր ՚ի հեբրայեցւոց։ Դ Ր.։

Բարի է խոստովան լինել Տն. և
սաղմոս ասել անուա՛ն քում
բարձրեալ։
Պատմել՝ առաւօտուց զողորմու
թիւնս քո. և զճշմարտութիւնս
քո ՚ի գիշերի։
Տասնաղեաւ սաղմոսարանաւ. ՚ի
ձայն օրհնութեան գուլեւ։

Ուրախ արարեր զիս Տէր յարարածս քո. և ՚ի գործս ձեռաց քոց ցնծացայց։

Ո՜պ զի մեծք են գործք քո Տր. և յոյժ խորք են խորհուրդք քո։

Այր անզգամ զայս ոչ ծանիցէ. և անմիտն զայս ոչ առնուցու ՚ի միտ։

Ի բուսանիլն մեղաւորաց որպէս խոտ. ՚ի ծաղկիլ ամենեցուն՝ որք գործեն զանօրէնութիւն։

Սատակեսցին յաւիտեանս յաւիտենից. և դու բարձրեալ ես յաւիտեանս Տր։

Զի ահա թշնամիք քո Տր. զի ահա թշնամիք քո կորիցեն. ցրուեսցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութիւն։

Բարձր եղիցի ո՜պ մի եղջերուի եղջիւր իմ. և ծերութիւն իմ ՚ի ձէթ պարարտութեան։

Տես ական իմ ՚ի թշնամիս իմ. որք յարուցեալք են ՚ի վերայ իմ չարութեամբ՝ ՚ի նոսա լուիցէ ունկն իմ։

Արդարք ո՜պ զարմաւենիս ծաղ

կեցցեն. որո՛վ զմայրս լիբանանու բազումք եղիցին:

Տնկեալք եղիցին ՚ի տան Տն. ՚ի գաւիթս Ա͞Յ մերոյ ծաղկեսցեն: Եւս և բազումք եղիցին ՚ի ծերութեան պարարտութեան. գիրգք և փափուկք եղիցին. ՚ի պատմել ուղիղ է Տէր ա͞ծ մեր, և ո՛չ գոյ ՚ի նմա անիրաւութիւն:

Տօնի. 16:

Օրհնութիւն գովութեան երգեան Դաւթի յաւուր նախաշաբաթու. յորժամ երկիր հաստատեցաւ: (անվերնագիր ՚ի հեբրայեցւոց:) ՂԲ:

Տէր թագաւորեաց՝ զվայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տ͞ր զզօրութիւն ընդ մէջ իւր էած:

Հաստատեաց զաշխարհ՝ զի մի՛ սասանեսցի. պատրաստ է աթոռ քո. ՚ի սկզբանէ յաւիտենից դու ես: Ամբարձան գետք Տ͞ր. և ամբարձին գետք զձայնս իւրեանց. յա

րձ

ըցեն գետք ՚ի գնացս իւրեանց։
Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչե
լիք եղեն զբօսանք ծովու։
Սքանչելի ես դու Տ՟Ր ՚ի բար
ձունս․ վկայութեանց քոց մեք
յոյժ հաւատացաք։
Տան քում վայելէ սրբութիւն՝
Տ՟Ր ընդ երկայնաւուրս։
Տաղ․ 6։

Սաղմոս յինքեան Դաւթի չորեքշաբա
թուն․ ( անվերնագիր ՚ի հեբրայեցւոց։ )
ՂԳ։

Ա՟Ծ, վրէժ խնդիր․ Տ՟Ր Ա՟Ծ
վրէժխնդիր յայտնեցար։
Բարձր լեր՝ որ դատես զերկիր․
հատո՛ զհատուցումն ամբարտա
ւանից։
Մինչև յերբ մեղաւորք Տ՟Ր․ մին
չև յերբ մեղաւորք պարծեսցին,
Բարբառե՟լք խօսէին զանիրաւու
թի՟․ խօսեսցին ամենեքեան՝ որք
գործեն զանօրէնութիւն։
Զժողովուրդ քո Տ՟Ր խոնարհ
արարին․ և զժառանգու՟ի քո չար
չարեցին։ Զայ

Զայրին, և զպանդուխտն սպանին.
և զորբսն կոտորեցին. և ասացին
ոչ տեսանէ զայս Տէր. և ոչ ՚ի միտ
առնու ԱԾ յակոբայ:

Իմացարուք անզգամք ժողովր
դեան. և անմիտք՝ մինչև յերբ ոչ
առնուք ՚ի միտ:

Որպէս զի թէ որ տնկեաց զունկն՝
ինքն ոչ լուիցէ. կամ որ ստեղծ
զակն՝ ինքն ոչ տեսանիցէ:

Որ խրատէ զազգս՝ որպէս թէ ոչ
յանդիմանեսցէ. որ ուսուցանէ
մարդոյ զգիտութիւն. Տէր ճանաչէ
զխորհուրդս մարդկան՝ զի են
ընդունայնք:

Երանի մարդոյ՝ զոր խրատես
դու Տէր. և յօրինաց քոց ուսու
ցանես դու նմա:

Յածուցանես դու նմա զաւուրս
չարութեան. մինչև փորեսցի խոր
խորատ մեղաւորի:

Ոչ մերժէ Տէր զժողովուրդ իւր.
և զժառանգութիւն իւր ոչ առ
նէ անտես:

Մինչև դարձցին իրաւունք յար

դա

դարութն· ընկալցին զնա ամենե
քեան՝ որք ուղիղք են սրտիւք:
Ո՛վ յարիցէ ընդ իս ՚ի վերայ չա
րաց· կամ ո՛ հաւասարեսցի ինձ
՚ի վերայ այնոցիկ· որք գործեն
զանօրէնութիւն:
Եւ թէ Տ՟ն ոչ օգնեալ էր ինձ·
փոքր մի եւս բնակեալ էր անձն
իմ ՚ի դժոխս:
Թէ ասէի թէ ահա սասանեցան·
ոտք իմ· ողորմութիւն քո Տ՟ր
օգնէր ինձ:
Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ·
մխիթարութն քո ուրախ առնէր
զանձն իմ:
Մի՛ հաւասարեսցի քեզ աթոռ
անօրէնութե· ո՛ պատճառէ զվաս
տակս ընդդէմ հրամանի·
Որսացան զանձն արդարոյ· եւ զա
րիւն ամբիծ պարտաւոր առնէին:
Եղեւ Տ՟ր ապաւէն իմ· Ա՟ծ օգ
նական յուսոյ իմոյ:
Հատուսցէ նոցա Տ՟ր ըստ անօրէ
նութե նց· եւ ըստ չարութե նոցա
կործանեսցէ զնոսա Տ՟ր Ա՟ծ մեր:

Օրհնութիւն գովութեան ջնջեան
Դաւթի: անվերնագիր ի հեբրայեցւոց:

ՂԴ:

Եկայք ցնծասցուք ՚ի Տր. աղա-
ղակեսցուք առ Այ փրկիչ մեր:
Կանխեսցուք առաջի նորա. խոս-
տովանութեամբ. սաղմոսիւք ա-
ղաղակեսցուք առ նա:
Այ մեծ է. և Տէր թագաւոր
մեծ ՚ի վերայ ամե երկրի:
Ի ձեռս նորա են ամենայն տիե
զերք երկրի. և բարձրութիւնք
լերանց նորա են:
Զի նորա է ծով՝ և նա արար զնա.
և զցամաքն ձեռք նորա ստեղծին:
Եկայք՝ երկիր պագցուք նմա.
անկցուք՝ և լացցուք առաջի Տն
արարչին մերոյ:
Զի նա է Տր Այ մեր. մեք ժո-
ղովուրդք ՚ի ձեռին նր. և խաշն
արօտի նորա:
Այսօր եթէ ձայնի նր լուիջիք.
մի խստացուցանէք զսիրտս ձեր
որպէս ՚ի դառնութեան:
Յաւուրն փորձութե յանապատի.

 ուր

ուր փորձեցին զիս հարքն ձեր․
քննեցին զիս, և տեսին զգործս
իմ․ զքառասուն ամ։

Դժանացայ ընդ ազգին ը̅ այնմիկ,
և ասացի․ միշտ մոլորեալք են՝ սըր
տիւք․ և նոքա ոչ ծանեան զճա
նապարհս իմ։

Որպէս երդուայ ՚ի բարկութեան
իմում․ թէ մտցեն ՚ի հանգիստ իմ։

## Տաղ․ II։

Սաղմոս [illegible] Դաւթի․ ի ժամանակի
որ տաճարն շինեցաւ յետ գերութեանն։
(անվերնագիր է յեբրայեցւոց։) ՂԵ։

Օրհնեցէք զՏր̅ յօրհնու
թիւն նոր․ օրհնեցէք
զՏր̅ ամենայն երկիր։

Օրհնեցէք զՏր̅․ և օրհնեցէք
զանուն նորա․ աւետարանեցէք
օրըստօրէ զփրկութիւն նորա։

Պատմեցէք ՚ի հեթանոսս զփառս
նորա․ յամենայն ժողովուրդս զս
քանչելիս նորա։

Մեծ է Տր̅՝ և օրհնեալ է յոյժ․

աՀարկու է նա ՚ի վ͞ր ամենից կռոց։
Ամենայն կուռք հեթանոսաց դևք
են. և Տ͞ր զերկինս արար։
Խոստովանութիւն՝ և վայելչու-
թի է առաջի նորա. սրբութի՝ և
մեծ վայելչութ͞ի ՚ի սրբութ͞ե ն͞ր։
Մատուցէք Տ͞ն տոհմք ազգաց՝ մա
տուցէք Տ͞ն զփառս և զպատիւ.
մատուցէք Տ͞ն զփառս անուան ն͞ր։
Առէք զպատարագս՝ և մտէք ՚ի
սրահս նորա. երկիրպագէք Տ͞ն
՚ի գաւիթս սրբութ͞ե ն͞ր՝ և խռո
վեսցի յերեսաց նորա ա͞մ երկիր։
Ասացէք ՚ի հեթանոսս՝ թէ Տ͞ր
թագաւորեաց. հաստատեաց զաշ
խարհ՝ զի մի սասանեսցի. և դա
տէ զժողովուրդս իւր ուղղութ͞բ։
Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծա
ցէ երկիր. զուարճասցի ծով
լրիւ իւրով. ցնծասցեն դաշտք՝
և ամենայն որ ՚ի նոսա։
Յայնժամ ցնծասցեն ա͞մ ծառք
անտառի յերեսաց Տ͞ն. զի գայ՝
և գայ նա ՚ի դատել զերկիր։
Դատէ զաշխարհ արդարութեամբ. և
ժո

ժողովուրդս. ամենայն ճշմարտու
թեամբ իւրով:

Տունք: 12:

Դաւթի: է ժամանակի զի երկիր հաս
տատէր: (անվերնագիր է հեբրայեցւոց:)

Ղ. Զ:

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ եր
կիր. ուրախ եղիցին կղզիք
բազումք:

Ամպ՝ և մէգ շուրջ է զնովաւ. յի
րաւունս՝ և յարդարութիւն ուղ
ղեալ է աթոռ նորա:

Հուր առաջի նորա գնասցէ. և
այրեսցէ շուրջ զթշնամիս նորա:

Երևեցան փայլատակունք նորա
տիեզերաց. ետես՝ և սասանեցաւ
երկիր:

Լերինք որպէս մոմ հալեսցին յե
րեսաց Տն̃. յերեսաց Տեառն ա_
մենայն երկրի:

Պատմեսցեն երկինք զարդարութիւն
նորա. տեսին ամ̃ ժողովուրդք
զփառս նորա:

Ամաչեսցեն ամենեքեան՝ ոյք եր

կիր

կիրպագանեն կռոց. և ոյք պարծ-
ծին 'ի դրօշեալս իւրեանց։
Երկիրպագցեն նմա ամ̅ հրեշ-
տակք նորա. լուաւ և ուրախ ե-
ղև Սիոն. և ցնծասցեն դստերք
Յուդայ վասն իրաւանց քոց Տր̅։
Զի դու բարձրեալ ես 'ի վե-
րայ ամենայն երկրի. յոյժ բարձ-
րացար 'ի վերայ ամենայն կռոց։
Որք սիրէք զՏր̅ ատեցէք զչա-
րութի̅. պահէ Տր̅ զանձինս սըր-
բոց իւրոց. 'ի ձեռաց մեղաւորի
փրկեսցէ զնոսա։
Լոյս ծագեցաւ արդարոց ուղ-
ղոց սրտիւք եղև ուրախութիւն։
Ուրախ եղերուք արդարք 'ի Տր̅.
և խոստովան եղերուք յիշատակի
սրբութեան նորա։

Տաղ. 13։

Սաղմոս չնչեան Դաւթի։ Ղ Է։

Օրհնեցէք զՏր̅ յօրհնութիւն
նոր. զի սքանչելիս արար։
Փրկեաց նմա աջ իւր. և բազուկ
սուրբ իւր։

Եւ ցոյց Տր՟ զփրկութիւն իւր ա-
ռաջի ազգաց յայտնեաց զարդա-
րութիւն իւր ։

Յիշեաց զողորմութիւն իւր յա-
կոբայ. զճշմարտութի՟ իւր 'իվերայ
տանն իլի՟. և տեսին ամ՟ ծագք
երկրի զփրկութիւն Այ՟ մերոյ ։

Աղաղակեցէք առ Տր՟ ամ՟ երկիր.
օրհնեցէք՝ ցնծացէք՝ և սաղմոս
սասացէք ։

Սաղմոսասացէք Այ՟ մերոյ օրհնու-
թբ՟. օրհնութբ՟ և ի ձայն սաղմոսից ։

Ի ձայն օրհնութեան կռածոյ փո-
ղոյ. օրհնութբ՟՝ ցնծութբ՟՝ և 'ի
ձայն եղջեր փողոյ աղաղակեցէք
առաջի թագաւորին Տն՟ ։

Խռովեսցի ծով լրիւ իւրով՝ տիե-
զերք և ամ՟ բնակիչք նր՟. և գետք
ծափս հարցեն իմիասին ձեռամբ ։

Լերինք ցնծասցեն առաջի Տն՟,
զի գայ. զի հասեալ է Տր՟ 'ի դա-
տել զերկիր ։

Դատել զաշխարհս արդարութբ՟.
և զժողովուրդս իւր ուղղութբ՟.

Տունք. 10 ։

Սաղ

Սաղմոս չնփեալն Դաւթի։ ՂԸ.

Տ Թագաւորեաց բարկա
ցան ժողովուրդք. որ
նստիս 'ի քրովբէս սասա
նեցաւ յերկիր։
Տէ՟ր 'ի Սիոն մեծ է՝ և բարձր է
'ի վերայ ա՟մ ժողովրդոց։
Խոստովան եղիցուք անուան քում
մեծի, զի ահաւոր և ս՟բ է. և պա
տիւ թագաւորի զիրաւունս սիրէ։
Դու պատրաստեցեր զուղղութի.
զիրաւունս, և զարդարութի յա
կոբայ դու արարեր։
Բարձր արարէք զՏէ՟ր Ա՟ծ մեր.
երկիր պագէք պատուանդանի ո
տից նորա զի սուրբ է։
Մովսէս և Ահարոն երիցունք նո՟.
Սամուէլ ընդ այնոսիկ՝ որք կար
դան զանուն նորա։
Կարդային առ Տէ՟ր և նա լսէր
նոցա. և 'ի սիւն ամպոյ խօսէր
ընդ նոսա.
Պահէին զվկայութիւն նորա.
և ըզ

և զՀրամանս, զորս ետ նոցա:
Տր Ա.ծ մեր՝ դու լսէիր նց. Ա.ծ
դու քաւիչ լինէիր նոցա. և վրէժ
խնդիր 'ի վ[ր]ա ամենից գործոց նց:
Բարձր արարէք զՏր Ա.ծ մեր.
երկիր պագէք 'ի լեառն սբ նորա.
զի սբ է Տր Ա.ծ մեր:

Տուն. 10:

## Սաղմոս ի խոստովանութեան: Ղ Թ.

Աղաղակեցէք առ Տր ամ եր
կիր. ծառայեցէք Տեառն ու
րախութեամբ.
Մտէք առաջի նորա ցնծութբ.
ծաներուք՝ զի նա է Տր Ա.ծ մեր:
Նա արար զմեզ՝ և ոչ մեք էաք.
մեք ժողովուրդ՝ և խաշն արօ
տի նորա:
Մտէք ընդ դրունս նորա խոստո
վանութեամբ. և օրհնութեամբ
'ի յարկս նորա:
Խոստովան եղերուք Տն՝ և օրհ
նեցէք զանուն նորա:
Քաղցր է Տր. յաւիտեան է ո
ղորմութիւն նորա. յազգէ մինչև
յազգ

յազգ է ճշմարտութիւն նորա։

Տաղն. 6։

Սաղմոս ճնքեան Դաւթի։ Ճ։

Յողորմութի, և յիրաւունս օրհնեցից զքեզ Տր. սաղմոս ասացեց և 'ի միտ առից։

Ճանապարհ անբիծ մինչև եկեսցես առ իս. զի գնայի ես յամբծութե սրտի իմոյ՝ և 'ի մէջ տան իմոյ։

Ոչ եդի առաջի աչաց իմոց զիրս անիրաւութե. որք առնէին զանօրէնութիւնս, ատեցի։

Ոչ մերձեցաւ առ իս. որ թիւրն էր սրտիւ. խոտորիւ յինէն անզգամին՝ և ես ինչ ոչ փոյթ առնէի։

Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ. զնա ի բացէ ի բաց հալածէի։

Որ ամբարտաւան էր աչօք՝ և ագահ սրտիւ. ընդ նմա և հաց ոչ ուտէի։

Աչք իմ 'ի հաւատացեալս երկրի. զի նստցին նոքա ընդ իս.

Որ գնայր 'ի ճանապարհ անբիծ. նա պաշտէր զիս։

Ոչ

Ոչ բնակէր ի մէջ տան իմոյ՝ որ առնէր ամբարտաւանութիւն. որ խօսէր զանօրէնութիւն՝ չէր յաջողեալ նմա առաջի աչաց իմոց։

Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի. զի սատակեցից ՚ի քաղաքէ Տեառն զամենեսեան՝ որք գործեն զանօրէնութիւն։

Տունք. 10։

Աղօթք աղքատի. երբ ձանձրասցի. և առաջի Տն հեղուսցէ զխնդրուածս իւր։ ՃԱ։

Տէր լուր աղօթից իմոց. և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութե իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ. և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան։

Հա

Հարայ որպէս խոտ՝ եւ ցամաքեցաւ
սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց
իմ. 'ի ձայնէ հեծութե̃ն իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ.
Նմանեցայ ես հաւալուսան անա
պատի։
Եղէ ես ոպ̃ բու աւերակի. տքնե
ցայ՝ եւ եղէ ես որպէս ճնճղուկ
միայն 'ի տանիս։
Նախատէին զիս թշնամիք իմ զօր
հանապազ. եւ գովիչք իմ ինեւ
երդնուին։
Զի մոխիր ոպ̃ զհաց կերի. եւ ըմպ
ելին իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմտու
թե̃ քոյ. զի դու բարձրացուցեր,
եւ խոնարհեցուցեր զիս։
Աւուրք իմ որպէս հովանի անցին.
եւ ես ոպ̃ խոտ ցամաքեցայ։
Դու Տ̃ր յաւիտեան կեաս. եւ յի
շատակ քո յազգէ մինչեւ յազգ։
Դու յարուցեալ գթասցիս 'ի վե
րայ սիոնի. ժամանակ գթալոյ նո
րա հասեալ է ժամ։
Հաճեցան ծառայք քո ընդ քա
րինս.

րինս նր̃. եւ ՚ի հողս նր̃ գթասցին։
Երկիցեն հեթանոսք յանուանէ
քումմէ. եւ ամենայն թագաւորք
երկրի ՚ի փառաց քոց։
Շինէ Տր̃ զսիոն. եւ երեւեսցի փա
ռօք իւրովք ընդ նմա։
Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց.
եւ ոչ արհամարհեաց զխնդրուածս
նոցա։
Գրեսցի այս յազգ յայլ. ժողո
վուրդ՝ որ ստացեալ է՝ օրհնեսցէ
զՏէր։
Հայեցաւ նա ՚ի բարձանց՝ ՚ի սրբ
ութենէ իւրմէ. Տր̃ յերկնից
յերկիր հայեցաւ։
Լսել զհեծութի̃ կապելոց. եւ ար
ձակել զորդիս մահապարտաց։
Պատմել ՚ի սիոն զանուն Տն̃. եւ
զօրհնութի̃ս նորա յե̃մ։
Ժողովել ժողովրդոց ՚ի միասին.
եւ թագաւորաց ծառայել Տն̃։
Պատասխանի ետ նմա ՚ի ճանա
պարհի զօրութե̃ իւրոյ. զնուա
զութի̃ աւուրց իմոց. ասա ինձ,
եւ մի՛ հաներ զիս ՚ի կէս աւուրց
իմոց

ծնոց. զի յազգէ յազգ են ամք քո:
Ի սկզբանէ Տր̃ զհիմունս երկրի
հաստատեցեր. և գործք ձեռաց
քոց երկինք են:
Նոքա անցանեն. և դու կաս՝ և
մնաս յաւիտեան:
Ամենեքեան ոպ̃ զձորձս մաշեսցին.
և որպէս զվերարկուս փոխեսցես
զնոսա՝ և փոխեսցին:
Բայց դու նոյն ինքն ես և ամք քո
ո́չ անցանեն. որդիք ծառայից քոց
բնակեսցին ՚ի նմա. և զաւակք նո
ցա յաւիտեան աջողեսցի:

Տօնք: 27:

Սաղմոս երգեան Դաւթի: ՃԲ:

Օրհնեա́ անձն իմ զՏր̃. և ա-
մենայն ոսկերք իմ զանուն
սուրբ նորա:
Օրհնեա́ անձն իմ զՏր̃. և մի́
մոռանար զա̃մ տուրս նորա:
Որ քաւէ զմեղս քո. բժշկէ զամե
նայն հիւանդութիւնս քո:
Որ փրկէ յապականութենէ զկեանս քո.
պսակէ զքեզ ողորմութբ̃, և գթու
թբ̃: Որ լնու

Որ լնու ՚ի բարութենէ զցանկու թիւն քո. նորոգեսցի որպէս ար ծուոյ մանկութիւն քո:

Առնէ ողորմութիւնս Տր̄. և իրա ւունս ամենայն զրկելոց:

Եցոյց Տր̄ զճանապարհս իւր մօ սէսի. որդւոցն իղի զկամս իւր:

Գթած՝ ողորմած է Տր̄. երկայ նամիտ և բազում ողորմ:

Ո՛չ իսպառ բարկանայ Տր̄. և ո՛չ յաւիտեան պահէ ոխս:

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ. և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ:

Ըստ որչ̄ բարձր են երկինք յերկ րէ. այնպէս զօրացոյց Տր̄ զողոր մութիւն իւր ՚ի վերայ երկիւղա ծաց իւրոց:

Որչափ հեռի են արևելք յարևմը տից. այնչ̄ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր:

Որպէս գթայ հայր ՚ի վերայ որ դւոց իւրոց. այնպէս գթասցի Տր̄ երկիւղածս իւր:

Զի նա գիտաց զստեղծուածս մեր.

մեր. և յիշեաց թէ հող եմք.

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի:

Շնչէ ՚ի նմա հողմ. և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա:

Բայց ողորմութի Տն յաւիտեանս յաւիտենից ՚ի վերայ երկիւղածաց իւրոց. և արդարութի նորա յորդւոց մինչև յորդիս.

Ոյք պահեն զուխտս նորա. յիշեն զպատուիրանս նր՝ և առնեն զնա:

Տր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա ամենեցուն տիրէ:

Օրհնեցէք զՏր ամ հրեշտակք նորա հզօրք զօրութեամբ. ոյք առնէք զբան նորա՝ ՚ի լսել ձայնի պատգամաց նորա:

Օրհնեցէք զՏր ամ զօրութիւնք նորա. պաշտօնեայք նորա, և արարողք կամաց նորա:

Օրհնեցէք զՏր ամ գործք նր. յամենայն տեղիս է տէրութի նր. օրհնեա՛ անձն իմ զՏր:

Սաղմոս Դ. աւուրն ՚ի վերայ աշխարհա
կերտ արարածոյ։ Ճ՛Գ՛

Օրհնեա՛ անձն իմ զՏ̅ր.
Տ̅ր Ա.ծ իմ մեծ եղեր
յոյժ։

Խոստովանութի̅ և զմեծ վայել
չութիւն զգեցար. արկեր զլոյս
որպէս զօթոց. ձգեցեր զերկինս.
որ̅պ զխորան։ և արկեր ՚ի վերայ
ջուրց զվերնայարկս նորա։

Որ դնէ յամպս զգնացս իւր. և
շրջի նա ՚ի վերայ թևոց հողմոց։

Որ առնէ զհրեշտակս իւր յոգիս,
և զպաշտօնեայս իւր ՚ի հուր
կիզեալ։

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ
հաստատութեան իւրոյ. զի մի՛ սա
սանեսցի յաւիտեան։

Խորք որ̅պ զգեստ վերարկու են
նո̅ր. ՚ի վ̅ր լերանց կացցեն ջուրք։
՚Ի սաստէ քումմէ փախիցեն և ՚ի
ձայնէ որոտալոյ քումմէ սարսեցին.
Ելանեն լեառնանան՝ և իջանեն
դաշտանան. ՚ի տեղի յոր հաստա
տեցեր զն̅ս։

Սահ

Սահման եդեր՝ և ոչ անցանեն. և
ոչ ևս դառնան ՚ի ծածկել զերկիր.
Առաքեցեր զաղբեւրս ՚ի ձոր
ձորս. ՚ի մէջ լերանց գնասցեն
ջուրք.

Արբուցանել զամենայն գազանս
վայրի. յագեսցին ցիռք ՚ի ծա
րաւս իւրեանց.

Անդ Թռչունք երկնից բոյնս դի
ցեն՝ և ՚ի մէջ վիմաց տացեն բար
ձայնս իւրեանց.

Արբուցանէ զլերինս ՚ի շտեմա
րանաց իւրոց. ՚ի պտղոյ գործոց
իւրոց լցցի երկիր.

Բուսուցեր զխոտ անասնոց. զդա
լարի ՚ի ծառայութի մարդկան.
Հաներ զհաց յերկրէ. գինի ու
րախ առնէ՝ իւղ զուարթ. և հաց
հաստատէ զսիրտ մարդոյ.

Յագեսցին ծառք անտառի. և
մայրքն լիբանանու. զորս դու
տնկեցեր.

Անդ Թռչունք երկնից ձագս հան
ցեն. և բոյն արագլի ապաւէն
է նոցա.

Լերինք բարձունք են եղջերո
ւաց. վէմք ապաւէնք նապաս
տակաց:

Արարեր զլուսին վասն ժամանա
կի. արեգակն ծանեաւ զժամ մը
տանելոյ իւրոյ:

Արարեր զխաւար՝ և եղև գիշեր.
՚ի նմա գնան ամ̃ գազանք անտառի:

Կորիւնք առիւծուց մռնչեն՝ և
յափշտակեն. և խնդրեն յԱյ
զկերակուր իւրեանց:

՚Ի ծագել արևու ժողովին. և ՚ի
մորս իւրեանց դադարին:

Ելանէ մարդ ՚ի գործս իւր. և
՚ի վաստակս ձեռաց իւրոց, մինչև
յերեկոյ:

Որպէս զի մեծ են գործք քո Տր.
և զամենայն ինչ իմաստութեամբ
արարեր. և լցաւ երկիր ստեղծո
ւածովք քովք.

Այս ծով՝ մեծ և անդորր. ՚ի
սմայ են սողունք որոց ոչ գոյ թիւ,
գազանք մեծամեծք և մանունք.
՚ի սմա և նաւք գնան. վիշապն զոր
ստեղծեր խաղալ նովա:

Ամենեքեան քեզ սպասեն. եւ դու տաս զկերակուր նոցա ՚ի ժամու։

Տաս դու նոցա եւ կերակրին՝ բանաս զձեռն քո. եւ կերակրես զամենեսեան կամօք քովք։

Դարձուցանես զերեսս քո ՚ի նոցանէ եւ խռովին. հանես զոգի ՚ի նոցանէ, պակասին եւ ՚ի հող դառնան։

Առաքես զոգի քո եւ ստանան զնոսա. եւ նորոգես զերեսս երկրի։

Եղիցի փառք Տեառն յաւիտեան. եւ Տր ուրախ եղիցի յարարածս իւր։

Որ հայի յերկիր եւ տայ դողալ սմա. մերձեսցի ՚ի լերինս եւ ծխեսցին։

Օրհնեցից զՏր ՚ի կեանս իմ. եւ սաղմոս ասացից Այ իմոյ մինչեւ եմ ես։

«Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ. եւ ես ուրախ եղէց ՚ի Տր։

Պակասեսցին մեղաւորք յերկրէ. եւ ամպարիշտք մի՛ եւս գտցին ՚ի նը նմա՝ օրհնեա՛ անձն իմ զՏէր։

Տուն. 34.

## Ուղեւորութեան. ՃԴ.

Խոստովան եղերուք Տեառն՝ եւ կարդացէք զանուն նորա. եւ պատմեցէք ՚ի հեթանոսս ըզ գործս նորա։

Օրհնեցէք՝ եւ սաղմոս ասացէք նմա. պատմեցէք զա̃մ սքանչելիս նորա. եւ գովեցարուք յանուն սր̃բ նորա։

Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որք խնդրեն զՏր̃. խնդրեցէք զՏր̃, եւ հզօրք եղերուք. եւ խնդրեցէք զերեսս նորա յա̃մ ժամ։

Յիշեցէք զսքանչելիս նորա. զորս արար. զարուեստս եւ զիրաւունս բերանոյ նորա։

Զաւակք աբրահամեան ծառայք նորա. եւ որդիք յակօբայ ընտրեալք նորա։

Նա ինքն է Տր̃ մեր. յա̃մ երկրի են իրաւունք նորա։

Յիշեաց յաւիտենից զուխտ իւր. եւ զբանն, զորս պատուիրեաց մինչեւ ՚ի հազար ամ։

Զուխտն

Ուխտին, զոր եդ ընդ Աբրահամու. եւ զերդումն իւր ընդ Իսահակայ։

Հաստատեաց առ Յակոբ զհրաման իւր. եւ առ Իսրայէլ զուխտ իւր յաւիտենից։

Ասէ քեզ տաց զերկիրն քանանու. զվիճակ ժառանգութեան ձերոյ։

Մինչ էին նոքա թուով սակաւ. նուազք եւ պանդուխտք ՚ի նմա։

Անցին նոքա ազգէ յազգ. ՚ի թագաւորութենէ ՚ի ժողովուրդ այլ։

Ոչ եթող մարդկան մեղանչել նոցա. եւ կշտամբեաց զթագաւորս վասն նոցա։

Մի մերձենայք, ասէ, յօծեալս իմ. եւ ՚ի մարգարէս իմ, մի մեղանչէք։

Կոչեաց զսով յերկիր նոցա. եւ զամենայն զօրութիւն հացի եբեկ։

Առաքեաց առաջի նոցա զայր. ՚ի ծառայութիւն վաճառեցաւ յովսէփ։

Խոնարհ արարին ՚ի կապանս զոտս նորա. եւ էանց ընդ երկաթ անձն նորա։

Մինչեւ եկեսցէ բան նորա. եւ

բան

բան Տեառն փորձեաց զնա ։
Առաքեաց թագաւորն, և ելոյծ
զնա ․ իշխան ժողովրդեան ե-
թող զնա ։
Կացոյց զնա Տր̅ տան իւրոյ ․ և
իշխան ՚ի վերայ ամենայն ստացո
ւածոց իւրոց ։
Խրատել զիշխանս նոցա որպէս
զինքն, և զծերս նոցա իմաստունս
արասցէ ։
Եւ մուտ իէլ յեգիպտոս ․ և յակոբ
պանդխտեցաւ յերկրին քամայ ։
Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ ․
և զօրացոյց զնոսա քան զթշնա
միս իւր ։
Դարձոյց զսիրտս նոցա յատել
զժողովուրդ իւր ․ և ՚ի նենգել
զծառայս իւր ․
Առաքեաց զմովսէս ծառայ իւր՝
և զահարօն ընտրեալ իւր ։
Եդ նոցա զբանս նշանաց իւրոց ․
և զարուեստս իւր յերկիր քամայ ։
Առաքեաց զխաւար՝ և խաւարե
ցոյց զնոսա ․ զի դառնացուցին
զբանս նորա ․

Դ․ար

Դարձոյց յարիւն զգետս նոցա.
եւ սպան զամենայն ձկունս նոցա։
Բուսոյց յերկրի նց՟ գորտ. ՚ի շտե
մարանս թագաւորաց նոցա։
Ասաց՝ եւ եկն շանաճանճ՝ եւ մժեխ
ընդ ամ՟ սահմանս նոցա։
Դարձոյց զանձրեւս նոցա ՚ի կար
կուտ. եւ հուր յերկրի նոցա բոր
բոքեցաւ։
Եհար զայգիս՝ եւ զթզենիս նոցա.
եւ փշրեաց զամենայն ծառս սահ
մանաց նոցա։
Ասաց, եւ եկն մարախ՝ եւ խառնիճ.
զի ոչ գոյր նց՟ թիւ։
Եկեր զամենայն խոտ երկրի նո
ցա. եւ սպառեաց զամ՟ պտուղ ան
դոյ նոցա։
Եհար զամ՟ անդրանիկս եգիպտա
ցւոց. զսկիզբն ամենայն վաստա
կոց նոցա։
Եհան զնս՟ ոսկւով եւ արծաթով.
եւ ոչ գոյր յազգի նոցա հիւանդ։
Ուրախ եղեւ եգիպտոս ընդ ելա
նել նոցա. զի անկաւ ահ Տեառն
՚ի վերայ նոցա։

Ամպեաց

Սփռեաց ամպ հովանի ածել նո
ցա 'ի տուէ. եւ հուր լոյս տալ
նոցա 'ի գիշերի։
Խնդրեցին՝ եւ եկն լորամարգի. եւ
հացիւ երկնից լցոյց զնոսա։
Եհար զվէմն եւ բղխեցին ջուրք.
եւ գնացին գետք ընդ անջրդիս։
Յիշեաց զբան իւր սրբ. որ ընդ
աբրահամու ծառայի իւրոյ։
Եհան զժողովուրդ իւր ցնծութ.
եւ զընտրեալս իւր ուրախութ.
Ետ նոցա զգաւառս հեթանո
սաց. 'ի վաստակս ժողովրդոց ժա
ռանգեցոյց զնոսա։
Զի պահեսցեն զարդարութիւն նո
րա. եւ զօրէնս նորա խնդրեսցեն.

## Տաղ. 44։

## Ալէլուիայ. ՃԵ.

Խոստովան եղերուք Տն զի
քաղցր է. զի յաւիտեան է
ողորմութիւն նորա։
Ո՛ խօսեսցի զզօրութիւնս
Տն. լսելի արասցէ զամ զօրհնու
թիւն նր։

Երանի՛ որք պահեն զիրաւունս եւ առնեն զարդարութիւն յամենայն ժամ։

Յիշեա՛ զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան քո․ եւ այց արա՛ մեզ ՚ի փրկութեան քում։

Տեսցուք մեք զքաղցրութ̅ն ընտրելոց քոց․ ուրախ եղիցուք մեք յուրախութ̅ն ազգի քո․ եւ գովեցուք մեք ՚ի ժառանգուե̅ քում։

Մեղաք մեք ը̄ հարցն մեր․ անօրէնեցաք՝ եւ յանցեաք։

Հարքն մեր յեգիպտոս ոչ իմացան զսքանչելիս քո․ եւ ոչ յիշեցին ըզբազում ողորմութիւն քո։

Դառնացուցին զքեզ յանցանելն իւրեանց ընդ ծով կարմիր․ փրկեաց զնոսա վասն անուան իւրոյ՝ զի ծանիցեն զզօրութիւնս նորա։

Սաստեաց ՚ի ծով կարմիր․ եւ ցամաքեցաւ․ առաջնորդեաց նոցա ընդ անդունդս որպէս ընդ անապատ։

Կեցոյց զնոսա ՚ի ձեռաց ատելեաց նոցա․ եւ փրկեաց զնոսա

ի ձե

ի ձեռաց թշնամեաց նոցա ։
Ծածկեաց ջուր զնեղիչս նոցա .
և մի ՚ի նոցանէ ոչ ապրեցաւ ։
Հաւատացին բանի նորա . և օրհ
նեցին զօրհնութիւն նորա ։
Վաղվաղեցին՝ և մոռացան զգ
գործս նորա . և ոչ անսացին, խոր
հրդոց նորա ։
Ցանկացան զցանկութիւն յանապա
տի . և փորձեցին զԱծ յանջրդի ։
Ետ նոցա զխնդրուածս նոցա .
առաքեաց զլիութիւն յանձինս նց ։
Բարկացուցին զմովսէս ՚ի բանակին
և զահարոն սուրբ Տն ։
Բացաւ երկիր և եկուլ զդաթան .
և ծածկեաց զբանակն աբիրոնի
Հուր վառեցաւ ՚ի ժողովս նոցա .
և բոց մաշեաց զմեղաւորս ։
Արարին զորթն ՚ի քորեբ . և եր
կիրպագին պատկերի . և փոխե
ցին զփառս իւրեանց ՚ի նմանու
թիւն որթուն խոտակերի ։
Մոռացան զԱծ կենարարն իւ
րեանց . որ արար զմեծամեծս յե
գիպտոս . և զսքանչելիս իւր յեր

կիր

կեր Քամայ. և զահ իւր 'ի վերայ
Կարմիր ծովուն:

Ասաց, սատակել զն՟ս. եթէ ոչ Մովսէս ընտրեալն կայր առաջի նորա:

Դարձաւ առ Տէր՝ և անցոյց ըզ բարկութիւն նորա. զի մի՛ սատակեսցին նոքա:

Անարգեցին զերկիրն ցանկալի. և ոչ հաւատացին բանի նորա:

Տրտնջեցին 'ի բանակս իւրեանց. և ոչ լուան ձայնի Տ՟ն:

Համբարձ զձեռն իւր 'ի վերայ նոցա. հարկանել զն՟ս յանապատի:

Ցրուեսցէ զաւակ նոցա ընդ հեթանոս. ցրուեսցէ զաւակ նոցա ընդ գաւառս:

Պղծեցան նոքա 'ի բելբեգովր. զի կերան զզոհեալ և զմեռելոտի:

Բարկացուցին զնա 'ի գործս իւրեանց. և յաճախեցաւ 'ի վերայ նոցա բեկումն:

Ապա եկաց 'ի մէջ փենեհէս՝ և քաւեաց՝ և արգելաւ մահ. համարեցաւ նմա յարդարութի ազգէ յազգ մինչև յաւիտեան:

Բար

Բարկացուցին զնա 'ի վր̄ ջուրցն
հակառակութե̄. չարչարեցաւ Մո
սէս վասն նոցա. զի դառնացու
ցին զհոգի նորա:
Հրամայեաց շրթամբք իւրովք.
և ոչ սատակեցին զազգսն. զորս
ասաց նոցա Տր̄:
Խառնակեցան ը̄ հեթանոսս. և
ուսան զգործս նոցա. ծառայե
ցին կռոց նոցա. և եղև նոցա 'ի
գայթակղութիւն:
Զոհեցին զուստերս և զդստերս
իւրեանց դիւաց. և հեղին զա
րիւն անմեղ:
Արիւն ուստերաց և դստերաց իւ
րեանց. զոր զոհեցին կռոցն քա
նանու:
Շաղախեցաւ երկիր յարենէ նո
ցա. և պղծեցաւ 'ի գործոց նոցա.
զի պոռնկեցան 'ի գնացս իւրց̄.
Բարկացաւ սրտմտութբ̄ Տր̄ 'ի
վերայ ժողովրդեան իւրոյ. և գար
շեցոյց զժառանգութիւն իւր յոյժ:
Մատնեաց զնոսա 'ի ձեռս հեթա
նոսաց. տիրեցին նոցա ատելիք իւ
րեանց

րեանց. և թշնամիք իւրեանց նե-
ղեցին զնոսա. և խոնարհք եղեն
’ի ներքոյ ձեռաց նոցա։

Բազում անգամ փրկեաց զնոսա.
և նոքա դառնացուցին զնա՛ ի խոր-
հուրդս իւրեանց. և կորացան յա-
նօրէնութեան իւրեանց։

Նայեցաւ Տէր ’ի նեղութիւն նոցա.
’ի լսել ձայնի աղօթից նոցա։

Յիշեաց զուխտ իւր. և զղջացաւ
ըստ բազում ողորմութե իւրում.
և ետ զնոսա ’ի գթութիւնս առա-
ջի ամ գերչաց նոցա։

Փրկեա՛ զմեզ Տէր Ած մեր. և ժո-
ղովեա՛ զմեզ ’ի հեթանոսաց։

Խոստովան եղիցուք անուա՛ն քում
սրբոյ և պարծեսցուք յօրհնու-
թիւնս քո։

Օրհնեալ Տէր Ած իէլի յաւի-
տեանս յաւիտենից։

Եւ ասասցէ ամ ժողովուրդն,
եղիցի՛ եղիցի։

Տաղ։ 44։

Աղօթք Եզեկիայ արքայի հրէաստա
նի. ի ժամանակի յորժամ հիւանդացաւ.
եւ յարեաւ ի հիւանդութենէ իւրմէ.

ԺԲ:

Ես ասացի 'ի մերձանալ յի
նէն աւուրց իմոց. թէ
գնացի ես 'ի դրունս դը
ժոխոց:

Թողի զամենայն զյետին
ամ, եւ ասացի՝ թէ այլ ոչ եւս տեսից
զփրկութիւն Տեառն յերկրին
կենդանեաց. եւ ոչ եւս տեսից ըզ
մարդ ընբնակչօք իւրովք համ
դերձ:

Պակասեցայ ես յազգատոհմէ իմ
մէ. այսուհետեւ թողի՝ լքի՝ զամե
նայն զկեանս իմ:

Ել գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի
իմ. որպէս այն՝ որ քակէ զտաղա
ւար. եւ եղէ ես որպէս զոստայն
ոստայնարկաց՝ մերձ 'ի հատանիլ:

Յաւուր յայնմիկ մատնեցայ ես
յառաւօտէ որպէս 'ի ձեռս առիւ
ծու. այնպէս խորտակեաց մանրեաց
զոս

զոսկերս իմ. զի յառաւօտէ մինչ՝
'ի գիշեր մատնեցայ։

Որպէս ծիծեռն, այնպէս ճչեցի.
եւ որպէս զաղաւնի, այնպէս մնչե
ցի. զի նուաղեցան աչք իմ 'ի
տեսանելոյ.

Հայեցայ 'ի բարձունս առ Տ՟ր
Ա՟Ծ իմ, որ փրկեաց զիս. եւ փարա
տեաց յինէն զցաւս անձին իմոյ։
Տ՟ր վասն այսորիկ պատմեցաւ քեզ՝
զարթուցեր զանձն իմ. դարձու
ցեր զհոգի իմ. մխիթարեցայ
եւ կեցի։

Ահա 'ի խաղաղութիւն դարձաւ
դառնութիւն իմ. փրկեցեր զանձն
իմ, զի մի կորեայց. եւ ընկեցեր
յետոյ զա՟մ զմեղս իմ։

Զի ոչ թէ՝ որք 'ի դժոխս են,
խոստովան լինին առ քեզ. եւ ոչ
մեռեալք օրհնեսցեն զքեզ. եւ ոչ
յուսասցին 'ի ճշմարտութիւն
քո ամենեքեան, որք իջանեն 'ի
դժոխս։

Այլ կենդանիքս օրհնեսցուք ըզ
քեզ Տ՟ր. որպէս եւ ես այսուհե

տեւ

տև մանկունս ծնողաց․ որք պատ
մեացեն զարդարութիւնս քո Տէ՛ր
փրկութեան իմոյ։

Լ՝ս ո՛չ դադարեցից օրհնել զքեզ
յօրհնութիւն նոր․ զամենայն աւ
ուրս կենաց իմոց, յանդիման առ
ձաքիդ Ն․Յ։

Տուն․ 12․

Յոյս կենդանութեան՝ յոյս և ա-
պաւէն փրկութե Տէ՛ Յ՛ փըր
կիչ․ փրկեա՛ և փարատեցո՛ զցաւս
անձին իմոյ։

Մ՝արդասէր Տէր՝ վասն սրբու
հւոյ անարատ Մ՝օր քոյ և
կուսի․ և վասն Խաչի
քոյ պատուականի․
ընկալ զաղաչա
նս մեր․ և
կեցո՛ ըզ
մեզ։

Ալէլուեայ. ՃԶ։

# ԽՈՍՏՈՎԱՆ

եղերուք Տ՟ն՝ զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցեն փրկեալք Տեառն. զորս փրկեաց 'ի ձեռաց թշնամւոյն։

Յամ գաւառաց ժողովեաց զնոսա. յարեւելից՝ եւ յարեւմտից. 'ի հիւսիսոյ՝ եւ 'ի ծովէ։

Մոլորեցան նոքա յանապատի յանջրդի ճանապարհի. զքաղաք բնակութեան ոչ գտին։

Քաղցեան՝ եւ ծարաւեցան. եւ անձինք նոցա 'ի նոսին նուաղեցան։

Աղաղակեցին առ Տէր 'ի նեղու

թեան իւրեանց· 'ի վշտաց նոցա
փրկեաց զնոսա:

Առաջնորդեաց նոցա 'ի ճանա
պարհ ուղիղ· զի երթիցեն 'ի քա
ղաք բնակութեան իւրեանց:

Խոստովան եղիցին Տն ողորմու
թեանց նորա· եւ զքանչելեաց նո
րա որդւոց մարդկան:

Զի յագեցոյց զանձինս քաղցելոյ·
եւ զանձինս կարօտելոյ լի' արար
բարութեամբ:

Որք նստէին 'ի խաւարի եւ 'ի ստո
ւերս մահու· կապեալք էին յաղ
քատութեան որպէս յերկաթս:

Զի դառնացուցին զբանն Աս
տուծոյ· եւ զխորհուրդս բարձրե
լոյն բարկացուցին:

Խոնարհք եղեն 'ի ցաւոց սիրտք նո
ցա· տկարացան, եւ ոչոք էր' որ
առաջնորդէր նոցա:

Աղաղակեցին առ Տր 'ի նեղու
թեան իւրեանց· 'ի վշտաց նոցա
եհան զնոսա:

Փրկեաց զնս 'ի խաւարէ' եւ 'ի ստո
ւերաց մահու· եւ խզեաց զկապանս
նց:

Խոստովան եղիցին Տն ողորմութեանց նորա. և սքանչելեաց նորա որդւոց մարդկան:

Զի փշրեաց զդրունս պղնձիս. և զնիգս երկաթիս խորտակեաց:

Օգնեաց նոցա ՚ի ճանապարհի անօրէնութե իւրեանց. զի վասն մեղաց իւրեանց խոնարհք եղեն յոյժ:

Յամենայն կերակրոց գարշէին սիրտք նոցա. մերձեցան մինչև ՚ի դրունս մահու:

Աղաղակեցին առ Տր ՚ի նեղութեան իւրեանց. ՚ի վշտաց նոցա ապրեցոյց զնոսա:

Առաքեաց զբան իւր և բժշկեաց զնոսա. և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց:

Խոստովան եղիցին Տն ողորմութեանց նորա. և սքանչելեաց նորա որդւոց մարդկան:

Մատուսցեն նմա զպատարագ օրհնութեան. և պատմեսցեն զգործս նորա ցնծութեամբ:

Որք իջանէին ՚ի ծով նաւուք. և առնէին զգործս ՚ի ջուրս բազումս:

Նո

Նոքա տեսին զգործս Տն. և
զսքանչելիս նր 'ի խորս անդնդոց։
Ասաց՝ և յարեաւ հողմ և մրրիկ.
և բարձրացան ալիք նորա։
Ելանէին յերկինս, և իջանէին
յանդունդս. և անձինք նոցա յան
ձինս իւրեանց մաշեցան։
Խռովեցան՝ սասանեցան՝ որպէս
արբեալք. և ամենայն իմաստութի
նոցա ընկլաւ։
Աղաղակեցին առ Տր 'ի նեղու
թեան իւրեանց. 'ի վշտաց նոցա
կեցոյց զնոսա։
Դարձոյց զմրրիկն նորա յօդս. և
դադարեցան ալիք նորա. ուրախ
եղեն՝ զի դադարեցան. և առաջ
նորդեաց նոցա 'ի նաւահանգիստ
կամաց իւրեանց։
Խոստովան եղիցին Տն ողորմու
թեանց նորա. և սքանչելեաց նո
րա որդւոց մարդկան։
Բարձր արասցեն զնա 'ի ժողովս
ժողովրդոց. և յաթոռս ծերոց
օրհնեսցեն զնա։
Եւ դարձոյց զգետս 'ի ցամաք.
և ըզ

և զգնացս ջուրց յերկիր ծարաւուտ։

Արար զերկիրն պտղաբեր յաղտաղտուկ. վասն չարութեան բնակչաց նորա։

Արար զանապատն ի Ճահիճս ջուրց. և զերկիրն ծարաւուտ ի գնացս ջուրց։

Բնակեցոյց ի նմա քաղցեալս. և շինեցին զքաղաքս բնակութեան իւրեանց։

Վարեցին արտս և տնկեցին այգիս. և արարին զպտուղ արմտեաց իւրեանց։

Օրհնեաց զնոսա և բազմացան յոյժ. և անասունք նոցա ոչ նուազեցան։

Նուազեցան նոքա և չարչարեցան ի նեղութենէ չարեաց և ի վշտաց։

Եհեղ անարգութիւն ի վերայ իշխանաց նոցա. մոլորեցոյց զնոսա յանապատի և ոչ ի Ճանապարհի։

Օգնեաց տնանկին յաղքատութեան. և առաջնորդեաց որպէս խաշին ազգի նոցա։

Տեսցեն ուղիղք և ուրախ եղիցին.

ցեն. և ամենայն անօրէն խցցէ
զբերան իւր:

Ո՞վ է իմաստուն՝ որ պահեսցէ
զայս. և՚ի միտ առցէ զողորմու-
թիւնս Տեառն:

Տունք. 42

Օրհնութիւն Սաղմոս Դաւթի:

ՃԷ:

Պատրաստ է սիրտ իմ Ած.
պատրաստ է սիրտ իմ.
օրհնել՝ և սաղմոս ասել քեզ
փառօք իմովք:

Զարթիք փառք իմ. զարթիք
սաղմոսիւք և օրհնութիւնք. և
ես զարթեայց առաւօտուց:

Խոստովան եղէց քեզ ՚ի ժողո-
վուրդս Տր. և սաղմոս ասացից
քեզ յազգս:

Մեծ եղև մինչև յերկինս ողորմու-
թիւն քո. մինչև յամպս ճշմար-
տութիւն քո:

Բարձրեալ ես դու յերկինս Ած.

յամենայնի երկրի են փառք քո։
Որպէս փրկեցան սիրելիք քո. կե
ցո աջով քով՝ և լուր մեզ։
Ա͞ծ խօսեցաւ 'ի սրբութ͞են իւրում.
բարձրեղէց՝ բաժանեցից զսիւքէմ.
և զհովիտս յարկաց չափեցից։
Իմ է գաղաադ՝ և իմ է մանասէ.
եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։
Յուդա թագաւոր իմ. և մովաբ
աւազան յուսոյ իմոյ։
Յեդովմ ուղղեցից զգնացս իմ. և
ինձ այլ ազգիք հնազանդք եղեն։
Ո՞ տարցէ զիս 'ի քաղաք ամուր.
կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մին
չև յեդովմ։
Ո՞ թէ ո՛չ դու Ա͞ծ, որ մերժեցեր
զմեզ. և ո՛չ ելեր Ա͞ծ ը͞ զօրս մեր։
Տուր մեզ զօգնութիւն 'ի նե
ղութեան. զի սուտ է փրկու
թիւն մարդոյ։
Աստուծով արասցուք զզօրու
թիւն. և նա յամօթ արասցէ ըզ
թշնամիս մեր։

Տաղ։ 15։

'Ի կա

# ՃԸ։

Ած օրհնութեան իմոյ՝ մի լռեր.
զի բերան մեղաւորի՝ բերան
նենգաւորի բացաւ ՚ի վերայ իմ։
Խօսեցան զինէն լեզուաւ նենգա-
ւորաւ. և բանիւ ատելութեան պա-
շարեցին զիս։
Մարտեան ընդ իս ՚ի տարապար-
տուց. փոխանակ սիրոյ իմոյ մատ-
նէին զիս. այլ ես յաղօթս կայի։
Հատուցին ինձ չար փոխանակ
ընդ բարւոյ. ատելութիւն փոխա-
նակ սիրոյ իմոյ։
Կացո ՚ի վերայ նորա մեղաւոր. սա-
տանայ կացցէ ընդ աջմէ նորա։
Ի դատաստանէ իւրմէ ելցէ դա-
տապարտեալ. և աղօթք նորա ՚ի
մեղս դարձցին։
Եղիցին աւուրք նորա նուազք.
և զայցելութիւն նորա զայն այլ
տարցի։
Եղիցին որդիք նորա որբք. և
կին նորա այրի, սահեսցին՝ փոփո-
խեսցին. որդիք նո մուրօղք եղի-
ցին՝

ցին՝ և ելցեն ՚ի բնակութե̃ իւրց̃։
Քննեսցէ փոխատու զա̃մ ինչս
նորա. և յափշտակեսցեն օտարք
զվաստակս նորա։
Մի՛ գտցի օգնական նմա. և մի՛ ող
ողորմեսցի ՚ի վերայ որբոց նորա։
Եղիցին որդիք նորա ՚ի սատա
կումն. և յազգ ջնջեսցի ա
նուն նորա։
Յիշեսցին մեղք հարց նորա առա
ջի Տ̃ն. և մեղք մօր նորա մի՛ ջըն
ջեսցին. և եղիցին առաջի Տ̃ն
յամենայն ժամ։
Սատակեսցի յերկրէ յիշատակ նո
րա. փոխանակ զի ոչ յիշեաց առ
նել զողորմութիւն։
Հալածեաց զայր աղքատ՝ և զտը
նանկ. սպանանել զայն՝ որ խո
նարհն է սրտիւ։
Սիրեաց զանէծս՝ և եկեսցէ նմա. ոչ
կամեցաւ զօրհնութիւն՝ հեռի
եղիցի ՚ի նմանէ։
Զգեցաւ զանէծս որպէս զհան
դերձ՝ մտցէ ոպ̃ ջուր ՚ի փոր նորա,
և որպէս ձէթ ընդ ոսկերս նորա։

Եղի

Եղիցի նմա որպէս հանդերձ՝
զի ագանի. որպէս գօտի՝ որ ածի
հանապազ ընդ մէջ։
Այս գործ է այնոցիկ՝ որք չարա
խօս կային զինէն առ Տր̄. և որք
խօսէին չար զանձնէ իմմէ։
Այլ դու Տր̄՝ Տր̄՝ արա ընդ իս
ըստ անուան քում. զի քաղցր է
ողորմութիւն քո. և փրկեա զիս.
զի աղքատ՝ և տնանկ եմ ես։
Սիրտ իմ խռովեցաւ ՚ի փորի
իմում. և ես ոպ̄ ստուեր ՚ի խոնա
րհելն իմում պակասեցայ. և թօ
թափեցայ որպէս մարախ։
Ծունկք իմ տկարացան ՚ի պահոց.
և մարմին իմ այլագունեցաւ յիւղոյ։
Եղէ ես նախատ նց̄. տեսին զիս՝
և շարժեցին զգլուխս իւրեանց։
Օգնեա ինձ Տր̄ Ա.Ծ իմ. և փրկ
եա զիս ըստ ողորմութեան քում։
Ծանիցեն զի ձեռն քո այս է. և
դու Տր̄ արարեր զայս։
Նոքա անիծանեն՝ և դու օրհ
նեսցես. որք յարուցեալք են ՚ի
վերայ իմ ամօթ կրեսցեն. այլ
ծա

Ծառայ քո ուրախ եղիցի ՚ի քեզ։
Զգեցցին զամօթ՝ ոյք չարախօս
կային զանձինէ իմմէ. և արկցեն
որպէս զկրկնոց զամօթ խուրեանց
զխուրեանքս։
Այլ ես խոստովան եղէց առ Տր
յոյժ՝ բերանով իմով. և իմէջ
բազմաց օրհնեցից զքեզ։
Զի եկաց նա ը աջմէ տնանկին.
՚ի փրկել զիս յայնցանէ՝ ոյք հա
լածէին զանձն իմ։

Տաղն. 30։

## Սաղմոս Դաւթի։ Լ՛Ա։

Ասաց Տր ցՏր իմ, նիստ ընդ
աջմէ իմմէ. մինչև եդից ըզ
թշնամիս քո պատուանդան ո
տից քոց։
Գաւազան զօրութեան առաքես
ցէ քեզ Տր ՚ի սիոնէ. և տիրես
ցես դու իմէջ թշնամեաց քոց։
Ընդ քեզ է սկիզբն աւուրն զօ
րութեան. ՚ի վայելչութի սրբոց
քոց՝ յարգանդէ յառաջ քան զա
րուսեակ ծնայ զքեզ։

Երդ

Երդուաւ Տր՝ և ոչ ևս զղջաս
ցի. Թէ դու ես քահանայ յաւի
տեան ըստ կարգին Մելքիսեդեկի.
և Տր ընդ աջմէ քումմէ.
Խորտակեսցէ յաւուր բարկութեն
զթագաւորս. դատէ զհեթանոսս
և բազում առնէ զհարուածս. և
խորտակեսցէ զգլուխս բազմաց
յերկրի։
Ջուղխս 'ի Ճանապարհի արբուս
ցէ. վասն այսորիկ և բարձր ա
րասցէ զգլուխս։
Տուն. 6։

## Ալէլուիայ։ ՃԺ.։

Խոստովան եղէց քեզ Տր բո
լորով սրտիւ իմով՝ 'ի խոր
հուրդս ուղղոց 'ի ժողովս.
մեծք են գործք Տն՝ և քննեալք
են յամենայնի կամք նորա.
Խոստովանութիւն և վայելչու
թիւն են գործք նորա. արդարու
թիւն նորա մնայ յաւիտեանս յա
ւիտենից։

Յիշատակ արար սքանչելեաց իւ-
րոց. ողորմած՝ և գթած է Տէր.
Կերակուր ետ երկիւղածաց իւրոց.
Յիշեսցէ յաւիտենից զուխտ իւր.
զզօրութիւն գործոց իւրոց. պա-
տուիրեաց ժողովրդեան իւրում.
Տայ նոցա զժառանգութիւն հե-
թանոսաց. և գործք ձեռաց նորա
արդարութիւն և իրաւունք են։
Հաւատարիմք են յամենայնի պա-
տուիրանք նորա. հաստատեալք են
յաւիտեանս յաւիտենից. արա-
րեալք են ճշմարտութեամբ և ուղ-
ղութեամբ։

Փրկութիւն առաքեաց Տէր ժողո-
վրդեան իւրում. պատուիրեաց
յաւիտենից զուխտ իւր՝ սբ և ա-
հեղ է անուն նորա։

Սկիզբն զգօնութեան՝ երկիւղ
Տեառն. իմաստութիւն բարի ա-
մենեցուն՝ որք առնեն զնա. և
օրհնութի նորա մնայ յաւիտեանս
յաւիտենից։

Ալէլուիայ. Ի վերադարձութեն Անգեայ
և Զաքարեայ: ՃԺԱ:

Երանեալ է այր՝ որ երկնչի ՚ի
Տեառնէ. զպատուիրանս նո
րա նա կամի յոյժ:
Զօր եղիցի յերկրի զաւակ նորա:
և ազգ ուղղոց օրհնեսցի:
Փառք և մեծութիւն է ՚ի տան
նորա. արդարութիւն նորա մնայ
յաւիտեանս յաւիտենից.
Ծագեաց ՚ի խաւարի լոյս ուղ
ղոց. ողորմած՝ գթած՝ և ար
դար է Տէր:
Քաղցր այր ողորմի՝ և տայ փոխ.
յօրինէ զբանս իւր ՚ի դատաս
տանի. զի յաւիտեան նա մի սա
սանեսցի:
Ի յիշատակ յաւիտենից եղիցի ար
դարն. ՚ի համբաւէ չարէ նա
մի երկիցէ.
Պատրաստ է սիրտ նորա յուսալ
առ Տէր:
Հաստատեալ է սիրտ նորա՝ և
նա մի երկիցէ. մինչև տեսցէ ՚ի
թշնամիս իւր:

Սփռեաց

Սփռեաց՝ և ետ աղքատաց. ար-
դարութիւն նորա մնայ յաւիտեանս
յաւիտենից. և եղջիւր նր բարձր
եղիցի փառօք։
Մեղաւորն տեսցէ՝ և բարկասցի.
զատամունս իւր կրճտեսցէ՝ և հա-
լեսցի. և ցանկութիւն մեղաւո-
րաց կորիցէ։

Տունք. 10։

## Ալէլուիայ։ ՃԺԲ.

Օրհնեցէք մանկունք զՏր. և
օրհնեցէք զանուն Տեառն.
Եղիցի անուն Տեառն օրհնեալ.
յայսմ հետէ մինչև յաւիտեան։
Յարևելից մինչև ՚ի մուտս արե-
ու. օրհնեալ է անուն Տն։
Բարձր է ՚ի վր ամ ազգաց Տր.
և յերկինս են փառք նորա։
Ով է որպէս Տր Ա.ծ մեր՝ ՚ի բար-
ձունս բնակեալ. և զխոնարհս տե-
սանէ յերկինս և յերկրի։
Յարուցանէ զաղքատն յերկրէ։
և բարձր առնէ զտառապեալս
յաղբեաց։

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ
իշխանս ժողովրդեան իւրոյ։
Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան
ուրախամիտ. որդ̃ մայր որդւովք
բերկրեալ։

Տուն։ 8։

## Ալէլուիա։ ՃԺԳ։

Յելանելն իսրայէլի յեգիպտոսէ.
տանն յակոբայ ՚ի ժողովրդե
նէ այլազգեաց։
Եղեւ Հրէաստան սրբութ̃ի նորա.
եւ Իէլ իշխանութիւն նորա։
Ծով ետես՝ եւ փախեաւ. եւ յոր
դանան անդրէն դարձաւ։
Լերինք ցնծացին որպէս խոյք. եւ
բլուրք որպէս գառինք մաքեաց։
Զի է քեզ ծով. զ̃ ետեսեր՝ եւ
փախեար. կամ դու յորդանան՝
զի դարձար անդրէն։
Լերինք ցնծացէք որպէս խոյք.
եւ բլուրք որպէս գառինք մաքեաց։
Յերեսաց Տ̃ն սասանեցաւ երկիր.
յերեսաց Ա̃Ճ յակոբայ։
Որ դարձոյց զվէմն ՚ի լճակս
ջուրց.

Ջուրց. և զպապատուածն յաղբե
րակունս:

Մի՛ մեզ Տր՝ մի՛ մեզ. այլ անո
ւան քում տուր զփառս. վասն ո
ղորմութե և ճշմարտութե քո:

Մի՛ երբէք ասասցեն ՚ի հեթա
նոսս. թէ ուր է Ած նոցա:

Ած մեր յերկինս և յերկրի. զա՟մ
զոր ինչ կամեցաւ՝ և արար:

Կուռք հեթանոսաց ոսկի և ար
ծաթ են. ձեռագործք են որ
դւոց մարդկան:

Զբերան ունին՝ և ոչ խօսին. զաչս
ունին՝ և ոչ տեսանեն:

Զականջս ունին՝ և ոչ լսեն. զռունգս
ունին՝ և ոչ հոտոտեն:

Զձեռս ունին, և ոչ շօշափեն.
զոտս ունին, և ոչ գնան. և ոչ գոյ
բարբառ ՚ի կոկորդս նոցա:

Նման նոցա եղիցին՝ ոյք արարին
զնոսա. ամենեքեան՝ ոյք յուսա
ցեալ են ՚ի նոսա:

Տուն Իէլի յուսացաւ ՚ի Տր. օգ
նական ընդունելի է նոցա:

Տուն Ահարոնի յուսացաւ ՚ի

Տր. օգնական ընկերելի է նոցա:
Երկիւղածք Տեառն յուսացան
՚ի Տէր. օգնական և փրկիչ է
նոցա:
Յիշեաց զմեզ Տր, և օրհնեաց
զմեզ. օրհնեաց Տր զտունն Իս
րայէլի. օրհնեաց Տէր զտունն
Ահարոնի:
Օրհնեաց Տր զերկիւղածս իւր.
զփոքրկունս և զմեծամեծս:
Յաւելցէ ՚ի ձեզ Տր. ՚ի ձեզ
և յորդիս ձեր:
Օրհնեալ էք դուք ՚ի Տէ. որ
արար զերկինս և զերկիր:
Երկինք երկնից Տն են. և զեր
կիրս ետ որդւոց մարդկան:
Ոչ թէ մեռեալք օրհնեսցեն ըզ
քեզ Տր. և ոչ ամենեքեան՝ որք
իջանեն ՚ի դժոխս:
Այլ կենդանիքս օրհնեսցուք
զՏէր. յայսմ հետէ մինչև յա
ւիտեան:

Տուն: 26:

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս. և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Պատեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս։

Զնեղութիւն և զանձկութիւն գտի. և զանուն Տեառն կարդացի։

Ո՛վ Տէր փրկեա զանձն իմ. ողորմած Տէր. ողորմեաց և պահեա զտղայս Տէր։

Ես խոնարհ եղէ՝ և Տէր կեցոյց զիս. դարձ անձն իմ ՚ի հանգիստ քո. զի Տէր օգնեաց քեզ։

Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ. զաչս իմ յարտասուաց. և զոտս իմ ՚ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց։

Տունք. 6.

Ալէլուիա։ Ճ՛Ժ՛Ե։

Հաւատացի՝ զոր և խօսեցայ. և
ես խոնարհեցայ յոյժ։
Ես ասացի 'ի զարմանալ իմում
թէ ամենայն մարդ սուտ է։
Զինչ տաց տրիտուր Տն. ընդ
ամ̃ի՝ զոր և ետ ինձ։
Զբաժակ փրկութե̃ ընկալայց.
և զանուն Տն̃ կարդացից։
Զաղօթս իմ Տն̃ տաց՝ առաջի
ամ̃ի ժողովրդեան նորա։
Պատուական առաջի Տն̃ մահ
սրբոց իւրոց. ո՞ Տր̃ ես ծառայ
քո եմ. ծառայ և որդի աղախ
նոյ քոյ։
Հատեր զկապանս իմ. քեզ մատու
ցից զպատարագ օրհնութե̃. և
զանուն Տն̃ կարդացից։
Զաղօթս իմ Տն̃ տաց՝ առաջի
ամ̃ի ժողովրդեան նորա. 'ի գա
ւիթս տան Տն̃, և 'ի մէջ քոյ Եէմ։

Տուն. 8։

Ալէլուիա։ Ճ՛Ժ՛Զ։

Օրհնեցէք զՏր̃ ամենայն ա-

զգք

զինք. գովեցէք զնա ամենայն ժողովուրդք:

Զօրացաւ ողորմութիւն նորա ՚ի վերայ մեր. եւ ճշմարտութիւն Տն մնասցէ յաւիտեան:

Տուն. 2:

## Ալէլուիա: ՃԺԷ:

Խոստովան եղերուք Տեառն՝ զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցէ տունն Իղի. զի յաւիտեան է ողորմութի նորա:

Ասասցէ տունն ահարոնի. զի յաւիտեան է ողորմութի նր:

Ասասցեն երկիւղածք Տն. զի յաւիտեան է ողորմութի նր:

՚Ի նեղութեան իմում ես առ Տր կարդացի. եւ լուաւ ինձ յանդորր:

Տր է իմ օգնական՝ եւ ես ոչ երկեայց. զի արասցէ ինձ մարդ:

Տր է իմ օգնական. եւ ես տեսից ՚ի թշնամիս իմ:

Բարի է յուսալ ՚ի Տր՝ քան յուսալ ՚ի մարդիկ. բարի է յուսալ

՚ի Տր

ի Տէր՝ քան յուսալ յիշխանս ։
Ամենայն ազգինք շրջեցան զինև. և
անուամբ Տեառն յաղթեցի նց ։
Շրջելով շրջեցան զինև. պա
շարեցին զիս խմբաւին. և անու
ամբ Տն վանեցի զնոսա ։
Շուրջ եղեն զինև որպ մեղուք.
վառեցան՝ բորբոքեցան որպէս
փուշք 'ի հուր. և անուամբ Տն
մերժեցի զնոսա ։
Մերժեցին գլորեցայ՝ և ե_
ղէ մերձ 'ի գլորել. և Տէր ըն
կալաւ զիս ։
Օրութիւն իմ, և օգնութի իմ.
Տր. և եղև ինձ 'ի փրկութիւն.
Ձայն ցնծութեան փրկութեան.
'ի յարկս արդարոց ։
Աջ Տն արար զզօրութիւն. աջ
Տեառն բարձր արար զիս. և աջ
Տն արար զզօրութիւն ։
Ոչ մեռայց, այլ կեցից. և պատ
մեցից զգործս Տեառն ։
Խրատելով խրատեաց զիս Տր.
և 'ի մահ ոչ մատնեաց ։
Բացէք ինձ զդրունս արդարու
թեան.

թեան. զի մտից ընդ այն՝ և խոս
տովան եղէց Տն։

Այս դուռն Տեառն է. և արդարք մտանեն ընդ սա։

Խոստովան եղէց քեզ Տր՝ զի լուար ինձ. և եղեր ինձ ՚ի փրկութիւն։

Զվէմն զոր անարգեցին շինօղքն. նա եղև գլուխ անկեան։

Ի Տէ եղև այս. և է սքանչելի առաջի աչաց մերոց։

Այս օր է՝ զոր արար Տր. եկայք ցնծասցուք՝ և ուրախ եղիցուք ՚ի սմա։

Ո՛ Տր փրկեա՛, ո՛ Տր առաջնորդեա՛. օրհնեալ որ գալոց է յանուն Տն. և օրհնեցաք զքեզ ՚ի տանէ Տեառն։

Տր Ած մեր երևեցաւ մեզ. արարէք զտօնս ուրախութե կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ։

Ած իմ ես դու՝ և խոստովան եղէց քեզ. Ած իմ ես դու՝ և բարձր արարից զքեզ։

Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի

լուար

լո՛ւար ինձ. և եղեր ինձ ՚ի փըր
կութիւն։
Խոստովան եղերուք Տ՟ն՝ զի քա
ղցր է. զի յաւիտեան է ողորմու
թիւն նորա։

Տունք։ 28։

## Ալէլուիայ։ ՃԺԸ։
## Ա. ԱԼԷՓ։ 1

Երանեալ են անբիծք ՚ի
ճանապարհի. և որք գը
նան յօրէնս Տ՟ն։
Երանի՝ որք քննեն ըզ
վկայութիւն նորա. բոլո
րով սրտիւ իւրց̃ խնդրեսցեն զնա։
Ո՛չ իսկ թէ՝ որք գործեն զանօրէ
նութիւն ՚ի ճանապարհս նորա
գնասցեն։
Դու պատուիրեցեր զպատուի
րանս քո, ՚ի պահել ինձ յոյժ։
Ո՛չ թէ յաջողեալ էին ինձ ճա
նապարհք իմ. ՚ի պահել ինձ զար
դարութիւնս քո։
Յայնժամ ես ոչ ամաչէի. ՚ի զգու
շա

շանալ իմն ՚ի պատուիրանս քո ։
Յայնժամ ես ոչ ամաչեցից. ՚ի զգու-
շանալ իմն ՚ի պատուիրանս քոյս ։
Խոստովան եղեց քեզ Տէր յուղ-
ղութիւն սրտի իմոյ. որպէս ուսայց զի-
րաւունս արդարութեան քո ։
Զիրաւունս քո պահեցից. մի թո-
ղուր զիս մինչ իսպառ ։

Բ ԲԷԹ ։ 2

Իւ ուղղեսցէ երիտասարդ զճա-
նապարհս իւր. այլ ՚ի պահել
զբանս քո ։
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի
զքեզ. մի մերժեր զիս ՚ի պատուի-
րանաց քոց ։
՚Ի սրտի իմում թաքուցի զբանս
քո. որպէս մի մեղայց քեզ ։
Օրհնեալ ես դու Տէր. ուսո ինձ
զարդարութիւնս քո ։
Շրթամբք իմովք պատմեցից զա-
մենայն իրաւունս բերանոյ քո ։
՚Ի ճանապարհ վկայութեանց քոց
զուարճացայ. որպէս յամենայնի
՚ի մեծութեան ։
՚Ի պատուիրանս քո հոգացայ.

և զգուշացայ ՚ի ճանապարհս քո։
Օ իրաւունս քո խօսեցայ. և ոչ
մոռացայ. զբանս քո։

## Գ. ԳԻՄԷԼ։ 3

Հատո ծառայի քում. զի կեցից
և պահեցից զբանս քո։
Օ արթո զաչս իմ. և նայեցայց ՚ի
սքանչելիս օրինաց քոց։
Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛
թաքուցաներ յինէն զպատուէ-
րանս քո։
Փափաքեցաւ անձն իմ ՚ի ցանկալ
ինձ յիրաւունս քո յամ ժամ։
Սաստեցեր ամբարտաւանից, անի-
ծեալ՝ որք խոտորեցան ՚ի պատո
ւիրանաց քոց։
Ի բաց արա յինէն զնախատինս՝
և զարհամարհանս. զի զվկայու-
թիւնս քո խնդրեցի։
Բ անզի նստան իշխանք՝ և չարա
խօսէին զինէն. այլ ծառայ քո
խորհէր յիրաւունս քո։
Օ ի վկայութիւնք քո խօսք իմ
էին. և խորհուրդք իմ արդարու-
թիւն քո։

Գ.

## Դ. ԴԱԼԵԹ: 4

Մերձեցաւ անձն իմ ՚ի հող. Տէր
կեցո՛ զիս ըստ բանի քում:
Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝
և լուար ինձ. ուսո՛ ինձ զարդա
րութիւնս քո:
Զճանապարհս արդարութեանց
քոց իմաստուն արա՛ զիս. և քննե
ցից զքանչելիս քո:
Տքնեցաւ անձն իմ առ ձանձրա
նալ. հաստատեա՛ զիս ՚ի բանս քո:
Զճանապարհս մեղաց հեռաց ա
րա՛ յինէն. և յօրէնս քո ողոր
մեաց ինձ:
Զճանապարհս ճշմարտութեան
քոյ ընտրեցի. և զիրաւունս քո
ես ո՛չ մոռացայ:
Մերձեցայ ես ՚ի վկայութիւնս
քո Տէր՝ մի՛ յամօթ առներ զիս:
Զճանապարհս պատուիրանաց
քոց ընթացայ. զի ընդարձակ արա
րեր սիրտ իմոյ:

## Ե. ՀԷ: 5

Օրէնսգէտ արա՛ զիս Տէր ՚ի ճա
նապարհս իրաւանց քոց. և խնդ
րե

րեցից ըզնա յամենայն ժամ.

Իմաստուն արա զիս՝ և քննեցից զօրէնս քո. և պահեցից զնա բո
լորով սրտիւ իմով։

Առաջնորդեա ինձ 'ի շաւիղս պա
տուիրանաց քոց. զի ընդ նոսա
հաճեցայ։

Խոնարհեցո զսիրտ իմ 'ի վկայու
թիւնս քո. և մի՛ յագահութիւն։

Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից
զնանրութիւն 'ի ճանապարհս քո
կեցո՛ զիս։

Հաստատեա՛ ծառայի քում ըզ
բանս քո՝ յերկիւղ քո։

Հան յինէն զնախատինս՝ զոր և
կարծեցի. զի դատաստանք քո
քաղցր են։

Ահա ցանկացայ պատուիրանաց
քոց. յարդարութեան քում կե
ցո՛ զիս։

Օ Ա Ր Ւ ։ 6

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութե
քո Տր. և փրկութիւն քո ըստ
բանի քում։

Տաց պատասխանի՝ ոյք նախատեն
զիս

զիս բանիւքդ. զի ես ՚ի բանս քո
յուսացայ։
Մի՛ հեռացեայ առնէր ՚ի բերանոյ
իմմէ զբան ճշմարտութե՛ մինչև
յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ.
Պահեցի զօրէնս քո յամ ժամ.
յաւիտեան՝ և յաւիտեանս յա
ւիտենից։
Գնայի ես յանդորրու. զի զպա
տուիրանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութիւնս քո առա
ջի թագաւորաց. և ոչ ամաչէի.
Խորհէի ՚ի պատուիրանս քո.
զոր սիրեցի.
Համբարձի զձեռս իմ ՚ի պատո
ւիրանս քո, զոր սիրեցի։ և խոր
հէի յարդարութե՛ քում։

Է. ԶԱՅԻՆ։ 7

Յիշեա՛ զբան ծառայի քոյ. յոր
և յուսացուցեր զիս։
Սա մխիթարեաց զիս ՚ի խոնար
հութեան իմում. զի բան քո կե
ցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ. այլ յօրինաց քոց ես ոչ խո
տորեցայ.

Յիշեցի զիրաւունս քո յաւիտե
նից Տր. և մխիթարեցայ։
Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղա
ւորաց. և ոյք թողին զօրէնս քո։
Գովելիք էին ինձ իրաւունք քո.
'ի տեղւոջ պանդխտութե իմոյ։
Յիշեցի 'ի գիշերի զանուն քո
Տր. և պահեցի զօրէնս քո։
Այս եղև ինձ ճանապարհ 'ի կենանս.
զի զարդարութիս քո խնդրեցի։

## Ը. ՀԵԹ. 8

Բաժին իմ ես դու Տր
ասացի պահել զօրէնս քո։
Աղաչեցի զերեսս քո բո
լորով սրտիւ իմով. ողորմեաց ինձ
ըստ բանի քում։
Խորհեցայ 'ի ճանապարհս իմ. և
դարձուցի զոտս իմ 'ի վկայու
թիւնս քո։
Պատրաստեցայ՝ և ոչ խռովեցայ.
զի պահեցից զպատուիրանս քո։
Տուունք մեղաց պատեցին զինև.
այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ.
Ի մէջ գիշերի յառնէի խոստովան
ել

լինել առ քեզ. վասն իրաւանց և
արդարութեան քոյ:
Հաղորդ էի ես ամենից երկիւղա
ծաց քոց. որոց պահեալ էին զպա
տուիրանս քո:
Ողորմութեամբ Տեառն լի եղև
երկիր. զարդարութիւն քո ու
սո՛ ինձ:

## Թ. ՏԷԹ: 9

Զքաղցրութիւն արարեր ընդ ծա
ռայի քում Տէ՛ր ըստ բանի քում:
Զքաղցրութիւն՝ զխրատ՝ և զգի
տութիւն ուսո՛ ինձ. զի ՚ի պատո
ւիրանս քո ես հաւատացի:
Մինչչև խոնարհեալ էի ես մեղայ.
վասն այսորիկ զբանս քո պահե
ցի յոյժ:
Քաղցր ես դու Տէ՛ր. և քաղց
րութեամբ քով ուսո՛ ինձ զարդա
րութիւն քո:
Բազմացան յիս անիրաւութիւնք
ամբարտաւանից. այլ ես բոլորով
սրտիւ իմով. քննեցի զպատուի
րանս քո:
Մածաւ որպէս կաթն սիրտք նո
ցա:

ցա. այլ ես զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ, զի խոնարհ արարեր
զիս. ոպ ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քոյ.
քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։

## Ժ. ՅՕԴ։ 10

Ձեռք քո արարին, և ստեղծին
զիս. իմաստուն արա զիս՝ և ու
սայց զպատուիրանս քո։
Երկիւղածք քո տեսցեն զիս՝ և
ուրախ եղիցին. զի ես 'ի բանս
քո յուսացայ։
Ծանեայ Տր՝ զի արդարութիւ
են դատաստանք քո. իրաւի խո
նարհեցուցին զիս։
Եղիցի ողորմութիւն քո 'ի մխի
թարել զիս՝ ըստ բանի քում ըն
ծառայս քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ և
կեցից. զի օրէնք քո խօսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք
'ի տարապարտուց անիրաւեցան
յիս. այլ ես հոգացայ 'ի պատու
իրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո.
և ոյք

և ոյք ճանաչէն զվկայութիւնս քո ։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդա
րութե քում · զի մի՛ ամաչեցից ։

Ի ԿԱ.Փ ։ 11

Դարձուցաւ անձն իմ, 'ի փրկու
թիւնս քո · զի ես 'ի բանս քո
յուսացայ ։

Մաշեցին աչք իմ բանի քում ·
ասացի , Երբ մխիթարեսցէ զիս ·

Եղէ ես ոպ՟ տիկ 'ի պարդի · զի
զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ ։

Քանի ինչ են աւուրք ծառայի
քոյ · Երբ արասցես ինձ իրաւունս
'ի հալածչաց իմոց ։

Պատմեցին ինձ անօրէնք բղ խոր
հուրդս՝ այլ ոչ որպէս զօրէնս քո ։

Ամենայն պատուիրանք քո ճշ
մարիտք են · ինանիր հալածեցին
զիս՝ օգնեա՛ ինձ ։

Փոքր մի ևս և կորուսանէին զիս
յերկրի · այլ ես ո՛չ թողի զպատու
իրանս քո ։

Ըստ ողորմութե քում կեցո՛ զիս ·
և՝ պահեցից զվկայութիւնս բե
րանոյ քոյ ։

## Լ ԼԱՄԵԴ։ 12

Յաւիտեան Տէր բան քո կայ յեր
կինս. յազգս մինչեւ յազգ է ճշ
մարտութիւն քո։

Հաստատեցեր զերկիր՝ եւ կայ։

Հրամանի քում միայ տիւ. զի ամե
նեքեան ծառայք քո են։

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին.
կանխաւ ես արդեօք կորուսեալ էի
'ի խոնարհութեան իմում։

Յաւիտեան ոչ մոռացայց զարդա
րութիւնս քո. զի նոքօք կեցուցեր զիս։

Քո եմ ես՝ եւ կեցո զիս. զի զար
դարութիւնս քո խնդրեցի։

Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կո
րուսանել զիս. զի զվկայութիւնս
քո ես 'ի միտ առի։

Յամենայն կատարածի տեսի րզ
վախճան. յոյժ անդորր էին ինձ
պատուիրանք քո։

## Խ ՄԵՄ։ 13

Որպէս սիրեցի զօրէնս քո. զօրհա
նապազ խօսք իմ էին։

Քան զթշնամիս իմ իմաստուն

արարեր զիս 'ի պատուիրանս քո. զի յաւիտեան իմ էին:

Քան զա̃մ ուսուցիչս իմ իմաստուն եղէ. զի վկայութիւնք քո խօսք իմ էին:

Քան զծերս իմաստուն եղէ. զի զպատուիրանս քո քննեցի:

Յամենայն ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ. որպէս զի պահեցից զբանս քո:

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ. զի դու օրէնսդէտ արարեր զիս:

Որպէս զի քաղցր են 'ի քիմս իմ բանք քո. քան զմեղր բերանոյ իմոյ:

'Ի պատուիրանաց քոց իմացեալ ատեցի զա̃մ ճանապարհս չարաց. զի դու օրէնսդէտ արարեր զիս:

Ն. ՆՈՒՆ: 14

Ճրագ է բանս քո ոտից իմոց. և լոյս շաւղաց իմոց:

Երդուայ և հաստատեցի. զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո:

Խոնարհ եղէ մինչև յոյժ. Տր
կեցո զիս ըստ բանի քում։
Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեաց
Տր. և զիրաւունս քո ուսո ինձ.
Անձն իմ ՚ի ձեռս քո յամ ժամ.
և զօրէնս քո ես ոչ մոռացայ.
Եդին ինձ մեղաւորք զորոգայթ.
՚ի պատուիրանաց քոց ես ոչ մո
լորեցայ։
Ժառանգեցի զվկայութիւնս քո
յաւիտեան. զի ցնծութիւն է
սրտի իմոյ։
Խոնարհեցուցի զսիրտ իմ առ
նել զարդարութիւնս քո յաւի
տեան՝ վասն հատուցման։

Կ ՍԱՄԷՔ։ 15

Զանօրէնսն ատեցի. և զօրէնս
քո սիրեցի։
Օգնական և փրկիչ իմ ես դու.
և ես ՚ի բանս քո յուսացայ։
Ի բաց եղերուք յինէն չարք. և
քննեցից զպատուիրանս Այ իմոյ։
Օգնեա ինձ ըստ բանի քում,
և կեցո զիս. և մի յամօթ առներ
զիս ՚ի յուսոյ իմոյ։

Օգ

Օգնեա՛ ինձ՝ և ապրեցո՛ զիս. և
խորհեցայց յիրաւունս քո յամե
նայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան, որք
ապստամբք եղեն յարդարութենէ
քոյ. զի անիրաւութեամբ էին
խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զամե
նայն մեղաւորս երկրի. վասն այ
սորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմար
մին իմ. զի ՚ի դատաստանաց քոց
երկեայ յոյժ։

## ԱՅԻՆ։ 16

Արարի իրաւունս և ար
դարութիւն. մի՛ մատ
ներ զիս ՚ի ձեռս նեղ
չաց իմոց։

Ընկալ զծառայ քո ՚ի բարի. զի
մի՛ ամբարտաւանք զղո՛ւեսցեն զիս։

Սպասեցին աչք իմ փրկութեան
քում Տէր. և բանից արդարու
թեան քում։

Արա՛ ընդ ծառայի քում Տէր ըստ
ողոր

ողորմութեան քում. զարդարու-
թիւնս քո ուսո՛ ինձ։

Ծառայ քո եմ ես՝ իմաստուն
արա՛ զիս. և ծանեայց զվկայու-
թիւնս քո։

Ժամ է պաշտել զՏր. խափա-
նեցին զօրէնս քո։

Վասն այսորիկ սիրեցի զպատո-
ւիրանս քո. քան զամենայն ոսկի
և զտպազիոն։

Ամենայն պատուիրանք քո յաջո-
ղեցան ինձ. զի ատեցի ես զճա-
նապարհս չարաց։

Ջ Փէ։ 17

Սքանչելի են վկայութիւնք քո.
վս այսորիկ սիրեաց զնս անձն իմ։
Յայտնութիւն բանից քոց լուսա-
ւորէ. և իմաստուն առնէ զտղայս։
Զբերան իմ բացի և առի զհո-
գի. ՚ի պատուիրանս քո փափա-
քեաց անձն իմ։

Նայեաց առ իս և ողորմեաց
ինձ. ըստ իրաւանց սիրողաց ա-
նուան քոյ։

Զճանապարհս իմ ուղիղ արա՛

ինձ

ինձ ըստ բանի քում. և մի՛ տի-
րեսցեն ինձ ամ մեղք։

Փրկեա՛ զիս ՚ի զրպարտութենէ մարդկան. և պահեցից զպատո-
ւիրանս քո։

Երևեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս քո. և ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։

Ակունք ջուրց իջին յաչաց իմոց. զի ո՛չ պահեցին զօրէնս քո։

## Դ. ՍԱԴԷ։ 18

Արդա՛ր ես դու Տէր. և ուղիղ են դատաստանք քո։

Պատուիրեցեր զարդարութի՛ վկայութեանց քոց Տէր. և ճշմա-
րիտք են յոյժ։

Մաշեաց զիս նախանձ քո. զի մոռացան զբանս քո թշնամիք իմ։

Ընտրեալ է բան քո յոյժ. և ծառայ քո սիրեաց զսա։

Մանուկ եմ ես և արհամարհեալ. և զարդարութիւնս քո ես
ո՛չ մոռացայ։

Արդարութիւն քո արդարութի՛ յաւիտենից. և օրէնք քո ճշմա-
րիտք են։

Նեղութիւնք և վիշտք գտին զիս.
և պատուիրանք քո խօսք իմ են։
Արդարութեամբ են վկայութիւնք
քո յաւիտեան. իմաստուն արա
և կեցո զիս։

## ԿՈՓ։ 19

Կարդացի առ քեզ բոլորով սըր
տիւ իմով. լուր ինձ Տր՝ զի զար
դարութիւնս քո խնդրեցի։
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա
զիս. և պահեցից զվկայութիւնս քո։
Կանխեցի տարաժամու՝ աղաղա
կեցի. և ես ՚ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու.
՚ի խօսիլ ինձ զբանս քո։
Ձայնի իմում լուր Տր՝ ըստ ո-
ղորմութեան քում. և յիրաւունս
քո կեցո զիս։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ
զանօրէնութիւն. զի յօրէնաց քոց
հեռի եղեն։
Մերձ ես դու Տր. և ամ պատո
ւիրանք քո ճշմարիտք են։
՚Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց
քոց Տր. զի յաւիտեան հաստատե
ցեր զնս։

Մ

## Ա՛ ՐԷՍ։ 20

Տես զխոնարհութիւն իմ, եւ փըր
կեա՛ զիս. զի զօրէնս քո ես ոչ
մոռացայ։
Դատեա՛ զդատաստանս իմ, եւ
փրկեա՛ զիս. եւ ըստ բանի քում
կեցո՛ զիս։
Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութի·
զի զիրաւունս քո ոչ պահեցին։
Գթութիւնք քո բազում են Տէր.
եւ ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս։
Բազում են, որք հալածեն եւ նե
ղեն զիս, ՚ի վկայութեանց քոց ես
ոչ խոտորեցայ։
Հայէի յանագորունսն եւ մաշէի.
զի զպատուիրանս քո ոչ պահեցին։
Տես, զի զպատուիրանս քո սիրե
ցի. Տէր՝ ողորմութեամբ քով
կեցո՛ զիս։
Սկիզբն բանից քոց ճշմարտու
թիւն է. յաւիտեան են ամենայն
իրաւունք արդարութեան քո։

## Յ ՍԻՆ։ 21

Իշխանք հալածեցին զիս ի նանիր.
եւ ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։
Ցնծա

Յնծացայ ես 'ի բանս քո՝ որպէս
այն՝ որ գտանէ աւա՛ր բազում։
Զմեղս ատեցի՝ և անարգեցի. և
զօրէնս քո սիրեցի։
Եօթն անգամ յաւուր օրհնեցից
զքեզ. վասն իրաւա՛նց և արդա
րութեան քոյ։
Խաղաղութիւն բազում է այնո
ցիկ՝ ոյք սիրեն զօրէնս քո. և
ոչ գոյ 'ի նոսա գայթակղութ̅ն։
Սպասեցի փրկութե̅ քում Տր̅.
և զպատուիրանս քո սիրեցի։
Պահեաց անձն իմ զվկայութի̅ս
քո. և սիրեաց զնա̅ յոյժ։
Պահեցից զպատուիրանս՝ և զվը
կայութիւնս քո. զի ա̅մ ճանա
պարհք իմ առաջի քոյ են։

Ե. Թ.Ր.Ի.: 22

Մերձեսցին խնդրուա՛ծք իմ ա
ռաջի քոյ Տր̅. ըստ բանի քում,
իմաստուն արա՛ զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քոյ
Տր̅. և բանիւ քով փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու
թիւնս քո. յորժամ ուսուսցես
ինձ զարդարութի̅ս քո։ Խօ

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Յանկացայ փրկութեան քում Տր̃. և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, և օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Տունք. 176։

Օրհնութիւն Լ, սայլեաց. չարչարանացն փառք ամ̃ե մարգարէիցն։ Խ Ր. Խ Լ։

Օրհնեցէք զՏ̃ր յօրհնութիւն նոր. զի իշխանութիւն նորա 'ի բարձունս փառաւորի։

Եւ անուն նորա փառաւորեալ է 'ի ծա

'ի ծագաց մինչեւ' 'ի ծագս երկրի.
Ոյք իջանէին 'ի ծով նաւուք
կղզիք. եւ ամենայն բնակիչք նո
ցա ընդ նոսա:
Ուրախ եղիցի անապատն' եւ ամե
նայն բնակիչք իւր. ուրախ եղի
ցին բանակք' եւ բակք կեդարու.
եւ ուրախ եղիցին բնակիչք վիմին:
'Ի գլխոց լերանց գոչեսցեն. տա
ցեն զփառս Ա.Յ. եւ զքաջութ̃ն
նորա կղզիք պատմեսցեն:
Տ̃ր Ա.Ծ զօրութեանց դիմեալ գայ,
զարթուցանել զպատերազմ. յա
րուցանել զնախանձ' փող հարկա
նել' եւ գոչել 'ի վերայ թշնամեաց
իւրոց զօրութ̃բ բազմաւ:
Ուրախ եղիցին երկինք 'ի վերուստ.
եւ ամպք ցօղեսցեն զարդարութ̃ի:
Բղխեսցէ երկիր զողորմութիւն
եւ զարդարութիւն' առ հասարակ
բղխեսցէ:

## Տաղ. 8:

Աղօթք Յովնանու մարգարէին: Ա:

Ի նեղութ̃ե իմում ես առ Տ̃ր

կարդացի. և լուաւ Ած՝ յանդն
դոց դժոխոց, աղաղակի իմում:
Լուր Տր ձայնի իմում, զի ընկե
ցեր զիս 'ի խորս ծովու. և շըր
ջանք գետոց պաշարեցին զիս:
Ամենայն զբօսանք քո՝ և ալիք
քո անցին 'ի վերայ իմ. և ասացի՝
թէ մերժեցայ ուրեմն յերեսաց
աչաց քոց:
Արդ՝ իցէ թէ յաւելից հայել 'ի
տաճար սբ քո. զի հեղձան զինև
ջուրք մինչև յանձն իմ. և անդունդք
անհնարինք պաշարեցին զիս:
Սմուտ գլուխ իմ ընդ փապարս
լերանց. իջի ես 'ի խորս երկրի,
և տեսի զնիգս նորա, զի էին ոմն
աղխք յաւիտենից. և ելցեն յա
պականութէ կեանք իմ:
Առ քեզ Տր Ած իմ, 'ի նուա
զիլ անձին իմոյ կարդացի. և զքեզ
Տր յիշեցի. և մտցեն աղօթք իմ
'ի տաճար սուրբ քո:
Որք պահէին զունայնութի
և զստութի. յողորմութենէ իւ
րեանց մերժեցան:

Այլ ես 'ի ձայն օրհնութեն խոս
տովան եղէց քեզ. մատուցից պա
տարագս Տեառն՝ և կատարեցից
զուխտ իմ 'ի փրկութեն :

Տունք : Ց :

Ե՛ կեցցեն աղօթք մեր 'ի տաճար
սուրբ քո. խոնարհեսցի ունկն քո
'ի խնդրուածս մեր :
Մարգասէր Տր՟՝ վն՟ սրբուհւոյ
անարատի Մօր քոյ և կուսի. և
վասն Խաչի քոյ պատուականի.
ընկալ զաղաչանս մեր. և կեցո
զմեզ :

Օրհնութիւն Դաւթեանն։
ՃԺԹ.

# Ի ՆԵՂՈՒ

թեան իմում ես առ Տէր կարդացի. եւ լուաւ ինձ. Տէր փրկեա զանձն իմ ՚ի շրթանց նենգաւորաց. եւ ՚ի լեզուէ չարէ։

Զի՞ տացի քեզ. կամ զի՞նչ յաւելցի լեզու նենգաւոր։

Որպէս նետք հզօրի՝ զի մխեալք են կայծակամբ կաղնոյ։

Վայ ինձ՝ զի ընդ երկար եղեւ պանդխտութիւն իմ. բնակեցայ ես ՚ի վրանս կեդարու։

Բազում անգամ բնակեցաւ անձն իմ ընդ այնոսիկ. որք ատէին զողջոյն։

Ես

Ես էի խաղաղարար. յորժամ խօ
սէի՝ մարտնչէին ընդ իս։

Տունք. 6։

Օրհնութիւն Աստիճանաց։ ՃԻ։

Համբարձի զաչս իմ ՚ի լերինս.
ուստի եկեսցէ ինձ օգնութիւն.
Օգնութիւն ինձ ՚ի Տէ եկեսցէ.
որ արար զերկինս եւ զերկիր։
Մի՛ տար ՚ի սասանութիւն զոտս
քո. եւ մի՛ ննջեսցէ պահապան քո։
Որպէս ոչ ննջէ. եւ ոչ ՚ի քուն
երթայ պահապանն Իղի։
Տր պահեսցէ զքեզ. եւ Տր ըն
կալցի աջոյ ձեռամբն քում։
Արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղի
ցէ. եւ մի՛ լուսին ՚ի գիշերի։
Տր պահեսցէ զքեզ յամենայն չա
րէ. պահեսցէ Տր զանձն քո։
Տր պահեսցէ զմուտ եւ զել քո.
յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Տունք. 8։

Օրհնութիւն Աստիճանաց։ ՃԻԱ։

Ուրախ եղէ ես որք ասէին ցիս.
՚ի տուն

՚ի տուն Տեառն երթիցուք մեք։
Հաստեալ կային ոտք մեր. ա-
դրունս քո Եէմ։
Եէմ շինեալ որպէս քաղաք. և
ընկերութիւն իւր շուրջ զնովաւ։
Անդ ելանէին ազգք՝ ազգք Տն.
վկայութե Իէլի. խոստովան լինել
անուան Տն։
Անդ արկեալ էին աթոռք դատաս-
տանի. աթոռս արկեալ էին ՚ի
տան Դաւթի։
Հարցէք զողջունէ Եէմի. և զշի-
նութէ՝ ոյք սիրէք զՏր։
Եղիցի խաղաղութիւն ՚ի զօրու-
թեան քում. և շինութիւն յաշ-
տարակս յամուրս քո։
Վասն եղբարց՝ և ընկերաց իմոց
խօսեցայ զխաղաղութիւն. վասն
քոյ, և վասն տան Տն Այ մերոյ
խնդրեցաք զբարութիւն ՚ի քէն։

Տունք. 8։

Օրհնութիւն Աստուածածնայ։ Ձ՛ Ի Բ։
Առ քեզ Տր համբարձի զաչս
իմ. որ բնակեալդ ես յերկինս։

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն
Տ՛ն իւրոյ. և որպէս աչք աղախ
նոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ:
Այնպէս են աչք մեր առ քեզ
Տ՛ր Ա՛ծ մեր. մինչև ողորմեսցիս
'իվերայ մեր:
Ողորմեաց մեզ Տէր՝ ողորմեաց
մեզ. զի բազում լցաք արհա
մարհանօք:
Եւս առաւել լցան անձինք մեր
նախատանօք. ոյք նախատէին ըզ
մեզ՝ և արհամարհանօք ամբար
տաւանից:

Տուն: Ե:

Օրհնութիւն Աստիճանաց. ՃԻԳ.:
Եթէ ոչ Տ՛ր էր առ մեզ ասասցէ
իէլ. եթէ ոչ Տ՛ր էր առ մեզ:
Ընդ յառնել մարդկան 'իվերայ
մեր. կենդանւոյն կամեցան կլա
նել զմեզ:
'Ի բարկանալ սրտմտութ՛ն նոցա
'իվերայ մեր. ապա և ջուրք ու
րեմն ընկղմեցին զմեզ:
Ընդ ուխս անցին անձինք մեր.

ցեն անձինք մեր ընդ ուխս ան
դադարս :

Օրհնեալ է Տր՟. որ ոչ ետ ըզ
մեզ յորս ատամանց նոցա :

Անձինք մեր ապրեցան. որպէս
ճնճղուկ յորոգայթէ որսողաց :

Որոգայթք նոցա փշրեցան. և մեք
ապրեցաք :

Օգնութիւն է մեզ յանուանէ Տն.
որ արար զերկինս և զերկիր :

Տաղ. 8 :

Օրհնութիւն Աստիճանաց. ՃԻԴ.

Որ յուսայ 'ի Տր՟ որպէս լեառն
սիոն. մի՛ սասանեսցի յաւի
տեան. որ բնակեալ է յԵՀմ :

Լերինք շուրջ են զնովաւ. Տր՟
շուրջ է զժողովրդեամբ իւրով՝
յայսմ հետէ մինչև յաւիտեան :

Ոչ թողու Տր՟ զգաւազան մեղա
ւորաց 'ի վիճակս արդարոց. զի
արդարք մի՛ ձգեսցեն զձեռս իւ
րեանց յանօրէնութիւն :

Բարի առնէ Տր՟ բարեաց. և այ
նոցիկ՝ ոյք ուղիղք են սրտիւք :

Իսկ

Իսկ զթիւրեալսն ՚ի յափշտակու-
թիւն, տանի զնոսա Տր ընդ այնո-
սիկ՝ որք գործեն զանօրէնութի.
խաղաղութի ՚ի վերայ իսրլի։

Տաղ. 5։

Օրհնութիւն Աստիճանաց. ՃԻԵ։

Դարձուցանել Տն զգերու-
թիւն սիօնի. և եղաք մեք
մխիթարեալք։
Յայնժամ լցան բերանք մեր խն
դութեամբ. և լեզուք մեր ցն
ծութեամբ։
Յայնժամ ասասցեն ՚ի հեթանոսս՝
մեծ արար Տր զառնելն իւր ընդ-
նս. մեծ արար Տր զառնելն իւր
ընդ մեզ. և մեք եղաք բերկրեալք։
Դարձո Տր զգերութիւնս մեր,
որպէս զհեղեղս ՚ի հարաւոյ. որք
վարեն արտասուօք ցնծութբ
հնձեսցեն։
Երթային երթային՝ և լային.
որք բարձեալ տանէին զսերմանիս
իւրեանց։

Գալով եկեսցեն՝ և ցնծասցեն․
որոց առեալ բերցեն զորայս
իւրեանց։

Տունք․ 6։

## Օրհնութիւն Աստիճանաց։
## ՃԻԶ։

Եթէ ոչ Տր̄ շինէ զտունն՝ ի նանիր վաստակեն շինօղք նորա։
Եթէ ոչ Տր̄ պահէ զքաղաքն․ ընդունայն տքնին պահապանք նորա։
Ի նանիր է ձեզ յառնելն կանխաւ․
արդ՝ արիք մինչչև էք ննջեցեալք՝
դուք ուտէք զհաց ցաւոց։
Զի ժամանակի, որպէս տացի քուն
սիրելեաց իւրոց․ Ժառանգութի
առն որդիք են․ որոց վարձք իւր
են, այն է պտուղ որովայնի իւրոյ։
Որպէս նետք ՚ի ձեռս հզօրի․ այն
պէս են և որդիքն թօթափելոց։
Երանի՝ որ ելից զցանկութիւն
իւր ՚ի նոցանէ․ և ոչ ամաչեսցեն՝
յորժամ խօսեսցին թշնամիք նոցա
ընդ նոսա առ դրանն։

Տունք․ 6։

Օրհնութիւն Աստիճանաց. ՃԻԷ։

Երանի ամենեցուն՝ որք երկնչին ՚ի Տեառնէ. և գնան ՚ի ճանապարհս նորա։

Զվաստակս ձեռաց քոց կերիցես. երանի է քեզ՝ և բարի եղիցի։

Կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քո. որդիք քո ոպ̃ նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով։

Այսպէս օրհնեսցի ա̃յր մարդ՝ որ երկնչի ՚ի Տ͞է. և օրհնեսցէ զքեզ Տ͞ր ՚ի սիօնէ։

Եւ տեսցես դու զբարութիւն յե̃ղմի. զա̃մ աւուրս կենաց քոց։

Տեսցես դու զորդիս որդւոց քոց. զխաղաղութի̃ ՚իվերայ իղ̃ի։

Տուն. 6։

Օրհնութիւն Աստիճանաց. ՃԻԸ։

Բազում անգամ մարտեան ընդ իս ՚ի մանկութենէ իմմէ՝ ասասցէ իղ̃լ։

Բազում անգամ մարտեան ընդ իս ՚ի մանկութէ̃ իմմէ. և ինձ ոչ յաղթեցին։

Զթի

Օ թիկունս իմ հարին մեղաւորք.
ընդ երկար արարին զանօրէնու
թիւնս իւրեանց:

Տր արդար է և խորտակեաց զպարանոց
մեղաւորաց:

Ամաչեսցեն՝ և յետս դարձցին ա-
մենեքեան, որք ատեն զսիօն:

Եղիցին նոքա որպէս խոտ տա
նեաց. որ մինչչև 'ի բուռն ե-
կեալ չորացաւ:

Ուստի ոչ ելից զբուռն իւր հնձօ
ձօղն. և ոչ զգիրկս իւր՝ որ զո
րայն ժողովէր:

Ոչ ասացին ամենեքեան՝ որք ան
ցանէին առ նոքօք. թէ օրհնու
թիւն Տն ընդ ձեզ. և օրհնեցաք
զձեզ յանուն Տն:

Տունք. Ը:

Օրհնութիւն Աստիճանաց:
ՃԻԹ.

Ի խորոց կարդացի առ քեզ Տր.
Տր լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո. 'ի լսել ըզ
ձայն աղօթից իմոց:

Եթէ զանօրէնութիւս քննես Տր.
Տր՝ ո՞ կարէ կալ առաջի քո.
զի ’ի քէն է քաւութի։
Վասն անուա՛ն քոյ համբերի Տր.
համբերէր անձն իմ բանի քում,
յուսացաւ անձն իմ ’ի Տր։
’Ի պահէ առաւօտու մինչև յերե
կոյ. ’ի պահէ առաւօտու՝ յուսա
ցաւ Իէլ ’ի Տր։
’Ի Տէ է ողորմութիւն բազում.
’ի նմանէ է փրկութի. և նա փրր
կեաց զԻէլ յամ նեղութեց նորա։

Տուն։ 6.

## Օրհնութիւն Աստիճանաց։

## ՃԼ։

Տէր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ. և
ո՛չ զբօսան աչք իմ։
Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս. և
ո՛չ ընդ այնոսիկ՝ որ սքանչելիք ե-
ղեն քան զիս։
Բայց թէ խոնարհեցայ ես որպէս
մանուկ սարտուցեալ ’ի ստենէ
մօր իւրոյ. և դարձ նորա անդ-
րէն ’ի նոյն։

Ր.մէ

Այլ թէ հպարտացուցի արդեօք
զանձն իմ. այսպէս եղիցի հատու
ցումն անձին իմոյ. յուսասցէ իէլ
'ի Տր յայսմ հետէ մինչև յաւիտեն։

Տաղս. 4։

Օրհնութիւնք Աստիճանաց չորրորդ։

ՃԼԱ։

Յիշեա՛ Տր զԴաւիթ՝ և
զա՛մ հեզութի՛ նորա։
Որպէս երդուա՛ւ Տն.
և ուխտ եդ Այ յակո
բայ։

Եթէ մտից 'ի յարկս տան իմոյ.
Եթէ ելից յանկողինս մահճաց իմոց։
Եթէ տաց քուն աչաց իմոց. կամ
նինջ արտևանաց իմոց. կամ հան
գիստ երանաց իմոց. մինչև գտից
զտեղի յարկի Տն Այ յակոբայ
Ահա լուա՛ք զնմանէ յեփրաթայ.
և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց.
Մտցուք 'ի յարկս նորա. երկիր
պագցուք 'ի տեղւոջ՝ ուր կացեալ
են ոտք նր։

Արի

Արի Տէ՛ր 'ի հանգիստ քո՝ դու
և կտակարան սրբութեան քոյ։
Երիցունք քո զգեցցին զարդա
րութիւն. և սուրբք քո ցնծա
լով ցնծասցեն։
Վասն դաւթի սիրելւոյ քոյ. մի՛
դարձուցաներ զերեսս քո յօծե
լոյ քումմէ։
Երդուաւ Տէ՛ր դաւթի ճշմար
տութեամբ՝ և ո՛չ ստեաց նմա. 'ի
պտղոյ որովայնի նորա նստուցա
նել յաթոռ նորա։
Թէ պահեսցեն որդիք քո զօ
րէնս իմ. և զվկայութիւնս իմ,
զոր ուսուցից նոցա։
Որդիք նոցա նստցին յաւիտեանս
յաւիտենից յաթոռ քո։
Հաճեցաւ Տէ՛ր ընդ սիոն. և ընտ
րեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս
է հանգիստ իմ յաւիտեանս յաւի
տենից. 'ի սմա բնակեցայց՝ զի հա
ճեցայ ընդ սա։
Օրս նորա օրհնելով օրհնեցից.
և զաղքատս նորա լցուցից հացիւ։
Երիցանց նորա զգեցուցից զփր
կու

կութիւն . և սուրբք սորա ցնծա-
լով ցնծասցեն :

Անդ ծագեցից եղջիւր 'ի Դա-
ւիթ . պատրաստ արարից զճրագ
օծելոյ իմոյ :

Թշնամեաց սորա զգեցուցից զա-
մօթ . և 'ի վերայ նորա ծաղկեսցի
սրբութիւն իմ :

Տուն . 17 :

## Օրհնութիւն Աստիճանաց :

## ՃԼԲ :

Օ ի բարի՝ կամ զի վայելուչ .
զի բնակեն եղբարք իմիասին :

Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ
և 'ի մօրուսն Ահարոնի . և 'ի մօ-
րուացն իջանէ 'ի գրապանս զգես-
տու նորա :

Որպէս ցօղ զի ցօղէ 'ի Հերմոնէ .
'ի վերայ լերին Սիոնի :

Տէր անդ պատրաստեաց զօրհնու-
թիւն . և զկեանս յաւիտենից :

Տուն . 4 :

Օրհնութիւն Աստիճանաց :

ՃԼԳ:

Ահա օրհնեցէք ամ ծառայք Տն զՏր. ո՛ կայք ՚ի տուն Տն ՚ի գաւիթս Ա.Յ մերոյ.
Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ՚ի սրբութիւն. և օրհնեցէք զՏր:
Օրհնեսցէ զքեզ Տր ՚ի սիոնէ. որ արար զերկինս և զերկիր:

Տուն. 3:

Աւէլուիայ: ՃԼԴ:

Օրհնեցէք զանուն Տն. օրհնեցէք ծառայք Տն զՏր. ո՛ կայք ՚ի տուն Տն, և ՚ի գաւիթս Ա.Յ մերոյ:
Օրհնեցէք զՏր՝ զի բարի է. և սաղմոս ասացէք անուան նորա՝ զի քաղցր է:
Զի յակոբ ընտրեաց իւր Տր. և զիէլ ժառանգութիւն իւր:
Ես ծանեայ՝ զի մեծ է Տր. և Տր մեծ է քան զամենայն կուռս:
Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ և արար Տր. յերկինս և յերկիր, ՚ի ծով և յամ խորս: ա

Հանէ զամպս ՚ի ծագաց երկրի․
զփայլատակունս իւր յանձրեւս ա-
րար․ և հանէ զհողմ ՚ի շտեմա
րանաց իւրոց։

Եհար զանդրանիկս եգիպտա
ցւոց՝ ՚ի մարդոյ մինչև յանասուն։

Առաքեաց զնշանս և զարուեստս
իւր ի մէջ քո եգիպտոս․ ՚ի փարա
ւոն՝ և յա՟մ զօրս իւր։

Եհար զազգս բազումս․ և սպան
զթագաւորս հզօրս։

Զսեհոն թագաւոր ամուրհա
ցւոց․ զովգ թագաւոր բասա
նու, և զա՟մ թագաւորութիւնս
քանանացւոց։

Ետ զերկիր նոցա ՚ի ժառանգու
թիւն, ժառանգութիւն իլի ժո
ղովրդեան իւրոյ։

Տր անուն քո յաւիտեան․ Տր յի
շատակ քո յազգէ մինչև յազգ։

Դատէ Տր զժողովուրդս իւր․
և ՚ի ծառայս իւր մխիթարի։

Կուռք հեթանոսաց արծաթ և
ոսկի են․ ձեռագործք են որդւոց
մարդկան։

Բ․ե

Բերան ունին՝ և ոչ խօսին. աչք
են՝ և ոչ տեսանեն.
Ականջք են՝ և ոչ լսեն. և ոչ
գոյ շունչ ՚ի բերանս նց.
Նման նոցա եղիցին՝ որք արարին
զնոսա. ամենեքեան՝ որք յուսա
ցեալք են ՚ի նոսա.
Տունն Իղի օրհնեցէք զՏէր.
տունն Ահարօնի օրհեցէք զՏր.
Տունն Ղևեայ օրհնեցէք զՏր.
երկիւղածք Տն օրհնեցէք զՏր.
Օրհնեալ Տր ՚ի Սիօնէ. որ բնա
կեալն է յԵրմ.

Տունք. 20.

Ալէլուեայ. ՃԼԵ.

Խոստովան եղերուք Տն. զի
քաղցր է՝ զի յաւիտեան է
ողորմութի նորա.
Խոստովան եղերուք Աստուծոյն
Աստուծոց. զի յաւիտեան է ո
ղորմութիւն նորա.
Խոստովան եղերուք Տեառն տե
րանց. զի յաւ.

Արար

Արար զսքանչելիս մեծամեծս
միայն. զի յաւիտեան է ողորմու
թիւն նորա։
Զերկինս արար իմաստութեամբ
իւրով. զի յաւ։
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ
ջուրց. զի յաւի։
Արար զլուսաւորս մեծամեծս.
զի յաւիտեան է ող։
Զարեգակն արար իշխանական
տուընջեան. զի յաւ։
Զլուսին և զաստեղս իշխանա
կան գիշերոյ. զի յաւ։
Եհար զերկիրն եգիպտացւոց անդ
րանկօք իւրովք հանդերձ. զի
Եւ եհան զիսրայէլ ՚ի միջոյ նո
րա. զի յաւի։
Ի ձեռն բարձր՝ և ՚ի բազուկ հը
զօր. զի յաւի։
Եհերձ զծովն մեծ, և բաժա
նեաց յերկուս մասունս. զի։
Եւ անցոյց զիէլ ընդ մէջ նորա.
զի յաւիտեան է ողոր։
Ընկղմեաց զփարաւօն և զզօրս
իւր ՚ի ծով կարմիր. զի։

Եւ

Եւ եհան զժողովուրդ իւր յա
նապատ. զի յաւի։
Եւ հար զազգս մեծամեծս. զի։
Եւ սպան զթագաւորս հզօրս.
զի յաւիտեան է ողոր։
Զսեհոն թագաւոր ամուրհա
ցւոց. զի յաւի։
Զովգ թագաւոր բասանու.
զի յաւիտեան է ող։
Եւ զերկիր նոցա 'ի ժառանգու
թիւն. զի յաւի։
Ժառանգութիւն իղի ծառայի
իւրոյ. զի յաւի։
Յիշեաց զմեզ Տր 'ի խոնարհու
թեան մերում. զի։
Եւ փրկեաց զմեզ 'ի ձեռաց թշ
նամեաց մերոց. զի։
Որ տայ կերակուր ամենից կենդա
նեաց. զի յաւի։
Խոստովան եղերուք Ա.Յ երկնա
ւորի. զի յաւիտեան է ողորմու
թիւն նորա։

Տաղ[illegible]. 26։

Սաղմոս Դաւթի ի ձեռն Երեմիայ։

Առ գետս բաբելացւոց. անդ նստաք՝ և լայաք. որպէս յի
շեցաք մեք անդ զսիոն։

Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք
զկտակարանս մեր։

Անդ հարցանէին զերեխէք մեր ըզ
բանս օրհնութեան. գերեվարք
մեր ստիպէին զմեզ՝ և ասէին։

Օրհնեցէք մեզ յօրհնութենէ
սիոնի. իսկ զի արդ օրհնեսցուք
զօրհնութիւն Տ՟ն յերկիր օտար։

Թէ մոռացայց զքեզ Եր՟մ. մո
ռասցի զիս աջ իմ։

Կցեսցի լեզու իմ 'ի քիմս իմ, թէ
ոչ յիշեցից զքեզ. թէ ոչ նախ
նուաճեցից զքեզ Եր՟մ, սկիզբն
ուրախութեան իմոյ։

Յիշեա՛ Տ՟ր զորդիսն եդովմայ՝ յա
ւուրսն Եր՟մի։

Որք ասէին, քակեցէք՝ քակե
ցէք՝ մինչև 'ի հիմն հատուցէք։

Դուստր բաբելացւոց թշուառա
կան. երանի՝ որ հատուսցէ զհատու
ցումն քո, զոր դու մեզ հատուցեր։

Երանի՛ որ կալաւ զմանկունս քո, և եհար զքարի։

Տաղ. 10։

## Սաղմոս Դաւթի. ՃԼԷ։

Խոստովան եղէց քեզ Տր բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս սացից քեզ։

Զի լուա՛ր զբանս բերանոյ իմոյ. երկիր պագից 'ի տաճար սբ քո, և խոստովան եղէց անուա՛ն քում. վասն ողորմութեան՝ և ճշմարտութե քոյ։

Մեծ արարեր յա՟մի զանուն սբ քո. յորում աւուր կարդամ առ քեզ. վաղվաղակի լուր ինձ, և բազում արասցես զզօրութիւնս յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի. զի լուա՛ն զբանս բերանոյ քոյ. և օ՛րհնեսցեն զճանապարհս քո։

Մեծ են փառք Տն՝ բարձր է Տր՝ զխոնարհս տեսանէ. և զբարձունս 'ի հեռաստանէ ճանաչէ։

Եթէ գնացից ես ի մէջ նեղութեանց. կեցուսցես զիս ՚ի բարկութենէ թշնամւոյն:

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո. և Տէր հատուսցէ ընդ իմ:

Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Տուն. 8:

՚Ի կատարած Դաւթի:

ՃԼԸ:

Տէր փորձեցեր զիս՝ և ծանեար զիս. դու ծանեար զնստելն իմ. և զյառնելն իմ:

Դու միտ առեր զխորհուրդս իմ ՚ի հեռաստանէ. զշաւիղս իմ և զվիճակս իմ դու քննեցեր. և զամենայն ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր. զի ոչ գոյ նենգութի ՚ի լեզուի իմում:

Ահա դու Տէր ծանեար զյետինս իմ

իմ եւ զառաջինն իմ. դու ստեղծեր
զիս, եւ եդիր զձեռն քո ՚ի վր̃ իմ։
Սքանչելի եղեւ գիտութիւն քո
յինէն. զօրացաւ՝ եւ ոչ հանդար
տեմ նմա։
Ո՞ երթայց ես յոգւոյ քումմէ.
կամ յերեսաց քոց ես յո՛ փախնեայց։
Եթէ ելանեմ յերկինս՝ դու անդ
ես. եւ եթէ իջանեմ ՚ի դժոխս՝
եւ անդ մօտ ես։
Եթէ առնից զթեւս իմ ը̃ առաւօտս.
եւ բնակեցայց յեզերս ծովու։
Սակայն եւ անդ ձեռն քո առաջ
նորդեսցէ ինձ. եւ աջ քո ըն
կալցի զիս։
Ասացի. խաւար ուրեմն արդեօք
ծածկեաց զիս. կամ գիշեր փոխա
նակ լուսոյ փափկութեան իմոյ։
Խաւարն ՚ի քէն ոչ խաւարեսցի.
եւ գիշերն որպէս տիւ լուսաւոր
եղիցի. եւ խաւար նորա որպէս
զլոյս նորա։
Դու ստացար զերիկամունս իմ.
եւ ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ։
Խոստովան եղէց քեզ Տր̃՝ զի
ահեղ

ահեղ և սքանչելի եմ. սքանչելիք
են գործք քո. և անձն իմ ծա
նեաւ յոյժ:
Ո՛չ թաքեաւ ոսկր իմ ՚ի քէն՝
զոր արարեր ՚ի ծածուկ. և կար
զօրութե̄ իմոյ ը̄ ստորինս երկրի:
Զանգործս իմ տեսին աչք քո.
և ՚ի գիրս քո ամենեքեան գրեցան:
՚Ի տուէ մոլորեցան. և ոչ ոք էր՝
որ առաջնորդէր նոցա:
Ինձ յոյժ մեծարոյք եղեն բարե
կամք քո Ա̄ծ. և յոյժ զօրացան
իշխանք նոցա:
Թուեցի զնոսա՝ և քան զաւազ
բազմացան. զարթեայ՝ և արդ
ընդ քեզ եմ:
Թէ սպանանես զմեղաւորս Աս
տուած. արք արեան ՚ի բաց ե
ղերուք յինէն:
Ի հակառակութե̄ և ՚ի նախանձ
առցեն ինանիր զքաղաքս քո:
Զատելիս քո Տ̄ր ատեցի. և ՚ի վե
րայ թշնամեաց քոց մաշեցայ:
Կատարելութե̄ կատարեալ ատեցի
զնոսա. և եղեն ինձ թշնամիք:
Փոր

Փորձեա՛ զիս Ա՟Ծ՝ և ծանիր զսը-
սիրտ իմ. քննեա՛ զիս՝ և ծանիր
զշաւիղս իմ. և տես թէ իցեն ա-
նօրէնութիւնք ՚ի ճանապարհս
իմ. և առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանա
պարհս քո յաւիտենից:

Տուն. 22:

՚Ի կատարած Սաղմոս Դաւթի:
ՃԼԹ:

Ապրեցո՛ զիս Տ՟Ր ՚ի մարդոյ չարէ.
յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս:
Որ խորհեցան զանօրէնութիւն ՚ի
սիրտս իւրեանց. զօր ամ պատրաս
տեցան ՚ի պատերազմ:
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս
զօձի. և թոյնք իժից ՚ի ներքոյ
շրթանց նոցա:
Պահեա՛ զիս Տ՟Ր ՚ի ձեռաց մե-
ղաւորի. և ՚ի մարդոյ չարէ փըր
կեա՛ զիս:
Խորհեցան խափանել զգնացս իմ.
թաքուցին ամբարտաւանք զորո
գայթ ինձ:
Լարս ձգեցին յորոգայթ ոտից
իմոց.

իմոց. շուրջ զշաւղօք իմովք եղեն
ինձ զգայթակղութիւն:
Ասացի Տր՝ ԱԾ իմ ես դու.
ունկնդիր Տր ձայնի աղօթից իմոց:
Տր՝ Տր զօրութիւն փրկութեան
իմոյ. հովանի գլխոյ իմոյ յաւուր
պատերազմի:
Մի՛ մատներ զիս Տր ՚ի ցանկութենէ
մեղաւորաց. ոյք խորհեցան վասն
իմ, մի՛ ընդվայր հարկաներ զիս:
Զի մի երբէք բարձրասցին. և
խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին.
վասնզի կատարածի նոցա՝ վաս
տակ շրթանց իւրեանց ծածկես
ցէ զնոսա:
Արկցես ՚ի վերայ նոցա զկայծա
կունս հրոյ. և կործանեսցես զնս ՚ի
տառապանաց մի կարասցեն կեալ:
Մարդոյ լեզուանւոյ մի յաջողես
ցի ՚ի վերայ երկրի. զայր մեղաւոր,
չարիք իւր որսասցեն ՚ի կորուստ:
Ծանեայ՝ զի առնես Տր զդատաս
տանս աղքատի. և իրաւունս տը
նանկի:
Արդարք գոհասցեն զանուանէ
քումմէ

քումմէ. և բնակեսցեն ուղիղք ա-
ռաջի երեսաց քոց։

Տօնի։ 15։

’Ի չափաւորած Սաղմոս Դաւթէ։

ՃԽ։

Տէր կարդացի առ քեզ՝ և լուր
ինձ. նայեաց ’ի ձայն աղօթից
իմոց ’ի կարդալ իմում՝ առ քեզ։
Ուղղիղք եղիցին աղօթք իմ որպէս
խունկ առաջի քո Տէր. համբարձ
ձումն ձեռաց իմոց պատարագ ե-
րեկոյի։
Դիր Տէր պահապան բերանոյ ի-
մում. և դուռն ամուր շրթանց ի-
մոց. զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բա
նիւք չարութեան։
’Ի պատճառել զպատճառս մեղաց
ընդ մարդս, որք գործեն զանօրէ
նութիւն. և ոչ եղէց կցորդ ընտ
րելոց նոցա։
Խրատեսցէ զիս արդարն ողորմու
թեք՝ և յանդիմանեսցէ զիս.
իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ
իմ. և աղօթք իմ ըստ կամաց նց

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց,
և քաղցրասցին:

Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի սփռեալ է 'ի վերայ երկրի. ցրուեցան ոսկերք նց մերձ 'ի դժոխս:

Առ քեզ Տր Տր՝ են աչք իմ. 'ի քեզ յուսացայ. մի հաներ զհոգի յինէն:

Պահեա զիս յորոգայթէ՝ որ թաքուցան ինձ. 'ի գայթակղութենէ գործողին զանօրէնութի:

Անկցին 'ի ցանցս նոցա մեղաւորք. միայն եմ ես՝ մինչև անցից:

Տունք: 10:

Իմաստութեան Դաւթի. աղօթք 'ի ժամանակին զի էր նա յայրի անդ:

ՃԽԱ:

Ձայնիւ իմով ես առ Տր կարդացի. ձայնիւ իմով զՏէր աղաչեցի:

Սփռեցից առաջի Տն զաղօթս իմ. և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից:

Ի նուա

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ՝
դու Տր՟ ծանեար զշաւիղս իմ. ՚ի
ճանապարհի՝ յոր գնայի, թաքու-
ցին ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ տեսանէի. և ոչ ոք
էր՝ որ ճանաչէր զիս. կորեաւ
յինէն փախուստ իմ. և ոչ գտաւ
խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ Տր՟. և ա-
սացի, դու ես յոյս՝ և բաժին իմ
յերկրին կենդանեաց։

Նայեաց Տր՟ յաղօթս իմ. զի ես
խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս
՚ի հալածչաց իմոց՝ զի հզօրք ե-
ղեն քան զիս։

Տր՟ հան ՚ի բանտէ զանձն իմ.
գոհանամ զանուանէ քումմէ։

Ինձ սպասեն արդարք. մինչև հա
տուցես ինձ։

Տունք. 9։

Սաղմոս Դաւթի ի ժամանակի զի հա
լածեաց զնա Աբիսողոմ որդի նորա.

ՃԽԲ.

Տէր լուր աղօթից իմոց.
ունկն դիր խնդրու
ածոց իմոց ճշմար
տութեամբ քով։

Լուր ինձ արդարութե՟ քով. և մի
մտաներ ՚ի դատաստան ընդ ծա
ռայի քում. զի ոչ արդարանայ ա
ռաջի քո ա՟մ կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ.
խոնարհ արար յերկիր զկեանս իմ.
և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս
մեռեալս յաւիտենից

Ձանձրացաւ յիս հոգի իմ. և
սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս.
խորհեցայ յա՟մ գործս քո. յարա
րածս ձեռաց քոց խորհեցայ. և
համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպ՟ երկիր ծարաւի է
առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տ՟ր,
զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մ՛ի դարձուցանէր զերեսս քո յի
նէն. նմանեցիմ այնոցիկ՝ որք իջա
նեն 'ի գուբ։
Լսելի արա ինձ յառաւօտու զո
ղորմութիւնս քո. զի ես 'ի քեզ
Տր յուսացայ։
Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր գնա
ցից. զի առ քեզ Տր համբարձի
զանձն իմ։
Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց
Տր. զի զքեզ ապաւէն ինձ ա-
րարի։
Ուսո՛ զիս առնել զկամս քո. զի
դու ես Ած իմ
Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ 'ի յերկիր ուղիղ։
Վասն անուա՛ն քո Տր կեցուս
ցես զիս. արդարութբ քով հան
ցես 'ի նեղութե զանձն իմ։
Ողորմութբ քով սատակեսցես
զթշնամիս իմ. և կորուսցես զա
մենայն նեղիչս անձին իմոյ. զի ես
ծառայ քո եմ

Սաղմոս Դաւթի. առ Գողիաթն։

ՃԽԳ։

Օրհնեալ Տէր Աստուած իմ. որ ուսոյց զձեռս իմ 'ի պատերազմ. և զմատունս իմ 'ի ճակատամարտ։

Ողորմութիւն իմ, և ապաւէն իմ. օգնական իմ, և փրկիչ իմ. ապաւէն իմ, և ես յուսամ 'ի նա. ո՛ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև։

Տէր ո՞վ է մարդ՝ զի յայտնեցար դու նմա. կամ որդի մարդոյ՝ թէ համարիս ինչ զնա։

Մարդ նանրութեան նմանեցաւ. և աւուրք նորա որպէս հովանի անցին։

Տէր խոնարհեցո՛ զերկինս և էջ. մերձեցիր 'ի լերինս՝ և ծխեսցին։

Փայլատակեա՛ զփայլատակունս քո և խռովեա՛ զնոսա. առաքեա՛ զնետս քո՝ և ցրուեա՛ զնոսա։

Առաքեա՛ զձեռն քո 'ի բարձանց. և փրկեա՛ զիս 'ի ջուրց բազմաց. և 'ի ձեռաց որդւոց օտարաց.

Որոց բերանք խօսեցան զնանրութիւն. և աջ նոցա աջ է մեղաց։

Աս

Ա՟Ծ յօրհնութիւն նոր օրհնեցից
զքեզ. տասնաղեաւ սաղմոսարա
նաւ սաղմոս ասացից քեզ։

Ո՛ տայցէ զփրկութիւն թագաւո
րաց մերոց. որ փրկելոյ իցէ զդա
ւիթ ծառայ իւր՝ 'ի սրոյ չարէ։

Փրկեա՛ զիս, եւ ապրեցո՛ զիս եւ 'ի
ձեռաց որդւոց օտարաց։

Որոց բերանք իւրեանց խօսեցան
զնանրութ՟ի. եւ աջ նց աջ է մեղաց։

Որոց ուստերք իւրեանց որպէս նո
րատունկք հաստատեալք են 'ի
մանկութենէ իւրեանց. դստերք
նց զարդարեալք եւ պաճուճեալք
'ի նմանութ՟ի տաճարի։

Շտեմարանք նց լի են եւ բղխեն
'ի միմեանս. խաշինք նոցա բազ
մածինք են՝ եւ բազմանան 'ի գը
նացս իւրեանց. եւ անդեայք նոցա
պարարտք են։

Ո՛չ գոյ խրամատութիւն ցանկոյ
նոցա. եւ ո՛չ աղաղակ 'ի հրապա
րակս նոցա։

Ե.րդ երանեցին ժողովրդեան. ո_
րոյ այս այսպէս է. երանի է

ժո

ժողովրդեան՝ որոյ Տ̅ր̅ Ա̅ծ̅ է նմա։

Տաղս. 16։

## Օրհնութեանց Սաղմոս Դաւթի։

## ՃԽԴ։

Բարձր առնեմ զքեզ Ա̅ծ̅ իմ, եւ
թագաւոր իմ. եւ օրհնեմ զա
նուն քո յաւիտեան՝ եւ յաւիտեանս
յաւիտենից։

Զօրհանապազ օրհնեցից զքեզ.
եւ գովեցից զանուն քո յաւիտեան՝
եւ յաւիտեանս յաւիտենից։

Մեծ է Տ̅ր̅՝ եւ օրհնեալ է յոյժ.
եւ մեծութե̅ նորա ոչ գոյ չափ։

Ազգ եւ ազգ գովեսցեն զգործս
քո. եւ զզօրութի̅ս քո պատմեսցեն։

Զմեծ վայելչութիւն փառաց
սրբութեան քոյ խօսեսցին. եւ զս
քանչելիս քո պատմեսցեն։

Զզօրութի̅ ահի քոյ ասասցեն. եւ
զմեծութիւնս քո պատմեսցեն։

Զյիշատակ բազում քաղցրու
թեան քոյ բղխեսցեն. եւ արդարու
թեամբ քով ցնծասցեն.

Գթած՝ ողորմած է Տ̅ր̅. երկայ
նամիտ՝ եւ բազմողորմ։ Քաղցր

Քաղցր է Տր̃ առ ամենեսեան.
և գթութիւն նորա 'ի վերայ ամե
նից արարածոց իւրոց։
Խոստովան եղիցին առ քեզ Տր̃
ամենայն գործք քո. և սուրբք
քո օրհնեսցեն զքեզ։
Զփառս արքայութեան քոյ ասաս
ցեն. և զզօրութի̃ս քո պատմեսցեն։
Ծանուցանել որդւոց մարդկան զզօ
րութիւնս քո. և զփառս մեծ վայ
ելչութե̃ արքայութեան քոյ։
Արքայութիւն քո արքայութիւն
ամենից յաւիտենից. և Տէրութի̃
քո յազգէ մինչև յազգ։
Հաւատարիմ է Տր̃ յա̃մ բանս
իւր. և արդար է յա̃մ գործս իւր։
Հաստատէ Տր̃ զա̃մ գայթակղեալս.
և կանգնէ զա̃մ գլորեալս։
Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան.
և դու տաս կերակուր նոցա 'ի
ժամու։
Բանաս զձեռն քո. և լցուցանես
զամենեսեան քաղցրութե̃ կամօք
քովք։
Արդար է յա̃մ ճանապարհս իւր.

և

և սուրբ է յամենայնի գործս իւր։

Մերձ է Տէր առ ամենեսեան՝ որք կարդան առ նա. առ ամենեսեան՝ որք կարդան առ նա ճշմարտութբ։

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր. աղօթից նոցա լուէ՝ և կեցուցանէ զնոսա։

Պահէ Տէր զամենեսեան՝ որք սիրեն զնա. և զամենայն մեղաւորս սատակէ Տէր։

Օրհնութիւն Տեառն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ամ կենդանի զանուն սբ նորա յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Տուն. 22։

Շեշտեալ. անգեղ և պարարեալ։

ՃԽԵ։

Օրհնեա անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ի կեանս իմ. սաղմոս ասացից Այ իմոյ մինչև եմ ես։

Մի յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկութիւն ի նոս։

Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ եւ դարձ
ցին անդրէն ՚ի հող. եւ յայնմ աւ
ուր կորիցեն ամ խորհուրդք նց։
Երանի ազգի որոյ Տր Այ յակո
բայ օգնական է նմա. եւ յոյս նո
րա ՚ի Տր Այ է։
Արարող երկնից եւ երկրի. ըզ
ծով, եւ զամ որ ՚ի նոսա։
Պահէ զճշմարտութիւն յաւի
տեան. եւ առնէ իրաւունս զրկելոց։
Տայ հաց քաղցելոց. եւ արձակէ
զկապեալս Տր։
Տր բանայ զաչս կուրաց. եւ կանգ
նէ զգլորեալս Տր։
Տր սիրէ զարդարս, եւ Տր պահէ
զպանդուխտս. զորբս եւ զայրիս
ընդունի Տր. եւ զճանապարհս
ամպարշտաց կորուսանէ։
Թագաւորեսցէ Տր յաւիտեան.
Այ քո սիոն յազգէ մինչեւ յազգ։

Տունք. 10։

Ալէլուիայ. անգեայ եւ զաքարիայ։

ՃԽԶ.

Օրհնեցէք զՏր՝ զի բարի է

սաղմոս. Ա.Ծ մերում քաղցր եղի-
ցի օրհնութիւն։
Շինէ զԵմ Տր. և զցրուեալսն
Իլի ժողովէ.
Բժշկէ զբեկեալս սիրտս. և պա-
տէ զամ վէրս նոցա.
Որ թուէ զբազմութիւն աստե-
ղաց. և զամենեսեան զնոսա յա-
նուանէ կոչէ.
Մեծ է Տր մեր՝ և մեծ է զօ-
րութիւն նորա. իմաստութեան
նորա ոչ գոյ բաւ։
Ընդունի զհեզս Տր. և խոնարհ
առնէ զամբարտաւանս մինչև
յերկիր.
Օրհնեցէք զԱ.Ծ խոստովանու-
թեամբ. սաղմոս ասացէք նմա
օրհնութեամբ։
Որ զգեցոյց զերկինս ամպովք. և
պատրաստ արար զանձրև իւր յեր-
կիր։
Բուսոյց զխոտ ՚ի լերինս. և զդա-
լարի ՚ի ծառայութիւն մարդկան։
Ետ անասնոց կերակուր. ձա-
գուց ագռաւուց՝ որք կարդան
զնա։

Ո՛Չ

Ո՛չ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամեցաւ Տր̅. եւ ո՛չ ընդ երանս առն
հսկայի հաճեցաւ։
Այլ հաճեցաւ Տր̅ ընդ երկիւղածս իւր. եւ ընդ այնոսիկ՝ որք
յուսան յողորմութիւն նր̅։

Տունք. 12։

Ալէլուիայ. Անգեայ եւ զաքարիայ։

## ՃԽԷ։

Գովեա Երուսաղէմ զՏէր.
Եւ օրհնեա զԱծ̅ քո սիոն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց.
եւ օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։
Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղութիւն. պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նորա։
Տնէ զձիւն որպէս զասր. եւ զմէգ որպէս մոխիր ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
Առաքէ զբան իւր՝ եւ հալէ զնա. շնչեսցէ հողմ եւ գնասցեն ջուրք։

Որաս

Պատմէ զբանս իւր յակոբայ. զարդարութիւնս և զիրաւունս իւր Իսրայէլի
Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր. և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա:

Տուն. 10:

Աղօթ Ամբակումայ մարգարէին: Գ:

Տէր զլուր քո լուայ՝ և երկեայ. Տէր նայեցայ ՚ի գործս քո՝ և զարհուրեցայ:

՚Ի մէջ երկուց կենդանեաց ճանաչիս դու. ՚ի մերձենալ ամաց յայտնեսցիս. և ՚ի հասանել ժամանակի երևեսցիս:

՚Ի խռովել անձին իմոյ. ՚ի ժամանակի բարկութեան՝ զողորմութիւն յիշեսցես:

Աստուած ՚ի հարաւոյ եկեսցէ. և սուրբն ՚ի փառան լեռնէ:

Ծածկեսցեն երկինք զվայելչութիւն փառաց նորա. և օրհնութեամբ նորա լցան տիեզերք:

Պառաղայթք որպէս 'ի լուսոյ հա-
տան 'ի նմանէ. և եղջիւրք 'ի ձե-
ռին նորա դատան. և անդ հաստա-
տեցաւ զօրութիւն փառաց նորա:

Յերեսաց նր՟ ելցեն հարուածք.
և զհետ շաւղաց նորա, երթիցեն
մեծամեծք 'ի թռչնոց:

Եկաց և չափեաց զերկիր. հայե-
ցաւ և դիտեաց զհեթանոսս:

Լերինք հալեցին՝ և բլուրք
վատնեցին. ճանապարհք՝ որք 'ի
սկզբանէն էին կուրացին. և 'ի
նմանէ դողացին ա՟մ երկիր:

Տեսի զբանակս քուշացւոց. խռ-
ովեցան բնակիչք վրանացն մա-
դիամու:

Մի՞ թէ 'ի վերայ գետոց բարկա-
ցիր դու Տ՟ր. կամ սրտմտութիւն
քո 'ի վր՟ գետոց. կամ բարկութի՟
քո 'ի վր՟ ծովու:

Ելեր դու 'ի կառս քո՝ հեծելու-
թիւնդ քո փրկութիւն եղև յե-
լանելն քո:

Զարթեաւ աղեղն քո 'ի նետս կա-
պարճից քոց. արբեցուցեր զգետս

ցրուեցեր զերկիր. և դադարեցուցեր ՚ի սաստկութենէ անձրևի, որք անցանէին ընդ սա։

Ընդունողք աղաղակեցին մեծապէս. լոյս փայլման արեգականն արգելաւ. և ծագումն լուսնին դադարեցաւ։

Որպէս ՚ի նշոյլս սլաքաց քոց գնասցես. և որպէս ՚ի լոյս փայլատակման սրոյ քոյ։

Բարկութեամբ զարթիցես ՚ի վերայ երկրի. և դողութ͞բ կացցես զհեթանոսս։

Երևեցար ՚ի փրկութիւն ժողովրդեան քոյ, ՚ի փրկել զընտրեալս քո.

Նետաձիգ եղեր ՚ի գլուխս մարդկան ամբարշտաւանից. և մինչև յանդունդս ծովու ընկղմեցան։

Խնդրեցեր զվրէժ զօրութ͞բ քով ՚ի զօրագլխացն մեղաւորաց. որք յուսացեալք էին յանդգնութ͞ե իւրեանց. զի կերան զաղքատն ՚ի գաղտնիս։

Առաքեցեր ՚իմ͞ջ ծովու զերիվարս քո. և խռովեցան յաղթ ջուրք անդնդոց։

Կացի ես՝ եւ դեղեան աղիք իմ 'ի
ձայնէ բերանոյ իմոյ. եմուտ դո-
ղումն յոսկերս իմ. եւ ես յանձն
իմ խռովեցայ:

Օ այս պահեսցես յաւուր նեղու-
թեան, ածել 'ի վերայ ազգի ա-
մենայնի. որք մարտնչին ընդ ժո-
ղովրդեան քում:

Թզենի ոչ տացէ զպտուղ իւր. եւ
յայգւոջ բեր մի՛ գտցի. ձիթե-
նիք սնասցին. եւ երկիր մի՛ բու-
սուսցէ զդալար:

Պակասեսցին հօտք 'ի ճարակաց.
եւ եզինք մի՛ գտցին առ մսուրս:
Ես 'ի Տր յուսացայ ցնծացայց.
եւ ուրախ եղէց յԱծ փրկիչ իմ:
Տր Տր ես ինձ զզօրութիւն, եւ
կացոյց զոտս իմ 'ի հաստատու-
թեան 'ի վերայ պարանոցի թշնա-
մւոյն կացոյց զիս. եւ հանգոյց զիս
երագ երագ:

Տօնէ. 26:

Լուր մեզ Տր՝ լուր մեզ Ածայ
նով ողորմութեամբ՝ եւ գթու-
թեամբ:

Թէ քով խնայեամ յարարածս քո.
Մ՝արդասէր Տր. վն որբոց։

Ռ. շէշուեաց. անգեաց և շփարեաց.

Ղ՛ԽՐ։

Օրհնեցէք զՏր յերկնս. օրհնեցէք զնա ՚ի բարձունս.

Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա։

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք, և լոյս։

Օրհնեցէք զնա երկինք երկնից. և ջուրքն՝ որ ՚ի վերոյ քան զերկինս՝ օրհնեցէք զանուն Տն։

Զի նա ասաց՝ և եղեն. հրամայեաց՝ և հաստատեցան։

Կացոյց զնս յաւիտեանս յաւիտենից. սահման եդ՝ և ոչ անցանեն։

Օրհնեցէք զՏր յերկրէ՝ վիշապք՝ և ամենայն խորք։

Հուր և կարկուտ. ձիւն և սառն.

հողմ

հողմ մրրկի՝ որք առնեն զբան
նորա։

Լերինք և ամենայն բարձունք.
ծառք պտղաբերք և ամ̃ մայրք.
Գազանք՝ և ամենայն անասունք.
սողունք՝ և ամենայն թռչունք թե
ւաւորք։

Թագաւորք երկրի՝ և զօրք իւ
րեանց. իշխանք՝ և ամենայն դա
տաւորք երկրի։

Երիտասարդք՝ և կուսանք. ծերք՝
և տղայք. օրհնեսցեն զանուն տն̃։

Բարձրացաւ անուն նորա միայն.
խոստովանութիւն նմա յերկինս
և յերկրի։

Բարձր առնէ Տր̃ զեղջիւր ժո
ժովրդեան իւրոյ. օրհնութիւն
յամ̃ սրբոց նորա. յորդւոյն իէլ̃,
ժողովուրդ՝ որ մերձ է առ Տր̃։

Տուն. 14։

## Ալէլուիա։ ՃԽԹ։

Օրհնեցէք զՏր̃ յօրհնութիւն
նոր. օրհնութիւն նմա յեկե
ղեցիս սրբոց։

Ուրախասցի Իէլ յարարիչն իւր. որդիք Սիօնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց։

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ. սաղմոսիւք՝ և օրհնութեամբ սաղմոս ասասցեն նմա։

Հաճի Տր ընդ ժողովուրդ իւր. և բարձր արասցէ զհեզս 'ի փրկութեան։

Պարծեսցին սուրբքն փառօք՝ և ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց. և բարձր արասցեն զԱծ բերանօք իւրեանց։

Սուր երկսայրի եւ 'ի ձեռս նոցա. առնուլ զհատուցումն 'ի հեթանոսաց. յանդիմանութիւն ամենից ժողովրդոց։

'Ի կապել զթագաւորս նոցա կապանօք. զզօրավարս նոցա ձեռնկապօք երկաթեօք։

Առնել նոցա դատաստան 'ի գրոց. փառք այս են ամենից սրբոց նր։

Տուն. Ց։

## Սաղմոս. ՃԾ.

Օրհնեցէք զԱստուած ՚ի սրբ
բութեան նորա. օրհնեցէք
զնա ՚ի հաստատութեան զօրու
թեան նորա:
Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան
նորա. օրհնեցէք զնա ՚ի բազում
մեծութեան նորա:
Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնու
թեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք
և օրհնութեամբ.
Օրհնեցէք զնա ցնծութեամբ՝
գովեցէք զնա ուրախութեամբ:
Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղ
ցունս. օրհնեցէք զնա ՚ի բար
բառ լսելիս:
Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհու
թեան. ամենայն հոգիք օրհնէ
ցէք զՏՐ:

Տուն. 6:

Սոյս սաղմոս ինքնագիր Դաւթի. է ար
տաքոյ թուոց. 'ի ժամանակին՝ զի եղ նո
նահատակ ընդդէմ Գողիաթու. ասաղ
սատանայից. եւ ամ զօրացն Իսրայէլի.

Փոքր էի ես յեղբարս իմ. և
կրտսեր 'ի տան հօր իմոյ. ա
րածէի զխաշինս հօր իմոյ.
Ձեռք իմ արարին զսաղմոսարան.
և մատունք իմ կազմեցին զգործի
օրհնութեան.
Իսկ արդ՝ ո՛ պատմեսցէ զայս Տե
իմում. ինքնին Տէր ամենայնի՝ լու
ցէ զամենայն.
Նա առաքեաց Տէր զհրեշտակ իւր
և համբարձ զիս 'ի հօտէ խաշանց
հօր իմոյ. և էօծ զիս յօծութեան իւ
ղոյ իւրոյ.
Եղբարք իմ մեծամեծք և գեղե
ցիկք. և ո՛չ հաճեցաւ ընդ նոսա Տէր.
Ելի ես ընդդէմ այլազգւոյն և
նզովեաց զիս կուռս նոցա. հանի զսու
սեր 'ի նմանէ և հատի զգլուխն նո
րին. և բարձի զնախատինս յոր
դւոցն Իսրայէլի.

Օրհնութիւն երից մանկանցն.
Դանիէլի. Գ.



րհնեալ ես Տ՟ր Ա՟ծ հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։

Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ. արդար ես դու Տ՟ր և ամ՟ գործք քո ճշմարիտք են։

Ճանապարհք քո ուղիղք են՝ և ամ՟ դատաստանք քո արդարք են։

Դատաստան արդարութեան ածեր ՚ի վերայ մեր՝ ըստ ամ՟ի. և զորինչ ածեր ՚ի վերայ մեր, և քաղաքին սրբոյ հարցն մերոց եղ՟մի։

Արդարութեամբ և յիրաւի ածեր զայս ամենայն ՚ի վերայ մեր՝ վասն մեղաց մերոց։

Անօրինեցաք՝ և յանցեաք ապստամբ լինել ՚ի քէն. մեղաք յամենայնի՝ և պատուիրանաց քոց, մեք ոչ անսացաք։

Ո՛չ պահեցաք և ոչ արարաք՝ որ

պս

պատուիրեցեր դու մեզ. զի զպա
րխս գտցուք մեք 'ի քէն.
Արդ՝ զամենայն զոր արարեր՝ և
զորինչ ածեր 'ի վերայ մեր արդար
դատաստանաւ արարեր:
Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնա
մեաց մերոց. անօրինաց՝ խոտեց և
ապստամբողաց:
Ի ձեռս թագաւորի անօրինի և
չարի. քան զամենայն երկիր մատ
նեցեր զմեզ:
Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բա
նալ զբերանս մեր. զի յամօթ՝ և
նախատինք եղաք ծառայից քոյ և
պաշտօնէից:
Տէ՛ր մի՛ մատներ զմեզ իսպառ վա՛ս
անուան քո. մի՛ ցրեր զուխտս քո.
և մի՛ հեռացուցաներ զողորմու
թիւնս քո 'ի մէնջ:
Վասն աբրահամու սիրելոյ քո՝
իսահակայ ծառայի քոյ՝ և իսրայէ
լի սրբոյ քոյ:
Ոյք ասացեր նոցա՝ և ասացեր. բազ
մացուցից զզաւակ ձեր որպէս զաս
տեղս երկնից բազմութեամբ. և
որ

որպէս զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ Տէ՛ր նուա՛ղեցաք մեք քան
զա̃մ ազգս. եւ եմք տառապեալք
յամենայն երկրի. այսօր վասն մե
ղաց մերոց։

Ո՛չ գոյ 'ի ժամանակիս յայսմիկ իշ
խան՝ մարգարէ եւ առաջնորդ. ո՛չ
ողջակէզք պատարագաց՝ եւ ո՛չ
խունկք օրհնաց. եւ ո՛չ տեղի պա
տարագս մատուցանելոյ առաջի
քոյ. եւ զողորմութիւն գտանել
'ի քէն։

Այլ անձամբք խոնարհեալք եւ հո
գւով տառապանաց. ընդունելի
լիցուք մեք՝ որպէս զողջակէզս խոյ
ոց՝ եւ զուարակաց. եւ որպէս զբիւ
րաւորս գառանց պարարտաց.

Այնպէս ընդունելի լիցին պատա
րագք մեր այսօր առաջի քոյ. զի
կատարեալք գտցուք զկնի քոյ. եւ
չիք ամօթ յուսացելոցս 'ի քեզ։

Եւ արդ՝ գամք զհետ քոյ ամե
նայն սրտիւք մերովք. երկնչիմք
'ի քէն՝ եւ խնդրեմք զերեսս քո։
Տէ՛ր մի յամօթ առներ զմեզ։

Այլ

ԱՅԼ արա՛ առ մեզ ըստ հեզութ՟են
քում, և ըստ բազում ողորմութ՟են
քում. փրկեա՛ զմեզ վասն սքանչե-
լեաց քոց Տ՟ր. և փառաւորեսցի
անուն քո յաւիտեան։

ՅԱմօթ լիցին ամենեքեան՝ որք
չարչարեն զծառայս քո. ամաչե-
ցեալք լիցին բռնութիւնք նոցա.
և ամենայն զօրութիւնք նոցա խոր-
տակեսցին։

Եւ ծանիցեն՝ զի դու ես Տ՟ր Ա՟ծ
միայն. որ փառաւորեալդ ես 'ի վե-
րայ ամենից տիեզերաց։

ՕՐհնեալ ես դու Տ՟ր Ա՟ծ հարցն
մերոց. գովեալ և առաւել բարձ-
րացեալ յաւիտեանս։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փա-
ռաց քոց. գովեալ և առաւ։

ՕՐհնեալ ես 'ի տաճարի փառաց
սրբութ՟են քոյ. գովեալ և։

ՕՐհնեալ ես 'ի վերայ աթոռոյ
արքայութեան քոյ. գով։

ՕՐհնեալ ես՝ որ նայիս 'ի քրո-
բէս՝ և հայիս յանդունդս. գո։

ՕՐհնեալ ես 'ի վերայ հաստատու-

թն երկնից · գովեալ և առաւել :
Օրհնեցէք ամ գործք Տն զՏր·
օրհնեցէք՝ և բարձրարարէք զնա
յաւիտեանս :
Օրհնեցէք երկինք զՏր· օրհ :
Օրհնեցէք հրեշտակք Տն· և
ջուրք որ ՚ի վերոյ երկնից զՏր :
Օրհնեցէք զօրութիւնք Տն՝ արե
գակն և լուսին զՏր· օրհ :
Օրհնեցէք աստեղք երկնից՝ անձ
րևք և ցօղք զՏր· օրհնե :
Օրհնեցէք ամ հողմք՝ հուր և
ջեր զՏր· օրհնեցէք և :
Օրհնեցէք ցուրտ և տօթ՝ ցօղ
և ձիւնաբեր զՏր· օրհնե :
Օրհնեցէք սառն և պարզ՝ ե
ղեամն և ձիւն զՏր· օրհ :
Օրհնեցէք տիւք և գիշերք՝ լոյս
և խաւար զՏր· օրհնե :
Օրհնեցէք ամպք և փայլատա
կունք՝ և երկիր · զՏր :
Օրհնեցէք լերինք և բլուրք՝ և
ամ բոյսք երկրի զՏր· օրհն :
Օրհնեցէք աղբիւրք, ծովք և
գետք զՏր· օրհնեցէք և :

Օրհնեցէք կէտք և ամենայն կայտառք՝ որք ի ջուրս, և թռչունք երկնից զՏր. օրհնեցէք և:

Օրհնեցէք գազանք՝ և անասունք և որդիք մարդկան զՏր. օրհ:

Օրհնեսցէ Իէլ զՏր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա՝ ի յաւիտեան:

Օրհնեցէք քահանայք զՏր. օր:

Օրհնեցէք ծառայք Տն զՏր:

Օրհնեցէք անձինք և շունչք արդարոց զՏր. օրհնեցէք:

Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏր. օրհնեցէք:

Օրհնեցէք Անանիա՝ Ազարիա՝ և Միսայէլ զՏր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս:

## Օրհնութի Մարեմայ Ածածնին. Գ [illegible]. Ա:

Մեծացուսցէ անձն իմ զՏր. և ցնծասցէ հոգի իմ Աստուածով փրկչաւ իմով:

Այցաբար՝ ի վերայ խոնարհութե

աղախ


A
B
C
D
E
F
H

աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երա
նեսցեն զինձ ամենայն ազգք.
Զի արար ընդ իս զմեծամեծս հզօրն.
և սուրբ է անուն նորա.
Ողորմութիւն արար յազգս յազգս
երկիւղածաց իւրոց. և արար զզօ
րութիւն բազկաւ իւրով.
Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մը
տաց սրտից. և քակեաց զհզօրս
յաթոռոց.
Ի խոնարհս բարձրացոյց. զկա
րօտս ելից բարութեամբ. և զմեծա
տունս արձակեաց ունայնս.
Պաշտպանեաց իսրայէլի ծառայի
իւրոյ. յիշելով զողորմութի իւր.
Որպէս խօսեցաւ առ հարսն մեր.
ընդ աբրահամու՝ և զաւակի նորա
՚ի յաւիտեան.

Օրհնաբանեալ [illegible]
Ցօղանման [illegible] Պ
[illegible] Ի.

Օրհնեալ Տր Այ իսրայէլի
որ յայցել. և արար զփրկու
թիւն ժողովրդեան իւրոյ.
Յարոյց մեզ եղջիւր փրկութե
՚ի տա

՚ի տանէ դաւթի ծառայի իւրոյ.
որպէս խօսեցաւ բերանօք սրբոցն,
որք յաւիտենից մարգարէք էին։
փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց.
և ՚ի ձեռաց ա̃մ ատելեաց մերոց.
Առնել ողորմութիւն առ հարս
մեր. և յիշել զկտակարանս սրբու
թեան իւրոյ.

Զերդումն, զոր երդուաւ աբրա
համու հօր մերում տալ մեզ. ա-
ռանց երկիւղի զփրկութիւն ՚ի
թշնամեաց մերոց.

Պաշտել զնա սրբութեամբ և ար
դարութեամբ առաջի նորա. զա
մենայն աւուրս կենաց մերոց.

Եւ դու մանուկ, մարգարէ բարձ
րելոյն կոչեսջիր. դնասցես առա
ջի Տեառն. պատրաստել զճանա
պարհս նորա.

Տալ զգիտութիւն փրկութեան
ժողովրդեան իւրոյ. ՚ի թողու
թիւն ա̃մ մեղաց մերոց.

Վասն գթոյ ողորմութեան Տ̃ն
Աստուծոյ մերոյ. որով երևե
ցաւ մեզ արեգակն ՚ի բարձանց.

լու

լուսաւոր առնել զխաւար մեր։
Նուաճել զլոյս 'ի վերայ այնոցիկ
որք նստէին 'ի խաւարի և 'ի ստո-
ւերս մահու. ուղղել զոտս մեր
'ի ճանապարհս խաղաղութեան։

## Աղօթք Սեմեոնի ծերունւոյն։
### Ղուկաս. Բ։

Արդ արձակես զծառայ քո Տէր
ըստ բանի քում 'ի խաղաղու-
թիւն. զի տեսին աչք իմ զփր-
կութիւն քո. զոր պատրաստեցեր
առաջի ամենից ժողովրդոց։
Լոյս 'ի յայտնութիւն հեթանո-
սաց. և փառս ժողովրդեան քում
Իսրայէլի։

## Աղօթք Մանասէի թագաւորին.

Տ ամենակալ. Ա.Ծ աբրա-
համու՝ իսահակայ՝ յա-
կոբայ՝ և զաւակի նոցա
արդարոց։ ամենակալ Տր թող։
Որ արարեր զերկինս և զերկիր՝ և
զամ զարդ նոցա. ամն.

Որ

Որ կապեցեր զծով բանիւ հրա
մանի քոյ. փակեցեր զխորս, և
կնքեցեր ահաւոր և փառաւորեալ
անուամբ քով. ամէ։

Որ ամենայն ինչ սարսի և դողայ՝
յերեսաց ահի զօրութե քոյ. ամէ։

Անբաւ է մեծվայելչութի փա
ռաց սրբութեան քոյ. և սաստիկ
է բարկութիւն սպառնալեաց քոց
՛ի վերայ մեղաւորաց. անչափ և ան
քննելին են ողորմութիւնք աւե
տեաց քոց. ամենա։

Դու Տր բարձրեալ՝ գթած՝ եր
կայնամիտ՝ բազում ողորմ, և զղջ
ջանաս ՛ի վերայ չարեաց մարդ
կան. ամենակալ։

Դու Տծ՝ ոչ եդիր զապաշխարու
թիւն վասն արդարոցն աբրահա
մու՝ իսահակայ՝ և յակոբայ. որք
ոչ մեղան քեզ. ամէ։

Այլ եդիր զապաշխարութի վասն
իմ մեղաւորի. զի մեղայ աւելի
քան զաւազ ծովու. և բազմացան
անօրէնութիք իմ. ամէ։

Չեմ արժանի հայել՝ և տեսանել

զբարձ

զբարձրութիւնս երկնից. 'ի բազ-
մութենէ անօրէնութեան իմոյ. ա-
մենակալ Տէր թող:

Կորացեալ եմ ես' 'ի բռնութենէ
կապանաց երկաթից, եւ ոչ գոյ ինձ
հանգիստ. ամենա:

Բարկացուցի զսրտմտութիւն եւ զչար
առաջի քոյ արարի. կանգնեցի
զպատկեր' եւ բազմացուցի զցա
սումն. ամենակալ:

Եւ արդ' Տէր խոնարհեցուցանեմ
զծունկս սրտի իմոյ. եւ հայցեմ 'ի
քաղցրութէն քումմէ. ա:

Մեղայ Տէր' մեղայ, եւ զանօրէ
նութիւնս իմ ես ինձէն գիտեմ.
ամենակալ Տէր թող զմե:

Աղաչեմ եւ խնդրեմ 'ի քէն.
թող ինձ Տէր, թող ինձ. եւ մի
կորուսաներ զիս ընդ անօրէնու-
թեան իմոյ. ամենա:

Մի յաւիտեան բարկանար ինձ
Տէր' եւ մի յիշեր զչարիսն իմ. եւ
մի պարտաւորեր զիս ընդ իջելոյն
'ի ներքոյ երկրի չարեօք. ամենա
ալ Տէր թող զմեղս իմ:

Զի դու Ա՛ծ՝ Ա՛ծ ապաշխարո
ղաց ես. և յիս ցոյց զբարերա
րութիւնդ քո. զի անարժան եմ.
ամենակալ Տ՛ր Թող։

Կեցուսցես զիս ըստ բազում ողոր
մութեան քում. և օրհնեցից ըզ
քեզ զա՛մ աւուրս կենաց իմոց։

Զքեզ Տ՛ր օրհնեն ամենայն զօ
րութիւնք երկնից. և քո են
փառք յաւիտեանս։

Ա՛մէն։

Փառք Հօր և Որդւոյ և Հո
գւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ, և յաւիտեանս յա
ւիտենից։ Ամէն։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն Տ՛ր.
Թող ինձ զմեղս իմ։

Բազում ողորմ Տ՛ր՝ ողորմեաց
ինձ։

Ա՛ծ, քաւեա՛ զիս զմեղաւորս։

Արարիչ իմ և յոյս Ա՛ծ՝ գթայ
յիս 'ի մեղուցելայս ծառայս. և ո-
ղորմեաց ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի և միշտ
կոյս Ա՛ծածին Մարիամ. բարե

խօ

խօսեա՛ առ Տ՟ր վ՟ս իմ մեղաւորիս ։

Ամենայն սուրբք ԱԾ՟՝ բարեխօսեցէք առ Հայր՝ ՚ի յերկինս. վասն մեր մեղաւորացս ։

Ո՜վ Որդի ԱԾ՟ անոխակալ՝ ընկալ զաղաչանս մեր. զի ՚ի քեզ են ապաւինեալք անձինք մեր ։

Յաղթող զօրութեամբ՝ սուրբ և կենդանարար և պատուական խաչիւ քով Տ՟ր պահպանեա՛ զմեզ ։

Աղաչեա՛ Տ՟ր զհրեշտակ խաղաղութեան քոյ. որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս՝ ՚ի տուէ և ՚ի գիշերի ։

Եւ մարդասիրութեամբ քով յիշեա՛ զմեզ Տ՟ր՝ յիշեա՛ զմեզ. յորժամ գաս արքայութեամբ քով և ողորմեաց մեզ ։

Աղօթք ըն իւրաքանչիւրաց անձանց հաւատացելոց ՚ի Քս․ Որ արարեալ է Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի․



աւատով խոստովանիմ
և երկիրպագանեմ
քեզ՝ Հայր և Որդի
և սբ Հո գի. անեղ և անմահ
բնութիւն. արարիչ հրեշտակաց
և մարդկ ան և ամենայն եղե
լոց: ողորմեա քո արարածոց:
Հաւատով խոստովանիմ և երկիր
պագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս.
միասնական սբ երրորդութեան՝ և
մի Ա՟ծութիւն: Արարիչ լուսոյ՝
և հալածիչ խաւարի. հալածեա
՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և
զանգիտութեան. և լուսաւորեա
զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ. աղօ
թել քեզ ՚ի հաճոյս՝ և ընդունիլ
՚ի քէն զխնդրուածս իմ. և ողոր
մեաց ինձ բազմամեղիս:
Հայր երկնաւոր՝ Ա՟Ծ ճշմարիտ,
որ

որ առաքեցեր զորդիդ քո սիրելի
'ի խնդիր մոլորեալ ոչխարին։
Մ՛եղայ յերկինս և առաջի քո։
ընկալ զիս որպէս զանառակ որ
դին. և զգեցո ինձ զպատմուճանն
զառաջին, զոր մերկացայ մեղօք.
և ողորմեաց քո արա։
Որդի Ա՟յ՝ Ա՟ծ ճշմարիտ՝ որ խո
նարհեցար 'ի հայրական ծոցոյ, և
առեր զմարմին 'ի սրբոյ կուսէն
Մարիամայ, փասն մերոյ փրկու
թեան. խաչեցար և թաղեցար՝ և
յարեար 'ի մեռելոց՝ և համբար
ձար առ հայր։ Մ՛եղայ յերկինս
և առաջի քո. յիշեա զիս որպէս
զաւազակն՝ յորժամ գաս արքայու
թ՟բ քով. և ողոր։
Հոգի Ա՟յ՝ Ա՟ծ ճշմարիտ՝ որ
իջեր 'ի յորդանան և 'ի վերնա
տունն. և լուսաւորեցեր զիս մկր
տութեամբ սրբոյ աւազանին։
Մ՛եղայ յերկինս և առաջի քո.
մաքրեա զիս վերստին Ա՟ծայնով
հրով՝ քով. որպէս հրեղէն լեզո
ւօք զառաքեալսն. և ողոր։

Ա՟նեղ

նեղ ընութեն մեղայ քեզ՝ մտօք
մով. ք՝ հոգւով և մարմնով իմով.
ի յիշեր զմեղս իմ զառաւաջինս.
մ անուճանդ քում սրբոյ. և ող.
եսող ամենայնի, մեղայ քեզ.
որհրդով բանիւ և գործով. ջնջ
եա զձեռագիր յանցանաց իմոց՝
և գրեա զանուն իմ ՚ի դպրութե
կենաց. և ողորմեաց.
Ի՛. Ննող գաղտնատեաց մեղայ քեզ՝
ամեա և ակամայ՝ գիտութեամբ
անգիտութեամբ. թողութիւն
նորհեա մեղաւորիս. զի ՚ի ծննդե
ն աւազանին մինչև ցայսօր՝ մեղու
եալ եմ առաջի Ա.ծութեանդ
քոյ. զգայարանօք իմօք. և ամե
նայն անդամօք մարմնոյս. և ո։
Ա.մենախնամ Տ՟ր դիր պահապան
չաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ
ս հայիլ արատ. և ականջաց իմոց
ոչ ախորժիլ լսել զբանս չարու
թեան. և բերանոյ իմոյ ոչ խօսիլ
ստութիւն. և սրտի իմոյ ոչ խորհ
իլ զչարութիւն. և ձեռաց իմոց
ոչ գործել զանիրաւութիւն. և

ոտից

ոտից իմոց ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժումն ոտիցս լինել ըստ պատուիրանաց քոց ամի. և ող.

Հուր կենդանի Քս̃. զհուր սիրոյ քոյ, զոր արկեր յերկիր բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ. և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց՝ և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ. և վառեսցէ զլոյս գիտութեան քոյ 'ի սրտի իմում. և ո.

Իմաստութիւն Հօր Յս̃, տուր ինձ զիմաստութիւն՝ զբարիս խորհել և խօսել՝ և գործել առաջի քոյ յամենայն ժամ, 'ի չար խորհրդոց 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեաց.

Կամեցող բարեաց՝ Տր̃, կամարար. մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեաց քո ար.

Արքայ երկնաւոր տուր ինձ զարքայութիւն քո. զոր խոստացար սիրելեաց քոց՝ և զօրացո՛ զսիրտ

իմ

իմ ատել զմեղս. և սիրել զքեզ
միայն՝ և առնել զկամս քո. և ող.

Խնամօղ արարածոց պահեա՛ նշա
նաւ խաչի քոյ զհոգի և զմարմին
իմ. 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փոր
ձութեանց դիւաց՝ և 'ի մարդոց
անիրաւաց, և յամենից վտանգից
հոգւոյ և մարմնոյ. և ողոր.

Պահապան ամենայնի՝ Քրս̃, աջ
քո հովանի լիցի 'ի վերայ իմ, 'ի
տուէ և 'ի գիշերի. 'ի նստել 'ի
տան՝ և 'ի գնալն 'ի ճանապարհ.
'ի ննջելն և 'ի յառնելն՝ զի մի՛ եր
բէք սասանեցայց. և ողոր.

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո և
լնուս զամենայն արարածս ողորմու
թեամբ քով. քեզ յանձն առնեմ
զանձն իմ. դու հոգա՝ և պատ
րաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ
իմոյ յայսմ հետէ մինչև յաւի
տեան. և ողորմեաց քո.

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո՛ զիս
'ի չար սովորութենէ իմոց 'ի բարի
սովորութիւն. և բևեռեա՛ 'ի հո
գի իմ զսոսկալի օր մահուն՝ և զհր

կիզ

կիւղ գեհենոյն՝ և զսէր արքայու
Թեանն. Օ՜ ի զղջացայց 'ի մեղաց
և գործեցից զարդարութի՛. և ողո:

Աղբիւր անմահութեան աղբիւ
րացո՛ 'ի սրտէ իմմէ զարտասուս
ապաշխարութե՛ որպէս պոռնկին.
զի լուացից զմեղս անձին իմոյ յա
ռաջ քան զելանելն իմ յաշխար
հէս. և ողորմեաց քո ար:

Պարգևիչ ողորմութեան՝ պար
գևեա՛ ինձ ուղղափառ հաւատով
և բարի գործով. և սուրբ մար
մնոյ և արեան քոյ հաղորդութե՛
գալ առ քեզ. և ողոր:

Արարիչ Տ՜ր, հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս. քաղցրու
Թեամբ աւանդել զհոգի իմ, և
անխռով անցուցանել ընդ չարու
Թիւն այսոցն. որք են 'ի ներքոյ
երկնից. և ողորմեաց:

Լոյս Ճշմարիտ՝ Ք՜ս, արժանաւո
րեա՛ զհոգի իմ ուրախութեամբ
տեսանել զլոյս փառաց քոց. 'ի
կոչման աւուրն. և հանգչիլ յու
սով բարեաց յօթևանս արդարոց՝

մինչև յօր մեծի գալստեան քոյ․
և ողորմեաց քո արար։
Պաստաւոր արդար՝ յորժամ գաս
փառօք հօր դատել զկենդանիս
և զմեռեալս․ մի՛ մտաներ ՚ի դա
տաստան ը̄ ծառայի քում։ Այլ
փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն,
և լսելի արա՛ ինձ զերանաւէտ կո
չումն արդարոց յերկնից արքայու
թեանն․ և ողորմեաց։
Ամենողորմ Տ̄ր՝ ողորմեաց ամե
նից հաւատացելոց ՚ի քեզ․ իմոց
և օտարաց՝ ծանօթից և անծանօ
թից՝ կենդանեաց և մեռելոց։
Շնորհեա և թշնամեաց իմոց և
ատելեաց զթողութիւն, որ ա
խս յանցանաց՝ և դարձո՛ զնոսա ՚ի
չարեացն․ զոր ունին վասն իմ,
զի ողորմութեան քում արժանիք
եղիցին․ և ողորմեաց։
Փառաւորեալ Տ̄ր ընկալ զաղա
չանս ծառայիս քոյ՝ և կատարեա՛
՚ի բարի զխնդրուածս իմ։ Բարե
խօսութեամբ սրբուհւոյ Ա̄ծած
նին՝ և Յօհաննու մկրտչին՝ և սրբ

բոյն Ստեփաննոսի նախավկային՝ և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին ։ և սրբոց առաքելոց՝ և մարգարէից՝ և վարդապետաց՝ և մարտիրոսաց՝ և սրբոց հայրապետաց՝ և ճգնաւորաց և կուսանաց՝ և ամենից սրբոց քոց՝ երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն՝ ընդ ամենեցուն սրբոյ երրորդութեանդ․ յաւիտեանս յաւիտենից․

Ամէն։

Մաղթանք աղօթարար ընթերցեալ արհաւիրաց գեղչերցայնոյ։ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն․ Ժ․Բ․։

Ընկալ քաղցրութբ՝ Տր Ած հզօր, զդառնացողիս զաղաչանս։ Մատիր գթութբ՝ առ պատկառեալս դիմօք։ Փարատեա ամենապարգեւ՝ զամօթականն տխրութիւնս։ Բարձ յինէն ողորմած՝ զանըմբերելի ծանրութիւնս։ Անջրպետեա հնարաւոր՝

ւոր՝ զմահացու կրթութիւնս ։
Մ. ուրբեա՛ միշտ յաղթող զխաբէո-
ղին հաճութիւնս ։ Ի. ազատեա՛
վերնային, զմոլեկոյն մառախուղ ։
Կնքեա՛ կեցուցիչ զկորուսչին ըն-
թացմունս ։ Ցրուեա՛ ծածկամեա՝
զըմբռնողին չարգթմունս ։ Խոր-
տակեա՛ անկրկնելին զմարտողին դե-
ւեցմունս ։ Տնազրեա՛ քով անու-
ամբք՝ զլուսանցոյց երգ յարկիս ։
Պարփակեա՛ քով ձեռամբք՝ զա-
ւատօտաղ տաճարիս ։ Պ. ծազրեա՛
քով արեամբք՝ զմուտ սեմոց սե-
նեկիս ։ Կերպացո՛ զքո նշանդ՝ ի
հետս երից մաղթողիս ։ Մ. մրացո՛
քով աջովդ՝ զհանգստեանս խըշ-
տիս ։ Մ՝ աքրեսցես 'ի հաղբից,
զծածկարան անկողնոյս ։ Պահես-
ցես քով կամօքդ՝ զտառապեալ
անձն հոգւոյս ։ Մ. նխարդանս ա-
րասցես՝ կքո շնորհեալ շունչ մար-
մնոյս ։ Կացուսցես շրջափակ՝ ըզ-
նար զօրուդ երկնայնոյ ։ Կարգես-
ցես 'ի դիմի, ընդդէմ դիւացն
դասու ։ Տուր հանգիստ քերկրու-
թեան ։

թեան. մահահանգոյն նիրհմանն ՚ի խորութեան գիշերիս: Բարեխօսութք և հայցուածովք որբուհւոյ Ածածնին՝ և ամենից ընտրելոց. Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց: Զգայարանացս իմաստից: Անպարհուրելի զետեղմամբ, ՚ի ծփական խռովութեանց: Կենցաղական զբաղմանց. Անրջական երազոց: Խուլականաց ՝ցնորից: Յիշատակաւ քոյ յուսոյդ անմխասելի պաշտպանեալ: Եւ սթափեալ վերստին ՚ի նինջմանէ ծանրութեան: Ամենազգաստ արթնութեամբ: Հոգենորոգ զուարթութեամբ ՚ի քեզ արձանացեալ: Զայս ձայն մաղթանաց քուրմամբ հաւատոյ: Քեզ ամենօրհնեալ Թագաւոր փառաց: Անճառելի փառաբանօղայ. երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել: Զի դու փառաւորեալ ես յամ՛ արարածոց. յաւիտեանս յաւիտենից:

Ամէն:

Ա. ղօթք

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի.

ԽԱ:

Որդի Ա̃յ կենդանւոյ. օրհնեալդ յամենայնի. ⁜ որդ ահաւորի, անքննելին ծնունդ.
Որ տկարանայ առ 'ի քէն և ոչինչ:
Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փաւաց: հալին մեղք: հալածին դևք: ջնջին յանցանք: խզին կապանք: խորտակին շղթայք: կենդանանածնին մահացեալք: բժշկին հարուածք: ողջանան վէրք: բառնին ապականութիւնք: տեղիտան ախտութիւնք: նահանջին հեծութիւնք: փախնու խաւարն: մեկնի մէգն: մերժի մառախուղն: փարատի մուայլն: սպառի աղջամուղջն: վերանայ մութն. գնայ գիշերն: տարագրի տագնապն: չքանան չարիքն: հալածին յուսահատութիւնք: Եւ թագաւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ ամենայնի. որ ոչ եկիր կորուսանել զմարդկան հոգիս, այլ

կե

կեցուցանել։ Թող ինձ զանթիւ չարիսն իմ, բազում ողորմութեամբդ։ Ով դու միայն ես երկնի անճառ՝ և երկրի անզննին. 'ի տարր գոյից՝ և յեզր ծագաց Տէր։ Սկիզբն ամենայնի՝ և յամենայնի, ամենայնիւ լրմամբ օրհնեալդ 'ի բարձունս։ և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ վայելչ փառք յաւիտեանս։ Ամէն։

# ՎԵՐՋ։

Անուանց փօխադրականաց տօնից եւ այլ
ոց հանդիսութեանց :

Թուականն հայոց․ ՌՃԺԴ : Եօթն երեակ․ Դ : Գիր տարւոյն․ Մ : Ա երադիրն․ Ժա : Տանուտէրն խեցգետինն է, եւ միշտ նահանջ է որպէս զկարիճն եւ զձուկն : Բայց ՚ի նահանջի ամին երբ ՚ի մարտի ամիսն մտանիցես․ գիր տարւոյն թէ քէն իցէ դու զփիւրն կալ․ եւ թէ փիւրն իցէ զհիւնն կալ․ եւ այսպէս մինչեւ ցայբն : Նոյնպէս եւ զեօթն երեակն միով թուով աւելի կալ որ ուղիղ գայ : Եւ գտանես զի այդ վերոգրեցեալ երից կենդանակերպից կարգն միշտ նահանջք են որպէս գրե
ցաւ :

ռՃԺԴ

| Թուականն | Եօթնեկի եղանակ | Դէպք ամսոյ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|
| ռճժգ | եղ | յմ | ժա | Խեցգետին | | բժ |
| ռճժդ | է | ե | իբ | Առիւծն | | բժ |
| ռճժե | ա | Հ | գ | Կոյսն | | ժգ |
| ռճժզ | բ | ձ | ժգ | Կշիռն | | բժ |
| ռճժէ | գդ | բա | իե | Կարիճն | | բժ |
| ռճժը | ե | յ | դ | Աղեղնաւորն | | ժգ |
| ռճժթ | ղ | ի | ժէ | Այծեղջիւրն | | բժ |
| ռճի | է | ց | իը | Ջրհոսն | | ժգ |
| ռճիա | ար | դձ | թ | Ձուկն | | բժ |
| ռճիբ | կ | թ | իա | Խոյն | | բժ |
| ռճիգ | դ | ս | բ | Ցուլն | | ժգ |
| ռճիդ | ե | ծ | ժդ | Երկաւորն | | բժ |
| ռճիե | դե | դե | իդ | Խեցգետին | | բժ |
| ռճիզ | ա | Հ | ե | Առիւծն | | ժգ |
| ռճիէ | բ | ժ | ժդ | Կոյսն | | բժ |
| ռճիը | կ | վ | իէ | Կշիռն | | ժգ |
| ռճիթ | դե | կյ | ը | Կարիճն | | բժ |

| Թուականք | Եօթներեակ | Գիր տարւոյ | Վերադիր | Տանուտէր | Երկոտասան լուսինք |
|---|---|---|---|---|---|
| ռճլ | գ | խ | ժթ | Աղեղնաւորն | ժբ |
| ռճլա | է | պ | լ | Այծեղջիւրն | ժգ |
| ռճլբ | ա | դ | ժա | Ջրհոսն | ժբ |
| ռճլգ | բգ | ժթ | իբ | Ձուկն | ժբ |
| ռճլդ | դ | ս | դ | Խոյն | ժգ |
| ռճլե | ե | ծ | ժդ | Ցուլն | ժբ |
| ռճլզ | գ | ղ | իե | Երկաւորն | ժբ |
| ռճլէ | էա | պչ | գ | Խեցգետին | ժգ |
| ռճլը | բ | ժ | ժէ | Առիւծն | ժբ |
| ռճլթ | դ | վ | իբ | Կոյսն | ժգ |
| ռճխ | դ | ն | թ | Կշիռն | ժբ |
| ռճխա | եգ | էգ | իա | Կարիճն | ժբ |
| ռճխբ | է | պ | բ | Աղեղնաւորն | ժգ |
| ռճխգ | ա | ղ | ժգ | Այծեղջիւրն | ժբ |
| ռճխդ | բ | դ | իդ | Ջրհոսն | ժբ |
| ռճխե | գդ | չռ | ե | Ձուկն | ժգ |
| ռճխզ | ե | ծ | ժզ | Խոյն | ժբ |

| Թուականն | Եօթներեակն | Գիր ձիր ամսոյ | Կիւրակէի ձմեռ | Առաջաւորաց | Երկրաւորական Ժամն լուսնոյ |
|---|---|---|---|---|---|
| ռՃխէ | գ | ւ | իէ | Ցուլն | ժ գ̃ |
| ռՃխը | է | Ճ | ը | Երկաւորն | ը̃ ժ |
| ռՃխթ | աբ | իժ | ժթ | Խեցգետին | ը̃ ժ |
| ռՃծ | գ | վ | լ | Առիւծն | ժ գ̃ |
| ռՃծա | դ | կ | ժա | Կոյսն | ը̃ ժ |
| ռՃծբ | ե | է | իբ | Կշիռն | ը̃ ժ |
| ռՃծգ | գէ | Ջպ | գ | Կարիճն | ժ գ̃ |
| ռՃծդ | ա | ղ | ժգ | Աղեղնաւորն | ը̃ ժ |
| ռՃծե | բ | գ | իե | Այծեղջիւրն | ը̃ ժ |
| ռՃծզ | գ | շ | զ | Ջրհոսն | ժ գ̃ |
| ռՃծէ | դե | կծ | ժէ | Ձուկն | ը̃ ժ |
| ռՃծը | գ | ւ | իը | Խոյն | ժ գ̃ |
| ռՃծթ | է | Ճ | թ | Ցուլն | ը̃ ժ |
| ռՃկ | ա | ի | իա | Երկաւորն | ը̃ ժ |
| ռՃկա | բգ | տվ | բ | Խեցգետին | ժ գ̃ |
| ռՃկբ | դ | կ | ժգ | Առիւծն | ը̃ ժ |
| ռՃկգ | ե | է | իդ | Կոյսն | ը̃ ժ |

| Եօթն երեւկն | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. | Է. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Յունվար | բ | գ | դ | ե | զ | է | ա |
| Փետրվար | ե | զ | է | ա | բ | գ | դ |
| Մարտ | ե | զ | է | ա | բ | գ | դ |
| Ապրիլ | ա | բ | գ | դ | ե | զ | է |
| Մայիս | գ | դ | ե | զ | է | ա | բ |
| Յունիս | զ | է | ա | բ | գ | դ | ե |
| Յուլիս | ա | բ | գ | դ | ե | զ | է |
| Օգոստոս | դ | ե | զ | է | ա | բ | գ |
| Սեպտեմբեր | է | ա | բ | դ | գ | ե | զ |
| Հոկտեմբեր | բ | գ | դ | ե | զ | է | ա |
| Նոյեմբեր | ե | զ | է | ա | բ | գ | դ |
| Դեկտեմբեր | է | ա | բ | դ | գ | ե | զ |

Եօթն երեւկաւն ի վերուստ. և ամսոցն ի՛ դիմաց ի՛ներս մուտ ։ եգտանես զօր ամսամտին. բայց ի՛ նահանջին երբ ի՛ մարտի ամսին մտանիցես թիւ մի աւելի կալ զեօթն երեւկն ։

Զուգաւորութի հայոց ընդ հռոմայեցւոց։ Եթէ զաւուրս հայոց ամսոյն, և զյառակայն հռոմին՝ իմ թէ. բեր և զյայտնութիւն հայոյն ճբանց երթ, որ մնայ աւուրքն է հռոմի ամսոյն։ բայց եթէ չիցէ բաւա

| Ամիսք հռոմայե ցւոց· | Ժամնիք | Կրկնակ | Կիսակ | Յարակայ |
|---|---|---|---|---|
| Յունուար | լա | չկ | ա | գ |
| Փետրուար նհջ իթ | իը | դ | բ, | ե |
| Մարտ | լա | դ | ա | է |
| Ապրիլ | լ | գ | բ, | գ |
| Մայիս | լա | ա | դ | գ |
| Յունիս | լ | դ | դ, | ե |
| Յուլիս | լա | գ | ե | ե |
| Օգոստոս | լա | բ | գ, | դ |
| Սեպտեմբեր | լ | ե | ը | դ |
| Հոկտեմբեր | լա | չկ | ը, | դ |
| Նոյեմբեր | լ | դ | ժ | բ |
| Դեկտեմբեր | լա | ե | ժ, | բ |

կան զանցեալ ամիսն ի հետն կալ։ Դձ̃լ կալ զաւուրս հռոմի ամսոյն. և զիւր յարակայն ի բաց երթ. և զյայտնու̃ի հայոյն ի վերը բեր. աւուրք են հայոց ամսոյն։ Նաւասարդէն մինչեւ յայտնութ̃ին. զաւելեաց. է. օրն զհետ հայոց ամսոյն կալ։

Ծնունդ լուսնի այսպէս արա՛։
Առ հանապազ . Լ . կամ . Կ . զվե
րադիրն և զկիսանկն իբաց երթ .
որ 'ի խոնարհ մնայ՝ այն քան ա-
ւուրս ամսոյն . Ծնունդ է լուսնի ։

Աւուրք լուսնի այսպէս արա՛ ։
Առ զաւուրս ամսոյն . և զկիսանկ
նորին ամսոյն . և զվերադիր տա
րւոյն . և երթ . Լ . Լ . որ մնայ ա-
ւուրք է լուսնի ։

Լրումն լուսնի այսպէս արա՛ ։
Առ հանապազ . խէ . զվերադիրն
և զկիսանկն իբաց երթ . որ 'ի խո
նարհ մնայ այնքան աւուրս ամսոյն
լրումն է լուսնի ։

Յորժամ ծնունդ լուսնի կամ ա-
ւուրք կամ լրումն լուսնի առնե
ցես , 'ի տեղի կիսանկին զսմա
թիւն կալ որ ուղիղ գայ ։ և սմա
թիւ այսպէս արա՛ . յամէն ամսոյ
թիւ մի առ . և յայն ամսոյն յո
րում իցես մի՛ առնուր ։ Բայց 'ի
յունվարէ և 'ի փետրվարէ առ՝ և
յայլոց մի՛ առնուր ։

Յայս

Յայտնութենէն մինչեւց առաջաւորն այսպէս արա ։ Առ զգիր տարւոյն ․ եւ տես զոր թիւ յիւր դէմն գրած է ․ այնչափ ուտիք է մինչեւ ի սբ սարգսի պահն ։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ա | ուտիք | գ | օրէ | ճ | ուտիք | իդ | օրէ |
| բ | ուտիք | է | օրէ | մ | ուտիք | իե | օրէ |
| գ | ուտիք | ը | օրէ | յ | ուտիք | իզ | օրէ |
| դ | ուտիք | թ | օրէ | ն | ուտիք | իէ | օրէ |
| ե | ուտիք | ժ | օրէ | շ | ուտիք | իը | օրէ |
| զ | ուտիք | ժա | օրէ | ո | ուտիք | իթ | օրէ |
| է | ուտիք | ժբ | օրէ | չ | ուտիք | լ | օրէ |
| ը | ուտիք | ժգ | օրէ | պ | ուտիք | լա | օրէ |
| թ | ուտիք | ժդ | օրէ | ջ | ուտիք | լբ | օրէ |
| ժ | ուտիք | ժե | օրէ | ռ | ուտիք | լգ | օրէ |
| ի | ուտիք | ժզ | օրէ | ս | ուտիք | լդ | օրէ |
| լ | ուտիք | ժէ | օրէ | վ | ուտիք | լե | օրէ |
| խ | ուտիք | ժը | օրէ | տ | ուտիք | լզ | օրէ |
| ծ | ուտիք | ժթ | օրէ | ր | ուտիք | լէ | օրէ |
| կ | ուտիք | ի | օրէ | ց | ուտիք | լը | օրէ |
| հ | ուտիք | իա | օրէ | ւ | ուտիք | լթ | օրէ |
| ձ | ուտիք | իբ | օրէ | փ | ուտիք | խ | օրէ |
| ղ | ուտիք | իգ | օրէ | ք | ուտիք | խա | օրէ |

Յետ առաջաւորին · բ · շիթ ուտեմք մեծ պահքն է ։ Այլ մարտի իա · զգիր տարւոյն ի՛ վ՟ր բեր զատիկէ ։ ի՛նահան ջինի կալ ։

Զատկէն ի՛համբարձումն խ · օր է ։ Համբարձմանէն յետ ժ օր ուտեմք · հոգւոյ գալստեան պահքն է ։ Հոգւոյ գալստէն յետ բ շբդ ուտեմք լուսաւոր չի պահքն է, լուսաւորչէն յետ բ շբդ ուտեմք վարդավառի պահքն է ։

## Վարդավառի մէջն ։

Այլ զգիր տարւոյն · և զինչ գրած է յիւր շարն · այն է մինչև ծածածինն ։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ա | բ | գ | | | | | է · շբթէ պասով |
| դ | ե | զ | է | ը | թ | ժ | զ · շբթէ պասով |
| ի | լ | խ | ծ | կ | հ | ձ | ե · շբթէ պասով |
| ղ | ճ | մ | յ | ն | շ | ո | դ · շբթէ պասով |
| չ | պ | ջ | ռ | ս | վ | տ | գ · շբթէ պասով |
| ր | ց | ւ | փ | | | | բ · շբթէ պասով |

## Ծածկին միջոցն ·

Այլ զգիր տարւոյն · թէ վերին կարգն է դ շբդ է · և թէ ներքինն է · ե · շբդ է պասով ։

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե | զ | թ | ժ | խ | ծ | կ | հ | ձ |
| մ | յ | ն | շ | ո | չ | ռ | ս | վ | տ | ւ | փ | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| դ | ե | ի | լ | ղ | ճ | չ | պ | ր | ց | ներքին |

Սուրբ խաչէն յետ ա̄ շբ̄դ ուտեմք մը դէորգեայ պահնէ։ Այլ գծերը տարւոյն եթէ վերին շարքն է . ը̄ շբ̄դ է ։ եթէ ներքինն . թ̄ շբ̄դ է պահօքն . մը գէորգէն մինչեւ յիսնականուն ։

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե | զ | թ | ժ | ի | լ | կ | հ | |
| ձ | ղ | ճ | ն | շ | ո | չ | պ | ս | վ | տ | ր | ց |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ղ | է | խ | ծ | մ | յ | ջ | ռ | ւ | փ | ներքին |

Յինանկամուտէն յետոյ . ե̄ . շբ̄դ ուտեմք մը յակոբայ պահքն է ։ Այլ գծերը տարւոյն . եւ զինչ յիւր դէմն է . այնքան օրէ սուրբ յակոբէն մինչեւ յայտնութեան բարեկենդանն ։ բայց թէ դ̄չի դայ . դու գ̄չի արա եւ թէ ուրբաթ դիպեսցի դու ե̄չի արա զբարեկենդանն եւ գ̄չի եւ ուրբաթ զպահոց լուծումն որէ ճրագալոյց . եւս ի խթումն եւ թա թախումն ։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ա | ը | կ | ն | ս | ժը․ օրէ։ գժ ի բը կենդնէ |
| բ | թ | հ | շ | վ | ժէ․ օրէ։ բժ ի բըկենդնէ |
| գ | ժ | ձ | ո | տ | ժդ․ օրէ։ կիրակի բըկենդնէ |
| դ | ի | ղ | չ | ր | ժե․ օրէ։ շբթ բըկենդնէ |
| ե | լ | ճ | պ | ց | ժզ․ օրէ։ ուրբթ բկդնէ |
| զ | խ | մ | ջ | ւ | ժզ․ օրէ։ եժ ի բըկենդնէ |
| է | ծ | յ | ռ | փ | ժբ․ օրէ։ դժ ի բըկենդնէ |

Անշարժ եղանակքն։

Յունվարի Ա յայտնութիւնէ։ Փետրվարի ժդ տն ընդ առաջէ։ Մարտի ի գարնանամուտէ։ Ապրիլի է աւետիսէ տծածնին։ Մայիսի է երեւման խաչէ։ Յունիսի ԻԹ ամառնամուտէ։ Յուլիսի ժա ծնունդ է յովհաննու։ Օգոստոսի ժե․ տծածին է օրագիւտիւ։ Սեպտեմբերի ժը աշնանամուտ է։ Հոկտեմբերի․ Ժ յղութի է եղիսաբեթի Նոյեմբերի․ տն մարեմուտ է յունաց։ Դեկտեմբերի ժը ձմեռնամուտ է։ Դարձեալ թէ գարնանամտի պատկեր օրն կիրակի լինի, ամառանին և աշնանին և ձմեռանին եւս կիրակի լինի։ և թէ բշի նոյնպէս և այլքն բշի։ և այլն ըստ կարգի։

Թուականք . յադամայ մինչև 'ի
ջրհեղեղն . ամք . ՍՄԽ . 'Ի փո
խելոյն ենովքայ մինչև 'ի ջրհե
ղեղն . ամք . ՉԾԵ : 'Ի ջրհեղեղէն
յաշտարակն , ամք . ՉԽԵ : յաշտա
րակէն յաբրահամ ամք . ՆԺԷ :
յաբրահամէ 'ի մովսէս և յելսն եգիպ
տոսէ ամք . ՉԵ : յելիցն մինչև 'ի
սողոմոնի յառաջին շինուած տա
ճարին . ամք . ՆՃ : յառաջնոյ շի
նուածոյն մինչև յերկրորդն . 'ի
զօրաբաբելի և 'ի դարեհի Բ ամն ,
ամք . ՉԺԱ : Անտի մինչև 'ի ծը
նունդն քի ամք . ՉԺԸ : Եւ գու
մարին յադամայ մինչև 'ի ծնունդն
ՔՐԻ ամք . ԵՃՂԸ : Եւ ըստ հինգ
հարիւրեկին ընիդ : ըստ եօթա
նասնիցն 'Ի ծննդենէն ՔՐԻ մին
չև 'ի սուրբն Գրիգոր յելն 'ի վի
րապէն , ամք . ՄՅԶ : Եւ անտի
մինչև 'ի գիւտ գրոյն հայոց ամք .
ՃԺԴ : Եւ 'ի գիւտէ գրոյն մինչև
'ի մեծ թուականն հայոց . ամք .
ՃԼԱ : Եւ անտի մինչև 'ի մահ նա
րեկացւոյն . ՆԼԸ : Անտի 'ի տէր
ներ

Ներսէս կլայեցին. ՌՃՀԳ: Ի ծնըն
դենէն Քի մինչեւ 'ի հայս մեծ
թուականն. ՇԾԱ: Ի սրբոյն Գրի
գորէ 'ի հայոց մեծ թուականն.
ՄԿԳ: Ի ծննդենէն Քի մինչեւ 'ի
նիկիոյ ժողովն. ՅԻԵ: Ի նորին մին
չեւ 'ի կոստանդնուպօլսի ժողովն.
ՀԳ: Ի նորին յեփեսոսի առաջին
ժողովն. Ծ:

Օ ամն լուսաւորչին այսպէս արա.
Կալ մամն. եւ զհայ մեծ թուականն
'ի մէրայ բեր՝ եւ այն է. Եւ թէ կա
մեցես գիտել դարադլուխ ա
նել: Յառաջնոյ դարուն ենօվք
յերկնից փոխեցաւ: Երկրորդ դա
րուն ջրհեղեղն եկն յաշխարհս:
Երրորդ դարուն զաշտարակն շի
նեցին: Չորրորդ դարուն տուե
տիքն Ի.Ե ամ աբրահամ: Հինգ
երրորդ դարուն. սողոմոն զտա
ճարն շինեաց: Վեց երրորդ դա
րուն՝ Քի Ի.Ծ 'ի կուսէն ծնաւ
մարմնով: Եւ 'ի լնուլ Եօթն եր
րորդ դարուն եւ 'ի մտանել Ութն
երրորդ դարն յարութիւն մեռլց:

Պարն. ՃԸ. ամ է։ և դարադը
րուխմն ոչ Թէ 'ի մնանեքն կամ յե
լանեքն գրեցան, այլ 'ի դարն որ
Հանդիպեր Հուշակաւոր անուն,
նոյն դար կոչեցաւ և նշան։ Եւ մի՛
Հաւատար որոց ասեն զլինելոյ
Թն արարածոց գխտել, կամ զԺա
մանակս. զոր գխտէ միայն որ ա
րարն զնա։

Յադամայ մինչև 'ի ծնունդն Քի։
ըստ եպիփանու. ԵՉ. ամ է։ և ըստ
այլոց. ԵՄ ԿԳ։ և ըստ Հրեից և շա
մարտացւոց. ՃՌ. ամ։ և ըստ եօԹա
նասնից. ԵՃ ՂԸ. ամ։

# Ծանուցումն առ ընԹեր ցօղս։

Օրհնութիւն Հօր ծնօ
ղին ամենակալի. և գո
Հութիւն Որդւոյն միած
նի էիցս Հաւասարի։ Բարեբանու
Թիւն Հոգւոյն փառակցի զարդա
րածս ամենայն զարդարողի։ Եւ
փա

փառաբանութիւն երկրպագութե̅
եւ անձնեայ երրորդութեանն, և
միոյ Ա̃ծութեանն։ Այժմ և ան
զրաւ յաւիտենիւ։ Ամէն։

Որ միջնահեղ շնորհիւն իւրով և
ամենաբաւական ողորմութեամբն
ետ զկարողութիւն ամենանուաս
տի պաշտօնէիս․ ’ի վերջացեալ դա
րուս․ և ’ի վշտապատում ժամա
նակիս, հաստուցանել յեզր և ա
ւարտ զվայելչատիպ և զբարեձև
զերգարանս դաւթեան․ ’ի փառս
ամենավայելչի անուան իւրոյ սըր
բոյ․ և ’ի պարծանս մատակարար
չացն խմբի։ ’ի պէտս հայկազնեաց։
և ’ի զբօսանս բնաւից ուսումնասի
րաց անձանց։ ըստ իւրաքանչիւրն
չափու հասակի հաւատացելոց ’ի
Տ̃ն Ք̃ս․ ’Ի Թուին Փրկչին 1674։
’ի տասն նոյեմբերի։ իսկ ը̅ հայոց
կաղուածի․ ՌՃԻԳ։ երեսունն հոկ
տեմբերի։ ’Ի տպարանիս Սրբոյ
Էջմիածնի։ և Սրբոյն Սարգսի
զօրավարի։ ’ի Հայրապետութեան
Տեառն Յակոբայ երջանկի ամե
նայն

նայն Հայոց Կաթուղիկոսի։ Պ․ի
տպագրեալ յՄ․ Ծաւէջ գահոյն նոյ
նոյ Սրբոյ Էջմիածնի։ ՚ի ճշմա
րիտ և ստոյգ յօրինակէ Տեառն
խաչատրոյ կեսարացւոյ մեծի հաւ
տորի։ Արդ՝ որք հանդիպիք հո
գեւոր մատենիս այս ընթեռ
նլով կամ օրինակելով, յիշեսջիք
յաղօթս ձեր․ զբազմաշխատ հո
գևոր մշակն Ք․Ի։ և յոգներախտ
մատուցակն գիտութեան ի ձեռն
բազմութեց գրեանց ցեղին հայ
կազունեաց․ զՏէր Սուկիաս Մ․ծա
քան վարդապետն և զերկրորդ
թարգմանիչն․ որ յսկզբան առա
ջին տետրն սաղմոսիս հանդէպ աւ
՚ի Ք․Ն։ ՚ի հազար հարիւր քսան
և երեք թուին յամսեանն փ՛ որ
վարի․ Է։ որոյ յիշատակն օրհնու
թեամբ եղիցի․ և Տէր Ք․Ս ՚ի հո
գիս նորին զթասցի․ և մեզ մեղա
ւորացս ողորմեսցի։ ընդ տեառնս
իմում յիշեսջիք և ՚ի Ք․Ս հանգու
ցեալ զեղբարսս սորին, զյովա
նէսն։ և զմիրզախանն։ և զքոյր սո

ցին

ցին մայրն իմ զՀռիփսիմէն. և կեն
դանի զեղբայր սոցին զբարեպաշտ
և զքնասէր պարոն աւետիսն պատ
ճառն Հաստատութեան գործարա
նիս. ընդ սոցին յիշեսջիք և ըզ
Հայրն իմ, զպօղոս ա̃ծաբեան վար
դապետն. Հուսկ յետին և զիս ըզ
տրուպս ամենից նուաստից զաստօ
մ̃ն պաշտօնատարս. որ զկնի մահո
ւան քեռոյն իմոյ Հարազատի Տ̃ն
Ոսկանայ վարդապետի. յոգումբք
վշտիւք և բազմօք չարչարանօք ա
ծի զսա աւարտ. և դեռ ևս կայ
կիսակատար սաղմոսն ատենի. զի
Հասեալ էաք յութերորդ տետրն
բարձաւ 'ի կենաց աստի ծերու
նին իմ պատուական և շիջաւ
ճրագ գործարանիս լուսաւորու
թեան. և բարձաւ յոյս իմ ամէն
պարտուցն և ցաւոցն ազատութե
միանգամայն և անձանց մերոց կե
ցութ̃ե. և Հարկ 'ի վերայ իմ կայ
դատաստանաւ աւ 'ի կատարել
բազմօք ծախիւք զատենին զորոյ
զպատճառն սմին իրի. և զպատմու
թիւն

Թիւն մահուան վարդապետին և
զկենդանածիր կտակ նորին ընդ
Թեռանլոցեք յայլում վայրում զա
մենայնն յամենայնի։ 'ի յուշ առա
րութիւն հոգեկիր վաստակոց և
գործոց նորին և իւրն յարաժամ
անմոռանալի, առ 'ի հատուցումն
երախտեաց նորին ձեզ որդւոցդ
իւրոյ հոգեւորի. և մի՛ մնալ պարտա
կան երախտեացն նորին հատուց
ման. ըստ կնքեցելոյ բանին սրբոյն
ներսիսի։ Եւ զի Թէպէտ չէ սա
ծնօղ ըստ մարմնոյ սերի, բայց ա
ռաւել է հոգւին ըստ անշուշտ բա
նին Յի։ Արդ և դուք յիշեալք
լինիջիք առաջի Քի. և անուանք
ձեր և ննջեցելոցն ձերոց յամենայ
նի. գրեցեալք լինիցին 'ի գիրս
դպրութեան կենացն անմահի։
Որում փառք և զօրութի յաւի
տեանս յաւիտենից։ Ամէն։
Բայց և այս ինչ հարկաւոր և
պատշաճ իմն թուի ինձ, ծանու
ցանել ձեզ տեարցդ իմոց և հարցդ
և եղբարցդ. և ըստ իս պաշտօնա

տա

տարրաց անձանց · 'ի վերայ հիւքոյ
հասեալ վշտացն և հարուածոցն ·
զորս կրեցի զկնի մահուան վարդա-
պետին աստ 'ի մարսիլիայ · և կրեմ
տակաւին : Ո՛ անզի հաւն իմ հե-
զահոգի · զկնի վախճանին իւրոյ ·
եթող վասն իմ զցաւս անբուժ ե-
լից · և զփորձութիւս անելս : զբար-
դութիւն պարտուցն ասեմ աւելի
քան զքսան հազար մաուչիլաց · թէ
աստ 'ի մարսիլիայ · և թէ յամս
տէրդամ և յայլ ուրեք : և զզու-
մարումն պարտատիրացն : և զժողո-
վումն 'ի մի վայր հնից և նորոց
թշնամեաց և բնաւից նեղչաց ամե-
նից կողմանց · զորս անկարելի է
զամենայնն ընդ գրովք արկանել :
վասն զի ընդ մտանելն լուսաւոր
հոգւոյն 'ի գերեզման, մնացեալ
ես տառապեալս յոգնատեսակ և
զանազանից նեղութեանց · կրելով
յարաժամ 'ի ձեռանէ մերայնոց
և յօտարաց · 'ի հայոց և 'ի ֆռան-
կաց · 'ի մերձաւորաց՝ և 'ի հեռա-
ւորաց · 'ի կերպարանեցեալ բարե-
կա

կամաց , և յանձնախնդիր թշնա
մեաց․ որք միանգամայն համարէին
փշրել զվտխտ անձն իմ ժանեօք
կամակորութեց իւրեանց․ և կեն
դանւոյն մուծանել զիս 'ի յերկիր։
Սուտի և իմ 'ի յահարկու որտա
բեկութեանցս յայսցանեաց․ պա
կուցեալ սասանեցայ․ և կամ; զի
դեռևս եմ մնացեալ։ և ո՛չ զոք
գտի Ճշմարտիւ այցելու ինձ, 'ի
պանդխտակոչկոծ՝ նեղութեանս
իմում․ վասն զի 'ի տեարց իմոց և
'ի բարեկամաց, յաւէտ 'ի հոգև
որ տիրէն Տեառն Յակոբայ գոր
ծարանիս և գործակալացն իւր բա
րեխնամի, ոչ ընկալայ բնաւ զհամ
բաւս յուսոյ ազատութե․ ընդ որս
այսու ամենայնիւ անյաջողութե․
եղէ ողորմելի քան զամենայն նե
ղեալս երկրի։ որովք ո՜մ վիշտք
և չարչարանք կոչեցան ինձ հայր․
տառապանք և կսկիծք անուանե
ցան ինձ մայր։ կշտամբանք և
բնաւք հարուածք, ասացան ինձ
քոյր և եղբայր ընդ որս և իմ

բազ

բազմեալ 'ի գիրկս ողբերգակ ցաց զսուգ տրտմութեանս և զամենայն աղէտս համբերութեամբ տուացայ կենաց իմոց սատար։

Մանաւանդ որոյ սրտահառաչ մաղթանօք հայցեմ 'ի ձէնջ ցաւակցիլ և ձեզ ինձ ըստ իս 'ի չարչարանս իմ. և պաղատիլ յօժար սրտիւք առ տէր վասն իմ։ զի տացէ ինձ գթութիւն առաջի նեղչաց իմոց։ և թևօք ողորմութեան ամենագութ կամաց իւրոց հանցէ զիս զվշտօք պարանդեցեալս 'ի լեառն ազատութեան մուծանելով յօթևանս հօր իւրոյ երկնին կենօք հանդերձ ձեօք. 'ի փառս ամենայն մարդասիրութեանն իւրոյ որ է օրհնեալ անզրաւ յաւիտենիւ. Ամէն։

Մարգք և թիւք և անուանք Կաթուղիկոսացն հայոց սկսեցեալ 'ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէն. մինչև ցայսվայր 'ի տէր Յակոբ Կաթուղիկոսն։ հաւաքեցեալ 'ի ստորոմնէ պաշտօնատարէ. 'ի փառս մեծին ԱԾ։

Տէր սբ Գրիգոր լուսաւորիչն. I

Տէր Արիստակէս. 2
Տէր Վրթանէս. 3
Տէր Յուսիկ. 4
Տէր Փառներսեհ. 5
Տէր Ներսէս մեծն. 6
Տէր Սահակ. 7
Տէր Զաւէն. 8
Տէր Ասպուրակէս. 9
Տէր Սահակ մեծն. 10
Տէր Յովսէփ. 11
Տէր Գիւտ. 12
Տէր Յովհան Մանդակունին. 13
Տէր Բաբգէն. 14
Տէր Սամուէլ. 15
Տէր Մուշէ. 16
Տէր Սահակ. 17
Տէր Քրիստափոր. 18
Տէր Ղեւոնդ. 19
Տէր Ներսէս. 20
Տէր Յովաննէս. 21
Տէր Մովսէս. 22

Որոյ յաւուրս եղաւ
Թուականն հայոց։

Տէր Աբրահամ. 23
Տէր Յովհան Գաբեղարանեանն. 24

Տէր Կոմիտաս. 25
Տէր Քրիստափոր. 26
Տէր Եզր. 27
Տէր Ներսէս. 28
Տէր Անաստաս. 29
Տէր Իսրայէլ. 30
Տէր Սահակ. 31
Տէր Եղիայ. 32
Տէր Յօհան Օձնեցին. 33
Տէր Դաւիթ. 34
Տէր Տրդատ. 35
Տէր Տրդատ. 36
Տէր Սիոն. 37
Տէր Եսայի. 38
Տէր Ստեփաննոս. 39
Տէր Յովսէփ. 40
Տէր Սողոմոն. 41
Տէր Գէորգ. 42
Տէր Յովսէփ. 43
Տէր Դաւիթ. 44
Տէր Յովհաննէս. 45
Տէր Զաքարիայ. 46
Տէր Գէորգ. 47
Տէր Մաշտոց. 48
Տէր Յովհաննէս. 49

Տէր Ստեփաննոս · 50
Տէր Թէոդորոս · 51
Տէր Եղիշէ · 52
Տէր Անանիայ · 53
Տէր Վահան · 54
Տէր Ստեփաննոս · 55
Տէր Խաչիկ · 56
Տէր Սարգիս · 57
Տէր Պետրոս · 58
Տէր Խաչիկ · 59
Տէր Գրիգոր վկայասէրն · 60
Տէր Բարսեղ · 61
Տէր Գրիգորիս · 62
Տէր Ներսէս կլայ՝ ցին · 63
Տէր Գրիգոր տղայն · 64
Տէր Գրիգոր քարավէժն · 65
Տէր Յոհաննէս · 66
Տէր Գրիգոր ապիրատն · 67
Տէր Յոհան մեծաբարոյն · 68
Տէր Դաւիթ արքա կ.ղնեցին · 69
Տէր Կոստանդին բ̃ձր բերդցի · 70
Տէր Յակոբ գիտնականն · 71
Տէր Կոստանդին պրօնագ̃րծն · 72
Տէր Ստեփաննոս հռօմ̃կեցին · 73
Տէր Գրիգոր անաւարզեցին · 74

Տէր Կոստանդին կեսարացին. 75
Տէր Կոստանդին լամբրօնացին. 76
Տէր Յակոբ կլաեցին. 77
Տէր Մխիթար. 78
Տէր Մեսրոպ. 79
Տէր Կոստանդին. 80
Տէր Պօղոս. 81
Տէր Թէոդորոս. 82
Տէր Կարապետ. 83
Տէր Դաւիթ. 84
Տէր Կարապետ. 85
Տէր Գրիգոր խանձողատն. 86
Տէր Կոստանդին. 87
Տէր Յովսէփ. 88
Տէր Գրիգոր մուսաբէկենց. 89
Տէր Կիրակոսն. 90
Տէր Գրիգոր. 91
Տէր Արիստակէս. 92
Տէր Զաքարիայ. 93
Տէր Սարգիս. 94
Տէր Յովհաննէս. 95
Տէր Սարգիս. 96
Տէր Արիստակէս. 97
Տէր Թադէոս. 98
Տէր Եղիշէ. 99

Տէր Ներսէս. 10
Տէր Զաքարիայ. 10
Տէր Սարգիս. 10
Տէր Գրիգոր. 10
Տէր Ստեփաննոս սալմաստեցի. 10
Տէր Միքայէլ. 10
Տէր Բարսեղ. 10
Տէր Գրիգոր. 10
Տէր Ստեփաննոս աւրնջեցի 10
Տէր Թադէոս. 10
Տէր Առաքեալ. 1
Տէր Դաւիթ. 11
Տէր Մելքիսեթ. 11
Տէր Սրապիոն. 11
Տէր Սահակ. 11
Տէր Մովսէս. 11
Տէր Փիլիպպոս Հաղբակացի 11
Տէր Յակոբ Ջուղայեցի. 11

Որ կայ այժմ և վարէ զիշխանու-
թիւն Կթղկոսութեն. որոյ տր Յ-
տացէ զկեանս ընդ երկայնաւուրս,
'Ի պայծառ բնաւից հայկազու-
նեաց, և 'ի փառս անբաւ մարդա-
սիրութեն իւրոյ օրհնելոյն 'ի յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն: